Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ


ՀՍՍՀ
ԱՏԱՏԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г. М. АРУТЮНЯН

РАБОЧИЙ КЛАСС СОВЕТСКОЙ АРМЕНИИ

(1938—1960 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1987

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՅՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

(1938 – 1960 թթ.)

Ա 2 — 2784



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1987

ԳՄԴ 63.3(2Հ)72
Հ 422

Տպագրվում է ՀՍՍՀ ԴԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր Վ. Ն. Ղազախեցյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ա. Մ. Հակոբյանը և պատմական գիտությունների թեկնածու Կ. Ս. Հարությունյանը

Հարությունյան Հ. Մ.

Հ 422 *Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938—1960 թթ.)* /Պատ. խմբ.՝ Վ. Ն. Ղազախեցյան, ՀՍՍՀ ԴԱ պատմ. ին-տ.—Եր.: ՀՍՍՀ ԴԱ Հրատ., 1987. 245 էջ:

Աշխատության մեջ Սովետական Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ֆոնի վրա լուսաբանվել է սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում հանրապետության բանվոր դասակարգի պատմությունը: Յույց են տրված Հասարակության առաջատար դասակարգի քանակական ու որակական կազմի փոփոխությունները, սոցիալական զարգացումը, հասարակական-քաղաքական և արտադրական ակտիվությունը, ինտերնացիոնալ կապերը: Լուսաբանվել է նաև կոմունիստական կուսակցության աշխատանքը մասսաների գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացման ուղղությամբ.

Հասցեագրվում է պատմաբաններին ու տնտեսագետներին:

Հ $\frac{0505040000000}{703(02)-87}$ 3—87

ԳՄԴ 63.3(2Հ)72

© Հայկական ՍՍՀ ԴԱ հրատարակչություն, 1987

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովետական բանվոր դասակարգն անցել է պատմական հերոսական ուղի։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մեր երկրի բանվոր դասակարգը և մյուս աշխատավորները տապալեցին շահագործողների տիրապետությունը և աշխարհում առաջինը ղորավիգ եղան անդասակարգ հասարակարգի կառուցմանը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը արմատապես փոխեց բանվոր դասակարգի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական դրությունը։ Ճնշվող ու շահագործվող և քաղաքական իրավունքներից զուրկ դասակարգից նա վերածվեց տիրապետող ու կառավարող դասակարգի։

Ձեռք բերելով քաղաքական իշխանություն, բանվոր դասակարգը ձեռնամուխ եղավ սոցիալական նոր առաքելության կենսագործմանը, այն է, հին շահագործողական կարգերի վերացմանը և նոր՝ սոցիալիստական հասարակարգի կառուցմանը։ Լենինյան կուսակցության իմաստուն ղեկավարությամբ ՍՍՀՄ բանվոր դասակարգը, դաշնակցած աշխատավորական լայն մասսաների հետ, փառավոր էջեր գրեց համաշխարհային պատմության մեջ։ Նա պատմական կարճ ժամանակամիջոցում առաջինն աշխարհում հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա, սոցիալիստական արտադրական հարաբերությունների հիմքի վրա ստեղծեց սոցիալիզմի նյութատեխնիկական բազա, ամրապնդեց սովետական ժողովրդի բարոյաքաղաքական միասնությունը և այժմ, ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի արտահայտությամբ կուսակցությունն ու ժողովուրդը վստահորեն առաջ են գնում սովետական հասարակության կյանքի բոլոր կողմերի կատարելագործման ուղիով, խաղաղության և առաջադիմության ուղիով[1]։ Սովետական Միության և սոցիալիզմի համագործակցության երկրների տնտեսական,

քաղաքական և հոգևոր կյանքի վիթխարի նվաճումներում բանվոր դասակարգի ունեցած առաջատար դերը հավաստում է լենինյան գաղափարների խոր ճշմարտացիությունը այն մասին, որ միայն բանվոր դասակարգը «... կարող է օգնել աշխատավոր մասսաներին՝ միավորվելու, համախմբվելու և վերջնականապես պաշտպանելու, վերջնականապես ամրապնդելու, վերջնականապես կառուցելու կոմունիստական հասարակությունը»[2]։

Սոցիալիստական-կոմունիստական շինարարության ամբողջ ընթացքում անընդմեջ կատարելագործվել է հասարակության առաջատար ուժի սոցիալական ֆունկցիան։

Իրականացնելով սոցիալիզմի տնտեսական ու քաղաքական հիմքերի կառուցման իր պատմական առաքելությունը, ՍՍՀՄ բանվոր դասակարգը դարձավ հասարակության հիմնական արտադրող դասակարգը և հասարակական-քաղաքական կյանքի վճռական սոցիալական ուժը, նրա հիմնական կրողը։

Սոցիալիստական շինարարության բոլոր փուլերում մեր երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքի բոլոր բնագավառներում կատարված արմատական խոր վերափոխումները շարունակաբար ուղեկցվել են բանվոր դասակարգի քանակական ու որակական աճով և նրա առաջատար դերի է՛լ ավելի բարձրացումով։

Սովետական հասարակության զարգացման ամբողջ պատմությունը հավաստում է, որ բանվոր դասակարգի առաջատար դերը մեր կյանքի բոլոր բնագավառներում է՛լ ավելի է բարձրացել արդի ժամանակաշրջանում, երբ երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի նոր պայմանները բանվոր դասակարգին ու նրա կուսակցությանը թույլ են տալիս լուծելու սոցիալիզմի կատարելագործման, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, սոցիալ-դասակարգային ու ազգային հարաբերությունների և սոցիալիստական դեմոկրատիայի կատարելագործման վիթխարի խնդիրներ։ Այլ կերպ ասած, որքան խորանում ու կատարելագործվում է մեր հասարակության առաջընթացը, այնքան պարզորոշ է արտահայտվում բանվոր դասակարգի ստեղծագործական, կազմակերպական և հասարակական-քաղաքական ակտիվությունը։

Բանվոր դասակարգը հասարակության առաջատար ուժ կմնա մինչև դասակարգային տարբերությունների լիակատար հաղթահարումը։ Հարկ է նշել, որ մեր երկրում անդասակարգ հասարակության հաստա-

տումը տեղի կունենա հիմնականում կոմունիստական ֆորմացիայի առաջին՝ սոցիալիստական փուլի պատմական շրջանակներում[3]։

Սոցիալիստական հասարակության մեջ բանվոր դասակարգի առաջատար դերը իրականացվում է նրա քաղաքական միջուկի՝ կոմունիստական կուսակցության միջոցով։ Համաշխարհային պրոլետարիատի առաջնորդներ Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը և Վ. Ի. Լենինը բազմիցս նշել են, որ բանվոր դասակարգը կարող է հաջողությամբ իրականացնել իր պատմական խնդիրը միայն այն դեպքում, երբ դրա լուծմանը համակողմանի ուղղություն է տալիս նրա առաջավոր, առավել կազմակերպված ու գիտակից ջոկատը՝ կոմունիստական կուսակցությունը։ «...Պրոլետարիատի դիկտատուրան,—նշել է Վ. Ի. Լենինը,— հնարավոր է միայն կոմունիստական կուսակցության միջոցով»[4]։

Մեր երկրում բանվոր դասակարգի կողմից քաղաքական իշխանության նվաճումը արմատապես փոխեց կոմունիստական կուսակցության դրությունն ու նրա գործունեության բնույթը։ Նա դարձավ աշխարհում առաջին սոցիալիստական պետության կառավարող կուսակցություն։

Սոցիալիստական հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հետ միասին աճում և ամրապնդվում է կոմունիստական կուսակցությունը։ Լինելով բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավորության քաղաքական առաջատար ուժը, կոմունիստական կուսակցությունը կազմակերպում և ուղղություն է տալիս սովետական ժողովրդին, առաջնորդում է նրան դեպի նորանոր հաղթանակներ։ Արդի ժամանակաշրջանում ՍՄԿԿ-ն թեև դարձել է ամբողջ ժողովրդի կուսակցությունը, այնուհանդերձ, գլխավորապես մնում է որպես բանվորական կուսակցություն։ Հանրագումարի բերելով (անցած հինգ տարում) կուսակցության աճի սոցիալական բազան, ՍՄԿԿ XXVII համագումարը նշեց. «Ավելի ու ավելի են ամրանում նրա արմատները բանվոր դասակարգի մեջ, հասարակության բոլոր խավերում»[5]։ Բանվոր դասակարգը շարունակում է մնալ կուսակցության հիմքը։

ՍՍՀՄ բազմազգ բանվոր դասակարգի ջոկատներից մեկը՝ Հայաստանի բանվոր դասակարգը, սոցիալիզմի կառուցման ընթացքում ապրել է ձևավորման ու զարգացման այն օրինաչափությունները, ինչը բնորոշ է ամբողջ երկրի բանվոր դասակարգին։ Հարկ է նշել, որ կապված հայ ժողովրդի պատմական զարգացման և հանրապետության սոցիալ-տնտեսական յուրահատուկ պայմանների հետ, ընդհանուր օրի-

նաշափությունները դրսևորել են մի շարք առանձնահատուկ կողմեր։ Հանրապետության տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքում նրա առաջատար և ղեկավար դերն անընդհատ աճել, ղարգացել ու կատարելագործվել է, ընդգրկելով սովետական հասարակության ղարգացման պատմական ընթացքը։

Սովետական բանվոր դասակարգի կազմում ՀՍՍՀ բանվոր դասակարգը անցել է պատմական հերոսական ուղի։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ աշխատավորական մյուս խավերի հետ, նա սոցիալիզմը տեսությունից վերածեց իրականության և շարունակում է մնալ Հանրապետության հասարակության առաջատար ուժը սոցիալիզմի կատարելագործման, աստիճանաբար կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում։ Նրա պատմական տարեգրության կարևոր փուլերից է սոցիալիզմի ամրապնդման և ղարգացման ժամանակաշրջանը, որն ընդգրկում է 1930-ական թվականների երկրորդ կեսից մինչև 1950-ական թվականների վերջը։ Այդ ժամանակաշրջանում Հայաստանի բանվոր դասակարգը մեծ նվաճումների հասավ սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ամրապնդման և սոցիալիստական հասարակական հարաբերությունների ղարգացման ու կատարելագործման ուղղությամբ։ Այդ փուլում ՍՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքում Սովետական Հայաստանի աշխատավորությունը հաջողությամբ ավարտեց Հանրապետությունում սոցիալիզմի տնտեսական ու քաղաքական հիմքերի կառուցումը, իր համեստ ավանդը ներդրեց ֆաշիզմի ջախջախման գործում և հետպատերազմյան տարիներին շարունակելով ստեղծարար գործունեությունը, պատմական կարճ ժամանակամիջոցում վերացրեց պատերազմի հետևանքները, վերականգնեց արդյունաբերական արտադրանքի նախապատերազմական վիճակը ու սոցիալիստական տնտեսությունը հասցրեց ղարգացման նոր մակարդակի։ 1950-ական թվականների վերջերին, ինչպես Միության մեջ ամբողջությամբ, այնպես էլ Սովետական Հայաստանում, սոցիալիզմը տարավ լիակատար և վերջնական հաղթանակ։ Սկսվեց բանվոր դասակարգի գործունեության նոր ժամանակաշրջանը, երբ պայքար է ծավալվում սոցիալիզմի կատարելագործման համար.

Ամփոփենք՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում տեղի ունեցած հեղափոխական վերափոխումներում, հասարակության նոր սոցիալական կառուցվածքի ձևավորման ու ղարգացման մեջ, մեծ Հայրենականում տարած հաղթանակի, սոցիալիստական

ժողովրդական տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման գործում վճռական դերը պատկանել է բանվոր դասակարգին, որի ավանգարդությունը, որպես սոցիալիստական հասարակության սոցիալական առաջընթացի օրինաչափ երևույթ, շարունակաբար աճել և հիմա էլ աճում է մեր երկրի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում: Հանրագումարի բերելով սովետական հասարակության զարգացման փորձը, ՍՄԿԿ XXVII համագումարը նշեց, որ «Բանվոր դասակարգը սոցիալիստական արտադրության սիստեմում ունեցած իր դերի, քաղաքական փորձի, բարձր գիտակցականության ու կազմակերպվածության, աշխատանքային և քաղաքական ակտիվության շնորհիվ համախմբում է մեր հասարակությունը, առաջատար դեր խաղում սոցիալիզմի կատարելագործման, կոմունիստական շինարարության ասպարեզում»[6]:

Այս ամենից հետևում է, որ սովետական հասարակության ամբողջական պատմության համար վճռական նշանակություն ունի նրա առաջատար հասարակական-քաղաքական ուժի պատմության լուսաբանումը, ուստի այդ դասակարգի պատմության համակողմանի ուսումնասիրությունը եղել և մնում է սովետական պատմագիտության կարևորագույն խնդիրներից մեկը:

Վերջին տարիներին բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրությունը լայնորեն ծավալվել է միութենական ու ինքնավար հանրապետություններում: Զգալի նվաճումներ են ձեռք բերվել նաև Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը ուսումնասիրելու բնագավառում: Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգի պատմության ուսումնասիրությունը հիմնականում սկսվել է 1950-ական թվականներին: Ստեղծվել է Սովետական Հայաստանի պատմության ընդհանուր հարցերին նվիրված մեծածավալ գրականություն, որում բնականաբար տեղ են գտել նաև բանվոր դասակարգի պատմության հարցերը: ՀՍՍՀ բանվոր դասակարգի պատմությանը նվիրված առաջին ընդհանրացնող աշխատանքը Ա. Գրիգորյանցի «Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում» մենագրությունն է[7]: Այն նվիրված է 1920—1960 թթ. բանվոր դասակարգի պատմությանը և համառոտակի ընդգրկում է մի շարք հարցեր. հանրապետության բանվոր դասակարգի ձևավորումն ու զարգացումը, նրա կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը և նյութական բարեկեցության աճը: Արժեքավոր են նաև գրքի՝ բանվորների ստեղծագործական ինքնագործունեության և տեխ-

նիկական առաջընթացին նվիրված բաժինները: Լուսաբանված է նաև կոմունիստական կուսակցության ստեղծագործ աշխատանքը աշխատավորական մասսաների ուժերը կենտրոնացնելու և ժողովրդական տնտեսության առջև դրված խնդիրները կենսագործելու ուղղությամբ:

Արժանին հատուցելով հեղինակի շնորհակալ աշխատանքին, կամենում ենք նշել, որ առանձին հարցեր (բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական գործունեությունը, արտադրության կառավարմանը մասնակցելը, նրա համալրման աղբյուրներն ու ձևերը, բնակչության սոցիալ-դասակարգային տեղաշարժերի վրա բանվոր դասակարգի վճռական դերը) չեն արժանացել հեղինակի ուշադրությանը: Անհրաժեշտ խորությամբ լուսաբանված չէ նաև բանվոր դասակարգի ձևավորման և նրա սոցիալիստական վերափոխման պատմական ընթացքը:

Հանրապետության հասարակության առաջատար ուժի պատմության ուսումնասիրման ուղղությամբ նշանակալի առաջընթաց է Հ. Աբրահամյանի մենագրությունը[8]: Փաստական հարուստ նյութի հիման վրա հեղինակը վերլուծել է Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը՝ բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Աշխատության շահեկան կողմերից է նաև այն, որ հեղինակը շրջանառության մեջ է դրել նոր նյութեր և իր եզրակացությունները կառուցել առատ փաստական նյութի ու տվյալների վրա:

Առանձին տեսանկյուններով ՀՍՍՀ բանվոր դասակարգի պատմությունը ուսումնասիրել են Ռ. Ազիզբեկյանը և Մ. Գրիգորյանը[9]: Նշված աշխատություններում քննարկվել ու պարզաբանվել են արդյունաբերության զարգացման, բանվոր դասակարգի քանակական ու որակական փոփոխությունների, կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման հարցերը: Մ. Գրիգորյանը վիճակագրական տվյալների ու մամուլի նյութի քննությամբ մասնակիորեն անդրադարձել է նաև բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական գործունեությանը: Աշխատությունների կարևոր արժանիքներից է և այն, որ հեղինակները սկզբնաղբյուրների հարուստ տվյալների օգնությամբ բացահայտել են հանրապետության բանվոր դասակարգի սոցիալական զարգացման ոչ միայն ընդհանուր ընթացքի օրինաչափությունները, որը բնորոշ է ամբողջ ՍՍՀՄ բանվոր դասակարգին, այլև առանձնահատկությունները՝ կապված Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հետ:

Հանրապետության բանվոր դասակարգի պատմագրության մեջ կարևոր ներդրում է «Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում» կոլեկտիվ աշխատությունը[10]։ Նրանում վիճակագրական և արխիվային տվյալների ու մամուլի նյութի քննությամբ ցույց են տրված ՀՍՍՀ բանվոր դասակարգի քանակական ու որակական աճի էվոլյուցիան՝ կապված Հայաստանի ինդուստրիալ զարգացման հետ, հանրապետության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները և նրանում բանվոր դասակարգի ունեցած առաջատար դերը, այդ դասակարգի արտադրական և ստեղծագործական ակտիվությունն ու հասարակական-քաղաքական գործունեությունը։ Գրքի կարևոր առավելություններից մեկը հասարակության առաջատար ուժի սոցիալական զարգացմանը վերաբերող հարցերի լուսաբանությունն է։

Բանվոր դասակարգի պատմության հարցերին է նվիրված Հ. Կարապետյանի մենագրությունը[11]։ Նրանում լուսաբանված է 1920—1940 թթ. ժամանակաշրջանում ՀՍՍՀ բանվոր դասակարգի ձևավորման ու զարգացման ընթացքը։ Հարուստ փաստական նյութի ընդգրկումով հանրապետության սոցիալիստական ինդուստրացման լայն ֆոնի վրա ներկայացված են բանվորական նոր կադրերի պատրաստման օղակների՝ աշխատանքային ռեզերվների սիստեմի ստեղծման ու զարգացման հարցերը։ Հասարակական արտադրության զարգացման հիմնական ուղղությունների համակողմանի զարգացման մեջ տրված են արտադրության մեջ աշխատուժի պատրաստման ու որակավորման օղակների դերն ու նշանակությունը աշխատավորների կուլտուրա-տեխնիկական մակարդակի բարձրացման գործում։ Հ. Կարապետյանի աշխատանքն ունի նաև առանձին թերություններ։ Նրանում համեմատաբար քիչ տեղ են գրավում սովետական բանվոր դասակարգի ձևավորման, արտադրության կառավարմանը նրա մասնակցության, հասարակական-քաղաքական ակտիվության և սոցիալիստական պետականության կատարելագործման հարցերը։ Նկատենք նաև, որ հեղինակը հստակորեն չի տվել Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգի ձևավորման հիմնական աղբյուրները, չի բացահայտել դրա՝ մեր հանրապետության բանվոր դասակարգի համար բնորոշ առանձնահատկությունները։

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությանն են նվիրված Բ. Օհանջանյանի, Ա. Բաղմանյանի և Ս. Ամիրյանի մենագրությունները[12]։ Բ. Օհանջանյանն իր աշխատության մեջ վերլու-

ծում, հիմնավորում ու ցույց է տալիս բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի վիթխարի նշանակությունը 1950—60-ական թվականներին, բացահայտում է աշխատավորական երկու դասակարգերի դաշինքի ամրապնդման գործում բանվոր դասակարգի ունեցած առաջատար դերի օբյեկտիվ հիմքերը։

Այդ տեսանկյունից լուսաբանվել են նաև Հանրապետության սոցիալ-դասակարգային կառուցվածքի փոփոխություններում բանվոր դասակարգի ունեցած առաջատար դերի հարցերը։

Ա. Բաղմանյանի մենագրությունում քննարկվում են բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հարցերը՝ ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, տնտեսության սոցիալիստական վերակառուցման ավարտման ժամանակաշրջանում։

Ս. Ամիրյանի գրքում այդ խնդիրը քննարկվում է ամբողջ Միության մասշտաբով։ Հասարակության առաջատար ուժի պատմության մշակման ուղղությամբ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ս. Ամիրյանի նաև մյուս աշխատությունները[13], որոնցում հեղինակը ՍՍՀՄ բանվոր դասակարգի ձևավորման ու զարգացման, հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի փոփոխությունների պատմության ուսումնասիրման ընդհանուր ֆոնի վրա, տեղական նյութի օգտագործման սահմաններում, անդրադարձել է նաև ՀՍՍՀ բանվոր դասակարգի պատմության առանձին հարցերին։

Սովետական Հայաստանի հասարակության սոցիալական կառուցվածքի վերափոխման ու զարգացման պատմությունը լուսաբանելու տեսանկյունից բանվոր դասակարգի առաջատար դերին Ս. Ամիրյանը անդրադարձել է «Հասարակության սոցիալական կառուցվածքի վերափոխումն ու զարգացումը Հայկական ՍՍՀ-ում» մենագրության մեջ[14]։

Բանվոր դասակարգի ամբողջական պատմության կարևորագույն բաղադրամասերից մեկի՝ նրա արտադրական ակտիվության (սոցիալիստական մրցության զանազան ձևերի ծագման ու զարգացման) պատմությանն են նվիրված մի շարք ուսումնասիրություններ[15]։ Այդ աշխատություններում փաստական հարուստ նյութերի հիման վրա բացահայտվել են սոցիալիստական մրցության ծագման ու զարգացման պատմությունը, կոմունիստական շինարարության մեջ մրցության ունեցած դերն ու նշանակությունը։ Այս ամենի հետ մեկտեղ քննարկվել է Հանրապետության կուսակցական կազմակերպությունների գործունեու-

թյունը աշխատավորական մասսաների արտադրական-ստեղծագործական ակտիվությունը բարձրացնելու, սոցիալիստական լայն մրցություն կազմակերպելու ուղղությամբ:

Արժեքավորելով այդ ուղղությամբ հեղինակների լուրջ ներդրումը, միաժամանակ կամենում ենք նշել, որ մի շարք հանգուցային հարցեր՝ ինչպիսիք են սոցիալիստական մրցության ու աշխատավորների ստեղծագործական ակտիվության անհրաժեշտ կապն ու փոխներգործությունը, մրցությունը որպես աշխատավորների սոցիալական ակտիվության բարձրացման և բարոյա-քաղաքական դաստիարակման միջոց, սոցմրցության անցած փուլերը, սոցիալիստական մրցության կազմակերպման մեջ տեղ գտած թերությունների և դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների հարցերը անհրաժեշտ լուսաբանում չեն ստացել կամ, լավագույն դեպքում, քննարկվել են մակերեսորեն:

Քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմությանը նվիրված միակ ուսումնասիրությունը շարունակում է մնալ մեր մենագրությունը[16]: Գրքում բացահայտվել են սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգի քանակական ու որակական կազմի տեղաշարժերը: Նոր ձևավորվող գյուղական բանվորության պատմության առանձին հարցերի լուսաբանմանն է անդրադարձել Վ. Ղազախեցյանը[17]: Հեղինակը փաստական հարուստ նյութի ընդգրկումով ցույց է տվել գյուղի սոցիալ-տնտեսական տեղաշարժերում բանվոր դասակարգի ունեցած դերը: Հանրապետությունում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, կոլտնտեսային կարգերի ստեղծման ու ամրապնդման, գյուղացիության կուլտուրական մակարդակի բարձրացման գործում բանվոր դասակարգի առաջատար դերի խնդրին է նվիրված Ս. Ալախվերդյանի գիրքը[18]:

Բանվոր դասակարգի առանձին ճյուղային ջոկատների պատմությանն են անդրադարձել Հ. Ազիզբեկյանը և Վ. Բարսամյանը[19]:

Մինչև այժմ տակավին ուսումնասիրված չէ բանվոր դասակարգի ամբողջական պատմության կարևորագույն բաղադրամասերից մեկի՝ նրա հասարակական-քաղաքական գործունեության պատմությունը: Այդ խնդրին մասնակիորեն անդրադարձել են Ա. Վարդապետյանը և Ա. Հակոբյանը[20]:

Հասարակության առաջատար դասակարգի պատմության առան-

ձին հարցեր քննարկվել են նաև ընդհանուր բնույթի աշխատություններում[21]: Հեղինակները Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման և հասարակական-քաղաքական կյանքի պատմության լուսաբանման հետ մեկտեղ, բարձրացրել են բանվոր դասակարգի պատմության մի շարք հարցեր՝ նրա քանակական աճը, պրոֆեսիոնալ պատրաստությունը, կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը, նյութական և կենցաղային պայմանների բարելավումը: Հարկ է նշել, որ հիշյալ գործերում բանվոր դասակարգի պատմությանը վերաբերող շատ հանգուցային հարցեր (հասարակական, արտադրական-ստեղծագործական և քաղաքական ակտիվությունը ու սոցիալական զարգացումը) ուսումնասիրության բուն նպատակներից դուրս դիտվելով, չեն արծարծվել, կամ լավագույն դեպքում, շոշափվել են մակերեսորեն:

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունը մասնակիորեն լուսաբանվել է նաև տնտեսագետների աշխատություններում[22]: Դրանցում քննարկվել են աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման հիմնական միտումները, ժողովրդական տնտեսության մեջ բանվորական ուժի վերարտադրության հարցերը, Հայկական ՍՍՀ բնակչության բնական աճի և միգրացիոն պրոցեսները, դրանց պատճառներն ու առանձնահատկությունները:

ՀՍՍՀ բանվոր դասակարգի պատմության հարցերը ամփոփ տրված են «Հայ ժողովրդի պատմության» VII և VIII հատորներում[23], ինչպես նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերում և այլ աշխատություններում[24]:

Հասարակության առաջատար ուժի պատմության լուսաբանմանը անդրադարձել են Հայաստանի կոմկուսի գործունեությանը նվիրված մենագրությունների հեղինակները[25]: Նշված աշխատություններում հեղինակները փաստական հարուստ նյութի համակողմանի քննությամբ ցույց են տվել կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ բանվոր դասակարգի ծավալած արտադրական ու ստեղծագործական ակտիվությունը սոցիալիզմի կառուցման տարբեր ժամանակահատվածներում:

Այսպիսով, սովետահայ պատմաբանները և մյուս հասարակագետները զգալի աշխատանք են կատարել Հանրապետության բանվոր դասակարգի պատմության առանձին պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ, որը և մեզ օգնել է սույն ուսումնասիրությունը

ստեղծելու համար։ Պատմագրության վերլուծությունից միաժամանակ երևում է, որ սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանի ՀՍՍՀ բանվոր դասակարգի ամբողջական պատմության ուսումնասիրությունը դեռևս ինչպես հարկն է չի արժանացել պատմաբանների ուշադրությանը։ Ներկա աշխատանքը այդ պրոբլեմի ուսումնասիրության ուղղությամբ կատարված առաջին փորձն է։

Սոցիալիստական հասարակության առաջատար դասակարգի պատմությունը բազմաբովանդակ է, ուստի անհնար է մեկ աշխատությամբ տալ բոլոր հարցերի սպառիչ պատասխանը։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ նրա առաջատար ուժի՝ բանվոր դասակարգի սոցիալ-տնտեսական զարգացման նյութական հիմքը և կարևոր պայմանը եղել և մնում է սոցիալիստական արդյունաբերությունը: Հետևաբար ընդհանուր գծերով կանգ առնենք հարցի այդ կողմի վրա:

Առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին (1928—1937 թթ.), ի թիվս սովետական մյուս հանրապետությունների, ՀՍՍՀ արդյունաբերությունը նույնպես բուռն զարգացում ապրեց: Սովետական ժողովրդի միասնական ընտանիքում Հայաստանը նախահեղափոխական հետամնաց, ագրարային երկրից կարճ ժամանակամիջոցում դարձավ ինդուստրիալ զարգացած սոցիալիստական հանրապետություն: Սոցիալիզմի հիմնական կառուցման շնորհիվ ՍՍՀՄ-ը 1930-ական թվականների երկրորդ կեսին թևակոխեց զարգացման նոր շրջան՝ սոցիալիզմի կառուցումն ավարտելու և այն աստիճանաբար ամրապնդելու ու զարգացնելու շրջանը:

Այդ վիթխարի պրոբլեմի կենսագործման համար անհրաժեշտ էր ամրապնդել ու ընդլայնել սոցիալիզմի տեխնիկատնտեսական բազան և ապահովել երկրի արտադրողական ուժերի հետագա վերելքը: Կուսակցության XVIII համագումարի (1939 թ.) կողմից ընդունված ժողովրդական տնտեսության զարգացման III հնգամյա (1938—1942 թթ.) պլանի դիրեկտիվներում դրվեցին այդ խնդրի լուծման առաջին քայլերը: Հնգամյա պլանում սահմանվեցին նաև Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները: Ինչպես նախորդ, այնպես էլ III հնգամյակում առաջնությունը տրվում

էր ծանր արդյունաբերությանը: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Հայտնի է, որ Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների թույլ զարգացման հետևանքով, խիստ ցածր էր նրա ինդուստրիալ մակարդակը: Ուղեցույց ունենալով ազգային ծայրամասերի և շրջանների տնտեսական ու կուլտուրական հետամնացության՝ փաստական անհավասարության վերացման մասին լենինյան ցուցումները, կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունը սոցիալիստական շինարարության ընթացքում զգալի ուշադրություն էին դարձնում նաև ՀՍՍՀ ծանր արդյունաբերության ճյուղերի զարգացմանը: Այդ բխում էր նաև արդյունաբերությունը հումքի աղբյուրներին մոտեցնելու շահերից: Սովետական Հայաստանը հարուստ է մի շարք օգտակար հանածոնե՛րի պաշարներով, որոնք արդյունաբերության արագ աճի և ծանր արդյունաբերությունը զարգացնելու մեծ հեռանկարներ էին բացում: Մյուս կողմից Հայաստանի խիստ լեռնային դիրքը և սակավահողությունը, սահմանափակում էին գյուղատնտեսության տարածական զարգացումը: Այդ հանգամանքը հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ զարգացման առաջին պլան էր մղում արդյունաբերությունը: Ավելացնենք ընդհանուր միութենական բնույթ կրող մի հանգամանք ևս. III հնգամյակի տարիներին խոշոր արդյունաբերության զարգացումը զգալիորեն պայմանավորված էր նաև միջազգային դրությամբ: Աշխարհի վերաբաժանման համար իմպերիալիստական պետությունների միջև մղվող պայքարը, որը վերաճեց պատերազմի, հարկադրում էր ամրապնդել մեր երկրի ռազմական պաշտպանունակությունը: Որպես կարևորագույն խնդիր նոր հնգամյակում պետք է իրականացվեր երկրի պաշտպանական արդյունաբերության արագատեմպ զարգացումը: Ուստի սովետական պետության տնտեսական հզորության ամրապնդման գլխավոր պայմանը մնում էր ծանր արդյունաբերությունը, որի զարգացման մակարդակից էր կախված Կարմիր բանակի զինվածությունը և տեխնիկական հագեցվածությունը ժամանակակից սպառազինության նորագույն տեսակներով:

Երրորդ հնգամյակի տարիներին Հայաստանում խնդիր դրվեց ընդլայնել ու զարգացնել սոցիալիստական ինդուստրիայի հիմքը կազմող մեքենաշինությունը, մետաղամշակումը, էլեկտրաարդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը և գունավոր մետալուրգիայի արտադրությունը: Սովետական Հայաստանի կուսակցական, պետական օրգանները, տնտեսական ու հասարակական կազմակերպությունները

հսկայական միջոցառումներ ձեռնարկեցին III հնգամյա պլանը հաջողությամբ կատարելու համար։ Հանրապետությունում լայնածավալ աշխատանքներ սկսվեցին նոր ձեռնարկությունների կառուցման և գոյություն ունեցողների վերակառուցման ուղղությամբ։ ՀՍՍՀ բանվոր դասակարգը և ինժեներատեխնիկական անձնակազմը, մոբիլիզացնելով բոլոր ուժերն ու հնարավորությունները, աշխատում էին հնգամյա պլանի խնդիրները հաջողությամբ կյանքի կոչելու համար։ Ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում ծավալվեց սոցիալիստական լայն մրցություն։ Այդ ամենի շնորհիվ ՀՍՍՀ արդյունաբերությունը III հնգամյակի երեքևկես տարիների ընթացքում զգալի առաջընթաց կատարեց։ Արդյունաբերության աննախընթաց վերելքը թե իր՝ արդյունաբերության, և թե շինարարության ու տրանսպորտի, ինչպես նաև ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի հետագա զարգացման լայն հնարավորություններ էր բացում։ Սակայն սովետական ժողովրդին չվիճակվեց եղրափակելու մեծ հեռանկարներ բացող հնգամյա պլանը՝ մեր հայրենիքի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակման պատճառով։

Այնուհանդերձ՝ Սովետական Միությունում, այդ թվում Հայաստանում, III հնգամյակի երեքևկես տարիներին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ձեռք բերվեցին հսկայական հաջողություններ։ Այսպես, օրինակ, 1938 թ. համեմատությամբ 1940 թ. արդյունաբերության համախառն արտադրանքը Միության մեջ աճեց 45[1], իսկ Հայաստանում՝ 68%-ով[2]։ Հնգամյակի կարևոր արդյունքներից էին արդյունաբերության առանցքային ճյուղերի զարգացման բարձր տեմպերը։ Այդ են հավաստում հետևյալ տվյալները։ Եթե 1913 թ. համեմատությամբ 1940 թ. ՍՍՀՄ արդյունաբերության արտադրանքը աճեց 7,7, ապա մեքենաշինությանը և մետաղամշակմանը՝ 29,7, քիմիական և նավթաքիմիական արդյունաբերությանը՝ 17,5 անգամ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը 1,94 միլիարդ կիլովատ ժամից հասավ 48,3 միլիարդ կիլովատ ժամի[3]։ Նշված ժամանակաշրջանում Սովետական Հայաստանում արդյունաբերության և նրա վերոհիշյալ ճյուղերի զարգացումը ունեցավ այսպիսի ընթացք. արդյունաբերության համախառն արտադրանքը աճեց 8,7, մեքենաշինությանը և մետաղամշակմանը՝ 15,4, շինանյութերի արդյունաբերությանը՝ 14,9 անգամ, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը 5,1 մլն. հասավ 395,3 մլն. կիլովատ ժամի[4] կամ աճեց 79 անգամ։ Արդյունաբերության արտադրանքը 1940 թ. 1913 թ. համեմատությամբ աճեց 8,7, իսկ նույն ժա-

մանակամիջոցում խոշոր արդյունաբերություն, որը կազմում է հանրապետության ինդուստրիալ զարգացման առանցքը, աճել 23 անգամ[5]։

Հայկական ՍՍՀ ինդուստրիալ առաջընթացը հանգեցրեց ոչ միայն արտադրության միջոցների («Ա» խումբ) այլև սպառման առարկաների («Բ» խումբ) արտադրության բուռն զարգացմանը։ Նրանք արդյունաբերության անշեղ զարգացման հիմքի վրա ընդլայնվում ու զարգանում էր թեթև և սննդի արդյունաբերությունը։ Աստիճանաբար աճում էր նշված ճյուղերի տեսակարար կշիռը և նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ։ 1913 թ. համեմատությամբ 1940 թ. սննդի արդյունաբերության համախառն արտադրանքը ամբողջ Միության մեջ աճել 3,8, թեթև արդյունաբերությանը՝ 4,7[6], իսկ Սովետական Հայաստանում համապատասխանաբար՝ 8,0 և 7,9 անգամ[7]։

Բերված տվյալներից երևում է, որ ինչպես ամբողջ արդյունաբերության, այնպես էլ նրա առանձին ճյուղերի (բացառությամբ մեքենաշինության և մետաղամշակման, որը հանրապետությունում նոր էր զարգանում) աճի տեմպերը ՀՍՍՀ-ում զգալի չափով բարձր էր Միության միջինից։

Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը պայմանավորված էին ինչպես լենինյան ազգային քաղաքականության իրագործմամբ, որը նպատակ էր հետապնդում ինդուստրացնել նախկինում հետամնաց ծայրամասային շրջանները, այնպես էլ արդյունաբերության, մասնավորապես ծանր արդյունաբերության զարգացման համար մեր հանրապետության հնարավորությունները։ Երրորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում տեղական հումքի (տուֆ, բազալտ, մարմար, կավ, դրանիտ և այլն) բազայի վրա էապես ընդլայնվեց նաև շինանյութերի արտադրության ծավալը։

Նկատելի հաջողություններ ձեռք բերվեցին նաև տրանսպորտի ու շինարարության բնագավառներում։

Հիմնական գծերով այսպիսին էին ՀՍՍՀ տնտեսական զարգացման հանրագումարները III հնգամյակի երեքևկես տարիներին։ Նշված տարիներին, ինչպես նաև սոցիալիզմի կառուցման նախորդ ժամանակաշրջանում, սովետական ժողովրդի և նրա առաջատար ուժի՝ բանվոր դասակարգի վիթխարի ձեռքբերումների ոգեշնչողն ու կազմակերպիչը կոմունիստական կուսակցությունն էր։

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրուժ և հանկարծակի հարձակվեց Սովետական Միության վրա։ Պատերազմը սպառնում էր մեր երկրի անկախությանն ու ազատությանը։ Սո-

վետական ժողովրդի կյանքում սկսվեց նոր՝ Հայրենական մեծ պատերազմի շրջանը։

Պատերազմի առաջին իսկ օրերին կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և սովետական կառավարությունը մշակեցին ֆաշիստական Գերմանիայի դեմ պայքարելու համար երկրի նյութական ու մարդկային ռեսուրսների մոբիլիզացման ծրագիր։ Այն շարադրված է ՍՍՀՄ ժողկոմխորհի և Համկ(բ)Կ Կենտկոմի մերձճակատային մարզերի կուսակցական ու սովետական կազմակերպություններին ուղղված 1941 թ. հունիսի 29-ի դիրեկտիվում։ Նրանում մատնանշվում էր թիկունքի ամբողջ գործունեությունը պատերազմի պայմաններին համապատասխան վերակառուցելու, ռազմապաշտպանական գործերը ամուր հիմքերի վրա դնելու և ռազմաճակատին նոր համալրումներ տալու խնդիրը։ Կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության կազմակերպող ու մոբիլիզացնող կոչերը սովետական ողջ ժողովրդին ոտքի հանեցին էկոնոմիկան պատերազմական ձևով վերակառուցելու, թշնամուն հակահարված տալու և ջախջախելու համար։ Պատերազմի հենց սկզբից սկսվեց և ամենաարագ թափով ռազմական ձևով վերակառուցվեց երկրի ամբողջ ժողովրդական տնտեսությունը, ամեն ինչ նպատակամղվեց ռազմաճակատի շահերին։ Այդ պահանջներին համապատասխան փոխվեց արդյունաբերության կառուցվածքը, ստեղծվեցին նոր ձեռնարկություններ։

Սովետական Հայաստանում նույնպես լարված աշխատանք սկսվեց ժողովրդական տնտեսությունը, առաջին հերթին արդյունաբերությունը ռազմական ռելսերի վրա փոխադրելու համար։ Հկ(բ)Կ Կենտկոմի և Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի դիրեկտիվների հիման վրա Հայաստանի կառավարությունը մի շարք որոշումներ ընդունեց հանրապետության առաջատար արդյունաբերական ձեռնարկություններում (Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական, կարբիդի, Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարաններ, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատ և այլն) զենքի և զինամթերքի արտադրություն կազմակերպելու վերաբերյալ[8]։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հանրապետության բանվոր դասակարգը աշխատավոր մասսաների համակողմանի օգնությամբ և աջակցությամբ խիստ կարճ ժամանակամիջոցում կարողացավ ամբողջ թիկունքը վերակառուցել պատերազմի պահանջներին համապատասխան և այն նպատակամղել ռազմատնտեսական պլանների ժամկետին ու անթերի կատարմանը։

Հանրագումարի բերելով արդյունաբերության աշխատանքի վերակառուցման առաջին արդյունքները, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումը (1941 թ. հոկտեմբեր) ընդգծեց, որ հանրապետության էկոնոմիկայի վերակառուցումը պատերազմական խնդիրներին համապատասխան հաջողությամբ իրականացվել է[9]։

Պատերազմի առաջին ամիսներին Հայկական ՍՍՀ արդյունաբերության մի շարք ճյուղերի ռազմական արտադրության անցնելը հետևյալ պատկերն էր ներկայացնում. անասարդյունաբերության մեջ ռազմաճակատի կարիքներին ծառայող արտադրանքի տեսակարար կշիռը 1941 թ. հուլիսին կազմում էր 26, իսկ նույն թվականի նոյեմբերին՝ 89,0%, տեքստիլ արդյունաբերության մեջ՝ 8 և 53%, տեղական արդյունաբերության մեջ՝ 0,5 և 40%[10]։ Օրեցօր աճող ռազմական պատվերների կատարման շահերից ելնելով, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Հանրապետության կառավարությունը ձեռնարկեցին բազմաթիվ միջոցառումներ՝ մեքենաշինական ու քիմիական արդյունաբերական ձեռնարկությունների թիվը ավելացնելու և դրանց արտադրական կարողությունները մեծացնելու ուղղությամբ։ Զգալի աշխատանք կատարվեց արտադրության մեքենայացման ու ավտոմատացման, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման, ինչպես նաև գիտության ու տեխնիկայի նվաճումները արտադրության մեջ ներդնելու ուղղությամբ։ Բավական է նշել, որ 1941—1945 թթ. Հայկական ՍՍՀ-ում կառուցվեցին խոշոր ու միջին կարողության 114 արդյունաբերական նոր ձեռնարկություններ[11]։ 1944 թ. Երևանում գործող արդյունաբերական ձեռնարկությունների թիվը, 1940 թ. համեմատությամբ աճել է 24,5%-ով[12]։ Միայն Լենինյան շրջանում, այդ տարիներին ստեղծվեց 21 նոր արտադրական ցեխ, որոնք տալիս էին 94 նոր տեսակի արտադրանք[13]։ Հանրապետությունում 1942 թ. ապրիլի 10-ի դրությամբ ռազմաճակատի կարիքների համար արդեն յուրացվել և արտադրվում էր ավելի քան 140, իսկ 1945 թ. արդեն մոտ 300 նոր արտադրատեսակներ, այդ թվում՝ ականանետներ, հակատանկային ու հակահետևակային ականների կորպուսներ, տարբեր տեսակի ձեռքի նռնակներ և այլն[14]։

Տեքստիլ և թեթև արդյունաբերությունը պատերազմի տարիներին կրճատեց յայն սպառման ապրանքների թողարկումը և սկսեց ռազմական պատվերներ կատարել։ Հատկանշական է, որ 1943 թ. թեթև արդյունաբերության մեջ ռազմական արտադրանքի տեսակարար կշիռը կազմում էր 54%[15]։ Ռազմաճակատին մատակարարելու ուղղությամբ

բավական մեծ աշխատանք կատարեցին կարի, տրիկոտաժի և կաշվի արդյունաբերության ձեռնարկությունները, որոնք տարեկան տալիս էին ավելի քան 32 մլն. ռուբլու համախառն արտադրանք[16]:

Պատերազմի տարիներին էլեկտրաէներգիայի արտադրության կարողություններն ավելացնելու խնդիրը դրվեց նոր սրությամբ: 1940 թ. համեմատությամբ 1945 թ. էլեկտրաէներգիայի արտադրությունն աճեց մոտ 47%-ով[17]:

1941—1945 թթ. խոշոր փոփոխություններ տեղի ունեցան հանրապետության քիմիական արդյունաբերության աշխարհագրական տեղաբաշխման ասպարեզում: Հայաստանի քիմիական արդյունաբերությունը պատերազմի տարիներին հաջողությամբ կատարեց իր կարևորագույն դերը՝ զինամթերքի, ռազմական գույքի և հանդերձանքի զանազան տեսակների արտադրությունը կազմակերպելու գործում:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմը լուրջ փորձություն էր նաև հանրապետության աշխատավորության, ամենից առաջ նրա առաջատար ուժի՝ բանվոր դասակարգի համար: Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ամենօրյա հետևողական ու նպատակասլաց ղեկավարության շնորհիվ նա պատվով բռնեց այդ քննությունը: Պատերազմի տարիներին բանվոր դասակարգի հերոսական ու հայրենանվեր աշխատանքի շնորհիվ հանրապետության սոցիալիստական արտադրությունը հաղթանակով դուրս եկավ մեծ փորձությունից և պատվով կատարեց իր առջև դրված խնդիրը՝ թիկունքին ու ռազմաճակատին անհրաժեշտ միջոցներով ապահովելու գործում:

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1946—1960 ԹԹ.)

Հայրենական մեծ պատերազմը ավարտվեց Սովետական Միության հաղթանակով: Բաղում արհավիրքների ու դժվարությունների բովով անցած սովետական մարդկանց համար սկսվեց նոր ժամանակաշրջան՝ խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի ժամանակաշրջան: Պատերազմին հաջորդող տարիներին կոմունիստական կուսակցությունը, հենվելով սովետական սոցիալիստական հասարակական ու պետական կարգի առավելությունների վրա և գործի դնելով կազմակերպական իր ողջ փորձն ու հմտությունը, գլխավորեց բանվորների, կոլտնտեսային գյուղացիության և բնակչության սոցիալական մյուս խավերի հայրենասիրական հուժկու շարժումը՝ պատերազմի հասցրած վերքերը բու-

ժելու համար։ Ժողովրդական տնտեսության նախապատերազմյան մակարդակը վերականգնելու համար սովետական ժողովրդին վիճակվեց աներևակայելի դժվարություններ հաղթահարել։ Թշնամու հասցրած վնասները վիթխարի չափերի էին հասնում։ Ինչպես հայտնի է, նա լրիվ կամ մասնակի ավերել ու հրկիզել էր 1770 քաղաք և ավելի քան 70 հազար գյուղ։ Ֆաշիստները փլատակների էին վերածել 31.850 գործարան և արդյունաբերական այլ ձեռնարկություններ, ավերել 65 հազար կիլոմետր երկաթուղագիծ։ Կողոպտել էին 1,876 սովխոզ և 2890 ՄՏԿ, 98 հազար կոլտնտեսություն և ուրիշ շատ օբյեկտներ։ Ամբողջովին վերցրած՝ Սովետական Միության նյութական կորուստները կազմեցին մոտ 2600 միլիարդ ռուբլի (նախապատերազմյան գներով), ներառյալ 679 միլիարդ ռուբլի՝ հիտլերականների թալանած ու ոչնչացրած նյութական արժեքների գինը։

Ֆաշիստների կողմից մեր երկրին հասցված ամենածանր ողբերգությունը ռազմաճակատներում և ֆաշիստական գերության մեջ ավելի քան 20 միլիոն սովետական մարդկանց կորուստն էր։

Սովետական Հայաստանի տարածքը թեև պատերազմի ուղղակի գործողություններից չվնասվեց, բայց և այնպես նա ևս նյութական ու մարդկային ռեսուրսների մեծ կորուստ ունեցավ։ Բավական է նշել, որ **ՀՍՍՀ** ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ 1945 թ. կրճատվեց 7%-ով[18]։

Սովետական ժողովուրդը չընկրկեց դժվարությունների առջև։ Բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության համառ ու հերոսական գործունեության շնորհիվ պատերազմի ավարտական փուլում արդեն արդյունաբերական ձեռնարկություններն ստացան խաղաղ արտադրանք թողարկելու պլանային առաջադրանքներ։ Ժողովրդական տնտեսության վերակառուցումը հիմնականում ավարտվեց 1946 թ.։ 1946 թ. մարտին ՍՍՀՄ երկրորդ գումարման Գերագույն սովետի առաջին նստաշրջանը հաստատեց ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման IV հնգամյա պլանը (1946—1950 թթ.)։ Հնգամյա պլանի գլխավոր խնդիրն էր՝ բուժել պատերազմի վերքերը, վերականգնել և զգալի չափով գերազանցել ժողովրդական տնտեսության նախապատերազմյան մակարդակը։

ՍՍՀՄ IV հնգամյա պլանի անբաժան մասը կազմող Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հնգամյա պլանի մասին օրենքը քննվեց և հաստատվեց 1946 թ.

հուլիսին՝ հանրապետության առաջին գումարման Գերագույն սովետի XI նստաշրջանում։

1946—1950 թթ. ՀՍՍՀ արդյունաբերության զարգացումը բնութագրվում է ինչպես արտադրության ծավալի մեծացումով, այնպես էլ կառուցվածքային տեղաշարժերով։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը նկատի ունենալով Հայաստանի տնտեսական առաջընթացի օբյեկտիվ պայմանները, հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման համար սահմանեցին էկոնոմիկայի առանցքը կազմող մեքենաշինության, գունավոր մետալուրգիայի, քիմիական, շինանյութերի արդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրության աճի բարձր տեմպեր։

Չորրորդ հնգամյա պլանի խնդիրների իրականացման համար հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց 283 մլն. ռուբլի (համադրելի գներով)[19], գրեթե նույնքան, որքան II և III հնգամյակների բոլոր ներդրումները։ Այդ հսկայական միջոցների զգալի մասը (109 մլն. ռուբլի) տրամադրվեց արդյունաբերության համակողմանի զարգացմանը[20]։ ՀՍՍՀ ժողովրդական տնտեսությանը հատկացված կապիտալ ներդրումների ընդհանուր բաժնում նժարի թեքումը արդյունաբերության օգտին բխում էր ամենից առաջ հանրապետության ամբողջ էկոնոմիկայի վերականգնման ու հետագա զարգացման շահերից։ Դա ինքնին հասկանալի է. արդյունաբերությունը, առանձնապես խոշոր արդյունաբերությունը, կազմում է ամբողջ ժողովրդական տնտեսության հիմքը և առանցքը։ Հետևաբար նրա զարգացման տեմպերից է կախված ամբողջ էկոնոմիկայի զարգացման դինամիկան։

Կապիտալ ներդրումների աճը օրինաչափորեն առաջ բերեց արդյունաբերական ձեռնարկությունների ընդլայնման ու վերակառուցման պահանջ։ 1946—1950 թթ. Հայաստանում կառուցվեց, վերակառուցվեց և գործարկվեց 220 գործարան, ֆաբրիկա, էլեկտրակայան և այլ արտադրական օբյեկտներ։ Տնտեսական այս նոր պայմանները նպաստեցին հանրապետության արդյունաբերության աճին։ Այսպես, հնգամյակի առաջին երկու տարում (1946—1947 թթ.) ՀՍՍՀ արդյունաբերությունը 102%-ով կատարեց պլանային առաջադրանքները։ 1947 թ. արդյունաբերության համախառն արտադրանքը, 1940 թ. համեմատությամբ կազմեց 136,8%[21]։ Արտադրության աճի տեմպերը անընդմեջ ավելացան։ Ամբողջությամբ վերցրած, 1949 թ. վերջին արդյունաբերությունը հասավ արտադրանքի թողարկման այն մակարդակին, որը նախատեսված էր 1950 թ. վերջի համար[22]։

Վերը նշված տարիներին՝ կապված նոր գործարանների (Երևանի էլեկտրամեքենաշինական, կոմպրեսորների, ալյումինի, Կիրովականի մեքենաշինական և այլն) գործարկման և տեխնիկական վերակառուցման հետ, բազմաճյուղ արդյունաբերության մեջ հատկապես բարձր տեմպերով զարգացան մեքենաշինությունը և մետաղամշակումը, որոնց համախառն արտադրանքի թողարկումը 1950 թ. 1945 թ. համեմատությամբ աճեց 550, իսկ 1940 թ. դիմաց՝ 620%-ով[23]: Հարկ է նշել, որ մեքենաշինության ու մետաղամշակման դինամիկ առաջընթացի համար հսկայական նշանակություն ունեցավ գունավոր մետալուրգիայի զարգացումը: Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մեծ շահագրգռվածություն հանդես բերեցին հանրապետությունում գունավոր մետալուրգիայի վերականգնման ու զարգացման համար: Գունավոր մետալուրգիայի արտադրության ավելացման համար կարևոր նշանակություն ունեցավ նոր հանքավայրերի որոնումն ու շահագործումը: Չորրորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում ծավալուն աշխատանքներ տարվեցին նոր օգտակար հանածոների յուրացման և դրանց մշակման տեխնոլոգիայի կատարելագործման ուղղությամբ: Բավական է նշել, որ 1950 թ. երկրաբանական ու հետախուզական աշխատանքների ծավալը 1948 թ. համեմատությամբ ավելացավ ավելի քան 4 անգամ, իսկ պղնձի և այլ գունավոր մետաղների հայտնաբերված արդյունաբերական պաշարները 2—2,5 անգամ[24]:

Հումքային հարուստ բազայի վրա կառուցվեցին Քաջարանի, Դաստակերտի, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատները, իսկ Ղափանի և Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատներում շարք մտան նոր արտադրամասեր: Հանրապետությունում գունավոր մետալուրգիայի արտադրության ծավալի մեծացմանը զգալի չափով նպաստեց նաև Քանաքեռի ալյումինի գործարանի առաջին հերթի գործարկումը (1950 թ.): Հնգամյակի տարիներին Հայաստանում գունավոր մետալուրգիայի արտադրությունն ավելացավ 52%-ով[25]: Հնգամյակի կարևոր արդյունքներից էր էլեկտրաէներգիայի արտադրության աճը: Ուշադիր ունենալով Հանրապետությունում նոր հիդրոկայանների նախագծման և կառուցման աշխատանքներն արագացնելու, ինչպես նաև գործող կայանների կարողություններն ավելացնելու ուղղությամբ ՀԿ(բ)Կ XIV համագումարի (1948 թ.) որոշումը, կուսակցական կազմակերպությունները ու բանվոր դասակարգը հսկայական աշխատանք ծավալեցին: 1948 թ. գործարկվեց Քանաքեռ ՀԷԿի վերջին ագրեգատը, իրագործվեց

Ջորագէսի արմատական վերակառուցումը։ Նույն տարում շահագործման հանձնվեց Սևանի ջրամբարող կառուցվածքը, իսկ մեկ տարի հետո՝ ստորերկրյա հիդրոկայանը։ Ընդհանուր առմամբ 1946—1950 թթ. Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ էներգետիկայի գծով կատարվեց ավելի քան 300 մլն. ռուբլու (1955 թ. հուլիսի 1-ի գներով) կապիտալ ներդրումներ՝ մի գումար, որը գերազանցում էր 1921—1940 թթ. ընթացքում էներգետիկայի գծով կատարված ողջ կապիտալ ներդրումներին։ Այդ ամենի շնորհիվ 1950 թ. ՀՍՍՀ էլեկտրակայանների կարողությունն արդեն 60 անգամ գերազանցեց 1913 թ. մակարդակը, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը հասավ համարյա 1 միլիարդ կիլովատ ժամի, մոտ 200 անգամ գերազանցելով 1913 թ.՝ 2,4 անգամ՝ 1940 թ. և 2,1 անգամ 1945 թ. արտադրված էլեկտրաէներգիայի քանակը[26]։ Հնգամյակի տարիներին հանրապետության անընդհատ ինդուստրիալ զարգացման շնորհիվ արդյունաբերության մեջ արագորեն բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, որը 1940 թ. համեմատությամբ 1950 թ. աճեց 53%-ով[27]։

Էական տեղաշարժեր կատարվեցին քիմիական արդյունաբերության մեջ, որը ՀՍՍՀ տնտեսության զարգացման համար հսկայական նշանակություն ուներ։ Ալավերդում ընդլայնվեց պղնձարջասպի և ծծմբաթթվի արտադրությունը։ Երևանում շահագործման հանձնվեց «Պոլիվինիլացետատ» գործարանի առաջին արտադրամասը։ Կիրովականում գործարկվեց ազոտի արտադրամասը, իսկ Էջմիածնում շարք մտավ պլաստմասսաների գործարանը։ Քիմիական նոր ձեռնարկությունների ավելացումը և դրանցում գիտության ու տեխնիկայի նվաճումների լայն ներդրումը հանգեցրին բազմաճյուղ քիմիական արդյունաբերության վերելքին։ Հնգամյակի տարիներին քիմիական արդյունաբերության արտադրանքը հանրապետությունում ավելացավ 2,5 անգամ[28]։ 1946—1950 թթ. վերականգնվեց և հետագա զարգացում ստացավ նաև տեքստիլ, սննդի և թեթև արդյունաբերությունը։ 1950 թ. ՀՍՍՀ թեթև արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ ավելացավ 146, իսկ սննդի արդյունաբերությանը՝ 39%-ով[29]։ Միութենական նշանակություն ունեցող արդյունաբերական ճյուղերին զուգընթաց շարունակում էր զարգանալ նաև տեղական արդյունաբերությունը և արհեստագործական կոոպերացիան։ Գործարկվեցին տեղական արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ՝ հախճապակու, մեքենաշինական և նորոգման գործարանները, կահույքի ֆաբրիկան, ինչպես նաև ստեղծվեցին գործող ձեռնարկությունների մաս-

նաճյուղեր Հանրապետության տարբեր շրջաններում։ Վերջինիս շնորհիվ նկատելիորեն ընդարձակվեց այդ ճյուղի աշխարհագրությունը և ավելացվեց թողարկվող արտադրանքի տեսականին։ Տեղական արդյունաբերության և արհեստագործական կոոպերացիայի արդյունաբերության աճի դինամիկան ցույց տալու համար նշենք, որ այն 1950 թ. գրեթե 1,5 անգամ գերազանցեց նախապատերազմյան մակարդակը[30]։

Հատկանշական է, որ IV հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանի ամբողջ արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերը բարձր էին Միության միջինից։ Այսպես, ՍՍՀՄ արդյունաբերության արտադրանքը նախատեսված 48-ի փոխարեն աճեց 73%-ով, իսկ Հանրապետությունում այդ աճը 110-ի փոխարեն կազմեց 149%[31]։

ՀՍՍՀ-ում ծավալված շինարարական լայն աշխատանքները խթանեցին շինանյութերի արտադրության ծավալի մեծացմանը։ Շինանյութերի արդյունաբերության արագ զարգացմանը նպաստեցին նաև դրա հումքի առկայությունը և կապիտալ շինարարության լայն ծավալումը։ Օրինակ՝ 1940 թ. համեմատությամբ 1950 թ. շինաքարերի հանույթն ավելացավ 3,4, կղմինդրի արտադրությունը՝ 2,1, ցեմենտինը՝ 1,6 անգամ[32]։ Նկատելիորեն բարելավվեցին տրանսպորտի աշխատանքները։

Այսպիսով, Հայաստանի աշխատավորությունը սովետական ժողովրդի համակողմանի օգնությամբ ու աջակցությամբ կարողացավ հաջողությամբ կյանքի կոչել IV հնգամյա պլանը։ Անշուշտ, Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում ձեռք բերված հաջողությունների առաջատար դերը պատկանում էր բանվոր դասակարգին, որը կոմունիստական կուսակցության դեկավարությամբ աշխատանքային սխրանքներ էր գործում, իր հետևից տանելով կոլտնտեսային գյուղացիությանն ու բնակչության մյուս խավերին։

Չորրորդ հնգամյա պլանի հաջող կատարումն էլ ավելի ամրապնդեց մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքը և նրա տնտեսական-տեխնիկական բազան։ Այդ ամենը անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեցին սոցիալիստական հասարակարգի համակողմանի զարգացման ու կատարելագործման համար։

1950-ական թվականներին սոցիալիստական բազմաճյուղ էկոնոմիկայի հետագա զարգացման խնդիրները սահմանվեցին V (1951—1955 թթ.) և VI (1956—1960 թթ.) հնգամյակների պլաններում։ Այդ հնգամյակները Սովետական Հայաստանի բազմաճյուղ տնտեսության հուժկու զարգացման տարիներ էին։ Կոմունիստական կուսակցությունը տնտեսական շինարարության բնագավառում ձեռնարկեց մի շարք մի-

ջոցառումներ՝ միութենական հանրապետությունների իրավունքներն ընդլայնելու համար։ ՍՄԿԿ-ն և սովետական կառավարությունը անում էին ամեն ինչ սովետական բոլոր հանրապետությունների բուռն զարգացման համար։ Բավական է նշել, որ միայն Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ 1950-ական թվականների տասնամյակում ներդրվեց 1525 մլն. ռուբլի, որից 1201 մլն. ռուբլին պետական և կոոպերատիվ ձեռնարկություններում ու կազմակերպություններում[33]։ Լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ, ի թիվս մյուս հանրապետությունների, Հայաստանը նույնպես աննախընթաց վերելք ապրեց։ 1951—1960 թթ. Հայկական ՍՍՀ-ում շահագործման հանձնվեցին մի քանի տասնյակ խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց թվում Երևանի էլեկտրալամպերի գործարանը, Թումանյանի հրակայուն ապրյուսի կոմբինատը, Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատի էլեկտրոլիզի, Լենինականի լուսատեխնիկական գործարանի ապակու, Երևանի ալյումինի գործարանի ֆոլգագլանման ու ձեթ-օճառի կոմբինատի նոր արտադրամասերը և շատ ուրիշ գործարաններ, ֆաբրիկաներ ու արտադրամասեր։

Կուսակցության ու կառավարության նորանոր ձեռնարկումների շնորհիվ էապես աճեց արտադրության տեխնիկական առաջընթացը։ Այդ գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ կենտկոմի 1955 թ. հուլիսյան պլենումը, որը սահմանեց արտադրության տեխնիկական առաջընթացի կուրս[34]։ Հայաստանի կոմունիստական կուսակցության XVIII համագումարը (1956 թ.) խնդիր դրեց լուրջ ուշադրություն դարձնել ձեռնարկություններում առաջավոր տեխնիկայի յուրացմանն ու արմատավորմանը[35]։ Հանրապետության կուսակցական, պետական, տնտեսական և հասարակական կազմակերպությունները մեծ աշխատանք կատարեցին տեխնիկայի կատարելագործման, արտադրության տեխնոլոգիական պրոցեսների բարելավման և արդյունաբերության առաջատար մի շարք ճյուղերի արտադրական պրոցեսների կոնվեյերացման ու մեքենայացման ուղղությամբ։ Միայն VI հնգամյակի տարիներին ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ նոր տեխնիկայի գծով իրականացվեց մոտ 800 կարևորագույն միջոցառում, որի կեսից ավելին արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման ուղղությամբ։

Հասարակական արտադրության մեջ կատարված էքստենսիվ և ինտենսիվ տեղաշարժերը ուղեկցվեցին հանրապետության արդյունաբերության բուռն աճով, որի համախառն արտադրանքը 1960 թ.

1950 թ. համեմատությամբ աճեց ավելի քան 3 անգամ[36], իսկ 1913 թ.-մակարդակը գերազանցեց 68,2 անգամ[37]։

Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացումը V և VI հնգամյակների տարիներին ևս բնորոշվում էր ծանր արդյունաբերության ճյուղերի՝ մետաղամշակման, մեքենաշինության, քիմիական արդյունաբերության, գունավոր մետալուրգիայի և էլեկտրաէներգիայի արտադրության աճի բարձր տեմպերով։ Ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղը շարունակում էր մնալ մեքենաշինությունը և մետաղամշակումը, որոնց տեսակարար կշիռը ՀՍՍՀ ամբողջ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում 1950թ. 5,8%-ից 1960 թ. հասավ 14,4 %-ի[38], իսկ արտադրանքի ծավալն ավելացավ մոտ 7 անգամ[39]։ Հայաստանի կոմունիստական կուսակցության XVIII համագումարը խնդիր էր դրել արդյունաբերության հետագա զարգացումը տանել ոչ էներգատար ճյուղերի, մասնավորապես ճշգրիտ մեխանիկայի ստեղծման և ընդլայնման ուղղությամբ։ Կյանքի կոչելով համագումարի որոշումները, 1950-ական թվականներին հանրապետությունում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց մեքենաշինության, գործիքաշինության, հաստոցաշինության և էլեկտրատեխնիկական սարքերի արտադրության զարգացման վրա։ Այսպես, 1950 թ. համեմատությամբ 1960 թ. գեներատորների արտադրությունը ավելացավ ավելի քան 3 անգամ, հաստոցներինը՝ ավելի քան 4, տրանսֆորմատորներինը՝ մոտ 5, իսկ կոմպրեսորներինը՝ ավելի քան 4 անգամ[40]։

Շարունակում էր զարգանալ նաև քիմիական արդյունաբերությունը, որի համախառն արտադրանքը այդ տարիներին աճեց 441%-ով[41]։ Հինգերորդ և վեցերորդ հնգամյակները նշանավորեցին մեծ հաջողություններ էներգետիկ բազայի զարգացման ուղղությամբ։ Նշված ժամանակամիջոցում արմատապես փոխվեց ՀՍՍՀ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը։ Նկատի ունենալով էներգետիկ ռեսուրսների սահմանափակ լինելը և Սևանա լճի ջրերի խնայողաբար օգտագործման անհրաժեշտությունը, որոշ չափով սահմանափակվեց էներգատար արդյունաբերության հետագա զարգացումը։ Էլեկտրաէներգիայի արտադրության այլ աղբյուրների օգտագործման և էլեկտրաէներգիայի արտադրության բազայի ընդլայնման շնորհիվ այդ ճյուղի ընդհանուր կարողությունը 1950 թ. 949,3 մլն. դիմաց 1960 թ. կազմեց 2746,8 մլն. կիլովատ ժամ[42], գերազանցելով 9,6 անգամ՝ 1937 թ. և 6,9 անգամ 1940 թ. արտադրված էլեկտրաէներգիայի քանակը[43]։

Որակական և քանակական տեղաշարժեր տեղի ունեցան հանրա-

պետության թեթև և սննդի արդյունաբերության մեջ, կապված նոր ձեռնարկությունների կառուցման ու վերակառուցման, ինչպես նաև դրանց տեխնիկատնտեսական բազայի ամրապնդման հետ։ Այդ տարիներին երևանում շահագործման հանձնվեց մարգարինի, կոնյակի, կոմբինացված կերերի, Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի մշակման ֆաբրիկային, Ախթալայի յուղի-կաթի, Շահումյանի մետաքսագործվածքային գործարանները և այլն։ Հանրապետության թեթև արդյունաբերության համախառն արտադրանքը 1960 թ. 1950 թ. համեմատությամբ աճել է 365, իսկ սննդինը՝ 155%-ով[44]։

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ առանձնապես աճի բարձր տեմպեր են դիտվել արդյունաբերության, ամենից առաջ նրա առանցքը կազմող ծանր արդյունաբերական ճյուղերում։ Այս տեսակետից բնորոշ են հետևյալ թվերը։ 1959 թ. ՀՍՍՀ արդյունաբերության ընդհանուր ծավալը 1940 թ. համեմատությամբ ավելացավ 7 անգամ, նույն ժամանակամիջոցում գունավոր մետալուրգիայի արտադրությունը ավելացավ 8, մեքենաշինությանն ու մետաղամշակմանը՝ 38, իսկ քիմիական արդյունաբերությանը՝ 18 անգամ[45]։

Արդյունաբերության և շինարարության զարգացման հետ համատեղ նկատելի առաջընթաց ապրեց նաև տրանսպորտը։ Ավելացավ ժողովրդատնտեսական բեռների ու ուղևորների փոխադրումը։ Այսպես, 1960 թ. Հայաստանի երկաթուղային տրանսպորտը փոխադրեց 14024 հազար տոննա բեռ՝ 1950 թ. 5530 հազար տոննա բեռի դիմաց[46]։ Նույն ժամանակամիջոցում ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրումը 12,5 մլն. տոննայից հասավ 69,4 մլն. տոննայի[47]։ Այդ նշանակում է, որ 1960 թ. Հայաստանում երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտը միասին 46 անգամ ավելի բեռ էին տեղափոխել, քան 1950 թ.։

Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում ժողովրդական տնտեսության մեջ տեղի ունեցող տեխնիկատնտեսական տեղաշարժերը ստեղծեցին անհրաժեշտ պայմաններ բանվոր դասակարգի քանակական ու որակական աճի և նրա սոցիալական զարգացման համար։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԱՃԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ, ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԱՑԱԾ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

Սոցիալիստական հասարակարգի պատմական փորձը վկայում է, որ արտադրողական ուժերի զարգացման հիման վրա բոլոր դասակարգերի և սոցիալական խմբերի աստիճանական մերձեցումը կատարվում է բանվոր դասակարգի քանակական աճի ու նրա առաջատար դերի բարձրացման պայմաններում։

Սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում Հայաստանի բանվոր դասակարգը կրել է քանակական և կառուցվածքային մեծ փոփոխություններ։ Փոփոխությունների էվոլյուցիան պատմական տվյալ փուլում կարելի է բաժանել երկու հիմնական ժամանակաշրջանի։ Առաջին՝ նախապատերազմյան տարիներից մինչև IV հնգամյակի վերջը (1938—1950 թթ.) երկրորդ՝ 1950-ական թվականները ամբողջությամբ։

Արտադրության զարգացման մակարդակին ու խնդիրներին համապատասխան՝ դրանցից յուրաքանչյուրը բանվոր դասակարգին ներկայացրած պահանջների տեսակետից հագեցել է նոր բովանդակությամբ։ Սոցիալիստական շինարարության պրոբլեմների լուծման ճանապարհին այդ ժամանակաշրջաններում առաջադրվել են նոր խնդիրներ, պահանջվել է բանվոր դասակարգի համապատասխան աճ ու կառուցվածքային փոփոխություն։

Առաջին ժամանակաշրջանն իր հերթին, դարձյալ պայմանականորեն, բաժանվում է առանձին ժամանակահատվածների, որոնք միմյանցից տարբերվում են հանրային արտադրության մասշտաբների ընդլայնման և ժողովրդական տնտեսության ճյուղերի միջև աշխատուժի

բաշխման ու վերաբաշխման խնդիրներով ու դրանց լուծման հնարավորություններով։ Մեր կարծիքով, առաջին ժամանակաշրջանը կարելի է բաժանել երեք ժամանակահատվածների.

ա) Նախապատերազմյան տարիներ (1938—1940 թթ.)

բ) Հայրենական մեծ պատերազմի տարիներ (1941—1945 թթ.),

գ) Չորրորդ հնգամյակ (1946—1950 թթ.)։

II հնգամյա պլանի (1933—1937 թթ.) խնդիրների հաջող կատարման շնորհիվ անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմաններ ստեղծվեցին ազգային բոլոր հանրապետությունների, այդ թվում Սովետական Հայաստանի տնտեսության ու կուլտուրայի հետագա զարգացման համար։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը, որպես առաջնահերթ խնդիր, սոցիալիզմի ամրապնդման նախապատերազմյան տարիներին, բարձրացրեց երկրի ծանր արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և գյուղատնտեսության հետագա զարգացման հարցերը, որոնք իրենց արտահայտությունը գտան ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման III հնգամյա (1938—1942 թթ.) պլանում։

Այդ տարիներին հանրապետության տնտեսական կյանքում կատարվող խոշոր տեղաշարժերը (ինչպես նշվել է առաջին գլխում) պահանջում էին նոր աշխատուժի ընդգրկում արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և մյուս առաջատար ճյուղերի մեջ։ Սրա գործեն աճեց հանրապետության բանվոր դասակարգը։ Այսպես, եթե 1936 թ. Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր ծառայողների թիվը 105 հազար էր, ապա 1940 թ. այն հասավ 156 հազարի[1] կամ ավելացավ մոտ 48,6%-ով (Միության մեջ աճեց 22%-ով)[2]։ Բանվոր դասակարգը առավել բարձր տեմպերով աճեց արդյունաբերության մեջ (1936 թ. 22 հազարից 1940 թ. հասավ 44 հազարի կամ աճեց 2 անգամ)[3]։

Ինչ վերաբերում է ճյուղային կառուցվածքում առաջացած տեղաշարժերին, ապա այստեղ ակնառու է բանվոր դասակարգի ինդուստրիալ ջոկատի քանակական աճը։

Այսպիսով, սոցիալիզմի ամրապնդման տարիներին (III հնգամյակ) ժողովրդական տնտեսության աճող պահանջները բավարարվել են բանվորական նոր ուժերի ընդգրկումով։ Դա նշանակում է, որ նախապատերազմյան տարիներին բանվոր դասակարգի ճյուղային կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները գլխավորապես կատար-

վել են ոչ թե ի հաշիվ նրա ներքին ռեզերվների։

Հայաստանի, ինչպես և մյուս հանրապետությունների բանվոր դասակարգի կազմում լուրջ քանակական փոփոխություններ տեղի ունեցան մեծ Հայրենականի տարիներին։ Համընդհանուր զորակոչման հետևանքով պատերազմի առաջին տարիներին (1941—1942 թթ.) ՍՍՀՄ բանվոր-ծառայողների թիվը մոտ երկու անգամ նվազեց նախապատերազմականի համեմատությամբ և 1941 թ. սկզբի 31,5 միլիոնից տարեվերջին հասավ 18,5 միլիոնի[4], իսկ Սովետական Հայաստանում նույն տարվա 9 ամսում (մինչև հոկտեմբերի 1-ը)՝ 155,7 հազարից նվազեց 123,1 հազարի[5]։ 1942 թ. Միության ժողովրդական տնտեսության մեջ նախապատերազմականի համեմատությամբ, 11,4 միլիոն մարդ պակաս էր ընդգրկված[6], իսկ Հայաստանում մոտ 39 հազար[7]։ Այսպիսով, 1941 թ. համեմատությամբ 1942 թ. վերջին ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր-ծառայողների թիվը ՍՍՀՄ-ում կրճատվել է 60%-ով, իսկ Հայաստանում՝ 26%-ով։

Ինչո՞վ էին պայմանավորված ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության հիմնական արտադրող ուժի թվաքանակի կրճատման ցածր տեմպերը։ Բանն այն է, որ պատերազմի առաջին տարիներին Հայաստանի արդյունաբերությունը և ժողովրդական տնտեսության առաջատար մյուս ճյուղերը բանվորական ուժով համալրվում էին սոցիալական տարբեր խմբերի ավելի մեծ թվով մարդկային ռեսուրսների հաշվին։ Դրանում, թերևս, էական դեր էին խաղում տնային ու անձնական օժանդակ տնտեսություններում զբաղված աշխատունակ բնակչության մեծ հնարավորությունները և երկրի արևմտյան շրջաններից դեպի Հայաստան կատարված սովետական հազարավոր մարդկանց էվակուացիան։ Բավական է նշել, որ 1942 թ. հունվարի 1-ի դրությամբ վերջիններիս թիվը Հանրապետությունում հասնում էր 22 հազարի, որոնց կեսից ավելին աշխատունակ էր[8]։ Հիմնականում այս երկու գործոններն էին նպաստում արդյունաբերական կադրերի համալրմանը։

Արտադրության և աշխատուժի հարաբերակցության մեջ առաջացած անհամամասնության հաղթահարումը պահանջում էր իրականացնել պետական մասշտաբի միջոցառումներ՝ աշխատունակ բնակչությանն աշխատանքային ոլորտ մոբիլիզացնելու համար։ Այդ նպատակին էին ուղղված 1942—1945 թթ. ՀԿ(բ)Կ կենտկոմի և Հանրապետության կառավարության ընդունած համապատասխան որոշումները[9]։

Արդեն 1943 թ. ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստա-

նում սկսեց աճել բանվորների քանակը՝ կապված աշխատունակ բնակչության (կանայք, թոշակառուներ, պատերազմի և աշխատանքի հաշմանդամներ, անչափահասներ) աշխատանքային ճակատ ներգրավելու միջոցների արագացնելու հետ: 1942 թ. (116,4 հազար բանվոր-ծառայող) համեմատությամբ հաջորդ տարիներին ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ բանվոր-ծառայողների թիվն ավելացավ՝ 1943 թ.՝ 4,9 հազարով կամ 4,2%-ով, 1944 թ.՝ 7,9 հազարով կամ 10,6%-ով, 1945 թ.՝ 25,9 հազարով կամ 14,5%-ով[10], իսկ Միության մեջ համապատասխանաբար՝ 5,4, 21,6 և 15,7%-ով[11]: Թեև պատերազմի առաջին տարիներին հանրապետության բանվոր դասակարգի թիվը զգալիորեն կրճատվել էր, սակայն, 1945 թ. արդեն վերականգնվեց 1940 թ. մակարդակը: 1945 թ. ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր-ծառայողների թիվը կազմում էր 155,1 հազար, 1940 թ. 155,7 հազարի դիմաց: Բանվոր դասակարգի զբաղվածությունը բնութագրող գիծը արդյունաբերության մեջ (հատկապես առաջատար ճյուղերում) նրա տեսակարար կշռի բարձրացումն է: Այսպես, եթե ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ բանվոր-ծառայողների թիվը 1940 թ. համեմատությամբ 1942 թ. կրճատվել էր 39,3 հազարով, ապա նույն ժամանակամիջոցում արդյունաբերության մեջ աշխատողներինը ավելացել էր մոտ 1000 մարդով[12]: Հաջորդ տարիներին նույնպես արդյունաբերության մեջ ներգրավված բանվորների թիվը աճել է[13]:

Որպես ընդհանուր միութենական երևույթ, բանվորների տեսակարար կշիռը շարունակում էր բարձր մնալ հասարակական արտադրության մի շարք ճյուղերում՝ մեքենաշինության ու մետաղամշակման, քիմիական, գունավոր մետալուրգիայի և էլեկտրաարդյունաբերության, ինչպես նաև տեքստիլ ու սննդի արդյունաբերության մեջ: Բանն այն է, որ պատերազմի տարիներին հասկանալի պատճառներով է՛լ ավելի մեծացան պահանջները ծանր արդյունաբերության նշված ճյուղերի նկատմամբ: Գործող բանակը հրամայաբար պահանջում էր ընդլայնել ու կատարելագործել ականանետների, ձեռքի նռնակների, հակատանկային ականների զանազան տեսակների և այլ զինամթերքների արտադրությունը: Այդ հանգամանքը խնդիր էր առաջադրում նշված ճյուղերում հնարավորին չափ կայունացնել բանվորական ուժի քանակակազմը, որից մեծապես կախված էր նրանց անխափան ու ռիթմիկ աշխատանքը:

Ավելացնենք նաև, որ սովետական պետությունը մեծ կարևորու-

թյուն տալով ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերի համախառն արտադրանքի ավելացմանը, հատուկ ուշադրություն էր դարձնում նաև դրանցում բնակչության ամենաակտիվ և պրոֆեսիոնալ բարձր մակարդակ ունեցող աշխատանքային տարր ներգրավելու վրա: Այդ են վկայում հետևյալ տվյալները: 1941—1945 թթ. Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատող ավելի քան 8800 կոմերիտականներից 500-ը ներգրավված էին էլեկտրաարդյունաբերության մեջ, 1000-ը՝ գունավոր մետալուրգիայում, 1100-ը՝ քիմիական արդյունաբերության մեջ[14]: Նշված տարիներին ՀՍՍՀ աշխատանքային ռեզերվների վարչության հաստատություններից արտադրություն մտած մոտ 9 հազար տարբեր մասնագիտության բանվորներից 6621-ը մետաղագործներ էին, 447-ը՝ քիմիագործներ, 1046-ը՝ լեռնագործներ և այլն[15]:

Ինչ վերաբերում է սննդի ու տեքստիլ արդյունաբերության մեջ զբաղված աշխատողների քանակախտազմի համեմատաբար կայուն լինելուն, ապա պետք է ասել, որ դեռևս նախապատերազմական տարիներից ժողովրդական տնտեսության այդ ճյուղերում բարձր էր կանանց տեսակարար կշիռը, հետևաբար, ավելի կայուն էր կադրային բանվորների թվակազմը:

Պատերազմական դրության հետ սերտորեն առնչված հանրային տնտեսության մի շարք ճյուղերում (շինարարություն, առևտրի և սպասարկման այլ ոլորտներ) աշխատողների թիվը նախապատերազմականի համեմատությամբ զգալիորեն կրճատվեց[16]: Պետական և տնտեսական կառավարման օրգանների, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների ապարատում աշխատողների թիվը 1940 թ. 12,9-ի դիմաց 1945 թ. կազմեց 10,9 հազար[17]:

Հետևությունն այն է, որ պատերազմի տարիներին, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում լայնորեն գործադրվել է բանվորական ուժի բաշխման ու վերաբաշխման միտումը: Առաջին դեպքում նկատի ունենք աշխատունակ բնակչության մոբիլիզացիան և նրա բաշխումը ժողովրդական տնտեսության ճյուղերի միջև, իսկ երկրորդ դեպքում՝ երբ մի ճյուղից կամ ոլորտից աշխատուժը փոխադրվել է մեկ այլ ճյուղ կամ ոլորտ: Կոնկրետ դեպքում բանվորական ուժը ոչ արտադրական ոլորտներից վերաբաշխվել է արտադրական ճյուղերի մեջ:

Հաղթականորեն ավարտելով պատերազմը, սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ խաղաղ շինարարությանը: Ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման տարիներին հանրապետության զարգացման բնորոշ գծերից էր ամբողջ բնակչության

կազմում բանվոր դասակարգի քանակական արագ աճը: Բանվոր-ծառայողների թիվը Հայաստանում 1945 թ. 155,1 հազարից 1950 թ. հասավ 236,5 հազարի[18], կամ աճեց 52%-ով: Բնակչության զբաղվածության աճի հետ միաժամանակ զգալիորեն փոխվեց նրա ճյուղային կառուցվածքը: Նկատենք, որ պատերազմական տարիների համեմատությամբ 1946—1950 թթ. թե Հանրապետությունում և թե Միությունում բանվոր դասակարգի քանակը առանձնապես մեծացել է ժողովրդական տնտեսության այն ճյուղերում, որոնք վճռական դեր են կատարել արտադրության տեխնիկատնտեսական առաջընթացի գործում: Արդեն 1950 թ. արդյունաբերության մեջ զբաղվածների միջին թիվը կազմում էր ամբողջ բանվոր-ծառայողների 34,1%-ը՝ 1940 թ. 28%-ի դիմաց, իսկ շինարարությունում համապատասխանաբար՝ 10,7%, 9,8%: Զգալիորեն ավելացավ նաև տրանսպորտի բնագավառի բանվոր-ծառայողների թիվը[19]:

Այդ տարիներին արդյունաբերության վերելքի պայմաններում նկատելի փոփոխություններ առաջացան նաև արդյունաբերության բանվորների ճյուղային կառուցվածքում: Աբագորեն աճեց մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության բանվորների թիվը: Այն 1950 թ. կազմել է ամբողջ արդյունաբերության մեջ աշխատողների 15,3%-ը (1945 թ. այն եղել է 12,0%): Շինանյութերի արտադրության մեջ՝ 11,7%-ը (1945 թ. այն եղել է 4,1%)[20]:

Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության ու շինանյութերի արտադրության մեջ զբաղված բանվորների քանակական կազմում առաջացած փոփոխությունները, նրա զարգացման դինամիկան պայմանավորված էին այդ ճյուղերում տեղի ունեցող զգալի տեղաշարժերով: Առաջ անցնելով նշենք, որ հիշյալ ճյուղերում բանվորների տեսակարար կշիռն աճման միտում ուներ նաև 1950-ական թվականներին՝ շնորհիվ այդ ճյուղերի արագ ընդլայնման ու զարգացման:

Եթե ժողովրդական տնտեսության վերը նշված ճյուղերում բանվոր դասակարգն ունեցել է բացարձակ քանակական աճ, ապա առևտրի, մթերումների, հասարակական սննդի, նյութատեխնիկական մատակարարման և պետական ու հասարակական հիմնարկներում ընդհակառակը՝ հարաբերական աճ[21]: Ինչպես տեսնում ենք, ժողովրդական տնտեսության թե՛ արտադրական և թե՛ ոչ արտադրական ճյուղերում պատերազմի տարիների համեմատությամբ աճել է բանվորների քանակը: Եթե ոչ արտադրական ճյուղերում բանվոր-ծառայողների թվի ավե-

լացման միակ չափանիշը համարենք նրա հարաբերական աճը, որը ամբողջությամբ չի բնութագրում դրա զարգացման աստիճանը, ապա ընդունած կլինենք, որ Հայաստանում IV հնգամյակի տարիներին ժողովրդական տնտեսության ոչ արտադրական և արտադրական ճյուղերի մեջ բանվորական ուժերի տեղաշարժեր չեն կատարվել։ Մինչդեռ խորամուխ լինելով հարցի էության մեջ, պարզվում է ճիշտ հակառակը։ Հայտնի է, որ հետպատերազմյան առաջին տարիներին բանակի զորացրման, սփյուռքահայության ներգաղթի և միութենական այլ հանրապետություններից կատարված մեխանիկական տեղաշարժերի շնորհիվ Հայկական ՍՍՀ-ում զգալիորեն բարձրացավ աշխատանքային ռեզերվների տեսակարար կշիռը։ Այդ պատճառով, ինչպես արդեն նշվել է, ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերում տեղի ունեցավ բանվորների բացարձակ քանակական, իսկ ոչ արտադրական ճյուղերում՝ հարաբերական աճ։ Ընդ որում, ոչ արտադրական ճյուղերում զբաղվածների բաժինը ամբողջ բանվոր-ծառայողների տեսակարար կշռում ավելի ցածր էր, քան նախապատերազմյան տարիներին։ Դա նշանակում է, որ հետպատերազմյան տարիներին ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության ոչ արտադրական ճյուղերում աշխատող բանվոր-ծառայողների քանակական աճի գործակիցը էական փոփոխություններ է կրել։ Ինչով բացատրել այն հանգամանքը, որ հիշյալ տարիներին աշխատանքային ռեսուրսների պոտենցիալ մեծ հնարավորության պայմաններում ոչ արտադրական ճյուղերում զբաղված բանվոր-ծառայողների աճի տեմպերը ետ էին մնում նախապատերազմյան տարիներից։ Մեր կարծիքով, դա պայմանավորված է ոչ թե այդ ճյուղերն ընդգրկվելու տեսակետից աշխատողների թույլ շահագրգռվածությամբ կամ դրա բացակայությամբ, այլ դեպի արտադրական ճյուղերը տեղի ունեցող աշխատուժի հոսունությամբ։ Չի կարելի այս տեղաշարժերի հիմնական պատճառ դիտել արտադրության տեխնիկական առաջընթացը, որը կարող էր աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ այդ ճյուղերում բացառել մեծաթիվ բանուժի ներգրավումը։ Բանն այն է, որ այդ տարիներին արտադրության մեքենայացումը չուներ զարգացման այնպիսի մակարդակ, որ արտադրության մեջ ապահովեր բանվորական ուժի օգտագործման ինտենսիվացումը և մի ճյուղից մյուսը նրա տեղաշարժվելը դարձներ տնտեսական անհրաժեշտություն։ Կարծում ենք, որ այստեղ վճռող դերը պատկանում է աշխատուժի նկատմամբ արտադրական ճյուղերի հարաճուն պահանջների մեծացմանը։

Վերը շարադրվածից կարելի է հետևություն անել, որ IV հնգամյակի տարիներին աշխատանքային ռեսուրսների բաշխման հետ մեկտեղ նկատելիորեն աճել է նաև վերաբաշխման դերը, երբ ոչ արտադրական ճյուղերից աշխատուժը հոսել է դեպի արտադրական ճյուղեր։ Դա հետևանք էր մի կողմից արտադրական ճյուղերի բուռն զարգացման և մյուս կողմից՝ այդ ճյուղերում ձեռքի աշխատանքի մեծ բաժնի։

1950-ական թվականներին (V և VI հնգամյակներ) բանվոր դասակարգի քանակական կազմի և կառուցվածքի փոփոխություններն ստացան նոր բովանդակություն, որը պայմանավորված էր Հանրապետության տնտեսական վերելքով և արտադրության տեխնիկական առաջընթացով։ Տվյալ ժամանակաշրջանը, ինչպես արդեն նշել ենք, Սովետական Միության հանրապետությունների տնտեսության ու մշակույթի հուժկու զարգացման տարիներ էին։ Հայաստանը նույնպես անցնախընթաց վերելք ապրեց։ Արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի զարգացման հետ միասին քանակապես աճեց նաև Հանրապետության բանվոր դասակարգը (1951 թ. 253 հազարից 1960 թ. հասնելով շուրջ 427 հազարի[22], կամ աճեց մոտ 59%-ով, որը Միության միջինից բարձր է 14%-ով)[23]։

Չնայած աճի բարձր տեմպերին, այն նկատելիորեն ցածր էր նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշներից։ Այս միտումը ավելի ցայտուն է արտահայտվել արդյունաբերության մի շարք ճյուղերում։ Համեմատությունը ցույց է տալիս, որ 1940—1950 թթ. մեքենաշինության, մետաղամշակման, գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրության մեջ բանվորների թիվն աճել է ավելի բարձր տեմպերով, քան 1950-ական թվականներին։ Ինչպես ժողովրդական տնտեսության մեջ ամբողջությամբ, այնպես էլ արդյունաբերության վերոհիշյալ ճյուղերում, բանվոր դասակարգի թվակազմի աճի տեմպերի նվազումը հիմնականում բացատրվում է արտադրության տեխնիկական առաջընթացով և աշխատավորների կուլտուրատեխնիկական մակարդակի զգալի բարձրացումով։ Այդ են վկայում արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալի աճման վրա տեխնիկական առաջընթացի ունեցած ազդեցության վերաբերյալ տվյալները։ Այսպես, օրինակ, 1940 թ. համեմատությամբ 1950 թ. մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության մեջ բանվոր դասակարգի տարեկան աճը կազմել է 7%, իսկ նույն ժամանակամիջոցում այդ ճյուղի համախառն արտադրանքը ավելացել է 620%-ով։

1950—1960 թթ. այն համապատասխանաբար կազմել է 7,4 և 4267%[24]: 1940 թ. համեմատությամբ 1950 թ. էլեկտրաէներգիայի արտադրության մեջ բանվորների տարեկան աճի տեմպերը գրեթե չեն փոխվել, իսկ այդ ճյուղի արտադրանքը ավելացել է 149%-ով: Ինչ վերաբերում է 1950—1960 թթ., ապա պետք է նշել, որ 1960 թ. 1950 թ. դիմաց էլեկտրաէներգիայի արտադրության մեջ բանվորների տարեկան աճը կազմել է 0,4, իսկ համախառն արտադրանքինը՝ 388%[25]:

Արտադրության և աշխատուժի որակական առաջընթացն այս ժամանակաշրջանում ավելի է մեծացրել բանվորների վերաբաշխման անհրաժեշտությունը՝ նպաստելով աշխատուժի օգտագործման ինտենսիվության բարձրացմանը: Վ. Ի. Լենինը նշել է, որ «խոշոր մեքենայական ինդուստրիան,... անհրաժեշտորեն առաջ է բերում բնակչության շարժունություն, ...այնպես, որ բանվորների մեկ արտադրությունից մյուսը,... անցնելը դառնում է անհրաժեշտություն»[26]: Հիշյալ ժամանակաշրջանում բանվոր դասակարգի ճյուղային կառուցվածքի տեղաշարժի էությունը արտահայտվում է նրանով, որ նյութական արտադրության ոլորտի աշխատողների բաժինը կրճատվում է, իսկ ոչ արտադրականինը՝ ավելանում: Այսպես, եթե 1940 թ. նյութական արտադրությանը բաժին էր ընկնում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր-ծառայողների 89,3, իսկ ոչ արտադրական ճյուղերում՝ 10,7%-ը, ապա 40-ական թվականների վերջերից այդ տվյալներն սկսեցին նվազել և 1960 թ. համապատասխանաբար կազմեցին 81,7 և 18,3%[27]: Անկախ այս տեղաշարժերից՝ բանվոր դասակարգի ինդուստրիալ ջոկատի բաժինը շարունակում էր մեծ մնալ ամբողջ բանվոր-ծառայողների տեսակարար կշռում: Հարկ է նշել, որ 1950-ական թվականների վերջերին ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերում (շինարարության մեջ և տրանսպորտում) բանվորների աճի տեմպերը բարձր էին նախորդ տարիներից: Սոցիալիստական, ինչպես նաև այլ հասարակարգերում ոչ արտադրական ճյուղերում աշխատունակ բնակչության զբաղվածության մեծացումը տվյալ հասարակարգի տնտեսական ու կուլտուրական զարգացման բարձր մակարդակի վկայությունն է: Ինչպես Կ. Մարքսն է նշել. «Երկիրն այնքան ավելի հարուստ է, որքան արդյունքների միևնույն քանակի դեպքում արտադրող բնակչությունը է՛լ ավելի քիչ է ոչ արտադրողի նկատմամբ»[28]:

Ամփոփելով, նշենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի երկրորդ փուլում (1950-ական թվականներ) ինչպես Միության մեջ՝ ամ-

ընդունված է արտադրության տեխնիկական առաջընթացը և աշխատողների կուլտուր-տեխնիկական վերելքը: Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում էական տեղաշարժեր կատարվեցին նաև բանվոր դասակարգի գյուղական ջոկատի քանակական կազմում: Հանրապետությունում արագորեն աճեց սովխոզային բանվորությունը: 1938 թ. ՀՍՍՀ սովխոզներում աշխատողների միջին թիվը կազմեց ամբողջ բանվոր-ծառայողների 2,4, 1950 թ.՝ 3,2, իսկ 1960 թ.՝ 7,3%-ը: Մինչդեռ շինարարության մեջ և տրանսպորտում այն համապատասխանաբար կազմեց 9,8, 10,7,12,6 և 8,1, 6,3, 8,0%[29]: Թվական տվյալները ցույց են տալիս, որ 50-ական թվականներին առավել ևս ավելի մեծ տեմպերով է աճել սովխոզային բանվորությունը: Բանվոր դասակարգի գյուղական ջոկատի քանակական աճի բարձր տեմպերը բացատրվում են գյուղում պետական սեկտորի արագ աճով և արդյունաբերության, շինարարության ու տրանսպորտի համեմատությամբ՝ սովխոզների արտադրողական ուժերի ցածր մակարդակով: Այդ փաստն արձանագրեց նաև ՀԿԿ XIX համագումարը (1958 թ.): Քննարկելով սովխոզների արտադրության վիճակը և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման հարցը, համագումարը մատնանշեց, որ շատ սովխոզներ չեն դարձել բարձրապրանքային տնտեսություններ: Մի շարք սովխոզներ ետ էին մնում հանրապետության կոլտնտեսությունների միջին բերքատվության մակարդակից: Համագումարը կուսակցական և սովետական կազմակերպությունների առջև խնդիր դրեց՝ լրջորեն զբաղվել սովխոզների մեքենայական բազայի հարստացման և ՄՏԿ-ների աշխատանքի արտադրողականության շեշտակի բարձրացման հարցերով[30]:

Քննարկվող ժամանակաշրջանում արտադրության տեխնիկական առաջընթացի հետ սերտորեն կապված էական փոփոխություններ կրեց ՀՍՍՀ արտադրաարդյունաբերական անձնակազմի կառուցվածքը: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի արտադրաարդյունաբերական անձնակազմում անընդմեջ ավելացել է բանվորների բաժինը: Այսպես, 1940 թ. բանվորները կազմում էին ամբողջ անձնակազմի 69, 1950 թ.՝ 77,0, 1960 թ.՝ 82,5%-ը[31]: Դժվար չէ նկատել, որ 40-ական թվականներին արտադրաարդյունաբերական անձնակազմում բանվորների թիվը աճել է բարձր տեմպերով, իսկ 50-ական

թվականներին տեխնիկական առաջադիմության հետևանքով աճի տեմպերը նվազել են։

Նույն ժամանակամիջոցում ինժեներատեխնիկական աշխատողներին բաժին էր ընկնում 9,2, 8,1 և 8,3%-ը[32]։ Ինչպես նկատում ենք, 40-ական թվականներին ինժեներատեխնիկական աշխատողների բաժինը արտադրաարդյունաբերական անձնակազմի մեջ ավելի մեծ էր, քան 50-ական թվականներին։ Դա չի նշանակում, թե ինժեներատեխնիկական աշխատողների քանակը նվազել է։ Ավելին, արտադրության տեխնիկատնտեսական առաջընթացի հետ կապված այդ անձնակազմը ավելանում էր։ 50-ական թվականներին հանրապետությունում ծավալուն աշխատանքներ տարվեցին արդյունաբերական նոր օբյեկտների շինարարության, ձեռնարկությունների և արտադրամասերի ընդարձակման ուղղությամբ։ Սոցիալիստական ընդլայնված վերարտադրությունը խթանում էր արտադրաարդյունաբերական անձնակազմի մեջ բանվորների բարձրատեմպ քանակական աճին՝ ինժեներատեխնիկական աշխատողների համեմատությամբ։ Հետևաբար, բանվորների քանակական աճի բարձր տեմպերի պայմաններում ինժեներատեխնիկական աշխատողների բաժինը ավելանում էր կարծես աննկատ։

Աշխատանքի մեքենայացման շնորհիվ արտադրաարդյունաբերական անձնակազմում նվազեց նաև ծառայողների (գրասենյակային, հաշվապահական կադրերի և այլն) տեսակարար կշիռը, որը 1940 թ. 10,1 տոկոսի դիմաց 1960 թ. հասավ 4,8 տոկոսի[33]։

Այսպիսով, սոցիալիստական ինդուստրիայի բուռն զարգացման հետ միասին քանակապես աճել և կառուցվածքային խոր փոփոխություններ է կրել ՀՍՍՀ բանվոր դասակարգը։

Սոցիալիստական շինարարության ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրների մեջ առաջնակարգ դերը պատկանել է կոլտնտեսային գյուղացիությանը։ Դա ունի իր հիմնավոր պատճառները։

Հայտնի է, որ կապիտալիզմի օրոք քաղաքը տնտեսական, սոցիալական ու կուլտուրական հետամնացության մեջ է պահել գյուղը՝ նրան դարձնելով արդյունաբերական հումքի և գյուղատնտեսական մթերքների աղբյուր։ Սոցիալիստական հեղափոխությունն արմատապես լուծեց այդ հակադրությունը և կոլտնտեսային կարգերի հաղթանակով սկիզբ դրեց գյուղի ու քաղաքի միջև եղած էական տարբերությունների վերաց-

մանը։ Դյուղում, սակայն, սոցիալ-տնտեսական ու կուլտուրական շատ տարբերություններ դեռևս պահպանվում էին։

Սոցիալիստական ինդուստրիայի համեմատությամբ որպես թույլ արտադրողական ուժեր ունեցող ժողովրդատնտեսական ճյուղ, գյուղատնտեսությունը, բնականաբար, ավելի մեծ թվով աշխատուժի պահանջ էր ներկայացնում։ Այս հանգամանքը և ինդուստրիայի ոչ բավականաչափ զարգացած լինելը տարիներ շարունակ հանգեցնում էին գյուղական վայրերում և կոլտնտեսային արտադրության մեջ մեծաթիվ բնակչության կենտրոնացված լինելուն։

Այսպես, օրինակ, 1939 թ. հանրապետության 1282,3 հազար բնակչից 366,4 հազարը կամ 29%-ը բնակվում էին քաղաքներում ու քաղաքատիպ ավաններում, իսկ 915,9 հազարը կամ 71%-ը՝ գյուղական վայրերում[34]։ Ինչ վերաբերում է հանրային տնտեսության երկու հիմնական ճյուղերում (պետական և կոլտնտեսային) ընդգրկված մարդկանց թվաքանակին, ապա այն արագ տեմպերով ուղեկցվել է գյուղատնտեսության մեջ աշխատողների բացարձակ աճով։ Նախապատերազմյան տարում, օրինակ, ՀՍՍՀ կոլտնտեսային արտադրության մեջ աշխատողների թիվը կազմում էր 286,3 հազար[35], իսկ պետական սեկտորում՝ 155,7 հազար[36]։ Ինչպես կարելի է նկատել, կոլտնտեսության մեջ զբաղվածները կազմել են ընդհանուր բնակչության 22,3, իսկ պետական արտադրությունում զբաղվածները՝ 12%-ը։

Այժմ տեսնենք, թե սոցիալ-տնտեսական դրությունը ինչպիսի հիմք է ծառայում կոլտնտեսային գյուղացիության համար՝ դառնալու բանվոր դասակարգի համալրման հիմնական աղբյուրը։ Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներից կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը հսկայական միջոցառումներ ձեռնարկեցին գյուղի սոցիալիստական վերափոխման և նոր տիպի հասարակական հարաբերություններ ստեղծելու ուղղությամբ։ Ագրարային վերափոխումները և կոլտնտեսային կարգերի հաղթանակն ու ամրապնդումը գյուղացիության կյանքում առաջ բերեցին սոցիալ-տնտեսական խոր տեղաշարժեր։ Վերածվելով սոցիալիստական հասարակական ուժի՝ գյուղացիությունն սկսեց վարել կոլեկտիվ խոշոր տնտեսություն, որի աստիճանական զարգացումը տանում էր և այժմ էլ շարունակում է տանել դեպի հանրային սեփականության երկու ձևերի մերձեցում։

Արմատապես փոխվում էր նաև գյուղացու հոգևոր նկարագիրը, բարձրանում էր նրա կուլտուր-կրթական մակարդակը և աճում քաղա-

քական գիտակցությունը։ Գյուղացին իր սոցիալ-տնտեսական դրությամբ և կուլտուր-քաղաքական մակարդակով ավելի մոտ էր կանգնած բանվոր դասակարգին, քան հասարակության մյուս խմբերն ու դասերը։ Ահա թե ինչու ուսումնասիրվող ժամանակաշրջանում բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրների մեջ առաջնակարգ տեղը գրավում էր կոլտնտեսային գյուղացիությունը։

Աշխատավորական երկու դասակարգերի մեջ տեղի ունեցող սոցիալական տեղաշարժերի հիմքում, բանվոր դասակարգի թվաքանակի ավելացման իմաստով, ընկած էին օբյեկտիվ պատճառներ։ Սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում, զգալի աշխատանք կատարվեց կոլտնտեսությունների խոշորացման և նրանց տեխնիկատնտեսական բազայի ամրապնդման ուղղությամբ։ Գյուղատնտեսական արտադրության մեջ ձեռքի աշխատանքի մի մասը մեքենայականով փոխարինելը խնայեց հսկայական մարդկային ռեսուրսներ։

Սոցիալիստական ինդուստրիայի համակողմանի զարգացումը, իր հերթին, լայն հնարավորություններ էր ստեղծում գյուղի ազատ ձեռքերն արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի մեջ ընդգրկելու համար։ Ասվածից չի կարելի միակողմանի եզրակացության հանգել և դեպի պետական արտադրություն գյուղացիության տեղաշարժի հիմքում տեսնել միայն օբյեկտիվ պատճառներ։ Անշուշտ, դրանում մեծ է նաև սուբյեկտիվ գործոնների (արտադրության զարգացման և նրա եկամտաբերության ավելացման նկատմամբ աշխատողների նյութական շահագրգռվածության սկզբունքի՝ սոցիալիստական տնտեսության արմատական սկզբունքի խախտումը գյուղատնտեսության ասպարեզում, արտադրության ոչ ճիշտ պլանավորումը և այլն) դերը, որոնք առանձին դեպքերում դանդաղեցնում կամ արագացնում էին գյուղացիության հոսունության տեմպերը[37]։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող ժամանակաշրջանում բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրների մեջ կոլտնտեսային գյուղացիությունը կրելով առանձին տարիների ազդեցությունը, հիմնականում պահպանել է առաջատար աղբյուրի իր դերը։ Այսպես, 1938—1940 թթ. ՀՍՍՀ բանվոր դասակարգի քանակական աճի 54%-ը բաժին էր ընկնում կոլտնտեսային գյուղացիությանը[38]։ 1941—1945 թթ. աշխատունակ կոլտնտեսային գյուղացիության թիվը կրճատվեց ավելի քան 51 հազար մարդով, որոնց մի մասը տարբեր ճանապարհներով համալրեցին բանվոր դասակարգի շարքերը։ Նրանցից

5137-ը պետական արտադրություն էր մտել տարերային ճանապարհով, մոտ 6,5 հազարը՝ աշխատանքային ռեզերվների, իսկ մնացածի որոշ մասը՝ պարտադիր հավաքագրման միջոցով[39]։

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո էլ պետական արտադրության մեջ կոլտնտեսային գյուղացիությանն ընդգրկելու հարցը չկորցրեց իր կարևորությունը։ 1946—1950 թթ. հանրապետության բանվոր դասակագրի քանակական աճի 46,3%-ը կատարվել է ի հաշիվ կոլտնտեսային գյուղացիության[40]։

1951—1960 թթ. կոլտնտեսային արտադրության մեջ զբաղվածների թիվը կրճատվեց մոտ 40 հազարով, որը կազմում է այդ տարիներին բանվոր դասակարգի քանակական աճի 33%-ը[41]։

Ինչպես նկատում ենք, 1950-ական թվականներին, նախորդ տարիների համեմատությամբ, կոլտնտեսային գյուղացիության թվակազմի կրճատման տեմպերը բավականին նվազել են։ Դա բացատրվում է այն լուրջ տեղաշարժերով, որ 1950-ական թվականներին կատարվեցին գյուղատնտեսության բնագավառում։ Զգալիորեն ամրապնդվեցին բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերությունները։ ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի (1953 թ.) ընդունած գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին որոշումը կյանքի կոչելու համար 1954—1955 թթ. հանրապետության քաղաքներից գյուղական շրջաններ կուսակցական, սովետական և այլ բնագավառներ աշխատանքի ուղարկվեցին ավելի քան 6300 մարդ[42]։ Այդ ամենը և հետագա միջոցառումները (ՄՏԿ-ների վերածումը ՆՏ-կայանների, գյուղատնտեսության վերազինումը և այլն) բարենպաստ պայմաններ ստեղծեցին գյուղացիության (կոլտնտեսային արտադրության մեջ զբաղվածների) քանակակազմը կայունացնելու համար։

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1938—1960 թթ. ՀՍՍՀ կոլտնտեսային գյուղացիությունից տարբեր ճանապարհներով (կազմակերպված և անկազմակերպ) բանվոր դասակարգի շարքերն համալրել են մոտ 146 հազար մարդ, որը կազմում է այդ ժամանակաշրջանում բանվոր դասակարգի քանակական աճի 43%-ը[43]։

Բանվոր դասակարգի համալրման հիմնական աղբյուրներից են բնական վերարտադրությունը և մեխանիկական տեղաշարժերը։ Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի շարքերի համալրման գործում վերը նշված աղբյուրների դերը ցույց տալու համար անհրաժեշտ ենք համարում հարցի քննությունն սկսել հանրապետության բնակչության դինամիկան պատկերող

տվյալներից։ Երկու մարդահամարների (1939 և 1959 թթ.) միջև ընկած ժամանակաշրջանում ՀՍՍՀ բնակչությունն աճել է մոտ 581 հազարով[44] կամ 45,3%-ով։ Քանի որ բնակչության բազմացման աղբյուրը բնական աճն է (սա որոշվում է ծնվածների և մահացածների բանակական տարբերությամբ), ուստի նախ քննարկենք Հանրապետության բնակչության աճը ըստ սեփական վերարտադրության։ Այդ աճի դինամիկան ըստ տարիների ունի հետևյալ տեսքը (Աղ. 1)[45]։

Աղյուսակ 1

Տարեթվեր	Բնակչության բնական աճը	Այդ թվում	
		քաղաքային	գյուղական
1939	36512	8802	27710
1946	23713	8550	15163
1950	31889	12119	19770
1958	57124	22700	34424

Աղյուսակից բխում է, որ 1939—1958 թթ. Սովետական Հայաստանում դիտվել են բնակչության բնական աճի բարձր տեմպեր։ Բնն առանձին տարիների տեղի է ունեցել ավելացում կամ նվազում, այնուհանդերձ պահպանվել է նրա դինամիկան։ Բացառություն են կազմում միայն պատերազմական տարիները, երբ բնակչության աճի գործակիցը հանրապետության պատմության մեջ իջավ նվազագույն չափի[46]։ Հայկական ՍՍՀ բնակչության բնական վերարտադրության տըվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1939—1958 թթ. Հանրապետության բնակչության քանակական աճի 56,4%-ը բաժին է ընկնում բնական վերարտադրությանը։ Մյուս հետևությունն, այն է, որ 1950-ական թվականներին առանձնապես բարձր էր քաղաքային բնակչության աճի գործակիցը։ Եթե նախապատերազմյան տարիներին նրա բնական աճը չէր անցնում 24%-ից (այդ միտումը մասամբ պահպանվել էր նաև հետպատերազմյան առաջին հինգ տարիներին), ապա 1950-ական թվականներին այն բավականին բարձրացավ։ Օրինակ, 1950 թ. քաղաքային բնակչության բնական վերարտադրությունը կազմել էր Հանրապետության ամբողջ բնակչության բնական աճի 38%-ը, իսկ 1959 թ.՝ կազմեց մոտ 40%-ը։ Դա բացատրվում է հետևյալ հանգամանքներով.

ա) Գյուղից քաղաք արտահոսող կանանց ավանդական կայունությամբ (նկատի ունենք ծնելիության բարձր տոկոսը)։

բ) Գյուղից քաղաք տեղափոխվողները հիմնականում երիտասարդներ էին, այսինքն՝ գտնվում էին ամենապտղաբեր տարիքում։ Ասվածից ենթադրվում է գյուղական բնակչության բնական վերարտադրության թվի խիստ նվազում, որը, սակայն, իրականում այդպես չէ։ Վերը բերված տվյալներից երևում է, որ գյուղական բնակչության թիվը (1939—1958 թթ.), փոքր շեղումներով հանդերձ, հիմնականում պահպանել է տարեկան աճի միջին տեմպերը։

Աշխատանքային ռեզերվների ընդհանուր բալանսում, ինչպես նշել ենք, կարևոր դեր ունեն բնակչության միջհանրապետական և միջերկրյա տեղաշարժերը։ Հարցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1930—1950-ական թվականներին միգրացիայի մնացորդը Սովետական Հայաստանում ունի դրական նշան։ Այլ խոսքով՝ հանրապետության եկածների թիվը գերազանցում է մեկնածներին։ Սկզբնաղբյուրների տվյալների հաշվումներով 1939—1959 թթ. ժամանակամիջոցում ներհոսքը Սովետական Հայաստան կազմել է 575 հազար, արտահոսքը՝ 334 հազար, բացարձակ մնացորդը՝ 241 հազար մարդ[47]։ Ստացվում է, որ ՀՍՍՀ բնակչությունը նշված տարիներին ի հաշիվ միգրացիայի աճել է մոտ 43%-ով։ Այս երևույթը բացատրվում է հանրապետության տնտեսության ու կուլտուրայի բուռն և համակողմանի զարգացումով։ Բացի սփյուռքահայությունից[48], Միության այլ վայրերից (Մոսկվա, Լենինգրադ, Կիև, Մինսկ, Բաքու, Թբիլիսի և երկրի արդյունաբերական ու գիտական այլ կենտրոններ) բազմաթիվ որակյալ կադրեր, գալով Հայաստան, իրենց գործարար մասնակցությունն են բերել հանրապետության տնտեսական, գիտական ու մշակութային կյանքին։ Ուշագրավ է, որ ներհոսք կատարած բնակչության հիմնական մասը բաժին էր ընկնում քաղաքային բնակչությանը։ Ներհոսք կատարած բնակչության շարժերը դեպի հանրապետության քաղաքները բացատրվում են նրանով, որ ՀՍՍՀ քաղաքները դարձել են մեր ժողովրդի նյութական ու կուլտուրական կյանքի խոշոր կենտրոններ և դեպի իրենց են ձգում աշխատանքի, գիտության, կուլտուրայի և այլ բնագավառների մարդկանց։

Մենք այստեղ մեխանիկական տեղաշարժերը քննարկեցինք միակողմանիորեն, այսինքն՝ դիտարկեցինք միայն դրա քանակական կողմը և հարաբերակցությունը։ Բայց կա նաև դրա հետ սերտորեն շաղկապված մի հարց ևս։ Խոսքը վերաբերում է տեղաշարժ կատարող բնակչության տարիքային կազմին, որն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ինչպես հասարակական արտադրության զարգացման,

այնպես էլ բանվոր դասակարգի համալրման տեսակետից։ Այս առումով էլ դիտենք միգրացիոն տեղաշարժերի ընթացքը 1940—1960 թթ.։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող ժամանակաշրջանում ներհոսք կատարած բնակչության կազմում աշխատանքային տարիքի տոկոսն աճել է վերընթաց գծով։ Այսպես, եթե 1950 թ. այն կազմում էր ներհոսք կատարած բնակչության 95%-ը, ապա 1960 թ.՝ 97%-ը։ Ընդհանուր առմամբ աշխատանքային տարիքի երկսեռ բնակչության բաժինը ևկողների մեջ կազմում էր 95, մեկնողների մեջ՝ 94,7, իսկ մեխանիկական աճի մեջ՝ 96%-ը[49]։

Մյուս հետևությունն այն է, որ երիտասարդ տարիքային խմբերից ամենաշարժուն մասը քսան տարեկանից բարձր երկսեռ բնակչությունն էր։ Այսպես, 1952—1953 թթ. Հայաստան եկած մոտ 84 հազար մարդուց 62 հազարը կամ 74%-ը բաժին էր ընկնում քսանից բարձր տարիքի բնակչությանը, իսկ մեկնածների մեջ կազմում էր 63,5%-ը[50]։ Այսպիսի միտումը բնորոշ էր նաև մյուս տարիների համար։ Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի համալրման հիմնական աղբյուրներից (կոլտնտեսային գյուղացիություն, բնական վերարտադրություն և մեխանիկական տեղաշարժեր) բացի, որպես օժանդակ ռեզերվ, շոշափելի դեր է խաղացել նաև հասարակական արտադրություն չներգրավված աշխատունակ բնակչությունը։ Այստեղ խոսքը վերաբերում է տնային ու անձնական օժանդակ տնտեսություններում զբաղված կանանց, կենսաթոշակառուներին և մասամբ աշխատունակությունը պահպանած պատերազմի ու աշխատանքի հաշմանդամներին։ 1959 թ. մարդահամարի տվյալներով նրանց թիվը կազմում էր հանրապետության ամբողջ բնակչության ավելի քան 8%-ը[51]։

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ սոցիալիստական շինարարության առանձին փուլերում բնակչության այդ խմբերի ներգրավումը ժողովրդական տնտեսության մեջ կատարվել է առանձնահատուկ գծով։ Այլ խոսքով, այդ աղբյուրների հնարավորությունները հավասարապես չեն օգտագործվել։ Նրանց աշխատուժի հասարակական արդյունավետության բարձրացումը մի դեպքում մղվել է առաջին, մեկ այլ դեպքում՝ հետին պլան։

Որո՞նք են դրա պատճառները։ Իբրև այդպիսիք կարելի է առանձնացնել աշխատանքային ցածր ակտիվությունը (նկատի ունենք տարիքը), ֆիզիկական ցածր կարողությունը և կուլտուր-տեխնիկական ցածր մակարդակը։ Այստեղից դժվար չէ կռահել, թե ինչու, կապված

ժամանակի կոնկրետ պահանջների ու խնդիրների հետ, դրանք կարող են համալրման աղբյուր դառնալու տարբեր արժեք ստանալ:

1939 և 1959 թթ. մարդահամարների տվյալներով հասարակական արտադրությունից դուրս կանգնած աշխատանքային տարիքի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին կանայք: Սոցիալիստական ժողովրդական տնտեսության համակողմանի զարգացման պայմաններում անընդմեջ մեծանում էին նոր աշխատուժի նկատմամբ արտադրության ներկայացրած պահանջները: Կինը սոցիալիստական ժողովրդական տնտեսությունը նոր բանվորական ուժով համալրող կարևոր աղբյուրներից էր: Սոցիալիստական արտադրության մեջ անընդմեջ աճում էր կանանց թիվը և բարձրանում նրա տեսակարար կշիռը բանվոր-ծառայողների կազմում: Այսպես, եթե 1940 թ. կանայք կազմում էին բանվոր-ծառայողների 34,1%-ը, ապա 1960 թ.՝ 38%-ը[52]:

Կանայք շարունակում էին համալրել ինչպես ինդուստրիալ բանվոր դասակարգի, այնպես էլ նրա գյուղական ջոկատի շարքերը: Տվյալները, գժբախտաբար, հնարավորություն չեն տալիս խոսել այն մասին, թե հանրային արտադրություն մտնող կանանց որ մասն է համալրել ինդուստրիալ և որը՝ նրա գյուղական ջոկատի շարքերը:

Տնային և անձնական օժանդակ տնտեսություններից կանանց մղտնելը հասարակական արտադրություն կատարվում էր երկու ճանապարհով՝ կազմակերպված (հավաքագրում և կոլտնտեսությունների վերակառուցումը սովխոզների) ու անկազմակերպ: Գերիշխողը անկազմակերպ ձևն էր:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջերին բանվոր դասակարգի շարքերը սկսեց համալրվել նաև հանրակրթական միջնակարգ դպրոցների շրջանավարտներով: 1950-ական թվականների վերջերին սոցիալիստական ժողովրդական տնտեսության մեջ կատարված տեխնիկատնտեսական առաջընթացը էլ ավելի մեծացրեց արտադրության պահանջները որակյալ աշխատուժի նկատմամբ: Բանվորական կադրերի քանակական և որակական աճի հարցը ձեռք բերեց առավել կարևոր նշանակություն: Բանն այն է, որ հասարակական արտադրության համակողմանի զարգացման և տեխնիկական առաջադիմության հետ կապված, առաջ եկան նոր մասնագիտություններ և անհամեմատ բարդացավ աշխատանքի պրոցեսը: Այդ ամենը հրամայաբար պահանջում էին այնպիսի որակյալ աշխատողներ, որոնք կարողանային ոչ միայն գործարկել, այլև կառավարել, նաև կատարելագործել արտադրության տեխնոլոգիան:

Բարձրորակ կադրերի պատրաստման պրոբլեմին մեծ տեղ տվեց ՍՄԿԿ XIX համագումարը (1952 թ.)։ Կուսակցության բարձրագույն համաժողովը կարևորելով հանրակրթական դիտելիքների դերը բանվոր դասակարգի որակական մակարդակի բարձրացման գործում, խնդիր դրեց մինչև V հնգամյակի (1951—1955 թթ.) վերջը հանրապետությունների մայրաքաղաքներում, հանրապետության ենթակայության քաղաքներում, մարզային, երկրամասային և արդյունաբերական խոշոր կենտրոններում ավարտել անցումը յոթնամյա կրթությունից ընդհանուր միջնակարգ կրթությանը (տասնամյակ)։ Համագումարը միաժամանակ ընդգծեց, որ հանրակրթական դպրոցի դաստիարակչական նշանակությունը էլ ավելի բարձրացնելու և միջնակարգ դպրոցի շրջանավարտների համար մասնագիտության ազատ ընտրության պայմաններ ապահովելու նպատակով ձեռնամուխ լինել միջնակարգ դպրոցում պոլիտեխնիկ ուսուցման իրագործմանը և կիրառել ընդհանուր պոլիտեխնիկական ուսուցման անցնելու համար անհրաժեշտ միջոցառումներ[53]։

ՍՄԿԿ XX համագումարը (1956 թ.) ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանի (1956—1960 թթ.) մասին դիրեկտիվներում ժողովրդական լուսավորության կարևոր խնդիրը համարեց պոլիտեխնիկական կրթության լայն իրագործումը հանրակրթական դպրոցներում։

Տեխնիկապես կիրթ, մասնագիտական վարպետությանը լավագույն ձևով տիրապետող բանվորական կադրեր պատրաստելու խնդրի լուծման գործում մեծ դեր խաղացին ՍՄԿԿ և սովետական կառավարության 1957 թ. ձեռնարկումները՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ միջնակարգ և թերի միջնակարգ կրթության բանվորական նոր կադրեր ընդգրկելու ուղղությամբ[54]։

Հանրակրթական միջնակարգ դպրոցներում պոլիտեխնիկական կրթության իրականացման վերաբերյալ Սովետական Միության կոմունիստական կուսակցության ու կառավարության մշակած և համաժողովրդական հավանության արժանացած թեզիսների հիման վրա 1958 թ. դեկտեմբերին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը ընդունեց «Կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» օրենքը։ Օրենքը վավերացրեց ժողովրդական կրթության զարգացման նոր միտումներն ու ուղիները[55]։ Համաձայն այդ օրենքի, միջնակարգ դպրոցներում ուսուցումը և դաստիարակությունը պետք է սերտորեն կապ-

վեին աշխատանքի, կոմունիստական շինարարության գործնական խնդիրների հետ։

1959 թ. ՀՍՍՀ հինգերորդ գումարման Գերագույն սովետի առաջին նստաշրջանը հավանություն տվեց «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության մեջ ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» օրենքի նախագծին։ Հանրապետության մեջ սահմանվեց պարտադիր ութամյա ուսուցում, իսկ լրիվ միջնակարգ դպրոցում ուսման տևողությունը դարձավ 11 տարի[56]։ Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում գոյություն ունեցող դպրոցների ընդհանուր թվի մեջ, սկսեց ավելանալ միջնակարգ դպրոցների և դրանցում սովորողների թիվը։ Այսպես, եթե 1950—51 ուսումնական տարում ՀՍՍՀ-ում գործում էր 309 միջնակարգ դպրոց (168419 աշակերտով), ապա՝ 1960—61 ուսումնական տարում դրանց թիվը համապատասխանաբար հասավ 405-ի և 211277-ի[57], այսինքն՝ միջնակարգ դպրոցների թիվը ավելացել է 1,3, իսկ սովորողներինը՝ 1,2 անգամ։ Այս տվյալներից հետևում է, որ ինչպես սովետական մյուս հանրապետություններում, Հայաստանում նույնպես անընդմեջ ավելացել է միջնակարգ դպրոցի շրջանավարտների թիվը։ Բավական է նշել, որ միայն 1960 թ. ՀՍՍՀ միջնակարգ դպրոցներն ավարտեցին 10877 սովորողներ, այդ թվում 7982-ը ցերեկային դպրոցներում[58]։ Շրջանավարտների մի մասը անմիջապես համալրեց բանվոր դասակարգի շարքերը։ Միջնակարգ դպրոցի շրջանավարտները դառնալով բանվոր դասակարգի շարքերի համալրման կարևոր ռեզերվ, միանգամայն հասկանալի պատճառով ուղղակիորեն նպաստում էին հասարակական արտադրության զարգացմանը և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։

Հանրապետության բանվոր դասակարգը համալրվել է նաև վարչատնտեսական ապարատի աշխատողների կրճատման հաշվին։ Նկատենք, որ 1940—1960 թթ. պետական, տնտեսական, կոոպերատիվ և հասարակական օրգանների ու կազմակերպությունների ապարատների աշխատողների թիվը Հայկական ՍՍՀ-ում կրճատվել է 3 հազար մարդով[59], որոնց զգալի մասը մտել է արտադրության։

Այսպիսով, սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրների մեջ առաջնակարգ դերը պատկանել է կոլտնտեսային գյուղացիությանը։ Նշված աղբյուրներից բանվոր դասակարգի համալրումը կատարվել է երկու ճանապարհով՝ կազմակերպված և անկազմակերպ։

կազմակերպված ճանապարհով բանվոր դասակարգի շարքերի համալրման գործում կարևոր տեղ են գրավել պրոֆեսիոնալ-տեխնիկական և հանրակրթական կրթության սիստեմը, բնակչության հավաքագրումը և կոլտնտեսությունների վերակազմումը սովխոզների։ Նկատենք, որ անկազմակերպ համալրումը հաճախ բերում է մի շարք բարդություններ՝ կապված բնակարանի, համապատասխան աշխատանքի, դպրոցի, մանկամսուր-մանկապարտեզի և բազում այլ հարցերի լուծման հետ։ Ահա թե ինչու կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը սոցիալիստական-կոմունիստական շինարարության բոլոր փուլերում հետևողականորեն զբաղվել և զբաղվում են այնպիսի առաջնակարգ նշանակություն ունեցող պրոբլեմի լուծումով, ինչպիսին է բանվոր դասակարգի համալրման գործի պլանավորված ու սիստեմավորված կազմակերպումը։ Սոցիալիզմի զարգացման փորձը հավաստում է, որ անկազմակերպ ճանապարհով բանվոր դասակարգի շարքերի համալրումը նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է երկրի առանձին շրջաններում ռացիոնալ տեղաբաշխել արտադրական ճյուղերի զարգացումը, կապված դրանցում աշխատանքային ռեսուրսների պոտենցիալ հնարավորության հետ։

Այստեղ մենք մոտենում ենք մի կարևոր խնդրի լուծման հարցին։ Խոսքը վերաբերում է ժողովրդական տնտեսության, գլխավորապես արդյունաբերության մեջ զբաղված բանվոր դասակարգի աշխարհագրական տեղաբաշխմանը։ Այս առնչությամբ նշենք, որ սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Սովետական Հայաստանում արմատական տեղաշարժեր կատարվեցին բանվոր դասակարգի նաև աշխարհագրական տեղաբաշխման կառուցվածքում։ Ազգային բանվորական կադրերի թվակազմի անընդմեջ ավելացման և աշխարհագրական տեղաշարժերի հիմքը կազմում է սոցիալիստական արդյունաբերության ընդգրկած սահմանների շարունակաբար ընդլայնումն ու նրա արտադրական պրոցեսների կատարելագործումը։ Ձեռնամուխ լինելով հիշյալ խնդրի լուծմանը, կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը ելնում են սովետական ամբողջ ժողովրդի, իհարկե՝ նաև յուրաքանչյուր ազգության նյութական ու կուլտուրական բարեկեցության բարձրացման կենսական անհրաժեշտությունից։

Ինչպես արդեն նշել ենք, բանվոր դասակարգի զարգացումը՝ պայմանավորված է նախ և առաջ ինդուստրիալ զարգացումով։ Քննարկվող ժամանակաշրջանում սովետական ամբողջ ժողովրդի առջև

կանգնած էր սոցիալիզմը ամրապնդելու ու զարգացնելու խնդիրը։ Այդ վիթխարի խնդրի կենսագործման համար անհրաժեշտ էր ռացիոնալ օգտագործել միութենական և ինքնավար բոլոր հանրապետությունների նյութական ու մարդկային ռեսուրսները, որը հնարավորություն կտար ամրապնդել ու ընդլայնել սոցիալիզմի տեխնիկատնտեսական բազան և ապահովել երկրի արտադրողական ուժերի հետագա վերելքը։ Սովետական Հայաստանում խնդիր դրվեց ընդլայնել ու զարգացնել սոցիալիստական ինդուստրիայի հիմքը կազմող մեքենաշինությունը, մետաղամշակումը, էլեկտրաարդյունաբերությունը, քիմիական և գունավոր մետալուրգիայի արդյունաբերությունը։ Գլխավորապես տեղական հումքի բազայի վրա հանրապետությունում շարք էին մտնում կամ վերակառուցվում էին նորանոր ձեռնարկություններ ու արտադրամասեր։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ՀՍՍՀ արդյունաբերության զարգացումը բնութագրվում է ինչպես նրա կատարելագործումով, այնպես էլ ընդլայնումով, այսինքն՝ աշխարհագրական տեղաշարժերով։ Բանն այն է, որ սովետական իշխանության առաջին տարիներին հանրապետության գրեթե ամբողջ արդյունաբերությունը, մասնավորապես ծանր արդյունաբերությունը, կենտրոնացված էր Երևանում, մասամբ Ղափանում ու Ալավերդում։

Սոցիալիզմի հիմնականում կառուցումից հետո արդյունաբերությունը բուռն թափով սկսեց զարգանալ նաև հանրապետության մյուս շրջաններում։ Զարգանալով արտադրողական ուժերի պլանաչափ տեղաբաշխման սկզբունքի համաձայն, ուսումնասիրվող տարիներին, մասնավորապես հետպատերազմյան տարիներին, ՀՍՍՀ արդյունաբերությունը մասնագիտանում էր հետևյալ չորս տնտեսական շրջաններում՝ Երևան, Լենինական, Ալավերդի-Կիրովական և Ջանգեզուր[60]։

Գունավոր մետալուրգիայի և քիմիական արդյունաբերության ծավալուն զարգացման շնորհիվ Ալավերդին և Ղափանը դարձան քաղաքներ, իսկ Շամլուղն ու Ախթալան քաղաքատիպ ավաններ։ Տեղական շինանյութերի արտադրության հիմքի վրա աճեցին ու զարգացան Արարատ, Արթիկ, Հրազդան, Աբովյան քաղաքները, Պեմզաշեն, Թումանյան, Անիպեմզա և Արզնի քաղաքատիպ ավանները։ Անընդմեջ ավելանում էր հանրապետության քաղաքային բնակչությունը։

Արդեն 1965 թ. Հայաստանում կար 9 քաղաք՝ յուրաքանչյուրը մինչև 10 հազար բնակչությամբ, 9 քաղաք՝ մինչև 20 հազար, 2 քաղաք՝ մինչև 25 հազար, 2 քաղաք՝ մինչև 100 հազար և ավելի բնակչությամբ։ Մայրաքաղաք Երևանի բնակչության թիվը անցնում էր 700 հազարից[61]։

Արդյունաբերական ու տնտեսական նոր կենտրոնների առաջացումը զգալիորեն փոխեցին Հանրապետության բանվոր դասակարգի աշխարհագրական կառուցվածքը։ Բանվոր դասակարգը սկսեց արագորեն աճել նոր զարգացող քաղաքներում ու արդյունաբերական կենտրոններում։ Այս երևույթը մի կողմից նպաստում էր Հանրապետության քաղաքներում բնակչության համամասնական կենտրոնացմանը, իսկ մյուս կողմից, արգելակում դեպի մեծ քաղաքներ աշխատունակ բնակչության անկազմակերպ հոսքը։

Այսպիսով, սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում սոցիալիստական ինդուստրիայի բուռն զարգացման հետ միասին քանակապես աճեց և կառուցվածքային խոր փոփոխություններ կրեց ՀՍՍՀ բանվոր դասակարգը։ Այդ փոփոխությունների էությունն արտահայտվում է բանվոր-ծառայողների բացարձակ քանակական աճի մեջ՝ 1938—1950 թթ., երբ նյութական արտադրության մեջ շարունակաբար բարձրանում էր նրանց թիվը և բանվոր-ծառայողների աճի ցածր տեմպերի մեջ՝ 1950-ական թվականներ, երբ ավելանում էր ոչ արտադրական ոլորտի աշխատողների թիվը։ Սոցիալիստական արդյունաբերության համակողմանի և ծավալուն զարգացման հետ կապված առավել բարձր տեմպերով աճում էր ինդուստրիալ բանվոր դասակարգի թվակազմը և ընդլայնվում էր նրա աշխարհագրական սահմանները։

2. ՈՐԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿԱԶՄՈՒՄ

Սոցիալիստական հասարակության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում բանվոր դասակարգի առաջատար դերը ամրապնդող կարևորագույն պայման է նրա որակական մակարդակի մշտապես բարձրացումը։ Որակական աճը լայն հասկացություն է, որի տակ նկատի է առնվում բանվոր դասակարգի աշխատանքային ստաժը, տարիքային ու սեռային կազմը, սոցիալական զարգացածությունը և կուլտուր-տեխնիկական մակարդակը։

Բանվոր դասակարգի որակական կազմը բնութագրող վերը նշված հատկանիշները քննարկենք առանձին-առանձին։ Հասարակության առաջատար դասակարգի որակական մակարդակում կարևոր նշանակություն ունեն նրա տարիքային կազմի տեղաշարժերը։

Քննարկվող ժամանակաշրջանում, որպես ընդհանուր միութենական երևույթ, բանվոր դասակարգի տարիքային կազմում կատարվել են մեծ փոփոխություններ։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն

առավել ցայտուն կերպով տեղի է ունեցել Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ Հայտնի է, որ պատերազմական զորակոչի հետևանքով ամբողջ երկրում խիստ կրճատվեց բանվոր-ծառայողների թիվը։ Բանվորական ուժի վերարտադրության պրոբլեմը ռազմական տնտեսության ամենակարևոր ու միաժամանակ դժվարին խնդիրներից մեկը դարձավ։ Բիկունքի և ռազմաճակատի շահերը հրամայաբար պահանջում էին ամենակարճ ժամանակամիջոցում հաղթահարել արտադրության և աշխատուժի միջև ստեղծված անհամամասնությունը։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը ձեռնարկեցին լայն միջոցառումներ աշխատունակ բնակչության աշխատանքային ճակատում համակենտրոնացնելու համար[62]։

Տնային և անձնական օժանդակ տնտեսություններից (քաղաք և գյուղ) հանրային արտադրություն մտնող բանվորական նոր ուժի վերաբերյալ աղբյուրները վկայում են, որ նրա զգալի մասը կազմում էին կենսաթոշակառուները։ Բավական է նշել, որ արդեն 1942 թ. ՍՍՀՄ արդյունաբերության մեջ զբաղված բանվոր-ծառայողների տեսակարար կշռում 50 տարեկանից բարձր տարիք ունեցող աշխատողների թիվը հասնում էր 12%-ի, 1939 թ. 9%-ի դիմաց[63]։

Արտադրության մեջ մեծ տեղ գտավ նաև անչափահասների աշխատանքը։ Այսպես, եթե 1940 թ. ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության բանվոր-ծառայողների մեջ մինչև 18 տարեկան երիտասարդների թիվը չէր անցնում 6%-ից, ապա 1942 թ. նրանց տեսակարար կշիռը կազմեց 15%։ Բանվոր-ծառայողների այդ տարիքային խմբի տեսակարար կշռի աճմանը զուգահեռ նվազեց 18—49 տարեկան աշխատուժի բաժինը՝ 1939 թ. 85%-ից 1942 թ. իջնելով 73%-ի[64]։ Առանձին փաստեր վկայում են, որ թվական տվյալների նկատելի տարբերություններով հանդերձ, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի տարիքային կազմում դիտվում է նույն օրինաչափությունը[65]։

Հետպատերազմյան տարիներին ևս բանվոր դասակարգի տարիքային կազմում կատարվել են նկատելի տեղաշարժեր։ Այդ են վկայում 2-րդ աղյուսակի տվյալները[66]։

Աղյուսակի (2) տվյալները ցույց են տալիս, որ հետպատերազմյան տարիներին զգալիորեն փոխվել է հանրապետության արդյունաբերության մեջ զբաղված բանվոր դասակարգի տարիքային կազմը, նրա երիտասարդ տարիքային խմբերի անդամների ավելացման առումով։ Զգալիորեն կրճատվել է անչափահաս բանվորական ուժի տեսակարար կշիռը։ Նույնպիսի նվազում է դիտվել նաև 50 և բարձր տարի-

ՀՍՍՀ արդյունաբերական բանվորների տարիքային կազմի փոփոխությունները (%-ներով)[66]

Տարիները	Բոլոր բանվորները	մինչև 18 տարեկան	18—25 տարեկան	26—35 տարեկան	36—49 տարեկան	50 տարեկան և բարձր
1947 թ. 1 մարտ	100	7,9	21,4	24,7	19,7	12,9
1949 թ. 5 մայիս	100	4,2	27,5	19,8	26,5	13,3
1957 թ. 1 ապրիլ	100	1,9	33,6	35,3	25,6	10,7

քային խմբի բանվոր-ծառայողների կազմում: Իսկ 26—49 տարեկան աշխատանքային տարիքի բանվորների և ծառայողների տոկոսն անհամեմատ աճել է:

Տվյալներից բխող մյուս հետևությունն այն է, որ հետպատերազմյան տարիներին, մասնավորապես 1950-ական թվականներին արդյունաբերության մեջ նկատելիորեն ավելացել է 18—25 տարիքային խմբի բանվոր-ծառայողների թիվը՝ 1947—1957 թթ. 21,4-ից հասել է 33,6%-ի: Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը հավաստում է, որ հասարակության առաջատար դասակարգի ամենաակտիվ աշխատանքային տարիքի (18—49 տարեկան) աշխատողների թիվը առանձնապես բարձր տեմպերով աճել է արդյունաբերության նոր զարգացող ճյուղերում, որոնք վճռական դեր են կատարել ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկատնտեսական առաջընթացի գործում: Այսպես, օրինակ, եթե ամբողջ արդյունաբերության մեջ այդ տարիքային խմբի բանվոր-ծառայողների տեսակարար կշիռը 1947—1957 թթ. աճել է 1,3 անգամ, ապա գունավոր մետալուրգիայի, քիմիական, մեքենաշինության ու մետաղամշակման արդյունաբերության մեջ այն ավելացել է մոտ 3 անգամ[67]: Նյութական արտադրության առանցքային ճյուղերում բանվոր դասակարգի երիտասարդացման ավելի արագ ընթացքը բացատրվում է նրանով, որ դրանցում բանվորական կադրերի համալրումը կատարվում էր գլխավորապես պրոֆտեխնիկական ուսումնարանների և միջնակարգ մասնագիտական հաստատությունների սովորողների հաշվին:

Մենք այստեղ բանվոր դասակարգի տարիքային կազմի փոփոխությունները քննարկեցինք միակողմանի, այսինքն՝ միայն հարցի բանակական կողմի առումով: Մինչդեռ կան նաև խնդրի հետ անխզելիորեն կապված ոչ անկարևոր այլ հարցեր ևս: Նշենք դրանցից երկուսը:

ա) Ինչո՞վ էր պայմանավորված հետպատերազմյան տարիներին հասարակության առաջատար դասակարգի երիտասարդ տարիքային խմբերի քանակի ավելացումը:

բ) Բանվոր դասակարգի կազմում երիտասարդ տարիքային խմբերի տեսակարար կշռի մեծանալը ինչպիսի հնարավորություն էր ստեղծում նրա առաջատար դերի է՛լ ավելի բարձրացման ու ամրապնդման համար:

Սկսենք առաջին հարցադրման պատասխանից:

Հետպատերազմյան տարիներին մի շարք օբյեկտիվ պատճառներով (զորացրում, սփյուռքահայության ներգաղթ, մյուս հանրապետություններից կատարված մեխանիկական տեղաշարժեր) Հայաստանում արագորեն աճեց աշխատանքային ռեզերվների տեսակարար կշիռը ամբողջ բնակչության մեջ և հասարակության վերը նշված խմբերի աշխատուժի օգտագործման պրոբլեմը կորցրեց իր կարևորությունը:

Ինչ վերաբերում է 18-ից մինչև 25 տարեկան բանվորների թվի ավելացմանը, ապա պետք է նշել հետևյալը. 1950-ական թվականներին բանվոր դասակարգի համալրման գործում զգալիորեն աճեց միջնակարգ դպրոցների դերը, որի շնորհիվ բանվոր դասակարգի կազմում նշված տարիքային խմբի տեսակարար կշիռը զգալի վերելք ունեցավ:

Սոցիալիստական ընդլայնված վերարտադրության պահանջները շարունակաբար առաջադրել և առաջադրում են կարևոր խնդիրներ (ժողովրդական տնտեսության վիթխարի տեմպերով ընդլայնումն ու խորացումը, արտադրության արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձր վերելքը), որոնք առաջին հերթին հնարավոր է լուծել միայն ամենաակտիվ աշխատանքային տարիքի բանվորների ուժերով, ուժեր, որոնք գտնվում են իրենց ֆիզիկական և ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում: Այլ կերպ ասած, վերը նշված տարիքային խմբերում ավելի ցայտուն է արտահայտվում բանվոր դասակարգի արտադրական ու հասարակական-քաղաքական ակտիվությունը: Այսպես, գիտության տարբեր բնագավառներում (բժշկության, հոգեբանության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության մեջ) տարվող ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սերտ կապակցություն

գոյություն ունի աշխատանքի արտադրողականության և բանվորների տարիքի միջև։ Պարզվել է, որ աշխատանքի արտադրողականությունը բանվորի մոտ իր բարձրագույն կետին է հասնում միջին հաշվով մինչև 40 տարեկան տարիքը, դրան հետևում է անկում, որն առավել արագանում է 50 տարեկանից հետո[68]։

Նկատենք նաև, որ երիտասարդ, մասնավորապես 18—25 տարիքային խմբի կողմից բանվոր դասակարգի շարքերի համալրումը ոչ միայն ապահովում է այդ դասակարգի աշխատանքային բարձր ակտիվությունը, այլև նպաստում է նրա պրոֆեսիոնալ-տեխնիկական, կուլտուրական և հանրակրթական մակարդակի բարձրացմանը։

Սակայն վերը շարադրվածից չպետք է եզրակացնել, թե հասարակական արտադրության մեջ բանվոր դասակարգի երիտասարդ տարիքային խմբերի թվաքանակի անընդմեջ մեծացմանը զուգահեռ նվազել է մյուս տարիքային խմբերի դերը։ Սոցիալիստական հասարակության զարգացման փորձը ցույց է տալիս, որ կոմունիստական շինարարության բոլոր փուլերում մեր երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում վիթխարի դեր է խաղացել ու շարունակում է խաղալ բանվոր դասակարգի ավագ սերունդը։ Սերտորեն համագործակցելով բանվորական նոր հերթափոխի հետ, նա իր ծանրակշիռ ավանդն է ներդնում կոմունիստական շինարարության արմատական խնդիրների լուծման մեջ։

Ավելացնենք, որ բանվոր դասակարգի ավագ սերունդը, դրա հետ մեկտեղ լուծում է նաև սոցիալական անչափ կարևոր մի խնդիր ևս, կապված արտադրական ու հասարակական ակտիվ կյանքի համար երիտասարդ հերթափոխ պատրաստելու հետ։ Ժողովրդական տնտեսությունը որակյալ կադրերով համալրելու անհրաժեշտ պայմաններ ստեղծելու հետ մեկտեղ, ՍՄԿԿ-ն մշտապես մտահոգված է նաև երիտասարդ բանվորական հերթափոխի պատրաստման կարևորագույն խնդրով։ Այս գործում, անշուշտ, վիթխարի է ավագ սերնդի դերը։ Նա երիտասարդ հերթափոխին դաստիարակում է կոլեկտիվիզմի, ընկերասիրության, աշխատասիրության, բանվոր դասակարգի հերոսական ավանդույթների, կոմունիզմի գործին հավատարմության ու նվիրվածության ոգով, ինչպես նաև նրան է հաղորդում իր աշխատանքային փորձն ու հմտությունը։

Սովետական հասարակության առաջատար դասակարգի որակական մակարդակը բնորոշող կարևորագույն հատկանիշ է նրա կազմում առավել տևական անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող բանվոր-

ծառայողների թվի ավելացումը։ Հարցի քննությունից պարզվում է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում շարունակաբար ավելացել է առավել տևական անընդմեջ աշխատանքային ստաժով բանվոր-ծառայողների թվաքանակը։ Արխիվային տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՍՍՀ արդյունաբերության մեջ 5 տարվա և ավելի աշխատանքային ստաժով բանվոր-ծառայողների տեսակարար կշիռը 1947 թ. 46,5%-ից, 1957 թ. բարձրացել է 50,2%-ի, իսկ մինչև 5 տարվա աշխատանքային ստաժով բանվոր-ծառայողներինը՝ կրճատվել է ավելի քան 8%-ով[69] (Միության մեջ 15%-ով)[70]։

Վերը նշված տարիներին բանվոր դասակարգի կազմում ավելի արագ է աճել 10-ից մինչև 15 տարվա չընդհատված աշխատանքային ստաժով բանվոր-ծառայողների թիվը։ Այդ կատեգորիայի աշխատողների տեսակարար կշիռն արդյունաբերության մեջ աճել է մոտ 7%-ով[71]։ 15 և ավելի տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող բանվոր-ծառայողների թվաքանակի աճը այդ դասակարգի որակական բարձր մակարդակը պայմանավորող կարևորագույն գործոն է։ Թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ հասարակական-քաղաքական կյանքում և թե՛ իրենց բանվորների քանակական ու որակական կազմում առավել տևական և չընդհատված աշխատանքային ստաժով աշխատողների թվաքանակի ավելանալու պատճառներն ու նշանակությունը ըմբռնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

ա) Ինչո՞ւ հետպատերազմյան տարիներին, մասնավորապես 50-ական թվականներին, սկսեց մեծանալ ավելի տևական չընդհատված աշխատանքային ստաժով բանվոր-ծառայողների տեսակարար կշիռը։

բ) Բանվոր դասակարգի որակական աճի հարցում ի՞նչ դեր ունի նրա կազմում առավել տևական աշխատանքային ստաժով աշխատողների թվի ավելանալը։

Անդրադառնանք առաջին հարցին։ Այս երևույթը հետևանք էր մի շարք պատճառների։ Առաջին՝ հետպատերազմյան տարիներին, առանձնապես 50-ական թվականներին սոցիալիստական արդյունաբերությունը բուռն և համակողմանի զարգացում ապրեց։ Այդ տարիներին ամբողջ երկրի արդյունաբերության զարգացումը բնութագրվում էր ինչպես արտադրության ծավալի մեծացումով, այնպես էլ կառուցվածքային ու աշխարհագրական տեղաշարժերով։ Արդյունաբերական նոր ճյուղերի հանդես գալը և դրանց աշխարհագրական սահմանների ընդարձակումը տեղում համապատասխան մասնագիտությամբ աշխատելու

լայն հնարավորություններ ստեղծեցին։ Ավելացնենք նաև մի հանգամանք. սոցիալիստական արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ բնակչության կազմում արագորեն աճեց բանվորների թիվը։ Երկրորդ՝ արտադրության ընդլայնումը, բանվոր դասակարգի քանակական աճը և պրոֆեսիոնալ-տեխնիկական մակարդակի բարձրացումը ուղեկցվել են հասարակական արտադրության մեջ ժամանակավոր բնույթի աշխատանքների տեսակարար կշռի նվազումով։ Երրորդ՝ այդ տարիներին արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի լայն ներդրումը, արտադրության կատարելագործումը, կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը, աշխատողների կուլտուրայի և հանգստի պայմանների բարելավումը անհամեմատ դյուրին, հետաքրքիր և բովանդակալից են դարձրել բանվորի աշխատանքային առօրյան, մեծացրել են նրա բազմակողմանի զարգացման հնարավորությունները։ Այդ ամենը, անկասկած, լայն հնարավորություն էին ստեղծում անհատի և աշխատանքային կոլեկտիվի միջև կապերի ամրապնդման համար։ Չորրորդը՝ մեծացել էր կոլեկտիվի դերը իր անդամներին ընկերասիրության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի, հայրենասիրության, աշխատանքային կարգապահության և ամբողջ ժողովրդի բարօրության համար աշխատելու ոգով դաստիարակելու ուղղությամբ։

Ինչ վերաբերում է մյուս հարցին, ապա պետք է նշել հետևյալը։ Առավել տևական անընդմեջ աշխատանքային ստաժով բանվորների թվի ավելանալը, անշուշտ, հսկայական նշանակություն ունի աշխատուժի քանակակազմը կայունացնելու, աշխատողների կողմից նոր տեխնիկան յուրացնելու, արտադրության կառավարումը կատարելագործելու, երիտասարդ հերթափոխ պատրաստելու, ինչպես նաև նրա հասարակական-քաղաքական ու ստեղծագործական ակտիվությունը բարձրացնելու գործում։

Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի որակական տեղաշարժերից մեկը նրա սեռային կազմի փոփոխություններն են։ Սոցիալիստական արտադրության մեջ անընդմեջ աճում էր կանանց թիվը և բարձրանում նրա տեսակարար կշիռը բանվոր-ծառայողների մեջ։ 1940 թ. բանվոր-ծառայողների մեջ կանանց տեսակարար կշիռը կազմեց 34,1%, 1928 թ. 15%-ի դիմաց[72]։

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում բանվոր դասակարգի կազմում կանանց թիվը արագորեն աճել է պատերազմի տարիներին, կապված զորակոչի հետևանքով արտադրության և աշխատ-

ուժի միջև ստեղծված անհամամասնության հետ։ Այսպես, եթե 1940 թ. կանայք կազմում էին ՀՍՍՀ բանվոր-ծառայողների 34,1, 1941 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 35, 1942 թ.՝ 37,2%-ը, ապա 1943 թ. հոկտեմբերի 1-ի և 1944 թ. ապրիլի 1-ի դրությամբ նրանց տեսակարար կշիռը կազմեց համապատասխանաբար՝ 45,5 և 46,2, իսկ 1945 թ.՝ 46,4%[73]։

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո մի շարք օբյեկտիվ պատճառներով (այդ մասին վերը արդեն նշվել է) Հայաստանում արագորեն աճեց աշխատանքային ռեզերվների տեսակարար կշիռը ամբողջ բնակչության մեջ։ Այդ պայմաններում կանանց աշխատուժի օգտագործման պրոբլեմը առժամանակ կորցրեց իր կարևորությունը։ Արխիվային վավերագրերը և վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հետպատերազմյան առաջին տարիներին բանվոր դասակարգի սեռային կազմը կանանց թվի կրճատման իմաստով էական փոփոխություններ է կրել։ Օրինակ՝ ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ կանանց թիվը 1946 թ. սկսել է նվազել, 1950 թ. իջնելով մինչև 39,8-ի 1945 թ. 46,4%-ի դիմաց[74]։

Ինչպես տեսնում ենք, կանանց թվի պակասելը կապված է աշխատանքային ռեսուրսների (տղամարդ) տեսակարար կշռի մեծացման հետ։ Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այդ կապի բացահայտումը, որն ունի տեսական և գործնական նշանակություն։ Հետպատերազմյան ժողովրդական տնտեսության վերականգնման առաջին տարիներին աշխատունակ բնակչության թվի ավելացման պայմաններում աղատ բանվորական ուժի (նախկին կադրային բանվորներ) ղբաղվածության պրոբլեմի լուծումը մեծ կարևորություն ունեցող խնդիր էր։ Կադրային բանվորներին աշխատանքի վերադարձնելու խնդիրը հնարավոր չէր լուծել առանց հասարակական արտադրության մեջ կանանց թվի կրճատման։ Բանվորական ուժի տեղաբաշխման նման կարգը մասամբ կարելի է բացատրել այդ տարիներին սոցիալիստական արտադրության հնարավորություններով և ժողովրդական տնտեսության առջև դրված խնդիրներով։

ա) Հետպատերազմյան առաջին տարիներին արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի զարգացման հնարավորությունները թույլ չէին տալիս միանգամից մեծ թվով բանվորական ձեռք ընդգրկել։

բ) Հասարակական արտադրության առջև կանգնած տնտեսա-

կան առաջադիմության պահանջներին ի հայտ բերեցին խոշոր մասշտաբի և մեծ կարևորության այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը կանանց ուժերով ոչ հնարավոր էր, ոչ էլ շահավետ: Նկատի ունենք ժողովրդական տնտեսության վերակառուցումը, հսկա կարողության օբյեկտների շինարարությունը, արտադրության արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձր վերելքը:

Այդ խնդիրների արագ և հաջող լուծման համար անհրաժեշտ էր առաջին հերթին համակենտրոնացնել երկրի առավել որակյալ և ակտիվ աշխատանքային ուժերը:

1950-ական թվականներին ժողովրդական տնտեսության վերականգնման ավարտը և նոր ձեռնարկությունների շարք մտնելը մեծացրին աշխատուժի պահանջը: Տնտեսական մեխանիզմի համապատասխան օղակներում կանանց ընդգրկելու տեմպերի արագացումը[75] ուղեկցվեց բանվոր-ծառայողների կազմում նրանց տեսակարար կշռի մեծացումով: Եթե 1950 թ. բանվոր-ծառայողների մեջ կանանց թիվը կազմում էր 94,3 հազար կամ 39,8%-ը, ապա 1960 թ. 160,5 հազար կամ 37,6%-ը[76]: Ինչպես նկատում ենք, 50-ական թվականներին հանրապետությունում դիտվել են կին բանվորների աճի բարձր տեմպեր, սակայն տոկոսային համեմատությամբ այն զիջում է 1950 թ. մակարդակը:

Ըստ վիճակագրական տվյալների, նշված տարիներին ՀՍՍՀ բանվոր դասակարգն աճել է մոտ 190 հազար մարդով[77], որից ավելի քան 66 հազարը կանայք են: Հետևաբար բանվոր դասակարգի քանակական աճի մոտ 34,8%-ը բաժին է ընկնում կանանց, իսկ 65,2%-ը՝ տղամարդկանց: Այստեղից հետևություն: Տվյալների այսպիսի մեծ տարբերության պայմաններում կանանց տեսակարար կշիռը չէր կարող գերազանցել 1950 թ. մակարդակը: Կարևոր է նաև կին բանվոր-ծառայողների զբաղվածության փոփոխությունների հարցի լուսաբանումը ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի: 1960 թ. կանայք կազմում էին արդյունաբերական բանվորների 40%-ը, 1950 թ.՝ 37, և՝ 1940 թ. 36%-ի դիմաց: Շինարարությունում նրանց բաժինը կրճատվել և 1940 թ. 13%-ից 1960 թ. իջել էր 11%-ի: Տրանսպորտում ևս նվազել էր՝ 16%-ից հասնելով 12%-ի[78]:

Ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերում կանանց թվի կրճատումն օբյեկտիվ անհրաժեշտություն էր և ժամանակի պահանջ: Այն ոչ միայն չէր խախտում արտադրության և աշխատուժի համամասնությունը, այլ, ընդհակառակը, հնարավորություն էր տալիս ավե-

ավի լավ, ավելի արդյունավետ օգտագործել կանանց ուժը տնտեսության այն ճյուղերում, որտեղ այդ աշխատուժն ստանում էր նոր որակ և նոր բովանդակություն: Կանանց թիվը զգալիորեն աճել է սննդի, տեքստիլ, կաթի, մսի արդյունաբերության մեջ և լուսավորության, առողջապահության, առևտրի ու սպասարկման այլ ոլորտներում[79]:

Այս միտումն ավելի արագ տեմպերով շարունակվում է նաև հետագա տարիներին: Ըստ ժողովրդական տնտեսության ճյուղերի՝ կանանց տեսակարար կշռի պատկերը հետաքրքիր է այն առումով, որ ցույց է տալիս, թե ինչպես էր իրականացվում կուսակցության և կառավարության քաղաքականությունը նրանց աշխատուժը համապատասխան (ֆիզիկական աշխատանքի քիչ լարում պահանջող) ճյուղերում ներգրավելու ուղղությամբ:

Ըստ սկզբնաղբյուրների քննարկվող ժամանակաշրջանում աճել է հասարակական արտադրության մեջ ներգրավված կանանց կրթական մակարդակը: Այսպես, եթե 1939 թ. Հանրապետությունում 1000 տղամարդ բանվորից բարձրագույն և միջնակարգ (լրիվ և թերի) կրթություն ունեին 158-ը (15,8%), իսկ կանանցից՝ 57-ը (5,7%), ապա 1959 թ. համապատասխանաբար՝ 506 (50,6%) և 414 (41,4%)[80]: Ինչպես կարելի է նկատել երկու մարդահամարների (1939, 1959 թթ.) միջև ընկած ժամանակաշրջանում բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող կին բանվորների կրթական մակարդակը աճել է ավելի քան 7 անգամ: Նկատելիորեն բարձրացել է նաև կանանց պրոֆեսիոնալ-տեխնիկական մակարդակը: Այս տվյալներից հետևում է, որ նշված տարիներին զգալիորեն կրճատվել է տղամարդ և կին բանվորների կրթական մակարդակների միջև եղած տարբերության սահմանները:

Բանվոր դասակարգի որակական առաջընթացի կարևորագույն պայման է նրա պրոֆեսիոնալ-տեխնիկական մակարդակի բարձրացումը: Քննարկվող ժամանակաշրջանում ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում արագորեն ընդարձակվել է պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության ցանցը և ավելացել դրանցում սովորողների թիվը: Բավական է նշել, որ 1940 թ. համեմատությամբ 1960 թ. այդ հաստատությունների թիվը Հանրապետությունում աճել է 5, իսկ սովորողներինը՝ 62 անգամ[81]:

Կարևորելով պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության մեծ ծառայությունը բանվորական նոր հերթափոխի պատրաստման, նրա սոցիալական ու հոգևոր զարգացման գործում, չի կարելի անտեսել արտա-

դրության դերը։ Նկատենք, որ վերը նշված ժամանակաշրջանում ՀԱՍՀ-ում անմիջապես արտադրության մեջ պատրաստվել ու որակավորում են ձեռք բերել ավելի քան 598 հազար բանվոր-ծառայողներ[82]։

Արտադրության մեջ տեղի ունեցած որակական տեղաշարժերը և պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության սիստեմում կատարված վերակառուցումները 1950-ական թվականներին նշանավորվեցին որոշ հին մասնագիտությունների վերացմամբ կամ կրճատմամբ։ Օրինակ, 1939 թ. համեմատությամբ 1959 թ. հանրապետությունում անվագործների և սայլագործների (փայտամշակման) թիվը կրճատվեց 4,6 անգամ, կաշեգործներինը՝ 0,7, իսկ շոգեքարշի հնոցապաններինը՝ կիսով չափ և այլն։ Զգալիորեն կրճատվեց նաև հանքահատների, հանքահան բանվորների, կառապանների թիվը[83]։

Ժողովրդական տնտեսության համակողմանի զարգացման ու նրա առաջատար ճյուղերում ավտոմատ կարգավորվող և արտադրության պրոցեսները կառավարող նոր սարքավորումների ու հարմարանքների ներդրման և աշխատատար պրոցեսների կատարելագործման շնորհիվ արագորեն աճեց մի շարք մասնագիտությունների բանվորների թիվը։ Օրինակ, Սովետական Հայաստանում 1939 թ. համեմատությամբ 1959 թ. հորատող բանվորների թիվը աճել է մոտ 11 անգամ, խառատներինը՝ 9, էլեկտրահեռակցողներինը՝ 8,5, մետալուրգներինն ու մետաղագործներինը՝ 4, իսկ ֆրեզերագործներինը՝ 15 անգամ և այլն[84]։ Առաջեկան նոր մասնագիտություններ։ Հայաստանում 1939 թ. չկային լեռնահանքային կոմբայնավարներ և քարհատներ, իսկ 1959 թ. նրանց թիվը կազմեց համապատասխանաբար՝ 643 և 304[85]։

Սոցիալիստական հասարակության առաջատար ուժի կազմում տեղի ունեցած վերոհիշյալ որակական տեղաշարժերի հետ սերտորեն կապված՝ զգալիորեն բարձրացել է նրա տարիֆային կարգը։

Սակայն հրապարակի վրա եղած վիճակագրական ժողովածուներում, հրատարակված առանձին աշխատություններում, մեզ հայտնի արխիվային աղբյուրներում այդ բնույթի ընդհանրացնող տվյալներ չկան։ Դատելով արդյունաբերական առանձին ձեռնարկությունների բանվորների տարիֆային կարգը բնութագրող տվյալներից, կարող ենք ասել, որ հանրապետության ամբողջ բանվոր դասակարգի տարիֆային կարգում դիտվել են զգալի փոփոխություններ, բարձրանալու առումով։ Այսպես, 1952 թ. Ալավերդու պղնձաձուլական գործարանում 5—8 տարիֆային կարգ ունեցող բանվորների տեսակարար կշիռը կազմում էր ամբողջ բանվորների 48%-ը (1947 թ. 27,3% էր)։ Սննդի արդյու-

նաբերության մեջ զբաղված բանվորների հիշյալ տարիֆային խմբի տեսակարար կշիռը 1947 թ. կազմել է 23,4%, 1952 թ.՝ 59,2%, իսկ Լենինականի տրիկոտաժի ֆաբրիկայում համապատասխանաբար՝ 58,6 և 64,5%[86]:

Հասարակության առաջատար դասակարգի սոցիալական զարգացման պրոցեսի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որքան բարձր է այդ դասակարգի հանրակրթական և պրոֆեսիոնալ-տեխնիկական մակարդակը, այնքան մեծ է նրա արտադրական և հասարակական-քաղաքական ակտիվությունը:

Հանրահայտ ճշմարտություն է, որ աշխատանքի արտադրողականության աճը և աշխատողների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը գտնվում են սերտ փոխկապակցության մեջ: Բանվոր դասակարգի արտադրական հմտությունը, տեխնիկան արդյունավետ օգտագործելու կարողությունը և աշխատանքին ստեղծագործաբար վերաբերվելու ունակությունները անխզելիորեն կապված են նրա կուլտուր-տեխնիկական մակարդակի հետ: Արտադրության մեջ տեխնիկապես գրագետ մարդկանց դերի և նշանակության մասին դեռևս իր ժամանակին նշել է Ֆ. Էնգելսը. «...Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունը որոշակի մակարդակի բարձրացնելու համար միայն մեխանիկական և քիմիական օժանդակ միջոցները բավական չեն: Անհրաժեշտ է համապատասխան չափով զարգացնել նաև այդ միջոցները շարժման մեջ դնող մարդկանց ունակությունները»[87]:

Այսպիսով, սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում սոցիալիստական ինդուստրիայի համակողմանի զարգացման, ինչպես նաև գիտության և տեխնիկայի բուռն առաջընթացի հետ սերտորեն կապված, որակական խոր փոփոխություններ կրեց ՀՍՍՀ բանվոր դասակարգը: Վերը նշված տեղաշարժերը նպաստել են բանվոր դասակարգի արտադրական ու հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը և նրա առաջատար դերի էլ ավելի ամրապնդմանը:

3. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎՐԱ

Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում սովետական հասարակության սոցիալական հարաբերությունների զարգացման կարևոր օրինաչափությունը բանվոր դասակարգի, կոլտնե-

տեսային գյուղացիության և մտավորականության շարունակաբար մերձեցումն էր։

Սոցիալիզմի պատմական փորձը վկայում է, որ կոմունիստական շինարարության ինչպես նախորդ, այնպես էլ տվյալ փուլում բանվոր դասակարգը դեպի հասարակության սոցիալական միատարրություն տանող ուժի հիմնական կրողն է։ Այլ կերպ ասած, հասարակության սոցիալական կառուցվածքը ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, որ բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի մերձեցումն ընթացել է բանվոր դասակարգի առաջատար դերի պայմաններում և բնակչության կազմում անընդմեջ աճել է նրա տեսակարար կշիռը։ Այդ երևույթը նկատելի է ինչպես ՍՍՀՄ-ում՝ ամբողջությամբ վերցրած, այնպես էլ Հայաստանում։ Այդ են վկայում 1939 և 1959 թթ. մարդահամարների տվյալները։ 1939 թ. Հանրապետության սոցիալ-դասակարգային կառուցվածքը բնութագրվում էր հետևյալ տվյալներով՝ բանվոր դասակարգը կազմում էր բնակչության 17,5, կոլտնտեսային գյուղացիությունը՝ 64,1, մենատնտես գյուղացիներն ու չկոոպերացված տնայնագործները՝ 3,7%-ը։ Միության մեջ ամբողջությամբ այն կազմել է համապատասխանաբար՝ 32,5, 47,2 և 2,6%-ը։ Ինչպես տեսնում ենք Սովետական Հայաստանում կոլտնտեսային գյուղացիությունը 3,6 անգամ գերազանցում էր բանվոր դասակարգին, իսկ վերջինիս տեսակարար կշիռը Հանրապետության սոցիալական կառուցվածքում մոտ 2 անգամ ցածր էր միութենական միջին ցուցանիշներից։

1959 թ. բանվոր դասակարգին արդեն բաժին էր ընկնում ՀՍՍՀ բնակչության 39,9, կոլտնտեսային գյուղացիությանը՝ 37,5, մենատնտես գյուղացիներին ու չկոոպերացված տնայնագործներինը՝ 0,2%-ը, իսկ ՍՍՀՄ-ում՝ 48,2, 31,4 և 0,3%[88]։ Այս տվյալներից բխում է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ինչպես Միության մեջ, այնպես էլ Հայաստանում բնակչության սոցիալական կազմում բանվոր դասակարգի տեսակարար կշռի մեծացմանը զուգահեռ նվազել է կոլտնտեսային գյուղացիության և սոցիալական մյուս խմբերի բաժինը։ Հանրապետությունում բանվոր դասակարգի բաժինը ամբողջ բնակչության մեջ ավելացել է 22,3%-ով, իսկ կոլտնտեսային գյուղացիությանը և սոցիալիստական սեփականության վրա չհարսխված սոցիալական խմբերինը համապատասխանաբար նվազել են 26,6 և 3,5%-ով։ Ամբողջ երկրի մասշտաբով այդ տեղաշարժերը բնութագրվել են հետևյալ տվյալներով՝ 15,7, 15,8 և 2,3%։

Ինչպես կարելի է նկատել, այս փուլում բանվոր դասակարգի աճը

և կոլտնտեսային գյուղացիության կրճատումը Հայկական ՍՍՀ-ում ավելի արագ տեմպերով է ընթացել, քան ամբողջ երկրում, այն էլ այն դեպքում, երբ մեր հանրապետությունում գյուղական բնակչության սեփական վերարտադրության տեմպերն ավելի բարձր էին[89]: Դա ամենից առաջ բացատրվում է միութենականի համեմատությամբ Հայաստանում կոլտնտեսությունները սովխոզների վերակառուցելու ավելի բարձր տեմպերով: Դրա հետևանքով կոլտնտեսային գյուղացիությունը համաժողովրդական սեփականության հիմքի վրա վերափոխվում էր բանվորության և համալրում բանվոր դասակարգի գյուղական ջոկատի շարքերը: Մյուսը՝ ՀՍՍՀ աշխարհագրական առանձնահատկությունների և գյուղատնտեսության առաջատար ճյուղերի բազմազանության հետևանքով հանրապետության գյուղատնտեսական արտադրության շատ ճյուղերի մեքենայացման մակարդակը ցածր էր Միության միջինից և դրանցում բնականաբար բարձր էր աշխատուժի զբաղվածությունը: Հետևաբար, հանրապետության գյուղատնտեսությունը որպես այդպիսին, ուներ աշխատուժի որոշակի պաշար, որը տեխնիկատնտեսական առաջընթացի ազդեցության ներքո վեր էր ածվում ազատ բանվորական ուժի: Դա անխուսափելի էր դարձնում կոլտնտեսային արտադրությունից աշխատուժի մի մասի հոսունությունը դեպի պետական արտադրություն:

Ավելացնենք մի հանգամանք ևս. 1950-ական թվականներին արդյունաբերության զարգացման տեմպերը մեր հանրապետությունում զգալի չափով բարձր էին միութենական միջինից: Դրա հետ կապված բարձր էին նաև բանվոր դասակարգի աճի տեմպերը:

Տվյալների վերլուծությունը թեև չի հանգեցնում նրան, թե իբր սոցիալիստական հասարակության սոցիալական միատարրության հաստատման գլխավոր միտումը մյուս հասարակական խմբերի վերափոխումն է բանվոր դասակարգի: Բանվոր դասակարգի առաջատար դերի պայմաններում դասակարգերի մերձեցումը չի կատարվել ու չի կատարվում կոլտնտեսային գյուղացիության և սոցիալական մյուս խմբերի մեխանիկական վերափոխման կամ նրանց դասակարգային շահերի անտեսման ու սահմանափակման ճանապարհով: Սոցիալ-դասակարգային կառուցվածքի տեղաշարժերը որպես ոչ միակողմանի երևույթ տեղի են ունենում բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի փոխներգործության, նրանց սոցիալ-քաղաքական և գաղափարական մերձեցման հիմքի վրա: Այլ խոսքով՝ բանվոր դասակարգի հետ կոլտնտեսային գյուղացիության և սոցիալական մյուս խմբերի մերձեցման գոր-

ծում կարևոր դեր են խաղում նաև վերջիններիս կազմում տեղի ունեցած տեղաշարժերը։ Դասակարգային տարբերությունների անհետացման այդ պրոցեսը հիմնականում համապատասխանում է սոցիալիստական հասարակարգի սոցիալ-դասակարգային կառուցվածքի զարգացման պահանջներին։ Այդպիսին է սովետական հասարակության սոցիալական միատարրության հաստատման հիմնական ճանապարհը և դրսևորման գլխավոր միտումը։ Նշենք սոցիալիստական հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալ-դասակարգային հանրահայտ տարբերությունները։

1. Դասակարգային տարբերություններ աշխատավորական երկու դասակարգերի՝ բանվորների և գյուղացիների միջև։ 2. Սոցիալական տարբերություններ ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև։ 3. Սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային տարբերություններ քաղաքի ու գյուղի միջև։ Նախ անդրադառնանք հասարակության սոցիալ-դասակարգային տարբերությունների բացահայտման ու դրանց հաղթահարման հարցին։

Սոցիալիստական հասարակության մեջ դասակարգային տարբերությունների հիմքը կազմել ու կազմում է արտադրության միջոցների նկատմամբ բանվորների ու գյուղացիների առանձնահատուկ վերաբերմունքը։ Բանվոր դասակարգը գործ ունի սոցիալիստական սեփականության պետական-համաժողովրդական, իսկ կոլտնտեսային գյուղացիությունը՝ կոոպերատիվ-կոլտնտեսային ձևի հետ։ Նշենք, որ վերոհիշյալ տարբերության հիմքի վրա ածանցված են նաև այլ կարգի, ինչպես օրինակ սոցիալիստական սեփականության այդ ձևերի վրա հիմնված տնտեսությունների կառավարման, ֆիզիկական ու մտավոր աշխատանքի, աշխատողների վարձատրման, նրանց կրթական, պրոֆեսիոնալ-տեխնիկական, կուլտուր-կենցաղային և այլ տարբերություններ։

Հետևաբար հասարակության դասակարգային տարբերությունների անհետացումը և լիակատար սոցիալական միատարրության հաստատումը պահանջում են սեփականության երկու ձևերի մերձեցում ու միաձուլում։

Աշխատավորների միջև գոյություն ունեցող սոցիալ-դասակարգային տարբերությունների վերացումը բարդ և բազմակողմ երևույթ է, որը տեղի է ունենում արտադրողական ուժերի անընդհատ զարգացման, արտադրական հարաբերությունների կատարելագործման, ինչպես նաև հասարակության նյութական ու հոգևոր հարստությունների աճման

հիմքի վրա։ Որպես գլխավոր պայման առանձնանում է երկրի արտադրողական ուժերի զարգացումը և հասարակական արտադրության արդյունավետության բարձրացումը։ Հանրային արտադրության մեջ արտադրողական ուժերի վիթխարի տեմպերով առաջընթացի հիման վրա զարգանում են ամբողջ սոցիալիստական արտադրական հարաբերությունները, ինչպես նաև բարձրանում է կոլտնտեսային արտադրության հանրայնացման աստիճանը։ Բանվորների և կոլտնտեսային գյուղացիների միջև գոյություն ունեցող տարբերությունների վերացման գործում առանձնակի դեր է կատարում կոլտնտեսային արտադրության սիստեմատիկ մեքենայացումն ու ավտոմատացումը։

Ինչպես նշվեց ՍՄԿԿ նոր ծրագրում «Կուսակցության ագրարային քաղաքականության հետևողական իրականացման ընթացքում տեղի է ունենում գյուղատնտեսական աշխատանքի վերածումը արդյունաբերականի տարատեսակի, վերանում են սոցիալական, կուլտուր-կենցաղային էական տարբերությունները քաղաքի և գյուղի միջև. գյուղացիության ապրելակերպն ու աշխատանքի բնույթը ավելի ու ավելի են նմանվում բանվոր դասակարգի ապրելակերպին և աշխատանքի բնույթին»[90]։

Այսպիսով, կոլտնտեսային արտադրության արտադրական հարաբերությունների կատարելագործումը դրսևորում է երկու հիմնական միտում՝ մի կողմից այդ աշխատանքը վերածվում է ինդուստրիալ աշխատանքի տարատեսակի և իր ֆոնդազինվածությամբ հասնում է պետական-համժողովրդական սեփականության մակարդակին, իսկ մյուս կողմից, բարձրանում է կոլտնտեսային գյուղացիությունը և շատ **գծերով մոտենում է բանվոր դասակարգին**։

Բարձրանում է նրա նյութական-կենցաղային մակարդակը։ Կոլտնտեսային գյուղացիության կազմում կատարվում են նաև որակական տեղաշարժեր։ Աճում է նրա կուլտուր-տեխնիկական մակարդակը, հասարակական-քաղաքական գիտակցությունը, բարձրանում է ստեղծագործական ակտիվությունը։ Այդ ամենը, դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցման, քաղաքի և գյուղի, ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև եղած էական տարբերությունների վերացման կարևորագույն պայմաններն են։ Փորձենք համոզվել դրանում։ Տվյալ պատմական պրոցեսի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում սոցիալիստական արդյունաբերությունը բուռն և համակողմանի զարգացում ապրեց։ Հասարակական արտադրության առանցքը կազմող արդյունաբերության,

մասնավորապես ծանր արդյունաբերության զարգացումը օբյեկտիվորեն խթանեց գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացմանն ու նրա նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը։ Երկու տասնամյակի ընթացքում արագորեն ընդլայնվեց ու մեծացավ գյուղատնտեսության մեքենայացման սպարկը[91]։

Կոլտնտեսությունների տեխնիկատնտեսական բազայի ամրապնդման տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ **ՄՏԿ-ների** վերակառուցման և նորոգման տեխնիկական կայանների (ՆՏԿ) ստեղծման վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թ. փետրվարյան պլենումի որոշումը[92]։

Ուղեցույց ունենալով այդ որոշումը՝ հանրապետության կոմկուսի Կենտկոմը և կառավարությունը նույն տարվա ապրիլի 25-ին որոշում ընդունեցին ՀՍՍՀ-ում ՄՏԿ-ները ՆՏԿ-ների վերակառուցելու մասին։ ՄՏԿ-ների տեխնիկան արտոնյալ գներով վաճառվեց կոլտնտեսություններին։ 1958 թ. նոյեմբերի դրությամբ Սովետական Հայաստանի կոլտնտեսությունները գնեցին մոտ 64 մլն. ռուբլու (գների հին մասշտաբով) գյուղատնտեսական մեքենաներ[93]։ Մեքենատրակտորային պարկի մեծացման շնորհիվ էապես բարձրացավ գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը։ Այդ է վկայում հետևյալ համեմատությունը։ 1959 թ. ՀՍՍՀ կոլտնտեսային արտադրության մեջ մեքենայացված էր հացահատիկային կուլտուրաների հավաքման աշխատանքի 69%-ը, 1940 թ. 12%-ի դիմաց, հացահատիկային կուլտուրաների ցանքսի՝ 86%-ը, 1940 թ. 15%-ի դիմաց, իսկ վարինը՝ 90%-ը, 45-%-ի դիմաց[94]։ Գյուղատնտեսության, ամենից առաջ կոլտնտեսային արտադրության տեխնիկատնտեսական բազայի ամրապնդման շնորհիվ ընդլայնվեցին կոոպերատիվ կոլտնտեսային սեփականության շրջանակները և սոցիալիստական սեփականության այդ ձևը իր զարգացման և հանրայնացման մակարդակով էլ ավելի մոտեցավ սոցիալիստական սեփականության պետական-համաժողովրդական ձևին։ Դա բացատրվում է ոչ միայն հանրային տնտեսության այդ ճյուղի աշխատանքների մեքենայացման բարձր մակարդակով, այլև միջկոլտնտեսային արտադրական կապերի ամրապնդումով և կոլտնտեսությունների խոշորացումով։ Հատկանշական է, որ միջկոլտնտեսային կապերի ամրապնդումն ու զարգացումը, ինչպես հանրային սեփականության երկու ձևերի, այնպես էլ դրանց վրա խարսխված դասակարգերի միջև եղած էական տարբերությունների վերացման ու նրանց մերձեցման կարևոր պայմաններից մեկն է։ Ուշագրավ է, որ այդպիսի պրոցես է դիտվել նաև Սովետական Հայաստանի կոլտնտեսային արտադրության

մեջ։ Հանրապետությունում նոր սովխոզների ստեղծման և կոլտնտեսությունների խոշորացման շնորհիվ 1940 թ. համեմատությամբ 1950 թ. վերջիններիս թիվը կրճատվեց ավելի քան 1,5 անգամ[95]։

Կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդը նշված տարիներին 269,2 մլն. ռուբլուց հասավ 1863,0 մլն. ռուբլու[96]։

Հանրապետության գյուղատնտեսության մեջ ձեռք բերված տեխնիկատնտեսական նվաճումները չէին կարող չանդրադառնալ գյուղական բնակչության սոցիալական կառուցվածքի վրա և որոշակի չվերափոխել այն։ Նախ, ժողովրդական տնտեսության այդ ճյուղի աշխատանքների մի մասի մեքենայացման շնորհիվ նկատելիորեն փոխվեց գյուղական ամբողջ բնակչության և այդ արտադրության մեջ զբաղվածների քանակական կազմը։ Արդեն 1960 թ. կոլտնտեսային արտադրության մեջ զբաղված էր 169 հազար մարդ, որը կազմում էր գյուղական ամբողջ բնակչության 18,6%, իսկ գյուղատնտեսության մեջ աշխատողների 85%-ը։ 1940 թ. կոլտնտեսության մեջ զբաղվածները (286,3 հազար) կազմում էին գյուղական ամբողջ բնակչության 31,3 և այդ արտադրության մեջ աշխատողների 98%-ը[97]։ Ինչպես տեսնում ենք, նշված տարիներին կոլտնտեսային արտադրության մեջ զբաղվածների թիվը կրճատվել է 117,3 հազարով կամ 41%-ով։ Նկատենք նաև, որ կոլտնտեսային արտադրության մեջ ընդգրկված աշխատուժի թվակազմի ակնհայտ կրճատումն ուղեկցվել է գյուղատնտեսական արտադրության մեջ զբաղված պետական հիմնարկ ձեռնարկությունների աշխատողների թվաքանակի շոշափելի ավելացումով։ 1960 թ. այն կազմել է գյուղատնտեսության մեջ զբաղվածների 15%-ը, մինչդեռ 1940 թ. նրանց թիվը չէր անցնում 1,2%-ից[98]։ Ինչպես արդեն նշել ենք, գյուղատնտեսության մեջ աշխատողների քանակական կազմում տեղի ունեցած տեղաշարժերը հօգուտ բանվոր դասակարգի գյուղական ջոկատի թվի ավելացման, պայմանավորված էր այդ տարիներին գյուղում պետական սեկտորի արագ աճով։ 1940—1960 թթ. Հայկական ՍՍՀ-ում նոր սովխոզների ստեղծման և կոլտնտեսությունների վերակառուցման շնորհիվ սովխոզների թիվը ավելացավ մոտ 6 անգամ[99]։

Միաժամանակ հարկ է նշել, որ կոլտնտեսային գյուղացիության թվաքանակի նվազմանը զուգընթաց նրա կազմում դիտվել են որակական փոփոխություններ։ Կոլտնտեսային արտադրության տեխնիկական առաջընթացի և նրանում զբաղված աշխատուժի պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման շնորհիվ գյուղական բնակչության կազմում գլխավոր և հեռանկարային միավոր դարձավ որակավորում ունեցող մե-

խանիզատորների խումբը։ Եթե ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբում կոլտնտեսություններում (ինչպես և սովխոզներում) նշված կատեգորիայի աշխատողների թիվը շատ աննշան էր, ապա նրա վերջում այն զգալիորեն աճեց։ Այսպես, եթե 1940 թ. հանրապետության գյուղատնտեսության մեջ հաշվվում էր 4,9 հազար (4,8 հազարը կոլտնտեսային արտադրության մեջ) տրակտորիստ-մեքենավարներ, տրակտորիստ-կոմբայնավարներ և վարորդներ, ապա 1960 թ. այդ ցուցանիշը հասավ 15,1 հազարի (12,5 հազարը կոլտնտեսություններում)[100]։ Գյուղական մեխանիզատորների աճը ավելի պարզորոշ ցույց տալու համար ասենք, որ նշված տարիներին կոլտնտեսային աշխատանքներում ընդգրկված գյուղացիների տարեկան միջին թվաքանակում տրակտորիստ-կոմբայնավարների, տրակտորիստ-մեքենավարների և վարորդների տեսակարար կշիռը 1,7%-ից հասավ 6,4%-ի[101]։ Եվ եթե 1940 թ. մեկ կոլտնտեսությունը միջին հաշվով ուներ 3,8 տրակտորիստ-մեքենավար և տրակտորիստ-կոմբայնավար ու 0,7 վարորդ, ապա 1960 թ.՝ համապատասխանաբար 6,4 և 5[102]։

Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում կոլտնտեսային գյուղացիության սոցիալական և որակական շերտավորման ընդհանրության վրա էական ներգործություն ունեցավ շարքային կոլտնտեսականների և կոլտնտեսային մտավորականության միջև եղած տարբերության սահմանների կրճատումը և նրանց մերձեցումը։ Պատմական տվյալ ժամանակաշրջանում նկատելիորեն աճեց կոլտնտեսային արտադրության մեջ զբաղված կոլտնտեսականների հանրակրթական և կուլտուր-տեխնիկական մակարդակը։ Բավական է նշել, որ արդեն 1959 թ. այդ արտադրության մեջ զբաղված 1000 կոլտնտեսականներից բարձրագույն, միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ուներին 366 մարդ, մինչդեռ 1939 թ. այդ ցուցանիշը հասնում էր ընդամենը 25-ի[103]։ Ավելացնենք նաև, որ գյուղատնտեսական աշխատանքների ինդուստրացմանն ու գյուղական բնակչության կրթական մակարդակի բարձրացմանը զուգահեռ զգալիորեն կրճատվեցին ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև եղած սոցիալական տարբերությունները։

Կոլտնտեսային գյուղացիության սոցիալական կառուցվածքի վերափոխման հետ մեկտեղ, փոխվեց նաև գյուղական մտավորականությունը։ Ամրապնդվեց ու մեծացավ նրա դերը գիտության և տեխնիկայի զարգացման, արտադրության կազմակերպման ու կառավարման, ինչպես նաև բնակչության գաղափարական-քաղաքական մակարդակի բարձրացման գործում։ Նրա և կոլտնտեսային գյուղացիության միջև

տեղի ունեցավ նկատելի մերձեցում։ Արդեն 1959 թ. Հայաստանի գյուղատնտեսության մեջ զբաղված էր 4287 ագրոնոմ, զոոտեխնիկ և անասնաբույժ, երկու անգամ ավելի, քան 1939 թ.[104]։ Երկու տասնամյակի ընթացքում ՀՍՍՀ-ում, նաև ամբողջ Միության մեջ, օբյեկտիվ պատճառներով, թեև կոլտնտեսային արտադրության մեջ զբաղվածների թիվը կրճատվել է, բայց նրանց կազմում դիտվել է որակական մեծ աճ։

Հանրապետության բնակչության սոցիալական կազմում առաջացած օրինաչափ տեղաշարժերից է գյուղական և քաղաքային բնակչության քանակական հարաբերակցության փոփոխությունը հօգուտ վերջինիս։ ՀՍՍՀ քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակի հարաբերակցության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ 1959 թ. քաղաքային բնակչությունը կազմում էր հանրապետության ամբողջ բնակչության 50%-ը, նույնքան էլ բաժին էր ընկնում գյուղական բնակչությանը։ Մինչդեռ 1939 թ. այն համապատասխանաբար կազմում էր 29 և 71%-ը[105]։

Քաղաքային բնակչության քանակական աճի աղբյուր են ծառայել բնական վերարտադրությունը, գյուղական բնակչության միգրացիան և գյուղական բնակավայրերի քաղաքների վերածվելը։ Հարկ է նշել, որ բնակչության կազմում քաղաքաբնակների թվի ավելացումը, որպես սոցիալիստական հասարակության օրինաչափ զարգացման արդյունք, հասկանալի պատճառներով նպաստել է քաղաքի ու գյուղի միջև եղած էական տարբերությունների վերացմանը, ֆիզիկական և մտավոր աշխատանքի մերձեցմանը, հասարակության սոցիալական միատարրության հաստատմանը։

ՀՍՍՀ տնտեսական ու կուլտուրական կյանքում ձեռք բերված վիթխարի նվաճումները և բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքում տեղի ունեցած դպալի տեղաշարժերը չէին կարող չանդրադառնալ մտավորականության սոցիալական կառուցվածքի վրա։ Գիտատեխնիկական առաջադիմության, արտադրության կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատացման շնորհիվ բուռն տեմպերով էր աճում մտավորականությունը, որի դերը հանրապետության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման մեջ շարունակաբար բարձրանում էր։ Ուշագրավ է, որ այդ աճի մեջ ավելի բարձր տեմպեր է ունեցել անմիջապես ժողովրդական տնտեսության մեջ զբաղված մտավորականությունը։ Այսպես, օրինակ, եթե 1941 թ. Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էին միջնակարգ

և բարձրագույն կրթություն ունեցող 19,4 հազար մասնագետ, ապա 1959 թ. դրանց թիվը հասավ 75,2 հազարի, կամ ավելացավ 4 անգամ[106]: Նկատենք, որ 1941 թ. երկրորդ կարգի մասնագետների թիվը առաջինին գերազանցում էր 1,6 անգամ: 1960 թ. այդ հարաբերակցությունը փոխվել էր հետևյալ կերպ. առաջին կարգի մասնագետները գերազանցում էին 1,2 անգամ[107]:

Այդ երևույթը զարգացման միտում ունի նաև արդի ժամանակաշրջանում: Մտավորականության քանակի անընդմեջ աճը հավաստում է, որ գնալով ամրապնդվում է ժողովրդական մտավորականության, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության միասնությունը:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում բանվոր դասակարգի ներդասակարգային կառուցվածքում առաջացած տեղաշարժերը: Ինչպես սոցիալիզմի կառուցման նախորդ տարիներին, այնպես էլ սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում հասարակության առաջատար ուժի ներդասակարգային կառուցվածքում պահպանվել են որոշ սոցիալական տարբերություններ: Նրա ներքին կառուցվածքի տարբերությունների գլխավոր պատճառը պայմանավորված է եղել աշխատանքի բնույթով: Բանն այն է, որ սոցիալիստական ժողովրդական տնտեսության, ամենից առաջ արդյունաբերության արտադրական պրոցեսների տեխնիկական զինվածության և մեքենայացման տարբեր աստիճանը, աշխատողների կուլտուր-տեխնիկական ու հանրակրթական ոչ միատեսակ մակարդակը, բանվոր դասակարգի կազմում օբյեկտիվորեն պայմանավորել են պրոֆեսիոնալ-տեխնիկական տարբեր պատրաստություն ունեցող աշխատողների խմբեր, որոնց մի մասի աշխատանքը բացառապես կրել է ֆիզիկական բնույթ, իսկ մյուս մասինը՝ ֆիզիկականը համատեղվել է մտավորի հետ:

Սոցիալիստական հասարակության զարգացման փորձը հավաստում է, որ բանվոր դասակարգի ներդասակարգային կառուցվածքի փոփոխությունների հիմնական միտումը այն է, որ այդ տեղաշարժերը տանում են դեպի նրա սոցիալական միասնության ամրապնդում: Այդ պրոցեսի հիմքը կազմում է արտադրության տեխնիկատնտեսական անընդմեջ առաջընթացը: Սոցիալիստական հասարակական արտադրության, գլխավորապես նրա առանցքը կազմող արդյունաբերության զարգացումը, նոր տեխնիկայի ներդրումը, արտադրական պրոցեսների բարդացումն ու կատարելագործումը, գիտության ու արտադրության կապի շարունակաբար ամրապնդումը օբյեկտիվորեն փոխել են բան-

վորի աշխատանքի բնույթը և խթանել նրա կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացմանը:

Ամբողջ երկրի ժողովրդական տնտեսության համակողմանի զարգացման և արտադրության տեխնիկայի կատարելագործման հետ անխզելիորեն կապված զգալի աշխուժացում ապրեց հանրապետության սոցիալիստական արտադրությունը: Դործարկվեցին և շահագործման հանձնվեցին նոր ձեռնարկություններ ու արտադրամասեր, արտադրության մեջ արմատավորվեցին բարձրարտադրողական հաստոցներ, ավտոմատ գծեր, հզոր շոգետուրբիններ, արտադրական պրոցեսների ավտոմատ վերահսկման ու ղեկավարման սարքավորումներ, որոնց հետևանքով զգալիորեն աճեց աշխատանքի արտադրողականությունը և կրճատվեց ֆիզիկական աշխատանքի բաժինը: Հանրահայտ է, որ արտադրության պրոցեսների մեքենայացումն ու ավտոմատացումը, ինչպես նաև դրա հետ կապված բանվոր դասակարգի հանրակրթական / կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը, շարունակաբար ըղեկցվել են ավելի բարդ ու որակյալ մասնագիտության բանվորների թվի ավելացումով, որոնց գործունեության մեջ սերտորեն ներդաշնակվում են ֆիզիկական ու մտավոր աշխատանքը:

Հասարակության առաջատար դասակարգի կյանքում կատարված տեղաշարժերը նկատելիորեն բարձրացրին նրա արտադրատեխնիկական ու ստեղծագործական ակտիվությունը: Արտադրական պրոցեսների կատարելագործման, նոր տեխնիկայի մշակման և առաջավոր մեթոդների արմատավորման համար ինժեներատեխնիկական և գիտական աշխատողների ծավալած շարժման մասնակիցների մեջ արագորեն աճեց բանվոր նորարարների ու գյուտարարների թիվը: Հատկանշական է, որ սոցիալիստական հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի զարգացման օբյեկտիվ նախադրյալներից բացի, որոնք ստեղծվեցին մեր երկրում սոցիալիզմի կառուցման ինչպես նախորդ, այնպես էլ սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում, մեծ է եղել նաև սուբյեկտիվ գործոնի՝ կոմունիստական կուսակցության և սովետական պետության դերը հասարակության զարգացման սոցիալական պրոցեսների կարգավորման գործում: Սոցիալիստական շինարարության տարբեր փուլերում կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մշակելով մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները, մեծ տեղ են հատկացրել նաև հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի զարգացմանը: Այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները ավելի

ինտենսիվ բնույթ են ստացել մանավանդ հիմա, երբ սոցիալիստական հասարակարգի կատարելագործումը օրակարգի հարց է դարձնում բազմաթիվ բարդ ու լայն խնդիրներ, որոնց լուծման գործում է՛լ ավելի է աճում հասարակության սոցիալական միատարրության հասնելու որոշիչ դերը։

Հիմնական գծերով այսպիսին են հանրապետության բանվոր դասակարգի առաջատար դերի պայմաններում բնակչության սոցիալ-դասակարգային կազմում կատարված տեղաշարժերը։ Դրանց ընդհանրացումը հանգեցնում է հետևյալին։ ա) Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքում լիովին վերացան սոցիալիստական սեփականության երկու ձևերից որևէ մեկի վրա չհենվող հասարակական խավերն ու շերտերը (մենատնտես գյուղացիներ, չկոոպերացված արհեստավորներ և այլն)։

բ) Հասարակության սոցիալ-դասակարգային միատարրության հաստատումը բարդ և բազմակողմանի պրոցես է, որը ընթացել և ընթանում է արտադրողական ուժերի անընդմեջ զարգացման, արտադրության արդյունավետության բարձրացման, արտադրական հարաբերությունների կատարելագործման, ինչպես նաև հասարակության հոգևոր-նյութական հարստության հիման վրա։

գ) Գյուղատնտեսական աշխատանքի վերածվելը ինդուստրիալ աշխատանքի տարատեսակի մի կողմից նպաստել է կոլտնտեսային գյուղացիության մերձեցմանը բանվոր դասակարգի հետ, իսկ մյուս կողմից, ստեղծել է անհրաժեշտ պայմաններ քաղաքի ու գյուղի, ֆիզիկական ու մտավոր աշխատանքի միջև գոյություն ունեցող էական տարբերությունների վերացման համար։

դ) Սոցիալ-դասակարգային կառուցվածքի տեղաշարժերը որպես ոչ միակողմանի պրոցես տեղի են ունեցել բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի փոխներգործության, նրանց սոցիալ-քաղաքական և գաղափարական մերձեցման հիմքի վրա, որոնց շրջանակներում գյուղացիությունն ու սոցիալական մյուս խմբերը ավելի շատ կրել են բանվոր դասակարգի ազդեցությունը։ Այսինքն, բոլոր դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցումը, սովետական հասարակության բարոյաքաղաքական միասնությունը խարսխվել է մարքս-լենինյան գաղափարախոսության բանվոր դասակարգի՝ սովետական հասարակության առաջատար ուժի վրա։

ե) Կոլտնտեսային գյուղացիության սոցիալական և որակական շերտավորման ընդհանրության վրա էական ներգործություն է ունենում շարքային կոլտնտեսականների և կոլտնտեսային մտավորականության միջև եղած էական տարբերության սահմանների կրճատումը և նրանց մերձեցումը։

զ) Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, կապված արտադրության տեխնիկատնտեսական առաջընթացի և բնակչության հանրակրթական ու կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման հետ, նկատելի տեղաշարժեր են դիտվել նաև բանվոր դասակարգի ներդասակարգային կառուցվածքում։

է) Սոցիալիստական հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի զարգացման օբյեկտիվ նախադրյալներից բացի, այդ պրոցեսում մեծ դեր է խաղացել նաև սուբյեկտիվ գործոնի՝ կուսակցության և սովետական պետության սոցիալական քաղաքականությունը։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ–ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂ ՈՒԺԸ

Բանվոր դասակարգը եղել և մնում է հասարակության հիմնական արտադրող ուժը։ Կ. Մարքսի բնորոշմամբ նա հանդիսանում է յուրաքանչյուր ժողովրդի կմախքը[1]*, ստեղծում է ազգի ամբողջ հարստությունը*[2]*։ Նոր դարաշրջանի գիտական վերլուծության հիման վրա Վ. Ի. Լենինը ստեղծագործաբար զարգացնելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հայացքները հասարակության հիմնական արտադրող ուժի վերաբերյալ, գրել է. «Ամբողջ մարդկության առաջին արտադրողական ուժը բանվորն է, աշխատավորը»*[3]*։ Հանրային արտադրության մեջ բանվոր դասակարգի գրաված առաջատար տեղը, որպես հասարակության հիմնական արտադրող ուժ, օրինաչափ է։ Գործելով հանրային սեփականության վրա հիմնված ժողովրդական տնտեսության առանցքային ճյուղերում (արդյունաբերություն, շինարարություն, տրանսպորտ) նա իրականացնում է արտադրության հիմնական միջոցների արտադրությունը և դրանով իսկ վճռական դեր խաղում տնտեսության մեծ ու փոքր բոլոր ճյուղերի մեքենայացման ու ավտոմատացման, նրանց արտադրական պրոցեսների կատարելագործման, տնտեսական առաջընթացի և աշխատանքի արտադրողականության ու արդյունավետության բարձրացման գործում։*

Հասարակության առաջատար դասակարգի արտադրական գործունեության գլխավոր բնագավառը արդյունաբերությունն է, մասնավորապես ծանր արդյունաբերությունը։ Վերջինս, Վ. Ի. Լենինի պատկերավոր արտահայտությամբ, հանդիսանում է բանվոր դասակարգի նյութական ու հոգևոր հիմքը[4]*։*

Սոցիալիստական հասարակության զարգացման պրակտիկան հա-

վաստում է, որ հանրային ամբողջ արտադրության տեխնիկական առաջընթացը և այդ արտադրության արդյունավետության բարձրացումը պայմանավորված է հիմնականում արդյունաբերության, մասնավորապես ծանր արդյունաբերության տեխնիկական զինվածության մակարդակով և զարգացման տեմպերով: Նրա ներգործությունը գործնականում տարածվում է հասարակական արտադրության բոլոր ճյուղերի ու ոլորտների վրա:

Սոցիալիստական արդյունաբերության գիտատեխնիկական առաջընթացը հնարավորություն է տալիս ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերազինել աշխատանքի առավել կատարելագործված, առավել արտադրողական մեքենաներով ու սարքավորումներով: Կենսագործելով սոցիալիստական-կոմունիստական շինարարության գլխավոր խընդիրները, արդյունաբերական բանվոր դասակարգը ոչ միայն գնում է առջևից և ստեղծում կոմունիզմի նյութատեխնիկական հիմքը, այլև ուժեղացնում է նյութատեխնիկական օգնությունը ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերին: Այս տեսակետից սոցիալիստական ժողովրդական տնտեսության մեջ առավել առաջատար դիրք գրավում է ծանր արդյունաբերության բանվորությունը, քանի որ ծանր արդյունաբերության զարգացումը հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման, աշխատանքի արտադրողականության ու արդյունավետության բարձրացման, ժողովրդի նյութական կյանքի բարելավման և պետության պաշտպանական հզորության ամրապնդման գլխավոր պայմանը: Բացի դա, «Բանվոր դասակարգի ինդուստրիալ ջոկատի և ամենից առաջ ամբողջ արդյունաբերության բանվորների տեղն ու դերը... որոշվում են ոչ միայն նրանց թվաքանակով և տեսակարար կշռով, այլ գլխավորապես նրանով, որ հենց բանվորների այդ կատեգորիաներն են առավել լրիվ, հետևողականորեն և ակտիվորեն արտահայտում իրենց դասակարգի առաջադեմ գծերը՝ բարձր կազմակերպվածությունն ու համախմբվածությունը, մարքսիզմ-լենինիզմի գաղափարները կենսագործելու համար ակտիվ պայքարը, կուլտուր-տեխնիկական բարձր մակարդակը, արտադրական և հասարակական ակտիվությունը»[5]:

Վերը շարադրվածից բնավ էլ չի հետևում, թե ժողովրդական տնտեսության մեջ բանվոր դասակարգի ինդուստրիալ ջոկատի անընդմեջ բարձրացումով նսեմանում են նրա ոչ ինդուստրիալ ջոկատների դերն ու գործունեության մասշտաբները: Ընդհակառակը, գնալով աճում է նրա ոչ ինդուստրիալ ջոկատների բանվորության թիվը, մեծանում է նրանց դերը տնտեսության մյուս ճյուղերում: Բանն այն է, որ երկրի

տեխնիկական-տնտեսական պոտենցիալի սիստեմատիկ աճը ընդլայնում է ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման հետ կապված արտադրական խնդիրների լուծման ծավալը: Դրա հետ սերտորեն կապված հանրային արտադրության մեջ աճում են բանվոր դասակարգի այնպիսի ջոկատների թիվը և դերը, ինչպիսիք են թեթև և սննդի արդյունաբերության, կոմունալ-կենցաղային, առևտրի ու սպասարկման և այլն, որոնց գործունեությունից մեծ չափով կախված է ժողովրդի նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացումը: Այսպես, օրինակ, Սովետական Հայաստանում 1940 թ. համեմատությամբ 1959 թ. կապի սիստեմում աշխատող բանվոր-ծառայողների թիվը ավելացել է 1,8, հասարակական սննդի բնագավառում աշխատողներինը՝ 1,7, իսկ՝ առևտրի, մթերումների, նյութատեխնիկական մատակարարման և կենցաղի ոլորտներում ընդգրկվածներինը՝ մոտ 2 անգամ[6]:

Որպես սոցիալիստական հասարակական արտադրության գլխավոր արտադրող ուժ՝ բանվոր դասակարգը առաջատար դեր է խաղում նաև ժողովրդական տնտեսության գիտատեխնիկական առաջընթացի գործում, որտեղ նա ի հայտ է բերում տեխնիկական բանիմացություն և նախաձեռնություն:

Նրա արտադրական ակտիվության և մասսայական ստեղծագործական նախաձեռնության աճը իր կոնկրետ արտահայտությունն է գտնում սոցիալիստական մրցության մասնակիցների քանակական աճի, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դրսևորման և նորարարական ու գյուտարարական շարժման լայն թափի մեջ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բանվոր դասակարգի տեխնիկական ստեղծագործական ակտիվության բնորոշ գծերից մեկը այն է, որ գնալով խորացել և ամրապնդվել է նրա համագործակցությունը ինժեներատեխնիկական և գիտության աշխատողների հետ: Այդ համագործակցությունը ձևավորել է աշխատողների նոր տիպ, որոնք արտադրական գործունեության մեջ ֆիզիկական աշխատանքի տարրերը զուգակցել են մտավոր աշխատանքի հետ:

Բանվոր դասակարգի դերը որպես հասարակության հիմնական արտադրող ուժի, վառ կերպով դրսևորվում է գյուղում արտադրողական ուժերի վերելքի, գյուղատնտեսության ետ մնալը հաղթահարելու, գյուղում կոմունիստական հասարակական հարաբերությունների ստեղծման, քաղաքի ու գյուղի միջև եղած տնտեսական, սոցիալական և կուլտուրական անհավասարության վերացման ու այդ հիման վրա աշխատավոր երկու դասակարգերի մերձեցման գործում: Ինչ իրողու-

թյուն է, որ սոցիալիստական գյուղատնտեսությունը վիթխարի դեր է խաղացել և խաղում է մեր երկրում կոմունիզմի նյութատեխնիկական բազա ստեղծելու ուղղությամբ: Սակայն, սոցիալիստական գյուղատնտեսությունը, ինչպես անցման շրջանում, այնպես էլ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, թեև հասել էր որոշ հաջողությունների, բայց օբյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք պատճառների հետևանքով այդ բնագավառում դեռևս կային լուրջ թերություններ ու դժվարություններ: Մի կողմ թողնելով ժողովրդական տնտեսության այդ կարևոր ճյուղի ետ մնալու պատճառները, որոնք մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս են, նշենք միայն, որ արդյունաբերության համեմատությամբ զգալիորեն ցածր էր նրա աշխատանքի արտադրողականությունը: Այդ են վկայում ստորև բերվող տվյալները: Սովետական Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը 1940 թ. համեմատությամբ 1960 թ. աճել է 173, իսկ գյուղատնտեսության մեջ միայն 72%-ով[7] (Միությունում համապատասխանաբար 196 և 85%)[8]: Այսպիսի պայմաններում, առանց բանվոր դասակարգի սիստեմատիկ ու համակողմանի օգնության և աջակցության, գյուղատնտեսությունը անկարող էր լուծել իր առջև դրված բարդ խնդիրներն ու պրոբլեմները:

Սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում, ինչպես Միության մեջ ամբողջությամբ, այնպես էլ Սովետական Հայաստանում, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգը մեծ օգնություն ցույց տվեց գյուղացիությանը, գյուղատնտեսության վիճակը բարելավելու և նրա դինամիկ զարգացումը ապահովելու համար: Գյուղում սոցիալիստական շինարարության հիմնական դժվարությունը նրա նյութատեխնիկական բազայի ստեղծումն էր: Այս կարևորագույն պրոբլեմի լուծումով գյուղատնտեսական աշխատանքը կարող էր վերածվել ինդուստրիալ աշխատանքի տարատեսակի Սոցիալիստական գյուղատնտեսության մեքենայական բազան ամուր հիմքերի վրա դնելու և այդ արտադրության աշխատանքները կատարելագործելու պրոբլեմի լուծումը կուսակցությունից և բանվոր դասակարգից պահանջում էր ուժերի հսկայական լարում:

Սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում, բանվոր դասակարգը վճռական դեր է խաղացել գյուղատնտեսական աշխատանքը ինդուստրիալ աշխատանքի տարատեսակի վերածման ուղղությամբ:

Կոլտնտեսային արտադրության մեքենայական բազայի ամրա-

պնդման, նրա աշխատանքների մեքենայացման, արտադրության կատարելագործման ու ինտենսիվացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ ուղղակիորեն կապված բանվոր դասակարգը ակտիվորեն մասնակցում էր նաև գյուղատնտեսության քիմիացմանը, հողաբարելավմանը, ինչպես նաև գիտության նվաճումները գյուղատնտեսական արտադրության մեջ ներդնելուն։

Ժողովրդական տնտեսության երկու հիմնական ճյուղերի միջև տնտեսական կապերի կայունացման, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում մեծ նշանակություն ունեցավ արդյունաբերական ձեռնարկությունների, տրանսպորտի և շինարարության շեֆական օգնությունը տեխնիկատնտեսական թույլ բազա ունեցող կոլտնտեսություններին։ Գյուղին նյութատեխնիկական սիստեմատիկ օգնություն ցույց տալու նպատակով, սովետական մյուս հանրապետությունների օրինակով, ՀՍՍՀ քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների շեֆական կազմակերպությունները ննթաշեֆ գյուղերին օգնում էին գյուղատնտեսական սարքավորումներով ու դրամով։ Այս ուղղությամբ զգալի աշխատանք կատարեցին Լենինականի երկաթուղային դեպոյի, տեքստիլ կոմբինատի, Երևանի և Լենինականի մեխանիկական գործարանների, ինչպես նաև Ղափանի ու Ալավերդու հանքագործ բանվոր-ծառայողները։ Նրանք կազմակերպում էին նաև շաբաթօրյակներ և ստացված գումարը տրամադրում կոլտնտեսություններին՝ տրակտորներ ու այլ մեքենաներ ձեռք բերելու համար։

1950-ական թվականներին էլ ավելի ուժեղացավ քաղաքի շեֆական օգնությունը գյուղին։ Այս գործում կարևոր դեր խաղաց սովետական կառավարության 1953 թ. նոյեմբերի 17-ի որոշումը։ Այդ որոշումով արդյունաբերական ձեռնարկություններին ու կազմակերպություններին թույլատրվեց շեֆական կարգով օգնել կոլտնտեսություններին՝ կատարելու ջերմոցների շինարարություն, և այդ նպատակով ծախսել արդյունաբերության թափոնները, չֆոնդավորվող նյութերը։ Այդ շեֆությունը շատ դեպքերում դուրս եկավ ջերմոցների և ջերմատների կառուցման շրջանակներից և ստացավ բազմակողմանի օգնության ձև[9]։

Ի կատարումն հիշյալ որոշման, Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների բանվորական կոլեկտիվները, տնտեսական ու հասարակական կազմակերպությունները էլ ավելի ընդլայնեցին գյուղին ցույց տրվող շեֆական օգնության մասշտաբները։ Այդ

տեսակետից հիշատակության արժանի է Երևանի Օրջոնիկիձեի և Լենինյան շրջանների բանվորական կոլեկտիվների հայրենանվեր աշխատանքը։ Շրջանների 116 արդյունաբերական, շինարարական և գերատեսչական ձեռնարկություններ վերցրել էին տարբեր շրջանների 20 ՄՏԿ-ների և 26 կոլտնտեսությունների շեֆությունը։ Նրանք ենթաշեֆերին օգնում էին մեքենաների և սարքավորումների վերանորոգմամբ, արհեստանոցների և արտադրական այլ ձեռնարկությունների շինարարությամբ։ Օրինակ, ոչ լրիվ տվյալներով, միայն 1954 թ. Լենինյան շրջանը ենթաշեֆ ՄՏԿ-ներին և կոլտնտեսություններին ուղարկել էր 12 հատուց, 65 էլեկտրամոտոր, 7 սղոցային հարմարանք, 3 գեներատոր, 5 տրանսֆորմատոր, մեծ քանակությամբ պահեստային մասեր, շինանյութ և ուրիշ միջոցներ։ Ենթաշեֆ կոլտնտեսություններին բազմակողմանի օգնություն կազմակերպելու դրական աշխատանքի օրինակ տվեցին Երևանի ավտոդողերի, էլեկտրամեքենաշինական և Լենինականի մեխանիկական գործարանների բանվոր-ծառայողները։ Ավտոդողերի գործարանը վերցրել էր Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ գյուղի կոլտնտեսության շեֆությունը, էլեկտրամեքենաշինականը՝ Աշտարակի շրջանի ՄՏԿ-ի շեֆությունը, մեխանիկականը՝ Ազինի շրջանի Սառնաղբյուր գյուղի շեֆությունը։

1955 թ. փոխվեցին գյուղին ցույց տրվող շեֆական օգնության ձևերը[10]։

Ենթաշեֆ շրջաններում ու գյուղերում քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողների ուժերով օգնություն էին կազմակերպվում կոլտնտեսությունների արտադրական, կուլտուր-կենցաղային, վարչական շենքերի կառուցման, արհեստանոցների կարգավորման, զանազան սարքավորումների ձեռքբերման և այս բնույթի այլ աշխատանքներում։ Մեծ էր հասարակության հիմնական արտադրող ուժի ներդրումը նաև գյուղատնտեսությունը ղեկավար ու մասնագետ կադրերով ապահովելու հարցում։ Հիշենք ՍՄԿԿ Կենտկոմի 1953 թ. (սեպտեմբեր) և 1954 թ. (մարտ) պլենումները, որոնք քննարկեցին գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին հարցը և ընդունեցին համապատասխան որոշումներ, այդ թվում՝ գյուղ ուղարկել կազմակերպական-քաղաքական աշխատանքի փորձ ունեցող բանվորներ՝ գյուղում աշխատելու համար։

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ կառավարության կողմից համանման որոշում ընդունվեց նաև 1955 թ. մարտին։ Գյուղ մեկնելու մասին կուսակցության կոչին լայնորեն արձագանքեցին նաև Սովետական Հա-

յաստանի բանվոր-ծառայողները[11]: Հանրապետության քաղաքներից, արդյունաբերական ձեռնարկություններից 1954—1955 թթ. գյուղական շրջաններ կուսակցական և պետական աշխատանքի ուղարկվեցին 307, իսկ ՄՏԿ-ներում աշխատելու համար՝ 1,739 մարդ: Որպես կոլտնտեսությունների նախագահներ կուսակցական և սովետական ակտիվի շարքերից գյուղ մեկնեցին 500 մարդ: ՄՏԿ-ներից կոլտնտեսություններ փոխադրվեցին 905 մասնագետ և այլն[12]: Նրանց հայրենանվեր քայլը էլ ավելի ամրապնդեց կոլտնտեսությունների ղեկավարությունը, ինչպես նաև բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը: Իրավացի է Ս. Սևնյավսկին, երբ գրում է, որ այդ երևույթը կարճատև կամպանիա չէր, այլ սոցիալիզմի և կոմունիզմի շինարարության պրոցեսում բանվորների և գյուղացիների սերտ փոխօգնության հիմքում ընկած օրինաչափության արտահայտություն, նրանց դաշինքի մարմնացում[13]:

Շեֆական օգնությունը գյուղին չէր սահմանափակվում միայն դրանով: Քաղաքի աշխատավորական կոլեկտիվների ուժերով գյուղերում սիստեմատիկաբար անցկացվում էին կուլտուր-լուսավորական բնույթի զանազան միջոցառումներ և դասախոսություններ:

Բանվոր դասակարգը զգալի դեր է կատարել նաև գյուղացիության տնտեսական կյանքում ու կենցաղում ձեռքի աշխատանքի բաժինը կրճատելու ուղղությամբ: Նա արտադրում և գյուղական բնակչությանը մատակարարում էր կենցաղային զանազան սարքեր ու միջոցներ:

Այդ ամենը և հետագա միջոցառումները, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում, զգալիորեն ամրապնդեցին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան: Այսպես, ավելի քան երկու տասնամյակում (1937—1960 թթ.) հանրապետության գյուղատնտեսության մեջ տրակտորների թիվն աճեց 4 անգամ, հացահատիկահավաք կոմբայններինը՝ ավելի քան 9 անգամ, բեռնատար ավտոմեքենաներինը՝ 13 անգամ[14]: Միության մեջ արձանագրվում են աճի հետևյալ տեմպերը՝ տրակտորներինը՝ 3,8, հացահատիկահավաք կոմբայններինը՝ 2,7, իսկ բեռնատար ավտոմեքենաներինը՝ 3,4 անգամ[15]: Գյուղատնտեսության մեջ կատարված տեխնիկատնտեսական խոր տեղաշարժերը նպաստեցին ժողովրդական տնտեսության այդ կարևոր ճյուղի աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացմանը: Բավական է նշել, որ ուսումնասիրվող տարիներին Հայաստանում գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքն ավելացել է 233, իսկ Միությունում՝ 83%-ով[16]:

Բանվոր դասակարգի առաջատար դերը գյուղատնտեսության մեջ

պրսևորվում է ոչ միայն ժողովրդական տնտեսության այդ ճյուղի տեխնիկական վերազինման, ղեկավար ու մասնագետ կադրերի պատրաստման գործում, այլ նաև գյուղատնտեսական մթերքների անմիջական արտադրության մեջ։ 1960 թ. ՀՍՍՀ գյուղատնտեսության մեջ զբաղված բանվորների թիվը հասավ 37 հազարի, որին բաժին էր ընկնում գյուղատնտեսական մթերքների արտադրության զգալի մասը։

Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում, գյուղատնտեսության տեխնիկատնտեսական բազայի ամրապնդման և այդ արտադրության մասշտաբների մեծացման հետ շարունակաբար աճել է բանվոր դասակարգի դերը գյուղատնտեսական արտադրության մեջ։

Բանվոր դասակարգը գյուղատնտեսության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի նկատմամբ առաջատար արտադրող ուժի իր ֆունկցիան կենսագործում է նաև սոցիալիզմի կատարելագործման փուլում, քանի որ նա շարունակում է իր ձեռքում պահել սոցիալիստական տնտեսության ամբողջ համակարգի բանալին՝ արդյունաբերությունը, շինարարությունը և տրանսպորտը, այսինքն՝ այն ճյուղերը, որոնց արդյունավետ առաջընթացից է կախված ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումը։ Հանրային արտադրության այն ճյուղերը, որտեղ զբաղված է բանվոր դասակարգը, ներկայումս տալիս են հասարակական համախառն արտադրանքի ավելի քան 90%-ը։

Այսպիսով, սոցիալիստական ու կոմունիստական շինարարության պրոցեսում բանվոր դասակարգը, որպես հասարակության առաջատար արտադրող ուժ, իր բազմակողմ ու բազմաբովանդակ գործունեությամբ վիթխարի դեր է խաղում ամբողջ ժողովրդական տնտեսության բուռն և համակողմանի զարգացման, արտադրական հարաբերությունների հետագա խորացման ու կատարելագործման, սովետական ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման բնագավառում։

2. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Սովետական հասարակության մեջ ամբողջ աշխատավորության, մասնավորապես բանվոր դասակարգի սոցիալական ակտիվության դրսևորման և առաջատար դերի իրականացման կարևորագույն միջոց է հասարակական արտադրության կառավարմանը նրա մասնակցելը։

Հասարակական արտադրության անշեղ զարգացումը անհրաժեշտաբար պահանջում է խելացի ու նպատակասլաց ղեկավարում։ Ինչպես

Հայտնի է, սոցիալիստական ժողովրդական տնտեսության ղեկավարման կազմակերպական հիմնական սկզբունքը այն է, որ պետության կողմից իրականացվող կենտրոնացված ղեկավարությունը և միանձնյա ղեկավարությունը զուգակցվում են տնտեսական կյանքին աշխատավորների ակտիվ մասնակցության հետ:

Ակնհայտ է, որ արտադրության կառավարումը անմիջապես իրականացնում է տվյալ հիմնարկ-ձեռնարկության ադմինիստրացիան: Պետության կողմից նրա վրա է դրված ձեռնարկության տնօրինության տակ եղած ֆինանսական և նյութական միջոցների արդյունավետ օգտագործման և արտադրության կազմակերպման ամբողջ աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը: Սակայն, ինչպես արդեն ասել ենք, սոցիալիստական արտադրության կառավարումը իրականացվում է աշխատավորության մասնակցության պայմաններում:

Ի՞նչ է նշանակում մասնակցել հասարակական արտադրության կառավարմանը: Դա նշանակում է, անմիջականորեն մասնակցել արտադրության կազմակերպումը ղեկավարելու ամբողջ աշխատանքներին վերից վար՝ սկսած ձեռնարկության պլանների մշակումից, արտադրության պրոցեսի կազմակերպումից ու կատարելագործումից մինչև ստացված արդյունքների իրացումը:

Բանվոր դասակարգի, իհարկե, և ամբողջ աշխատավորության լայն մասնակցությունը արտադրության կառավարմանը, հանդիսանում է կապիտալիզմի համեմատությամբ սոցիալիստական տնտեսաձևի բնորոշ առավելություններից մեկը:

Արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա հիմնված շահագործողական հասարակության մեջ խոսք անգամ լինել չի կարող արտադրության կառավարմանը բանվորների մասնակցության մասին: Դա բացատրվում է նրանով, որ հակամարտ հասարակության մեջ կյանքի բոլոր բնագավառներում ղեկավարումը ունի սոցիալ-դասակարգային բնույթ, ստանում է քաղաքական երանգ, քանի որ շահագործողների և շահագործվողների շահերը միմյանց օտար են ու հակադիր: Այդ հասարակության մեջ արտադրատնտեսական և հասարակական-քաղաքական հարաբերությունների ղեկավարման բնույթը, նպատակը, սկզբունքները սահմանվում ու կյանքի են կոչվում տիրապետողների դասակարգային շահերից ելնելով: Աշխատավորությանը մեկուսացնելով արտադրության միջոցներին սեփականատիրելու իրավունքից, կապիտալիստները միաժամանակ նրանց զրկում են այդ միջոցները ընդհանուրի շահերին ծառայեցնելու հնարավորությունից:

Այս ամենը թույլ են տալիս ասելու, որ բուրժուական գրչակների հորինած կեղծիքները («Սովետական Միության մեջ անհատը ոչինչ է, պետական իշխանությունը՝ ամեն ինչ», «Սովետական պետությունը իր քաղաքացիների վրա նայում է ինչպես հպատակների», «Մինչև իսկ հիտլերյան Գերմանիայում մարդկային միտքը ավելի ճնշված, ավելի ահաբեկված չէր, ինչքան ՍՍՀՄ-ի մեջ»)[17] լիովին վերաբերում են հենց կապիտալիստական հասարակարգին, որտեղ մարդու իրավունքները անխնա ճնշվում ու ոտնահարվում են։

Կապիտալիստական հասարակության մեջ պրոլետարիատը իր հերթին ևս, արտադրական ոլորտում սոցիալական ակտիվության անհրաժեշտ շահագրգռվածություն հանդես չի բերում։ Այս երևույթը, անշուշտ, կապիտալիստական արտադրաեղանակի ներքին հակասությունների արդյունք է։ Կապիտալիզմի պայմաններում արտադրության պրոցեսը մշտապես ձևռք է բերում հանրայնացման բարձր աստիճան, կրում է հասարակական բնույթ, իսկ յուրացումը մնում է մասնավոր։ Ահա թե ինչու կապիտալիզմի պայմաններում արտադրողական ուժերի զարգացումը, տեխնիկական առաջադիմությունը, արտադրության կառավարման ձևերի ու մեթոդների կատարելագործումը բանվորին ոչնչով չեն հետաքրքրում։

Միայն սոցիալիստական հասարակարգն է աշխատավորության մեջ ընդհանուր շահագրգռվածություն առաջ բերում հասարակական արտադրության զարգացման, այդ արտադրության ղեկավարման մեթոդների կատարելագործման նկատմամբ և աշխատանքը վերածում է մարդու ակտիվ ու գիտակցական գործունեության։ «Ուրիշի համար հարյուրամյակներ աշխատելուց, շահագործողների համար հարկադրական աշխատանք կատարելուց հետո,—գրել է Վ. Ի. Լենինը,—առաջին անգամն է հնարավորություն ստեղծվում իր համար աշխատելու, այն էլ այնպիսի աշխատանքի հնարավորությունը, որը հենվում է նորագույն տեխնիկայի ու կուլտուրայի բոլոր նվաճումների վրա»[18]։

Սոցիալիստական հասարակության զարգացման տարբեր փուլերում մեր երկրի աշխատավորության առջև ծառացած են եղել բազմաթիվ արգելքներ ու դժվարություններ, որոնց հաղթահարման համար հսկայական նշանակություն է ունեցել բանվոր դասակարգի մասսայական ստեղծագործական-կազմակերպական նախաձեռնության ծավալումը։ Վ. Ի. Լենինը սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից, հսկայական նշանակություն էր տալիս բանվորների և ընդհանրապես բոլոր աշխատավորների ստեղծագործական-կազմակեր-

պական աշխատանքին։ Նա գրում էր. «Կազմակերպական տաղանդներ գյուղացիության ու բանվոր դասակարգի մեջ շատ կան, և այդ տաղանդները նոր-նոր սկսում են գիտակցության գալ, արթնանալ, ձգտել կենդանի, ստեղծագործական մեծ աշխատանքի, ինքնուրույնաբար ձեռնամուխ լինել սոցիալիստական հասարակության կառուցման գործին։

Այժմ ամենագլխավոր խնդիրներից մեկն է, եթե ոչ ամենագլխավորը, ինչքան կարելի է լայն չափով զարգացնել բանվորների և ընդհանրապես բոլոր աշխատավորների ու շահագործվողների այդ ինքնուրույն նախաձեռնությունը ստեղծագործական կազմակերպական աշխատանքի բնագավառում»[12]։ Մեկ այլ տեղ նա գրել է. «Անհրաժեշտ է ավելի ու ավելի ընդլայնել բուն աշխատավորների մասնակցությունը տնտեսության կառավարման և նոր արտադրության կառուցման գործին»[20]։

Հետևողականորեն իրականացնելով լենինյան դրույթները արտադրության կառավարմանը աշխատավորների լայն մասնակցության մասին, որ յուրաքանչյուր աշխատավոր իր ձեռնարկությունում իրեն զգա տեր և ամբողջ երկրի ներկայացուցիչ, կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը ինչպես անցման, այնպես էլ սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում, ուսումնասիրել ևս ներկա ժամանակաշրջանում ձեռնարկել ու ձեռնարկում են բազում միջոցառումներ սոցիալիստական արտադրության ղեկավարման կենտրոնացման, սոցիալիստական ժողովրդական տնտեսության ղեկավարման դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի ամրապնդման և համակողմանի զարգացման, աշխատավոր մասսաներին, ամենից առաջ բանվոր դասակարգին հասարակական արտադրության կառավարմանը լայնորեն մասնակից դարձնելու համար։

Արտադրության կառավարման մեթոդների դեմոկրատացման ու հետագա կատարելագործման ուղղությամբ հսկայական դեր կատարեցին ՍՄԿԿ վերջին համագումարների որոշումները։ Այդ խնդրին առանձնապես մեծ տեղ հատկացրեց կուսակցության XXVII համագումարը։ Անդրադառնալով սոցիալիստական տնտեսության մեխանիզմի հետագա կատարելագործման հարցերին, համագումարը ընդգծեց, որ տնտեսության ղեկավարումը բարելավելու միջոցառումները պետք է դիտել որպես կարևորագույն ռեզերվ, որի օգտագործումը կօգնի հաջողությամբ կատարելու ժողովրդական տնտեսության խնդիրները[21]։

Սոցիալիստական-կոմունիստական շինարարության ընթացքում մեր երկրի կյանքում ստեղծվել է պետական և հասարակական օրգանների

ու կազմակերպությունների լայն սիստեմ, որի շնորհիվ աշխատավորական մասսաները անմիջականորեն կամ ներկայացուցչական ձևով մասնակցում են հասարակական արտադրության կառավարմանը։ Արտադրության կառավարմանը բանվոր դասակարգն ամենից առաջ մասնակցում է կուսակցական, սովետական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների միջոցով։

Կուսակցական կազմակերպությունները ղեկավարում և ուղղություն են տալիս հասարակական և մյուս կազմակերպությունների գործունեությանը, որոնց միջոցով բանվոր դասակարգը մասնակցում է արտադրության կառավարմանը։ Ասվածից ուղղակիորեն հետևում է, որ կոմունիստական կուսակցության ներքին գործունեության գլխավոր առանցքը մնում է երկրի ժողովրդական տնտեսության ղեկավարումը։ Ձեռնարկությունների և հիմնարկությունների կուսակցական կազմակերպությունները և նրանց ղեկավար օրգանները ադմինիստրացիաների հետ համատեղ կազմակերպում են կոլեկտիվների արտադրատնտեսական գործունեությունը։ ՍՄԿԿ նոր կանոնադրության մեջ ասված է, որ սկզբնական կուսակցական կազմակերպությունները հանդես են գալիս որպես աշխատավորների կազմակերպիչներ կոմունիստական շինարարության հերթական խնդիրները լուծելու ասպարեզում, գլխավորում են սոցմրցությունը, մասսաներին մոբիլիզացնում են ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների ներքին ռեզերվները հայտնաբերելու և ավելի լավ օգտագործելու, գիտության, տեխնիկայի նվաճումներն ու առաջավոր փորձը արտադրության մեջ արմատավորելու համար[22]։

Օգտագործելով կանոնադրությամբ իրենց տրված ձեռնարկությունների տնտեսական գործունեությունը վերահսկելու իրավունքները, կուսակցական կազմակերպությունները արդյունավետ ներգործություն են ունենում արտադրական ամբողջ գործերի վրա։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում ամբողջ երկրի մասշտաբով արագորեն աճել է սկզբնական կուսակցական կազմակերպությունների թիվը։ Հատկանշական է, որ առավել բարձր տեմպերով են աճել նյութական արտադրության մեջ եղած սկզբնական կուսակցական կազմակերպությունները։

Ավելի քան երկու տասնամյակի ընթացքում Հայաստանի արդյունաբերության, շինարարության մեջ և տրանսպորտում սկզբնական կուսակցական կազմակերպությունների թիվը աճել է 3,5, իսկ նրանցում

ընդգրկված կոմունիստների թիվը՝ 4,3 անգամ[23]։ Ուշագրավ է, որ կուսակցության աճը կատրվել է գլխավորապես բանվոր դասակարգի հաշվին։

Նյութական արտադրության ոլորտում զբաղված կոմունիստ բանվորների թվաքանակի աճը նպաստել է կուսակցության կյանքում նրանց դերի էլ ավելի մեծացմանը։ Արտադրության կազմակերպման, նյութական ու ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման և արտադրության տեխնիկական կատարելագործման ուղղությամբ արդյունավետ ու լայնահոգ աշխատանքի լավագույն օրինակ են ցույց տվել Երևանի կոմպրեսորների, Տեքստիլդետալ, Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանների, Կիրովականի քիմիական, Քաջարանի, Դաստակերտի, Ագարակի պղնձամոլիբդենային, ինչպես նաև Ղափանի ու Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատների սկզբնական կուսակցական կազմակերպությունները։ Բավարարվենք բազմաթիվ օրինակներից մեկի հիշատակումով։ Այսպես, Երևանի Տեքստիլդետալ գործարանի ձուլող ցեխը զգալի քանակությամբ խոտան արտադրանք էր տալիս։ Այդ հարցը քննության դրվեց կուսակցական կազմակերպության ժողովում։ Պարզվեց, որ անորակ ձուլումը տեխնոլոգիական պրոցեսների ոչ ճիշտ կիրառման հետևանք է. առանձին բանվորներ վատ էին տիրապետում ձուլման տեխնիկային։ Կուսակցական կազմակերպությունը կոմունիստ բանվորների ակտիվ մասնակցությամբ մշակեց գործնական միջոցառումներ և մանրամասն պարզաբանեց, թե ինչպես պետք է աշխատել բարձրորակ արտադրանք տալու համար[24]։

Բանվոր դասակարգի ներկայացուցիչների թիվը մեծ էր նաև հիմնարկ-ձեռնարկությունների սկզբնական կուսակցական կազմակերպությունների ընտրական օրգաններում՝ արտադրամասերի կուսակցական բյուրոներում և գործարանային կուսակցական կոմիտեներում։ Կուսակցական բյուրոների և կոմիտեների անդամ կոմունիստ բանվորները ակտիվորեն մասնակցել են իրենց հիմնարկ-ձեռնարկությունների կառավարմանը և վճռական ազդեցություն են ունեցել ձեռնարկությունների առջև դրված սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում։

Արտադրության կառավարմանը աշխատավորական մասսաները ներգրավվում են նաև ներկայացուցչական մարմինների՝ սովետների միջոցով։ Սովետները ոչ միայն պետական, այլ նաև աշխատավորների մասսայական հասարակական կազմակերպություն են։ Սովետների և նրա ղեկավար մարմինների՝ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության, միութենական ու ինքնավար հանրապետությունների Գերագույն սո-

վետների նախագահության, նրանց մշտական հանձնաժողովների, ինչպես նաև տեղական գործադիր կոմիտեների կազմում ընտրված բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչները անում են կարևոր առաջարկություններ՝ աշխատանքի կազմակերպման, տնտեսության կեկավարման, տեխնիկական առաջընթացի գործում տեղ գտած թերությունների վերացման, աշխատավորների կուլտուր-կենցաղային պայմանների բարձրացման և այլ հարցերի վերաբերյալ:

Հասարակական արտադրության կառավարմանը աշխատավորության ամենամասսայական ձևով մասնակցության հիմնական միջոցը աշխատավորական կոլեկտիվն է, որտեղ ստեղծվում են հիմնական նյութական ու մշակութային արժեքները: Աշխատավորական կոլեկտիվը հանդիսանում է մեր հասարակության ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական օրգանիզմի հիմնական միջուկը:

Արտադրության կառավարումը կատարելագործելու, տնտեսական խնդիրները լուծելու և ամբողջ էկոնոմիկայի դինամիկ ու արդյունավետ զարգացումն ապահովելու գործում կուսակցությունը կարևոր նշանակություն է տալիս աշխատավորների և աշխատավորական կոլեկտիվների դերի էլ ավելի մեծացմանը և պատասխանատվության բարձրացմանը: Սա եղել և մնում է սոցիալիստական արտադրական հարաբերությունների և տնտեսավարման մեթոդների կատարելագործման անխախտ սկզբունքը. «ՍՄԿԿ-ն հետևողականորեն կիրականացնի աշխատավորների ստեղծագործական նախաձեռնությունը զարգացնելու և արտադրության կառավարման պրոցեսի մեջ նրանց ավելի ու ավելի լրիվ ներգրավելու գիծը»[25], ասված է ՍՄԿԿ նոր ծրագրում: Արտադրության կառավարման մեջ բանվորների կոլեկտիվ ընդգրկման լավագույն օղակներ են բանվորական ժողովները և կոնֆերանսները, որտեղ քննարկվում են արտադրության տնտեսական առաջընթացի, ինչպես նաև կոլեկտիվի սոցիալ-կուլտուրական զարգացման հետ կապված կարևոր ու հանգուցային բազմաթիվ հարցեր:

Մեր կյանքի բոլոր բնագավառներում աշխատավոր լայն մասսաների, առաջին հերթին բանվոր դասակարգի սոցիալական ակտիվության և ղեկավար դերի բարձրացման, տնտեսական և հասարակական կյանքում նրանց իրավունքների ընդլայնման գործում վճռական դեր խաղացին ՍՄԿԿ Կենտկոմի Հուլիսյան (1953 թ.) պլենումի և մասնավորապես ՍՄԿԿ XX համագումարի (1956 թ.) կողմից ընդունված որոշումները, որոնցով սկսեց վերականգնվել կուսակցական կյանքի լենինյան նորմաները: Դա բարերար ազդեցություն ունեցավ պե-

տական և հասարակական կազմակերպությունների գործունեության վրա։

Հանրապետության կոմունիստական կուսակցությունը դեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի հուլիսյան պլենումի և XX համագումարի որոշումներով, իր պրակտիկ գործունեության մեջ իրականացրեց մի շարք միջոցառումներ՝ նպատակ ունենալով էլ ավելի ծավալել ներկուսակցական դեմոկրատիան, զարգացնել մասսաների ստեղծագործական ակտիվությունը և ինքնագործունեությունը։

Արտադրության կառավարմանը աշխատավորության մասնակցությունը ապահովելու գործում մեծ դեր են խաղում արհմիութենական կազմակերպությունները։ Արտադրության կառավարման դեմոկրատական սկզբունքների զարգացման գործում մշտապես աճում է նրանց դերը։ Սոցիալիստական շինարարության ամբողջ ընթացքում կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունը մշտական հոգատարություն են հանդես բերել մեր դեմոկրատիայի ընդհանուր սիստեմի մեջ արհմիությունների դերի բարձրացման, նրանց կազմակերպական աշխատանքի կատարելագործման, այդ կազմակերպությունների նախաձեռնության ու ինքնագործունեության զարգացման, ինչպես նաև արհմիութենական կազմակերպությունները առավելագույն չափով աշխատավորական մասսային մոտեցնելու ուղղությամբ։ Արհմիութենական կազմակերպությունների նկատմամբ կուսակցության և կառավարության մշտական հոգատար վերաբերմունքը նպատակ է հետապնդում դրանց գործունեության աշխուժացման միջոցով էլ ավելի բարձրացնել սովետական մարդկանց աշխատանքային և հասարակական ակտիվությունը։ Արհմիությունների կարևորագույն խնդիրների մասին, ՍՄԿԿ նոր ծրագրում ասված է, որ «Արհմիությունները կոչված են ... ըստ ամենայնի նպաստելու ժողովրդական հարստության բազմապատկմանը, աշխատավորների աշխատանքի, կենցաղի ու հանգստի պայմանների բարելավմանը... մշտապես զբաղվելու մասսաների կոմունիստական դաստիարակությամբ, նրանց մասնակից դարձնելու արտադրական ու հասարակական գործերի կառավարմանը, ամրապնդելու գիտակցական աշխատանքային կարգապահությունը»[26]։

Իր շարքերում միավորելով բնակչության բոլոր դասակարգերին ու սոցիալական խմբերին, սովետական արհմիությունները, այնուհանդերձ, ամենից առաջ հանդիսանում են բանվոր դասակարգի կազմակերպություն։ Սոցիալիստական շինարարությանը զուգընթաց, ինչպես Միության մեջ ամբողջությամբ, այնպես էլ Հայաստանում, շարունա-

կաբար աճել են արհմիութենական կազմակերպությունների և դրանցում ընդգրկված բանվորների թիվը։ Այդ են վկայում հետևյալ տվյալները։ Եթե 1946 թ. Հայկական ՍՍՀ-ում հաշվվում էր 1576 սկզբնական արհմիութենական կազմակերպություն՝ 161200 մարդով, ապա 1959 թ. դրանց թիվը կազմեց 4055, իսկ նրանցում ընդգրկվածներինը՝ 320791 մարդ[27]։ Ինչպես կարելի է նկատել, նշված տարիներին հանրապետությունում արհմիութենական կազմակերպությունների թիվը ավելացել է 2,5, իսկ դրանցում ընդգրկված բանվոր-ծառայողներինը՝ մոտ 2 անգամ։

Ինչպես հայտնի է, սովետական արհմիությունները մասնակցում են սոցիալիստական ժողովրդական տնտեսության շատ խնդիրների լուծմանը՝ պետական պլանների մշակումից մինչև յուրաքանչյուր ձեռնարկության աշխատանքի կառավարումը։ Նրանց գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում նաև սոցիալիստական մրցության կազմակերպումը, աշխատանքի առաջավոր մեթոդների տարածումն ու արմատավորումը, ինչպես նաև աշխատավորների նյութական և սոցիալական շահերի պաշտպանությունը։ Ավելացնենք նաև, որ արհմիությունները ունեն վերահսկելու ֆունկցիա։ Վերջինիս միջոցով հասարակության առաջատար դասակարգը իրականացնում է իր վերահսկողությունը տնտեսական ղեկավարների գործունեության վրա։ Արհմիություններն իրենց վերահսկողությունը տնտեսական օրգանների վրա իրականացնում են ֆաբրիկագործարանային արտադրական հանձնաժողովների և արտադրական խորհրդակցությունների միջոցով։

Արտադրության կառավարմանը բանվորների լայնորեն ընդգրկման գործում մեծ է արտադրական խորհրդակցությունների դերը։ Դրանք մեծ աշխատանք են կատարում մասսաների քաղաքական և աշխատանքային ակտիվությունը բարձրացնելու, բանվորական մասսաներին արտադրության կառավարմանը մասնակից դարձնելու, արտադրության ռեզերվները արդյունավետ օգտագործելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու, բանվորների շարքերից տնտեսավարների և ադմինիստրատորների նոր կադրեր առաջ քաշելու և դաստիարակելու ուղղությամբ։ Արտադրական խորհրդակցությունները զգալի աշխատանք են կատարում ձեռնարկություններում պետական առաջադրանքների թերակատարման պատճառների բացահայտման ու դրանց վերացման, աշխատանքային ժամանակի խելացի օգտագործման և արտադրանքի որակի բարելավման ուղղությամբ։

Մեր երկրում արտադրական խորհրդակցությունների գործունեությանը լայն թափ հաղորդեց ՍՄԿԿ Կենտկոմի դեկտեմբերյան (1957 թ.) պլենումի ընդունած որոշումը, որը մատնանշեց արտադրական խորհրդակցությունների հետագա զարգացման ուղիները և սահմանեց նրա գործունեության կոնկրետ խնդիրները արտադրական պլանների կատարման ու գերակատարման, ներքին ռեզերվների արդյունավետ օգտագործման և արտադրության կառավարման մեթոդների կատարելագործման ուղղությամբ[28]: Որոշումն արժանացավ աշխատավորների և արհմիութենական կազմակերպությունների միահամուռ հավանությանը: Անհրաժեշտ համարվեց արտադրական խորհրդակցությունները դարձնել մշտապես գործող, նրանց մեջ մտցնել բանվորների, ծառայողների, ադմինիստրացիայի, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների ու գիտատեխնիկական ընկերությունների ներկայացուցիչներին:

Մշտական գործող արտադրական խորհրդակցությունների աշխատանքը է՛լ ավելի նպատակասլաց ու արդյունավետ դարձնելու կարևորությունից ելնելով, ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը և ՀԱՄԿԿ-ն 1958 թ. հուլիսի 9-ին հաստատեցին արդյունաբերական ձեռնարկություններում, կառույցներում, սովխոզներում և ՄՏԿ-ներում մշտական գործող արտադրական խորհրդակցությունների մասին կանոնադրությունը: Կանոնադրությունը սահմանում է նրանց իրավունքները արտադրության կազմակերպման և կառավարման կարևոր հարցերում[29]:

Կոմունիստական կուսակցության և սովետական պետության վերհիշյալ ձեռնարկումները, հիրավի, շրջադարձային երևույթ էին երկրի էկոնոմիկան կառավարելու ձևերի ու մեթոդների դեմոկրատացման, ամբողջ աշխատավորության ստեղծագործական, կազմակերպական և հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացման գործում: Հայաստանում արագորեն աճեցին մշտական գործող արտադրական խորհրդակցությունների քանակը և նրանցում ընդգրկված բանվոր-ծառայողների թիվը: 1960 թ. ՀՍՍՀ-ում արդեն կային 827 համագործարանային և ցեխային մշտական գործող արտադրական խորհրդակցություններ, 33551 անդամով, մինչդեռ 1957 թ. դրանց թիվը համապատասխանաբար կազմում էր 514 և 9672[30]:

Հատկանշական է, որ 1960 թ. դրությամբ մշտական գործող արտադրական խորհրդակցություններում ընդգրկված 33551 անդամներից 24066-ը կամ 71%-ը բանվորներ էին[31]: Բերված տվյալներից հետևում է, որ միայն 1960 թ. 33551 բանվոր-ծառայողներ և ինժեներատեխնի-

ական աշխատողներ մշտական գործող արտադրական խորհրդակցությունների միջոցով անմիջական մասնակցություն են ունեցել արտադրության կառավարմանը: Նկատելիորեն բարձրացավ նաև կառավարման այդ օղակի աշխատանքի որակը: Բավական է նշել, որ միայն 1958 թ. ընթացքում Հայաստանի արտադրական ձեռնարկություններում հրավիրվել է ավելի քան 22 հազար արտադրական խորհրդակցություն, որտեղ բանվոր-ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների կողմից արվել է շուրջ 42 հազար արժեքավոր առաջարկություն[32]:

Առաջավոր շատ ձեռնարկությունների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մշտական գործող արտադրական խորհրդակցությունները վճռական դեր են խաղացել իրենց ձեռնարկությունների առջև կանգնած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում:

Աշխատավորների ստեղծագործական ակտիվությունն ու նախաձեռնությունը զարգացնելու, արտադրության կառավարման մեջ բանվորներին ներգրավելու ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել Երևանի պոլիվինիլացետատ, ավտոդողերի, Ջերժինսկու անվան հատուցաշինական, Կիրովականի քիմիական, Լենինականի տեքստիլ և մի շարք այլ առաջատար ձեռնարկությունների մշտական գործող արտադրական խորհրդակցությունները: Օրինակ, Երևանի ավտոդողերի գործարանի մշտական գործող արտադրական խորհրդակցությունը պարբերաբար քննարկել է ձեռնարկության տնտեսման և խնայողության ռեժիմի կիրառման, արտադրության ներքին ռեզերվների առավել արդյունավետ օգտագործման, արտադրության կուլտուրայի բարձրացման, աշխատանքային պայմանների բարելավման հարցերը[33]: Երևանի պոլիվինիլացետատ գործարանի մշտական գործող արտադրական խորհրդակցությունը քննության է առել նոր տեխնիկայի ներդրման, արտադրական պրոցեսների ավտոմատացման, պլանների կատարման, տեխնիկայի անվտանգության պահպանման և այլ հարցեր, որոնց վերաբերյալ արված կոնկրետ առաջարկությունների կատարումը զգալի չափով նպաստել է գործարանի առաջ դրված խնդիրների կատարմանը[34]:

Սակայն արդյունաբերական շատ ձեռնարկություններում, տրանսպորտում, շինարարության մեջ և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում մի շարք մշտական գործող արտադրական խորհրդակցություններ ժամանակին չեն գումարվել, շատ հաճախ, մոռանալով կարևոր ու հրատապ հարցերը, քննարկվել են երկրորդական հարցեր, ձևական մոտեցում են հանդես բերվել սոցիալիստական մրցության ընթացքի և կատարման ստուգման նկատմամբ, նրանց աշխատանքում չի եղել

կոնկրետության ու գործարարության, թույլ է եղել բանվորների շրջանում տարվող դաստիարակչական աշխատանքը, բացակայել է նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը և այլն։

Ուղենիշ ունենալով ՍՄԿԿ Կենտկոմի ցուցումները մշտական գործող արտադրական խորհրդակցությունների աշխատանքը աշխուժացնելու վերաբերյալ, Հայաստանի կոմկուսի XIX (1958 թ.) և XX (1959 թ.) համագումարները սկզբնական կուսակցական կազմակերպությունների առջև խնդիր դրեցին ուժեղացնել ուշադրությունը մշտական գործող արտադրական խորհրդակցությունների նկատմամբ, խրամուխ լինել դրանց գործունեության բովանդակության մեջ և հասնել այն բանին, որ տեղերում ավելի ու ավելի ընդլայնվի մշտական գործող արտադրական խորհրդակցությունների անմիջական և ակտիվ մասնակցությունը տնտեսական պլանների մշակմանն ու իրագործմանը, բանվոր-ծառայողների աշխատանքի հարցերի լուծմանը, տնտեսական ղեկավարմանը, բանվորների դերի բարձրացմանը ձեռնարկությունների հարցերը լուծելիս[35]։

Պետական ու տնտեսական շինարարության մեջ և արտադրության կառավարման գործում կարևոր դեր ունեն արհմիութենական կազմակերպությունների ֆաբրիկային, գործարանային տեղական կոմիտեները։ Կարևորելով այդ դերը ՍՍՄՀ Գերագույն սովետի նախագահությունը 1958 թ. հուլիսի 15-ի հրամանագրով հաստատեց «ֆաբրիկային, գործարանային արհմիութենական տեղական կոմիտեների իրավունքների մասին» կանոնադրությունը։ Կանոնադրությունը միաստորեն սահմանեց արհմիութենական կազմակերպության աշխատանքների բովանդակությունը։ Կանոնադրության մեջ հատկորեն նշված է, որ ֆաբրիկային, գործարանային տեղական կոմիտեն մասնակցում է ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության արտադրական պլանների և կապիտալ շինարարության պլանների նախագծերի, ինչպես նաև բնակելի տների ու կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարության և նորոգման պլանների նախագծերի մշակմանը։ Բացի այդ կոմիտեներն իրավասու են լսելու ձեռնարկության, հիմնարկների ղեկավարների զեկուցումները արտադրական պլանի, ստանձնած պարտավորությունների, աշխատանքի կազմակերպման ու աշխատանքային պայմանների բարելավման միջոցառումների, բանվոր-ծառայողների նյութական-կենցաղային և կուլտուրական սպասարկման միջոցառումների կատարման մասին և այլն[36]։

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Սովետական Հայաստանում

մշտապես աճել է ֆաբրիկագործարանային տեղական կոմիտեների կազմում ընտրված բանվորների թիվը: Օրինակ, տաս տարվա (1950–1960 թթ.) ընթացքում Հանրապետությունում այն աճել է 3%-ով[37]:

Հասարակական արտադրության կառավարմանը բանվոր դասակարգի անմիջական մասնակցության կարևոր ձևերից է համատեղ պայմանագրերի կնքումը ձեռնարկության ադմինիստրացիայի և կոլեկտիվի միջև: Համատեղ պայմանագրերի կնքումը ձեռնարկության աշխատողներին հնարավորություն է տալիս լայնորեն մասնակցել բազմաթիվ հարցերի քննարկմանը, առավել նպատակասլաց պլանավորել ձեռնարկության արտադրատնտեսական գործունեությունը: Կոլեկտիվ պայմանագրի մեջ երկու կողմերը վերցնում են այնպիսի պարտավորություններ, որոնք ապահովեն արդյունաբերության անշեղ աճ, տեխնիկայի ու եղած միջոցների արդյունավետ օգտագործում, աշխատանքային կարգապահության բարձրացում, բանվոր-ծառայողների նյութական-կենցաղային պայմանների բարելավում: Կոլեկտիվ պայմանագիրը երկկողմանի պարտավորություն է, որն ունի մի նպատակ՝ ամրապնդել աշխատանքային կարգապահությունը, բարձրացնել վարչատնտեսական կադրերի և շարքային բանվորների պատասխանատվությունը ստանձնած պարտավորությունների կատարման, բանվորների գիտակցական կարգապահության ամրապնդման համար*:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում մշտապես ավելացել է կոլեկտիվ պայմանագրերի թիվը: Այսպես, Հայկական ՍՍՀ արդյունաբերական ձեռնարկություններում 1950 թ. կնքվել է 307, 1956 թ.՝ 359, իսկ 1960 թ.՝ 411 կոլեկտիվ պայմանագիր: Հարկ է նշել, որ 1960 թ. կնքված կոլեկտիվ պայմանագրերի մեջ գրանցվել է ավելի քան 35 հազար պարտավորություն[38]:

Պայմանագրերի կնքումը կատարվում է բանվոր-ծառայողների ընդհանուր ժողովներում: Որպես կանոն ժողովներն անցնում են մասսաների արտադրական և հասարակական բարձր ակտիվության պայմաններում, որտեղ կոլեկտիվի անդամները անում են կոնկրետ առա-

* Կոլեկտիվ պայմանագիրը արհմիութենական կազմակերպության աշխատանքի հիմքն է: Արհմիութենական կազմակերպությունները պայմանագրերի կնքման նախապատրաստությանը ներգրավում են ֆաբրիկագործարանային և ցեխային կոմիտեների բոլոր հանձնաժողովներին: Նախապատրաստական աշխատանքների շրջանում հաշվի են առնվում բոլոր խելացի առաջարկությունները, որոնք արվում են նոր ռեսուրսների հայտնաբերման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, հումքի խնայողության, աշխատավորների նյութական ու կենցաղային պայմանների բարելավման նպատակով:

ջարկություններ՝ կապված պլանների ընդունման ու մշակման, արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման, կոլեկտիվի սոցիալ-կուլտուրական զարգացման և այլ հարցերի հետ։ Օրինակ, Ուլուխանլու (ներկայում Մասիս) կայարանի կոլեկտիվի ժողովում, երբ քննարկվում էր Անդրկովկասյան երկաթուղու վարչության և երկաթուղային արհմիութենական կոմիտեի միջև կնքվելիք կոլեկտիվ պայմանագրի նախագիծը, ելույթ ունեցող Մ. Շահբազյանը (գլխավոր կազմող), Ի. Սաֆարովը (կայարանի հերթապահ), Ա. Գրիգորյանը (ավագ սլաքավար) և ուրիշներ, արեցին մի շարք արժեքավոր առաջարկներ։ Նրանք նշեցին, որ արտադրական պլանների կատարման համար քիչ նշանակություն չունի աշխատավորների նյութական ու կենցաղային պայմանների բարելավումը։ Մինչդեռ կայարանը ապահովված չէր խմելու ջրով։ Բնակարանների բացակայության հետևանքով շարունակվում էր կադրերի հոսունությունը, եղած հանրակացարանները չէին բավարարում աշխատողների պահանջները։ Որոշվեց խնդրել Անդրերկաթուղու վարչությանը և երկաթուղային արհմիության կոմիտեին՝ առաջարկությունները մտցնել 1947 թ. կոլեկտիվ պայմանագրի մեջ[39]։

Կոլեկտիվ պայմանագրերի կնքման ժամանակ բանվոր-ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների արտադրական և հասարակական-քաղաքական ակտիվության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար նշենք, որ միայն 1950 թ. ՀՍՍՀ արդյունաբերական ձեռնարկություններում ադմինիստրացիաների և արհմիութենական կազմակերպությունների միջև կնքված 307 կոլեկտիվ պայմանագրերում գրանցվել են մոտ 3 հազար երկկողմանի պարտավորություն։ Պայմանագրերի քննարկման ժամանակ ելույթ են ունեցել 4.621 ստախանովական բանվորներ, ծառայողներ և ինժեներատեխնիկական աշխատողներ, որոնք արել են 574 առաջարկություն, կապված արտադրական, տնտեսական և սոցիալական բնույթի հարցերի հետ[40]։ Հատկանշական է, որ գնալով աճել է թե առաջարկությունների քանակը և թե քննարկմանը մասնակցած բանվոր-ծառայողների թիվը։ Այս առնչությամբ նշենք, որ 1950 թ. համեմատությամբ 1959 թ. հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում պայմանագրերի նախագծերի քննարկման ժամանակ ելույթ ունեցողների թիվը աճել է 1,5, իսկ արված առաջարկներինը՝ ավելի քան 2 անգամ[41]։

Արտադրության կառավարմանը բանվորների մասնակցության և նրա սոցիալական ակտիվության դրսևորման կարևորագույն միջոց է

կոլեկտիվ պայմանագրերի կատարման արդյունքների ստուգումը: Պայմանագրերի ստուգման արդյունքների քննարկմանը նվիրված ժողովները մշտապես անցել են բանվոր-ծառայողների և ինժեներատեխնիկական աշխատողների ծավալուն քննադատության ու ինքնաքննադատության մթնոլորտում: Բանվորական լայն մասսաների անմիջական մասնակցությունը այդպիսի ժողովներին հնարավորություն է տվել բազմակողմանիորեն վերհանել պարտավորությունների կատարման ընթացքն ու ձեռքբերումները, աշխատանքներում տեղ գտած թերությունները և արվել են նոր առաջարկություններ՝ աշխատանքներն ավելի խելացի ու նպատակասլաց կազմակերպելու համար: Բավական է նշել, որ 1960 թ. հանրապետության սննդի արդյունաբերական ձեռնարկությունների և սովխոզների կոլեկտիվ պայմանագրերի կատարման արդյունքների ստուգման ու քննարկման ժողովներին մասնակցել է 14272 մարդ, ելույթ է ունեցել 477 մարդ, արվել է 175 առաջարկություն[42]:

Այսպիսով, կուսակցության կողմից մշակված սոցիալ-անտեսական պատմական վերափոխումների ծրագրի իրագործման համար մղվող պայքարում վճռական դեր են կատարել ու կատարում են արհմիությունները: Աշխատավոր լայն մասսաների վրա հենվելը և նրանց ստեղծագործական նախաձեռնության հնարավորությունների մեծացումը եղել ու մնում է կոմունիստական կուսակցության հիմնական սկզբունքներից մեկը: Հարկ չկա հատուկ ապացուցելու, որ այժմ, սոցիալիզմի կատարելագործման շահերից ելնելով, մեր երկրում մեծ աշխատանք է տարվում պետական ու հասարակական գործերում արհմիությունների դերի և հեղինակության էլ ավելի բարձրացման, դրա ուղիների կատարելագործման ուղղությամբ: Մեր նվաճումները այդ ուղղությամբ իրոք հսկայական են: Սակայն, այս ոեալ իրողությունը անտեսվում կամ ժխտվում է բուրժուական գաղափարախոսության կողմից: Կոնկրետ օրինակների հիման վրա արված եզրահանգումները արհմիությունների տեղի ու դերի վերաբերյալ հերքում են կոմունիզմի կեղծարարների բնութագրումները, թե իբր սովետական արհմիությունները իրենց էությամբ պետական օրգաններ են կամ պետության հավելված, թե դրանք մասսայական կազմակերպություններ չեն և չեն պաշտպանում մասսաների շահերը, իրավազուրկ են, իրականացնում են շատ աննշան ֆունկցիաներ, այն էլ կուսակցության ու պետության խիստ վերահսկողության պայմաններում: Արհմիությունները, եզրակացնում են նրանք, միայն կոչված են պայքարելու պլանների կա-

տարման ու գերակատարման, աշխատանքի արտադրողականության և աշխատանքային կարգապահության բարձրացման համար[43]: Մեր դասակարգային հակառակորդների այս և համանման փորձերի նպատակը մեկն է՝ մարդկությանը հետ պահել սոցիալիզմից:

Արտադրության ղեկավարմանը բանվոր դասակարգի մասնակցության ապահովման գործում մեծ դեր են խաղում արդյունաբերական ու առևտրական ձեռնարկություններում, տրանսպորտում, կառույցներում և սովխոզներում ադմինիստրացիայի գործունեության վերահսկողության գծով գործող հանձնաժողովները: Բնավ թող զարմանալի չթվա այն փաստը, որ մի հասարակության մեջ, որտեղ գիտատեխնիկական առաջադիմությունը մարդուն զինում է բարձր գիտակցականությամբ, որտեղ պետության շահերը ձուլվում են համաժողովրդական շահերի հետ, հանկարծ խոսք է գնում ղեկավարի աշխատանքի վերահսկողության մասին: Հանրահայտ ճշմարտություն է, որ մեր երկրում պետական ապարատի յուրաքանչյուր աշխատող ժողովրդի վստահված անձն է: Նրանց է վստահված տնտեսության ղեկավարությունը: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ դեռ պատահում են տնտեսության առանձին ղեկավարներ, որոնք անտեսում են պետական շահերը, պետական կարգապահությունը: «Սոցիալիստական հասարակությունն այդ մակաբույծներից անվնաս պահելու համար,— գրում էր Վ. Ի. Լենինը,—պետք է կազմակերպել միլիոնավոր ու միլիոնավոր բանվորների և գյուղացիների կողմից կամովին, եռանդուն, հեղափոխական խանդավառությամբ օժանդակություն գտնող համաժողովրդական հաշվառում ու վերահսկողություն՝ աշխատանքի քանակի, արտադրության և արդյունքների բաշխման վերաբերմամբ»[44]: «Հաշվառում ու վերահսկողություն՝ ահա ընդհանրապես... յուրաքանչյուր ֆաբրիկա-գործարանային կոմիտեի կամ բանվորական վերահրսկողության մարմնի գլխավոր տնտեսական խնդիրը»[45]: Ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ Միության մեջ ամբողջությամբ ածեց ադմինիստրացիայի գործունեությունը վերահսկող հանձնաժողովների թիվը: Բավական է նշել, որ արդեն 1960 թ. ՀՍՍՀ արդյունաբերական ձեռնարկություններում ու առևտրի օբյեկտներում, շինարարության մեջ, տրանսպորտում, կառույցներում, սովխոզներում և ՄՏԿ-ներում գործում էին այդպիսի ավելի քան 1.380 հանձնաժողովներ, որոնցում ներգրավված էին 5.770 կոմունիստներ: Հանձնաժողովների նախագահների կեսից ավելին բանվորներ էին կամ անմիջականորեն արտադրության մեջ աշխատող ինժեներներ ու տեխնիկներ[46]:

Սոցիալիստական արտադրության կառավարմանը բանվոր դասակարգի մասնակցությունը իրականացել և իրականացվում է նաև կոմերիտական կազմակերպությունների միջոցով։

Բազմաթիվ բանվորներ հասարակական արտադրության կառավարմանը մասնակից են դառնում գիտատեխնիկական ընկերությունների և զանազան ինքնագործունեության հասարակական բյուրոների միջոցով։

Գիտատեխնիկական ընկերությունները մասսայական հասարակական կամավոր կազմակերպություններ են, որոնք կոչված են բարձրացնելու ինժեներների, բանվորների, ծառայողների ստեղծագործական նախաձեռնությունն ու ակտիվությունը, տեխնիկական մտքի զարգացումը, կազմակերպելու արտադրական ռեզերվների արդյունավետ օգտագործումը, արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը և ավտոմատացումը, նոր տեխնիկայի արմատավորումը։ Գիտատեխնիկական ընկերությունների սկզբնական կազմակերպություններ ունեն ժողովրդական տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, որոնք ընդգրկում են առաջավոր աշխատողներին և գիտնականներին։

Կապված բազմաճյուղ ժողովրդական տնտեսության զարգացման և գիտության ու տեխնիկայի նկատմամբ արտադրության պահանջների օրեցօր մեծացման հետ, քննարկվող ժամանակաշրջանում, Սովետական Հայաստանում արագորեն աճել են այդ ընկերությունների և դրանց անդամների թիվը։ Բավական է նշել, որ արդեն 1960 թ. հանրապետության 15 ճյուղային ընկերություններում ընդգրկված էին 4[illegible] գիտատեխնիկական ընկերությունների սկզբնական կազմակերպություններ (13 հազարից ավելի անդամով)[47], մինչդեռ 1955 թ. այն համապատասխանաբար կազմում էր 204 և 6100[48]։ Այդ ընկերությունները կազմակերպում էին նաև կոնֆերանսներ, խորհրդակցություններ, փորձի փոխանակման կարգով էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ։ Այսպես, միայն 1959 թ. ընթացքում նրանք սերտորեն համագործակցելով գիտական հիմնարկների հետ, կազմակերպել են 1546 սեմինար, գիտատեխնիկական կոնֆերանս և խորհրդակցություն, որոնք քննարկել և լուծել են ժողովրդական տնտեսության զարգացման բազում խնդիրներ[49]։ Բերենք այդպիսի մի օրինակ։ Կենսագործելով ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1959 թ. «Էլեկտրաէներգիայի օգտագործման թերությունները վերացնելու մասին» որոշումը «Էներգիա» գիտատեխնիկական ընկերությունը մեծ աշխատանք ծավալեց գործարաններում և ֆաբրիկաններում էլեկտրաէներ-

գիտության խնայողության կոնկրետ միջոցառումների մշակման և իրագործման ուղղությամբ: Կոնֆերանսներ հրավիրվեցին էներգատար գործարաններում, հրավիրվեց նաև հանրապետական կոնֆերանս՝ կատարված աշխատանքը և ստացված արդյունքները ընդհանրացնելու համար[50]:

Գիտատեխնիկական ընկերությունների աշխատանքը զարգացման առաջավոր բնագծեր դուրս բերելու նպատակով Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն 1590-ական թվականների վերջերին ձեռնարկեց մի շարք միջոցառումներ: Կարևոր նշանակություն ունեցավ ՀԿԿ Կենտկոմի 1959 թ. սեպտեմբերի 18-ի «Հանրապետությունում գիտատեխնիկական պրոպագանդայի տուն ստեղծելու մասին» որոշումը[51]: Նույն նպատակին էր ուղղված նաև ՀԿԿ Կենտկոմի 1959 թ. հոկտեմբերյան պլենումի «Արդյունաբերության մեջ, շինարարությունում և տրանսպորտում գիտա-տեխնիկական ինֆորմացիան, պրոպագանդան և հրատարակչության գործունեությունը ուժեղացնելու մասին» որոշումը[52]: Իրականացնելով այդ որոշումները, կուսակցական ու սովետական կազմակերպությունները զգալի աշխատանք կատարեցին գիտատեխնիկական ընկերությունների նյութատեխնիկական բազան ամրապնդելու, նրանց աշխատանքը բարելավելու ուղղությամբ:

Այսպիսով, կատարված վերլուծությունը հնարավորություն է տալիս անելու մի շարք եզրակացություններ.

ա) Միայն սոցիալիստական արտադրաեղանակն է աշխատանքի մարդկանց հնարավորություն ընձեռում արտադրության կառավարմանը համակողմանիորեն մասնակցելու համար, որովհետև միայն այդ հասարակության մեջ են ներդաշնակվում մարդկանց անհատական և հասարակական շահերը:

բ) Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը սոցիալիստական շինարարության ամբողջ ընթացքում մշակելով մեր երկրի ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները, առաջնահերթ ուշադրություն էին դարձնում այն հարցին, որ էկոնոմիկայի ղեկավարման կենտրոնացման հետ համատեղ, տեղերում ըստ ամենայնի զարգանան աշխատավորական կոլեկտիվների և տնտեսական ղեկավարների նախաձեռնությունն ու ակտիվությունը: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում այդ ուղղությամբ ձեռնարկվեցին բազմաթիվ միջոցառումներ:

գ) Բանվոր դասակարգի անմիջական մասնակցությունը հասարակական արտադրության կառավարմանը ունի ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական նշանակություն։ Այն նպաստում է բանվոր դասակարգի համակողմանի զարգացմանն ու կոմունիստական դաստիարակությանը։ Բանվոր դասակարգը հասարակական արտադրության մեջ ունենալով առաջատար դիրք և անմիջականորեն մասնակցելով դրա կառավարմանը, ձևավորում ու զարգացնում է իր սոցիալիստական գիտակցությունը, կրում է բարոյական ու հոգևոր նոր վերափոխումներ, բարձրացնում է վստահությունը սեփական ուժերի նկատմամբ։

3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԿԸ

Բանվոր դասակարգի արտադրական և հասարակական-քաղաքական ակտիվության դրսևորման, նրա առաջատար դերի իրականացման կարևոր ձևերից է սոցիալիստական մրցությունը։ Վերջինս բխում է սոցիալիստական հասարակության ներքին էությունից և հանդիսանում է նրա զարգացման հիմնական օրինաչափություններից մեկը։

Մրցության՝ որպես նոր հասարակարգի զարգացման օրինաչափության, որպես նրա սոցիալ-տնտեսական առաջընթացի վճռական գործոնի և շարժիչ ուժի գաղափարը բազմակողմանիորեն մշակել և տեսականորեն հիմնավորել է Վ. Ի. Լենինը։ Նա ուսուցանում էր, որ «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը, այլ, ընդհակառակն, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները...»[53]։

Այժմ տեսնենք թե բուրժուական գաղափարախոսները ինչպե՞ս են մեկնաբանում մրցությունը՝ որպես սոցիալիստական հասարակության օրինաչափ զարգացման արդյունք։ Նրանք խեղաթյուրելով սոցիալիստական մրցության ծագման ու զարգացման վերաբերյալ ճշմարտությունը, այն ներկայացնում են շրջված տեսքով։ Հակակոմունիզմի պրոպագանդիստները այդ շարժման հիմքում դնում են արտաքին դրդապատճառներ, ինչպես ասենք հարկադրանքը, վախը, ճնշումը և այլն։ Սոցիալիստական մրցության կազմակերպման գործում կոմունիստական կուսակցության ղեկավար դերի ընդունումը բուրժուական գաղափարախոսներին բնավ հիմք չի կարող տալ այն եզրակացության համար, ըստ որի անհատ բանվորները, բրիգադները,

ինչպես նաև ձեռնարկությունները կուսակցական կազմակերպությունների կողմից ենթարկվում են պանալան տեսակի բարոյական և շատ հաճախ էլ ոչ բարոյական այնպիսի ճնշման, որ ստիպված են լինում նորմայից ավելի աշխատանք կատարել և պարտավորություններ ստանձնել: Սոցմրցությունը,—ասում են նրանք,—պլաններ կատարելու ու գերակատարելու և նոր հանձնարարություններ ստանալու հայտարարություններ են, որոնք վերջին հաշվով մնում են սոսկ հայտարարություններ և խոսքից գործի չեն վերածվում[54]: Սոցիալիստական մրցության վերաբերյալ բուրժուական գաղափարախոսների պրոպագանդան սոցիալական հիմք չունի: Նրանք ձգտում են թուլացնել, չեզոքացնել սովետական բանվորների աշխատանքային եռանդն ու ստեղծագործական ակտիվությունը և ամենակարևորը խեղաթյուրված ներկայացնել սոցիալիստական մրցության իսկական նպատակները:

Սոցիալիստական մրցությունը, որպես աշխատավոր մասսաների արտադրական ու ստեղծագործական նախաձեռնությունների արտահայտություն և ինքնագործունեության վառ դրսևորում, կատարում է երկու հիմնական ֆունկցիա՝ արտադրական և դաստիարակչական[55]: Սոցիալիստական մրցությունը մի կողմից դառնում է արտադրողական ուժերի հետագա զարգացման և արտադրության արդյունավետության բարձրացման, աշխատանքի կազմակերպման, արտադրության կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատացման, առաջավոր փորձի տարածման ու արմատավորման կարևոր միջոց, մյուս կողմից կատարում է դաստիարակչական ֆունկցիա՝ նպաստում է մասսաների կոմունիստական դաստիարակությանը, նրանց սոցիալական զարգացմանը, անհատի համակողմանի կատարելագործմանը, անհատի և կոլեկտիվի հասարակական շահերի զուգորդմանը, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ձևավորմանը: Մարդկանց վարքագծի մեջ ձևավորում և դաստիարակում է հոգևոր-բարոյական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են պրոլետարական ինտերնացիոնալիզմը, հայրենասիրությունը, կարգապահությունը, համարձակությունը, թերությունների հանդեպ անհաշտվողականությունը և այլն:

Կոմունիստական շինարարության բոլոր փուլերում սոցիալ-տնտեսական կյանքի բազմաթիվ բարդ խնդիրները լուծելու համար բանվոր դասակարգը հանդես է բերել ստեղծագործական աշխատանքի նեղքին մեծ մղում, որը հիմնականում կապված է սոցիալիստական մրցության հետ: Սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված բանվոր-ծառայողները և ինժեներատեխնիկական անձնակազմը դրսևորում են

բարձր գիտակցականություն, ինքնագործունեություն և հանդես են գալիս ստեղծագործական նախաձեռնություններով՝ իրականացնելու համար սոցիալիստական մրցության տնտեսական ֆունկցիայի գլխավոր նպատակը՝ աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացումը։

Մրցության պատմությունը ցույց է տալիս, որ մեր երկրում կոմունիստական շինարարության յուրաքանչյուր փուլի սոցիալ-տնտեսական կոնկրետ խնդիրների ու աշխատավորների նյութական և կուլտուրական զարգացման մակարդակի հետ կապված, անընդմեջ մեծացել են մրցության դերն ու նշանակությունը, ընդգրկման ծավալները և արդյունավետությունը։ Օրըստօրե ծավալվող մրցությունն ընդունել է բազմազան և հարուստ ձևեր, բանվորների և արտադրական մտավորականության շարքերից առաջ քաշել աշխատանքի մեթոդներն ու տեխնիկական սարքավորումները կատարելագործող բազմաթիվ նորարարներ։ Այդ են հավաստում սոցիալիստական մրցության զարգացման տարբեր աստիճաններն ու փուլերը, նրա նոր ու բազմազան ձևերի առաջացումը։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հիմնական հաղթանակի շնորհիվ ժողովրդական տնտեսության մեջ կատարված տեխնիկատնտեսական վիթխարի տեղաշարժերը և այդ բնագավառում ձեռք բերված նվաճումները իրենց արտահայտությունը գտան աշխատավորական մասսաների անսպառ ստեղծագործական ակտիվության մեջ։

Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում մրցության նախկին ձևերին ու մեթոդներին զուգընթաց, կյանքի պահանջով ծնունդ առան մրցության նոր ձևեր՝ բազմադազգահայիններ շարժումից սկսած մինչև կոմունիստական աշխատանքի բրիգադները։

Մեր երկրում 1930-ական թվականների կեսերին ծագեց մրցության նոր ձև՝ ստախանովյան կամ նորարարական շարժումը։ Նորարարական շարժումը բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման արդյունք էր և կապված էր ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման հետ։ Նորարար-ստախանովականները, անմիջականորեն մասնակցելով արտադրության կատարելագործմանը, վերակառուցում էին արտադրության տեխնոլոգիական պրոցեսները և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը։ Ստախանովյան շարժումը լայն արձագանք գտավ նաև Սովետական Հայաստանում։ Հայկական ՍՍՀ-ում այդ շարժման առաջին

նախաձեռնողները հանդիսացան Ալավերդու և Ղափանի հանքագործները, որոնց օրինակին հետևեցին աշխատավորական շատ կոլեկտիվներ։ Ստախանովյան շարժումը Հայաստանում, ինչպես և ամբողջ երկրում գնալով ավելի լայն բնույթ էր ստանում։ Բանվոր դասակարգի նախաձեռնությամբ ծնված շարժումը 1940-ական թվականների վերջերին արագորեն վերածվեց մասսայական, համաժողովրդական շարժման։ Ինչպես Միության մեջ, այնպես էլ մեր հանրապետությունում գրեթե չկար աշխատավորական որևէ կոլեկտիվ, որն ընդգրկված չլիներ ստախանովյան շարժման մեջ։

Շարժումը առանձնապես լայն ծավալ ընդունեց Երևանի էլեկտրամեքենաշինական, Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի, գյուղգործիքների, Ալավերդու պղնձաձուլական գործարանների, Ղափանի պղնձի կոմբինատի աշխատավորական կոլեկտիվներում, որտեղ համընդհանուր շարժման նշանաբանը դարձավ՝ հասնել աշխատանքի բարձր արտադրողականության, կատարել ու գերակատարել պլանային առաջադրանքները, աշխատանքի նկատմամբ հանդես բերել ստեղծագործական մոտեցում, տալ բարձրորակ արտադրանք, հանդես բերել աշխատանքային բարձր կարգապահություն և այլն։ Օրինակ, Երևանի գյուղգործիքների գործարանի ստախանովական խառատ Ս. Զոբանյանը կատարելագործելով Միկրոգէսերի մշակման մեթոդը, 10 անգամ բարձրացրեց արտադրողականությունը և 8 անգամ կրճատեց արտադրական պրոցեսի տևողությունը և 9 ամսում կատարեց 5 տարվա նորմա[56]։

Ալավերդու անվանի հանքափոր, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Յակով Յանգաբուզովի գլխավորած բրիգադը մեծ դժվարություններ էր կրում պլանները կատարելու գործում։ Պատճառը տեխնիկական հին սարքավորումներն էին և բանվորների տեխնիկական ցածր որակավորումը։ Այս հանգամանքը շարունակ մտահոգում էր բրիգադի անդամներին։ Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար բրիգադի անդամները որոշ արտադրական գործողություններ մեքենայացնելու հետ միաժամանակ ստախանովյան դպրոցներում պատրաստեցին և վերապատրաստեցին հորատող կին բանվորական կադրեր։ Միայն Յակով Յանգաբուզովը հորատողի մասնագիտություն սովորեցրեց չորս կանանց, որոնք սկսեցին ինքնուրույն աշխատել ավտոմատ առբերիչի վրա՝ որպես հորատող։ Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ բրիգադը պլանի կատարումը հասցրեց 135,5%-ի[57]։

Ամբողջ երկրի, իհարկե և մեր հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման բարդ խնդիրները, արտադրության տեխնիկա-

տնտեսական վիթխարի առաջընթացը, արտադրության կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը և բանվոր դասակարգի կուլտուրա-տեխնիկական մակարդակի բարձրացումը շարունակաբար ուղեկցվել են սոցիալիստական մրցության և ստախանովյան շարժման ճնով։ Այսպես, եթե 1938 թ. Հանրապետությունում սոցիալիստական մրցությանը մասնակցում էր 34 հազար բանվոր-ծառայող, որից ստախանովական էին 31,5%-ը, ապա 1950 թ. մրցության մասնակիցների թիվը հասավ 93 հազարի, որը կազմում է ամբողջ բանվոր դասակարգի 39,5%-ը, որից ստախանովական էին 59,0%-ը[58]։

Սոցիալիստական շինարարությանը զուգընթաց, ժողովրդական տնտեսության մեջ, մասնավորապես նրա առանցքային ճյուղում՝ արդյունաբերության մեջ օրավուր ծնվում էին նորանոր հայրենասիրական նախաձեռնություններ, որոնք խթանում էին աշխատանքի արտադրողականության աճը, բարձրացնում արտադրության արդյունավետությունն ու արտադրանքի որակը և տնտեսական ու կուլտուրական շինարարության տեմպերը։ Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ «Գերազանց որակի կոչման համար» նշանաբանով մրցությունը։ Այդ շարժման նախաձեռնողը դարձավ անվանի խառատ Ալեքսանդր Զուտկիխը։

Կուսակցության կենտրոնական օրգանը, գնահատելով այդ շարժման դերը, գրել է. «Քանակը գումարած որակին—ահա ամբողջ ժողովրդի հանդեպ մրցության մասնակիցների ընդունած սոցիալիստական պարտավորությունների էությունը։ Արտադրանքի բարձր որակի համար մղվող պայքարը անխզելի է հնգամյակի համար մղվող ամբողջ պայքարից[59]։

Գերազանց որակի համար շարժումը արագորեն տարածվեց ամբողջ երկրում և ընդգրկեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը։ Այդ շարժման մեջ ներգրավվեց նաև Հայաստանի բանվոր դասակարգը։ Բավական է նշել, որ արդեն 1950 թ. ՀՍՍՀ արդյունաբերության մեջ աշխատում էին գերազանց որակի համար պայքարող ավելի քան 1400 բրիգադներ, որոնց մեջ ընդգրկված էին 15000 բանվորներ։ Հանրապետությունում գերազանց որակի համար շարժումը ավելի մասսայական բնույթ ստացավ 1950-ական թվականների վերջին։ 1950 թ. համեմատությամբ 1959 թ. Հանրապետությունում գերազանց որակի համար պայքարող բրիգադների և նրանցում ընդգրկված բանվորների թիվը ավելացավ մոտ 2 անգամ[60]։ Սոցիալիստական մրցության բուռն թափը և նրա տարածումը լայնությամբ ու խորությամբ լիովին հա-

վաստում են Վ. Ի. Լենինի այն միտքը, որ «...Որքան ավելի մեծ է, որքան ավելի պատասխանատու է պատմական նոր խնդիրները, այնքան ավելի շատ պիտի լինեն մարդիկ, որոնց միլիոններով պետք է ներգրավել այդ խնդիրների լուծմանն ինքնուրույն կերպով մասնակցելու համար»[61]։

Հատկանշական է, որ գերազանց որակի համար շարժումը առանձնապես լայնորեն ծավալվեց արդյունաբերության առաջատար մի շարք ճյուղերում, ինչպիսիք են քիմիական, մետաղամշակման և մետալուրգիական արդյունաբերությունը։ Այստեղ մրցության մեջ էին ներգրավված բոլոր բանվոր-ծառայողների 95%-ը։ Արտադրանքի որակը բարելավելու ուղղությամբ հատկապես լուրջ հաջողությունների հասան Երևանի կաբելի, էլեկտրամեքենաշինական, Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանները և Կիրովականի քիմիական կոմբինատը։ Բավական է նշել, որ կաբելի գործարանի 24 բրիգադներ, որոնք սիստեմատիկաբար կատարում էին 1,5—2 արտադրական նորմա, տալիս էին միայն գերազանց որակի արտադրանք[62]։

Արդյունաբերության վերը նշված ճյուղերում ծավալված լայն մրցությունը պայմանավորված էր այն անմիջական կապով, որ գոյություն ուներ գերազանց որակի համար շարժման և արտադրության տեխնիկական կատարելագործման, արտադրության պրոցեսների մեքենայացման ու ավտոմատացման, արտադրության մեջ գիտության նվաճումների ներդրման, բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման և առաջավոր փորձի արմատավորման հետ։ Հարկ է նշել, որ այս տեսակետից ժողովրդական տնտեսության հիշյալ ճյուղերը ապահովում էին անհրաժեշտ բոլոր պայմանները, բարձր էր դրանց թե՛ արտադրական պրոցեսների մեքենայացման աստիճանը և թե՛ աշխատողների կուլտուր-տեխնիկական մակարդակը։

Հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործում վճռական ազդակ հանդիսացավ նյութերի խնայողության հաշվին արտապլանային կուտակում տալու համար համաժողովրդական շարժումը։ Սոցիալիստական մրցության այս նոր ձևը մեծապես ակտիվացնում էր բանվորների անձնական մասնակցությունը արտադրական կյանքին, բարձրացնում էր յուրաքանչյուրի, ամբողջ բրիգադի և կոլեկտիվի պատասխանատվությունը պլանների կատարման, աշխատանքի որակական ցուցանիշների բարձրացման համար։ Շարժման նախաձեռնողներ դարձան Մարիա Ռոժնևան և Լիդա Կոնոնենկոն։ Հանրապետության կուսակցական, տնտեսական և հա-

սարակական կազմակերպությունները քննության առնելով շրջանառու միջոցների շրջանառության արագացման համար սկսված սոցիալիստական մրցության փորձը, այն արմատավորեցին նաև մեզ մոտ: Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում այս ուղղությամբ ծավալված սոցիալիստական մրցությունը նպաստեց ձեռնարկությունների ներքին ռեզերվների մոբիլիզացմանը և շրջանառու միջոցների շրջապտույտի արագացմանը: Այսպես, օրինակ, 1950 թ. սոցիալիստական մրցության միջոցով ձեռք բերված պլանային կուտակումների գումարը Հայկական ՍՍՀ-ում կազմեց 120 մլն. ռուբլի, իսկ 1958 թ.՝ մոտ 190 մլն. ռուբլի: Համախառն արտադրանքի թողարկման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, հումքի խնայողության գծով սոցիալիստական պարտավորությունները ամբողջությամբ վերցրած կատարեցին և գերակատարեցին քիմիական, էլեկտրատեխնիկական ու հաստոցաշինական արդյունաբերության վարչությունները[63]: Արտադրության մեջ աշխատանքը ճիշտ կազմակերպելու, արտադրական բարձր վերելք ապահովելու, արտադրանքի որակը բարելավելու, հումքը խնայողաբար օգտագործելու գործում հսկայական նշանակություն ուներ արտադրության մեջ բարձր կուլտուրա մտցնելու համար բանվոր-ծառայողների սոցիալիստական մրցությունը: Կոմունիստական կուսակցությունը սոցիալիստական մրցության այս նոր ձևը դիտել և դիտվում է որպես սովետական մարդկանց աշխատանքային կարգապահության բարձրացման, աշխատաժամանակի արդյունավետ օգտագործման, հումքի խնայողության, նյութական բարեկեցության բարձրացման, ինչպես նաև աշխատավորների գեղագիտական դաստիարակության կարևոր միջոց: ՍՄԿԿ նոր ծրագրում հստակորեն ասված է. «Կուսակցությունն առանձնահատուկ նշանակություն է տալիս... աշխատանքի կուլտուրայի բարձրացմանը, բարձրորակ և բարձրարդյունավետ աշխատանքի խրախուսմանը՝ ի բարօրություն հասարակության: Այդ ամենը կնպաստի աշխատանքն աստիճանաբար վերածելու յուրաքանչյուր սովետական մարդու առաջին կենսական պահանջմունքի»[64]:

Արտադրության կուլտուրա հասկացության տակ նկատի են առնվում այն բոլոր միջոցները, որոնք ապահովում են աշխատանքի բարձր արտադրողականություն, արտադրանքի գերազանց որակ և աշխատողների լավ տրամադրություն: Առաջ անցնելով նշենք, որ վերջինս արտադրության ամենակարևոր ռեզերվներից մեկն է և որոշակի դեր է կատարում կոլեկտիվում բարոյահոգեբանական լավ մթնոլորտ ստեղ-

ծելու գործում: Սոցիոլոգների և հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխատողի լավ տրամադրությունից աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է մեկ հինգերորդով:

«Արտադրության կուլտուրա ասելով,— գրել է Մոսկվայի «Տրյոխգորնայա մանուֆակտուրա» կոմբինատի վարպետի օգնական Վ. Վորոշինը,— ես հասկանում եմ, այն բոլոր միջոցները, որոնք ապահովում են աշխատանքի բարձր արտադրողականություն և արտադրանքի գերազանց որակ: Հաճելի է, երբ աշխատողին տեսնում են կոկիկ հագնված: Ես գտնում եմ, որ եթե դու աշխատում ես փնթի, անկանոն հագուստով, նշանակում է՝ հենց աշխատանքում էլ—և դա, որպես կանոն, հենց այդպես էլ լինում է,—փնթի, թափթփված կլինես, թույլ կտաս խոտան:

Անցյալ տարի ես իմ տեղամասում զբաղվեցի հատակի անհարթությունների վերացումով: Եթե աշխատողը շարունակ պետք է մտածի, թե ահա դազգահի մոտ փոս կա, իսկ մյուս դազգահի մոտ հատակը խորդուբորդ է, ապա նրա ուշադրությունը ցրվում է, նա դառնում է դանդաղ գործունյա»[65]: Արտադրության մեջ բարձր կուլտուրա մտցնելու Վլադիմիր Վորոշինի նախաձեռնությունը մեծ արձագանք գտավ նաև Սովետական Հայաստանում: Ղեկավարվելով ՍՄԿԿ ցուցումներով՝ հանրապետության կոմունիստական կուսակցությունը մեծ աշխատանք ծավալեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում արտադրության բարձր կուլտուրայի համար սկսված շարժումը լայնորեն տարածելու և արմատավորելու համար: Հայկական ՍՍՀ հիմնարկ ձեռնարկություններում, շինարարության մեջ և տրանսպորտում ծավալվեց սոցիալիստական մրցություն արտադրության բարձր կուլտուրայի համար: Առաջինը մրցության մեջ մտան Երևանի մահուդի ֆաբրիկայի բանվոր-ծառայողները: Ֆաբրիկայի տարածքում տնկվեցին ծառեր, պատրաստվեցին ծաղկանոցներ, բարեկարգվեցին միջարտադրամասային ուղիները: Արտադրության կուլտուրայի բարձրացումը նպաստեց ֆաբրիկայի արտադրական հաջողություններին: Ինչպես համախառն, այնպես էլ ապրանքային արտադրանքի կիսամյա առաջադրանքը կոլեկտիվը կատարեց ժամկետից շուտ: Բավական է նշել, որ 1949 թ. նույն ժամանակամիջոցի համեմատությամբ 1950 թ. արտադրության թողարկումն աճեց 85%-ով: Կոլեկտիվը հինգ ամսում տնտեսված հումքի հաշվին արտադրեց 20 հազար մետր զանազան տեսակի կտորեղեն, որը պետությանը տվեց 2 մլն. ռուբլու օգուտ: Զգալիորեն բարելավվեց նաև արտադրանքի ո-

րակը։ Պլանով նախատեսված 87%-ի փոխարեն առաջին տեսակի արտադրանքը կազմեց 97,3%[66]։

Ինչպես արդեն նշել ենք, սոցիալիստական մրցության պատմությունը ցույց է տալիս, որ համաժողովրդական այդ շարժումը ինչ-որ քարացած, մեկընդմիշտ տրված բան չէ։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջերին ծնունդ առավ կոմունիստական աշխատանքի բրիգադների և հարվածայինների կոչման արժանանալու համար պայքարողների հայրենասիրական շարժումը։ Դա մի շարժում է, որն ուղղված է ոչ միայն աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացմանն ու նյութական բարեկեցության ստեղծմանը, այլև իրենց՝ բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացմանը և սոցիալական զարգացմանը։ Պատահական չէ, որ կարևորելով կոմունիստական աշխատանքի համար ծավալված շարժումը, ՍՄԿԿ Կենտկոմի Հունիսյան (1959 թ.) պլենումը նշեց, որ այդ բարձր կոչմանն արժանի է «Նա, ով դառնալով իր գործի վարպետը, չի հանգստանում ձեռք բերածով, այլ խորաթափանցորեն նայում է առաջ, խիզախում, որոնում։ Նա առաջավոր գիտության ու տեխնիկայի բարեկամն է, չի հանդուրժում հնամոլությունը, միշտ պատրաստ է ընթանալ նորարարների անծանոթ ուղիներով, որպեսզի տրվեն ժողովրդի համար անհրաժեշտ բարձրորակ, էժան ավելի շատ առարկաներ»[67]։

Որպես նոր, շարժման նախաձեռնողներ հանդես եկան Մոսկվա-Ռյազան երկաթուղու Մոսկվա-Սորտիրովոչնայա դեպոյի կոմունիստ և կոմերիտական բանվորները, հենց այն դեպոյի, որտեղ 1919 թ. ծնունդ առան կոմունիստական շաբաթօրյակները, որոնք Վ. Ի. Լենինը անվանեց մեծ նախաձեռնություն։

1958 թ. հոկտեմբերի 13-ին հիշյալ դեպոյի պատուտակների արտադրամասի կոլեկտիվի ընդհանուր ժողովն ընդունեց կոմունիստական աշխատանքի պարտավորություններ, ուր նշված էր. «Աշխատել ու ապրել կոմունիստաբար, այնպես, որպեսզի մեր գործունեության մեջ երևա կոմունիզմի ընդհանուր գործի նկատմամբ մեր անձնական բարձր պատասխանատվությունը՝ դա մեր ջերմ ցանկությունն է»[68]։ Աշխատանքային հերոսական ավանդույթներ ունեցող փառապանծ կոլեկտիվի հայրենասիրական կոչը՝ կոմունիստական աշխատանքի համար շարժում ծավալելու մասին, արագորեն ծավալվեց ամբողջ երկրում։

Սովետական Հայաստանում կոմունիստական աշխատանքի համար սկսված շարժման մեջ առաջինը ներգրավված արտադրական կոլեկտիվների թվում էին Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքե-

նաշինական գործարանից ՍՍՀՄ Դերագույն սովետի դեպուտատ Վազգեն Ղազարյանի, էլեկտրաճշգրիտ չափիչ գործիքների գործարանից Մարիետա Դարբինյանի, Կիրովականի երկաթուղային կայարանի Կիրովական —Սանահին ուղևմասի էլեկտրահաղորդիչ ցանցից Մարտուն Մալխասյանի, Լենինականի գուլպայի ֆաբրիկայից Սմբատ Շաբոյանի ղեկավարած բրիգադները[69]:

Այդ շարժման առաջավորների բնագծում կանգնեցին նաև Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատի ավագ ձուլող, սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Ղազարյանը, Արարատի ցեմենտ-թերթաքարային կոմբինատի կոմպլեքսային բրիգադի բրիգադավար Ե. Գալստյանը, Քանաքեռի ալյումինի գործարանի ձուլողների բրիգադավար Բ. Նավասարդյանը, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի հորատող հաստոցի մեքենավար է. Համբարձումյանը և ուրիշներ[70]:

Կոմունիստական աշխատանքի շարժման զարգացման ու արմատավորման հարցերը շարունակաբար գտնվել են ՍՄԿԿ-ի և սովետական կառավարության ուշադրության կենտրոնում: Դրա վառ ապացույցն էր 1960 թ. մայիսի 27-ին տեղի ունեցած կոմունիստական աշխատանքի բրիգադների և հարվածայինների համամիութենական խորհրդակցությունը: ՍՄԿԿ կենտրոնական կոմիտեն խորհրդակցության մասնակիցներին ղրկած ողջույնում բարձր գնահատեց մասսաների՝ սովորել և ապրել կոմունիստաբար հայրենասիրական շարժումը: Ողջույնի մեջ ՍՄԿԿ կենտկոմը բնութագրելով նոր շարժումը, նշեց, որ «աշխատանքը, ուսուցումը և կենցաղը միացնելով միմյանց, այդ մրցությունը ակտիվ ազդեցություն է թողնում կյանքի և մարդու գործունեության բոլոր կողմերի վրա, կարևոր գործոն է հանդիսանում մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունները վերացնելու համար»[71]: Համամիութենական այս միջոցառմանը հաջորդեցին տեղերում հրավիրված խորհրդակցությունները: 1960 թ. Երևանում տեղի ունեցավ Հանրապետության կոմունիստական աշխատանքի կոլեկտիվների խորհրդակցություն, որին մասնակցում էին ՀՍՍՀ բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների կոմունիստական աշխատանքի շարժման ներկայացուցիչները: Խորհրդակցությունն ընդունեց կոչ ուղղված Հանրապետության բոլոր աշխատավորներին[72]:

1960 թ. մայիսին ՀԿԿ կենտկոմը Հանրապետության քաղկոմ-շրջկոմների, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների առջև խնդիր դրեց՝ բոլոր միջոցներով օգնել ու աջակցել կոմունիստական աշխատանքի բրիգադներին և հարվածայիններին՝ ստանձ-

նած պարտավորությունները ամբողջությամբ կատարելու համար[73]։ Այդ խորհրդակցությունները նոր խթան հանդիսացան աշխատավորների սոցիալական ստեղծագործության նոր ձևի՝ կոմունիստական աշխատանքի շարժման ծավալման համար։ Բնավ պատահական չէ, որ 1960 թ. մայիսից մեր երկրում կոմունիստական աշխատանքի համար սկսված շարժումը թևակոխեց իր զարգացման երկրորդ փուլը[74]։ Այս նոր փուլը բնորոշվում է նրանով, որ կոմունիստական աշխատանքի համար շարժումը խորանալով և ընդլայնվելով՝ բրիգադներից ընդգրկեց արտադրամասեր և նույնիսկ ձեռնարկությունների ամբողջ կոլեկտիվներ։ Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում այդ շարժումը ձեռք բերեց համաժողովրդական բնույթ։ Բավական է ասել, որ արդեն 1960 թ. կեսերին ՀՍՍՀ արդյունաբերության մեջ կոմունիստական աշխատանքի կոչման համար պայքարում էին 1334 բրիգադ ու արտադրական տեղամաս, որոնցում ընդգրկված էին 17441 բանվորներ։ Այդ բարձր կոչմանը արժանացած բրիգադների թիվը անցնում էր 200-ից։ Կոմունիստական աշխատանքի հարվածայինների կոչման համար պայքարում էին 2000 մարդ[75]։ Ստանձնած պարտավորությունները հաջողությամբ կատարելու շնորհիվ կոմունիստական աշխատանքի բրիգադի կոչման արժանացան Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի փականագործ Մուրադ Ավետիսյանի, Ղափանի լեռնահանքային կոմբինատից Աշոտ Մելքոնյանի, Կիրովի անվան գործարանից Սերյոժա Ամիրխանյանի, Կիրովականի մեքենաշինական գործարանից Բորիս Սարգսյանի, Լենինականի Մայիսյան ապստամբության անվան կոմբինատից Անահիտ Գալստյանի ղեկավարած բրիգադները և այլ կոլեկտիվներ[76]։

Հատկանշական է, որ համամիութենական սոցիալիստական մրցության մեջ հաղթող ճանաչվելու և աշխատանքային բարձր արդյունքների հասնելու համար Աշոտ Մելքոնյանը և Սերյոժա Ամիրխանյանը արժանացան Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։

Բավարարվենք Ղափանի լեռնահանքային կոմբինատի բրիգադներից մեկի գործունեությունը բնութագրող օրինակի հիշատակումով։ Կոմբինատի հորատող Աշոտ Մելքոնյանի բրիգադը մտնելով մրցության մեջ, ստանձնեց բարձր պարտավորություններ՝ աշխատել կոմունիստաբար, սիստեմատիկաբար գերակատարել առաջադրանքները, տալ միայն բարձրորակ արտադրանք, օրինակելի լինել թե աշխատանքում, և թե ընտանիքում։ Պայքարելով պարտականությունների կատարման համար, բրիգադի անդամները տիրապետեցին երկրորդ

մասնագիտության, ուսումնասիրեցին երկրի համանման լեռնագործների աշխատանքի փորձը և այն ներդրեցին արտադրության մեջ։ Դա հնարավորություն տվեց վերադասավորել ուժերը, ավելի ճկուն դարձնել աշխատանքի կազմակերպումը։ Այս և այլ միջոցառումների կենսագործման շնորհիվ բրիգադը սկսեց սիստեմատիկաբար կատարել ու գերակատարել արտադրական առաջադրանքները, տալ բարձրորակ արտադրանք։ Պլանային առաջադրանքները և ստանձնած սոցպարտավորությունները հաջողությամբ կատարելու համար հանքային արհմիության կոմիտեի որոշումով Մելքոնյանի բրիգադին շնորհվեց կոմունիստական աշխատանքի բարձր կոչում[77]։ Հարկ է նշել, որ հիշյալ հիմնարկ ձեռնարկություններում ու բրիգադներում ձեռք բերված արտադրական հաջողությունների հիմնական գրավականը Վ. Ի. Լենինի խոսքերով ասած այն էր, որ դրանցում ստեղծվել էր «ձեռներեցություն, մրցություն, համարձակ նախաձեռնություն ցուցաբերելու լայն, իսկապես մասսայական հնարավորություն»[78]։

Կոմունիստական աշխատանքի բրիգադների շարժումը և հարվածայնությունը օգնել են յուրաքանչյուր արտադրական կոլեկտիվի, գտնելու իր տեղը և հանդես բերելու իր ստեղծագործական մասնակցությունը կոմունիստական հասարակարգի կառուցման մեջ։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության առջև դրված խնդիրները հաջողությամբ կենսագործելու համար ծավալված համաժողովրդական պայքարը անհրաժեշտ պայմաններ էր ստեղծում ամբողջ երկրի տնտեսության համակողմանի զարգացման համար։ Սովետական ժողովրդի ստեղծագործ, անձնազոհ ու հայրենանվեր աշխատանքը պսակվեց փայլուն հաջողությամբ։ Դրա լավագույն ապացույցը Սովետական Հայաստանի օրինակն է։ Սոցիալիստական շինարարության ավելի քան երկու տասնամյակի (1938—1960 թթ.) ընթացքում հանրապետությունում կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին նոր ձեռնարկություններ և արտադրամասեր, ընդլայնվեցին գոյություն ունեցողների կարողությունները, սկիզբ առան և զարգացան արդյունաբերության նոր ճյուղեր, շարք մտան նոր բնակելի տարածություններ, առողջապահության և կուլտուրայի օջախներ։ Այդ են վկայում հետևյալ տվյալները։ Հայկական ՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ 1960 թ. աճեց մոտ 68 7%-ով, մեքենաշինությանը և մետաղամշակմանը՝ 49 87%-ով, իսկ թեթև և սննդի արդյունաբերությանը միա-

ախն՝ 705%-ով[79]: Համանման միտում է դիտվել նաև արդյունաբերության մյուս ճյուղերում[80]:

Ինչպես արդեն նշել ենք, սոցիալիստական մրցությունը սովետական ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման, նրա աշխատանքային պայմանների բարելավման, սոցիալիստական արտադրության հետագա զարգացման և կատարելագործման, մասսաների ստեղծագործական ակտիվության ու նախաձեռնության բարձրացման հզոր լծակ լինելով հանդերձ, նյութական արտադրության բնագավառում կապվում է անհատի կոմունիստական դաստիարակության, նրա սոցիալական զարգացման հետ: ՍՍՀՄ նոր սահմանադրության (1977 թ.) 8-րդ հոդվածում նշված է. «Աշխատավորական կոլեկտիվները զարգացնում են սոցիալիստական մրցությունը, նպաստում աշխատանքի առաջավոր մեթոդների տարածմանը, աշխատանքային կարգապահության ամրապնդմանը, իրենց անդամներին դաստիարակում են կոմունիստական բարոյականության ոգով, հոգ տանում նրանց քաղաքական գիտակցության, կուլտուրայի և պրոֆեսիոնալ որակավորման բարձրացման մասին»[81]:

ՍՄԿԿ-ն կոմունիստական շինարարության բոլոր փուլերում մեծ կարևորություն է տվել և տալիս է աշխատավորների կոմունիստական դաստիարակությանը, անհատի համակողմանի զարգացմանը: Դա պատմական անհրաժեշտություն է: Կոմունիզմի կառուցման համար հարկավոր է ունենալ ոչ միայն անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, այլև համակողմանի զարգացած մարդիկ, որոնք ընդունակ լինեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր աշխատանքի, ժողովրդական տնտեսության մեջ, հասարակական և պետական կյանքի տարբեր բնագավառներում[82]:

Սոցիալիստական մրցության մեջ բանվորները սոսկ արտադրական պրոցեսների մեխանիկական կրողներ չեն: Նրանք տեխնիկական առաջընթացի առաջամարտիկներ են, իրենց մտահղացումների ակտիվ կենսագործողներ:

Մրցությունը իր բուն էությամբ հիմնված է մարդկանց բարձր դիտակցության ու նախաձեռնության վրա: Հենց այդ նախաձեռնությունն է օգնում բացահայտելու և գործողության մեջ դնելու արտադրության ռեզերվները, բարձրացնելու աշխատանքի արդյունավետությունն ու որակը: Մարդը ստանձնելով ավելի մեծ պարտավորություններ, քան նախատեսվում է, հենց դրանով կատարողի հետ միասին դառնում է նաև ստեղծագործող: Մրցությունը մարդու մեջ զար-

դացնելով մրցակցության ոգի, նրան մշտապես առաջ է մղում, նրա մոտ դաստիարակում է ինքնակատարելագործման մշտական ձգտում[83]։

Սոցիալիստական մրցությունը, ընդգծված է կուսակցության նշյ. ծրագրում «Աշխատավորների ստեղծագործության ծավալման կարևորագույն ոլորտ է, անհատի ինքնահաստատման և հասարակական ճանաչման հիմնական եղանակներից մեկը»[84]։

Վ. Ի. Լենինը սոցիալիստական մրցությունը համարում էր աշխատավոր մասսաների սոցիալական ակտիվության և հոգևոր-բարոյական կերպարի նոր գծերի դրսևորման կարևոր պայման, քանի որ. մրցության մեջ նրանք «կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց. ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ. անսպառ են ...»[85]։

Դրական ազդեցություն ունենալով անհատի ինքնադրսևորման և. ինքնակատարելագործման վրա, սոցիալիստական մրցությունը միաժամանակ նպաստում է սովետական բանվոր դասակարգի ինտերնացիոնալ միասնությանը և ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը։ Դրա լավագույն օրինակը այլ հանրապետությունների արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական և տրանսպորտային կոլեկտիվների հետ ծավալած սոցիալիստական մրցությունն է։ Տարիների փորձով հաստատվել ու ամրապնդվել է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորական կոլեկտիվների սոցիալիստական մրցությունը։ Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ Երևանի. ծխախոտի գործարանի կոլեկտիվը մրցում է Թբիլիսիի և Բաքվի ծխախոտագործների հետ։ Լենինականի երկաթուղային հանգույցի աշխատողները մրցում են Բաքվի և Խաշուրիի երկաթուղայինների հետ, մրցում են Ադրբեջանի Կիրովաբադ քաղաքի Ս. Օրջոնիկիձեի անվան. տեքստիլ կոմբինատի կոլեկտիվը և Լենինականի տեքստիլագործները։

Արտադրության մեջ գիտատեխնիկական առաջադիմությանը զուգընթաց, սոցիալիստական մրցությունը բանվորների մեջ ծնում է ոչ միայն արտադրական ակտիվություն ու աշխատանքային խանդավառություն, այլև երևան է բերում միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր. նորարարների ու գյուտարարների, որոնք իրենց գործունեությամբ նոր բովանդակություն են տալիս սոցիալիստական մրցությանը, նրանում. բարձրացնելով ստեղծագործական գործոնի դերն ու նշանակությունը։ Արտադրության նորարարներն ու գյուտարարները շարունակաբար հարըստացնելով իրենց տեխնիկական գիտելիքները և թափանցելով արտադրության երևույթների մեջ, որոնում և գտնում են խնայողության

գործի կատարելագործման նոր ուղղվներ, տնտեսավարման արդյունավետ եղանակներ, հնարավորություն ստեղծում պետական պլաններն ու ստանձնած սոցիալիստական պարտավորություններն ամբերի կատարելու համար։

Մրցության պրոցեսում որքան մեծանում և ընդլայնվում է նորարարական շարժման ազդեցության ոլորտն ու արդյունավետությունը աշխատավորական կոլեկտիվներում, այնքան արտադրության մեջ ծնվում է համակողմանի զարգացած իր շարժուն աշխատանքային ֆունկցիաներով, ընդհանուր շահերով, բազմազան հմտություններով օժտված կոմունիստական հասարակության անհատը՝ մարդ-աշխատողը, որն իր մեջ խտացնում է արտադրության ղեկավարի գիտելիքներ և բանվորի հմտություն։

Երկրի սոցիալ-տնտեսական բարդ խնդիրների լուծման պրոցեսում սոցիալիստական մրցության մեջ անխզելիորեն շաղկապվում են անհատի և կոլեկտիվի հասարակական շահերը, առաջանում է հասարակական և անհատական շահերի նոր հարաբերակցություն, ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ ամբողջ կոլեկտիվի, իհարկե և յուրաքանչյուր անհատի ուժերը մի նպատակի ծառայեցնելու համար։ Բանն այն է, որ մրցությունն իր բոլոր ձևերով բարձրացնում է կոլեկտիվի պահանջկոտությունը դեպի նրա յուրաքանչյուր անդամը։ Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքը ավելի ցայտուն է դրսևորվում, երբ որևէ արտադրամասի կամ գործարանի կոլեկտիվ մրցում է այլ կոլեկտիվի հետ։ Այդ դեպքում յուրաքանչյուր բանվոր մեծ շահագրգռվածություն է ցուցաբերում, որպեսզի բոլոր բրիգադներն ու արտադրամասերը և գործարանը ամբողջությամբ վերցրած աշխատեն ավելի լավ։ Խոսքը վերաբերում է նրան, որ սոցիալիստական մրցության մեջ ձևավորվում և ամբողջությամբ դրսևորվում են մարդկանց հասարակական-բարոյական ու հումանիստական բարձր հատկությունները։ Անհատի սոցիալիստական ուղղվածության ընդհանուր գիծ է դառնում աշխատանքի ընկալումը որպես ժողովրդի բարեկեցությանը ծառայելու միջոց, որպես կյանքի իմաստ։ Աշխատողների արմատական շահերի ընդհանրությունը, փոխօգնությունը և սոցիալ-քաղաքական միասնությունը արտահայտվում է նրանում, որ կոլեկտիվի յուրաքանչյուր անդամ արտադրության պրոցեսում ոչ միայն վաստակի է ձգտում (անշուշտ սա ևս կարևոր է), այլև նրան հետաքրքրում են իր բրիգադի, արտադրամասի և ձեռնարկության առջև կանգնած սոցիալ-տնտեսական հարցերը։ Այսպես, օրինակ, Երևանի

էլեկտրատեխնիկական գործարանի կոմունիստական աշխատանքի բրիգադի բրիգադավար Մագդա Տոնոյանը ամրապնդելով իր ղեկավարած բրիգադի հաջողությունները, տեղափոխվեց ետ մնացող բրիգադ, որտեղ նրա աշխատավարձը պակաս էր 15%-ով: Կարճ ժամանակում բրիգադը սկսեց ոչ միայն կատարել, այլև գերակատարել իր առաջադրանքները, ավելի քան 20%-ով բարձրացավ բրիգադի անդամների աշխատավարձը[86]:

Ձեռնարկության պլանային առաջադրանքի կատարմանը օգնելու նպատակով Լենինականի գործվածքային ֆաբրիկայի № 2 արտադրամասի անվանի ջուլհակուհի Էմմա Կարապետյանը երկրորդ արտադրամասի 8-րդ կոմպլեկտից, որտեղ պլանները կատարում էին 110—115%-ով տեղափոխվեց ետ մնացող 11-րդ կոմպլեկտը: Նա, իհարկե, նոր տեղի դժվարությունների մասին իրեն հաշիվ տալիս էր, սակայն վճռականությունն ու համառությունը նրան օգնեցին հաղթահարելու արգելքները: Է. Կարապետյանը գործը սկսեց յուրաքանչյուր հաստոցի տեխնիկական թերությունները վերացնելուց: Բարձրացրեց աշխատանքային կարգապահությունը, կոլեկտիվի անդամներին սովորեցրեց համառորեն տիրապետել մեքենաների աշխատանքին: Շուտով վիճակը փոխվեց: Կոմպլեկտի կոլեկտիվը սկսեց պլանային առաջադրանքները կատարել 100—105%-ով[87]:

Այսպիսով, սոցիալիստական մրցությունը դառնում է ամբողջ բանվոր դասակարգի, ինժեներատեխնիկական աշխատողների ինքնագործունեությունը և ստեղծագործական նախաձեռնությունը ծավալելու և արմատավորելու կարևոր աղդակ, նրանց ինտերնացիոնալ դաստիարակման վճռական միջոց, արտադրատնտեսական կոնկրետ խնդիրների արդյունավետ լուծման վճռական պայման:

Սոցիալիստական մրցության պատմությունը հավաստում է, որ այս կարևոր գործում եղել են և դեռ կան շատ դժվարություններ ու թերություններ, որոնք բացասաբար են անդրադարձել և անդրադառնում են սոցիալիստական մրցության ծավալման վրա: Այսպես, սոցիալիստական մրցության պրակտիկայում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ բոլոր տնտեսական ղեկավարները չէ, որ պահանջվող խորությամբ են գիտակցել խնայողական աշխատանքի անհրաժեշտությունը ժողովրդական տնտեսության զարգացման տվյալ փուլում, ամենուր չէ, որ ակտիվ պայքար է տարվել նյութերի, էներգառեսուրսների խնայողության համար: Այս իմաստով առանձնահատուկ բացասական դեր է կատարել մրցության մեջ գոյություն ունեցող ձևա-

մոլուխյունը: ՍՄԿԿ Կենտկոմի 1957 թ. դեկտեմբերյան պլենումը նշեց, որ մրցության կազմակերպման և ղեկավարման մեջ դեռևս գոյություն ունեն լուրջ թերություններ ու ձևականություն, շաբլոն: Բանն այն է, որ շատ տնտեսական ու արհմիութենական կազմակերպություններ սոցմրցման ղեկավարումը հանգեցնում էին տեղեկություններ հավաքելուն և մրցության վիճակագրական տվյալներ կազմելուն: Կենդանի ղեկավարությունը բյուրոկրատական մեթոդներով փոխարինելու նման պրակտիկան խանգարում էր մրցության լայն ծավալմանը, արհամարհում էր նրա իսկական էությունը, խոչընդոտում նյութական արտադրության վերելքին:

Տնտեսական և հասարակական կազմակերպությունները վերցնելով սոցիալիստական պարտավորություններ, շատ հաճախ բավարարվում էին միայն դրանով, սիստեմատիկաբար չէին հետևում մրցության կատարման ընթացքին, առաջավոր փորձի ուսումնասիրմանն ու արմատավորմանը, մրցության արդյունքների ժամանակին ամփոփմանը: Այս և համանման գործոններով է հիմնականում պատճառաբանվում այն փաստը, որ Հանրապետության արտադրական ձեռնարկություններից 62-ը կամ 12%-ը չկատարեցին համախառն արտադրանքի թողարկման 1959 թ. պլանները և երկրին պակաս տվեցին 56610,0 հազար ռուբլու արտադրանք: Այսպես, օրինակ, արտադրության անբավարար կազմակերպման, ներքին ռեզերվների ոչ լրիվ օգտագործման հետևանքով, տարբեր ժամանակներում համախառն արտադրանքի թողարկման, աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացման գծով ստանձնած պլանների և պարտավորությունների կատարումը չապահովեցին ժամացույցի և էլեկտրալամպերի գործարանները, Կիրովականի կորդի ֆաբրիկան, շինանյութերի արդյունաբերության վարչությունը և ուրիշ այլ ձեռնարկություններ ու արտադրամասեր[88]: Սոցմրցության մեջ կարևորը միայն լայն ու բազմակողմանի պարտավորություն ընդունելը չէ: Գլխավորը իսկական մասսայական մրցության ապահովումն է, նրանում յուրաքանչյուր աշխատավորի մասնակցությունը, մրցողների հաջող աշխատանքի համար պայմաններ ստեղծելը, մրցության հրապարակայնությունը, առաջավորների փորձի տարածումը, ետ մնացողներին օգնություն ցույց տալը ընդհանուր վերելքի հասնելու համար: «Առաջավոր փորձի վրա հենվելու համար հարկավոր է այդ փորձը իմանալ, ուսումնասիրել, կարողանալ նկատել և երբեմն պաշտպանել դեռ սաղմնային վիճակում և եզակի

ու մասնակի երևույթները դարձնել մասսայական ու ընդհանուր,— գրում էր «Պրավդան»[89]։

Հաճախ հրապարակումներում տեղ չեն գտել հաղթողների կամ ետ մնացողների անունները։ Մինչդեռ մրցության ընթացքի և նրա արդյունքների հրապարակային մեկնաբանումն ու ընդհանրացումը կարևոր նշանակություն ունեն մրցության մեջ տեղ գտած թերությունների վերհանման, առաջավոր փորձի մասսայականացման և պրոպագանդման համար։

«Մրցության հաչողությունը յուրաքանչյուր ձեռնարկությունում,— գրել է «Պրավդան»,—պետք է չափվի նրանով, թե որքանով է նվազել ետ մնացողների թիվը, որքանով են աճել հարվածայինների ու ստախանովականների շարքերը, որքանով է իրապես ավելացել արտադրանքի քանակը»[90]։

Սոցմրցության արդյունավետ ընթացքին մեծ չափով խոչընդոտում էր նաև անհամաչափ մատակարարումը։ Քիչ չէին, օրինակ, այն դեպքերը, երբ ձեռնարկությունը ուշացումով էր ստանում հումքը, որը աշխատաժամանակի կորստի պատճառ էր դառնում, մեծանում էր քանվորների պարապուրդը, ընկնում աշխատանքային կարգապահությունը։ Սրանով կարելի է բացատրել այն փաստը, որ հանրապետության շատ արդյունաբերական ձեռնարկություններ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ունեցել են ինքնարժեքի թանկացում, չեն կատարել ապրանքային արտադրանքի թողարկման պլանը։ Առանձին տարիներ միավոր արտադրանքի թողարկման վրա նախատեսվածից համեմատաբար շատ միջոցներ էին ծախսել հատկապես գունավոր մետալուրգիայի, լեռնահանքային արդյունաբերության, փայտամշակման և անտառային արդյունաբերության, շինանյութերի արդյունաբերության վարչությունները և այլն[91]։

Տնտեսական և հասարակական կազմակերպությունների շատ ղեկավարներ, ընկնելով արտադրական պլանների կատարման ու գերակատարման ետևից, ըստ քանակական ցուցանիշների, մոռացության էին տալիս մրցության այնպիսի կարևոր հատակ, ինչպիսին էր արտադրանքի որակի բարձրացումը։

Եվ, վերջապես, մասսաների գիտակցական, ստեղծագործական ակտիվության անընդհատ աճը բարձրացնելու համար մեծ նշանակություն ունի կուսակցական կազմակերպությունների ներգործուն վերահսկողությունը պետական և տնտեսական մարմինների գործունեության, տնտեսության ու կուլտուրայի զարգացման առանձին հարցերի

վրա։ Առանձին կուսակցական կազմակերպություններ ձևական մոտեցում են հանդես բերել սոցիալիստական մրցության նկատմամբ, պատշաճ ուշադրություն չեն դարձրել արտադրությունը դարգացնելուն գործում աշխատողների նյութական շահագրգռվածությանը։ Առաջավոր բրիգադների և արտադրամասերի վրա էր դրվում պլանային առաջադրանքների այն մասը, որը թերակատարում էին ետ մնացող բրիգադներն ու արտադրամասերը։ Շատ հաճախ մոռացության էր տրվում քննադատությունն ու ինքնաքննադատությունը, համարձակորեն չէին բացահայտվում բացերն ու թերությունները։ Տեղին են հնչում Վ. Ի. Լենինի խոսքերն այն մասին, որ անհրաժեշտ է. «Բացեիբաց ընդունել սխալը, բացահայտել նրա պատճառները, վերլուծել այդ սխալը ծնող իրադրությունը, ուշադրությամբ քննարկել սխալն ուղղելու միջոցները՝ ահա դա է լուրջ կուսակցության հատկանիշը, ահա դա է նրա կողմից իր պարտականությունների կատարումը, ահա դա է պասակարգի, ապա նաև մասսայի դաստիարակումն ու ուսուցումը»[62]։ Հանրապետության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ծրագրային նշանակություն ունեցող այս դրույթով և ՍՄԿԿ Կենտկոմի համապատասխան ցուցումներով, մշտապես կուսակցական կազմակերպությունների առջև խընդիր է դրել հմտորեն և ճիշտ օգտագործել սոցիալիստական մրցության առավելությունները, աշխատավորների ստեղծագործական նախաձեռնության ծավալման, քննադատության ու ինքնաքննադատության միջոցով թերությունների բացահայտման ու վերացման հիման վրա հասնել տնտեսության արագ վերելքի։

4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բանվոր դասակարգի կազմում տեղի ունեցած քանակական և որակական փոփոխություններն ուղեկցվում էին նրա տեխնիկական-ստեղծագործական ակտիվության վերելքով։ Սովետական մարդու հոգեբանության մեջ աշխատանքի նկատմամբ նոր վերաբերմունքի ձևավորումը սկզբնավորվել է սոցիալիստական հասարակական հարաբերությունների առաջացման հետ միաժամանակ։

Պրոլետարական դիկտատուրայի հաստատումով մեր երկրում վերջ տրվեց իր դարն ապրած հին արտադրական հարաբերություններին և նրանցով պայմանավորված աշխատանքի ու բաշխման կապիտալիս-

տական սկզբունքին: Սոցիալիստական հասարակական հարաբերությունները աշխատավոր մասսաների համար բացեցին նրանց ստեղծագործական ուժերի ծաղկման ու մաահղացումների իրականացման անսպառ հնարավորություններ: Վ. Ի. Լենինը գրում էր. «...Տեխնիկայի բոլոր հրաշքները, կուլտուրայի բոլոր նվաճումները դառնալու են համաժողովրդական սեփականություն, և այսուհետև մարդկային խելքն ու հանճարն էլ երբեք բռնության միջոցների, շահագործման միջոցների չեն վերածվի»[93]: Ամբողջ ժողովրդի և իր բարօրության ու երջանկության համար աշխատող մարդը, անշուշտ, դառնում է ավելի խորհող ու գործունյա, ձգտում է թափանցել աշխատանքի և տեխնոլոգիայի բարդ երևույթների մեջ՝ այն կատարելագործելու և ավելի արտադրողական դարձնելու նպատակով: Տեխնիկական առաջընթացն ու աշխատողի ստեղծագործական ակտիվության աճը գտնվում են սերտ կապի և փոխներգործության մեջ: Այսինքն, որքան բարդանում է արտադրության տեխնոլոգիան, այնքան մարդու մեջ ավելի խոշոր տեխնիկական կատարելագործումներ անելու ձգտում է առաջանում: Ով ընդհակառակը, մարդն ինչքան տեխնիկական խոշոր նորարարություններ ու կատարելագործումներ է անում, այնքան ավելի են աճում նրա ընդունակությունները ու գիտելիքները: Ինչպես Կ. Մարքսն է նշել. «Արտադրության պրոցեսի գլխավոր գործակալը լինելու փոխարեն բանվորը կանգնում է նրա կողքին»[94]:

Արտադրության տեխնիկական առաջընթացի ու աշխատանքի արտադրողականության բարձրացման բարդ խնդիրների լուծման մեջ հանդես են գալիս բանվորների ստեղծագործական ակտիվության և նախաձեռնության բազմաթիվ ձևեր, որոնց մեջ կարևոր նշանակություն ունեն մասսայական դյուտարարությունն ու նորարարությունը: Դրանք ծագեցին և զարգացան տակավին սովետական իշխանության առաջին տարիներին: Աշխատավորության տեխնիկական ստեղծագործությունը ճանաչվեց որպես համապետական նշանակության խնդիր և ստացավ բազմակողմանի օգնություն ու պաշտպանություն: Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը այն դիտել և դիտում են որպես աշխատավորության հասարակական-քաղաքական նպատակ, որպես բանվոր դասակարգի տեխնիկական ստեղծագործություն, որպես լայն մասսաների շարժում, որն արագացնում է տեխնիկական առաջընթացը և դառնում աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր միջոց:

Սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում

Միության առաջավոր ձեռնարկությունների, արտադրամասերի, շինարարության, տրանսպորտի, լեռնահանքային արդյունաբերության բանվորների օրինակով ՀՍՍՀ բանվոր դասակարգը ևս ծավալեց նորարարական լայն շարժում: Հանրապետության կուսակցական, տնտեսական, արհմիութենական և մյուս հասարակական կազմակերպությունները չթուլացող գործունեություն ծավալեցին աշխատավորների նախաձեռնությունն էլ ավելի ընդլայնելու ու ամրապնդելու համար[95]: Աշխատավորների մասսայական տեխնիկական-ստեղծագործական ակտիվության բարձրացման լավագույն ձևը ստախանովյան շարժումն էր: Նորարար ստախանովականներն անմիջականորեն մասնակցելով արտադրության տեխնիկական կատարելագործմանը, բարելավում էին արտադրության տեխնոլոգիան և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը: Օրինակ, 1945 թ. Երևանի մեքենաշինական գործարանի բանվոր ստախանովական Հ. Բոքմաճյանը մամլող մեքենան կատարելագործեց այնպես, որ հնարավոր դարձավ պտուտակի վեց անկյունները պատրաստել մեկ գործողությամբ: Այդ նորարարության շնորհիվ զգալի չափով բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը և աճեց թողարկվող արտադրանքի քանակը: Եթե մինչև հաստոցի վերափոխումը օրական 1500 պտուտակ պատրաստելու վրա աշխատում էր 21 բանվոր, ապա դրանից հետո նույն աշխատանքը կատարում էր մեկ բանվոր, տալով 20 հազար ռուբլու խնայողություն[96]: Արտադրության նորարարացման լայն շարժում ծավալվեց նաև հանրապետության մյուս ձեռնարկություններում:

Կիրովականի քիմկոմբինատի և Երևանի կարբիդի գործարանի վառարաններում արմատավորվեց առաջավոր մեթոդ՝ արագացված բեռնափոխումների ռեժիմ: Այդ մեթոդի արմատավորմանը նախորդել էր մի շարք կազմակերպչական և տեխնիկական միջոցառումների կենսագործում, որը հնարավորություն ստեղծեց կարբիդի վառարաններում մտցնել կոնստրուկտիվ փոփոխություններ, պակասեցնել վառարանների ջերմային կորուստները, բարելավել «կարճ ցանցի» կոնտակտները, ջրային պաղեցման հաղորդակցության ուղիները: Արագացված բեռնափոխումների ռեժիմի արմատավորմանը մեծ չափով օժանդակեցին Կիրովականի քիմկոմբինատի ստախանովական բրիգադավարներ Ա. Ամիրխանյանը, Ի. Ռենժեռնյակը, Մ. Օհանյանը, Երևանի կարբիդի գործարանի բրիգադավարներ Ա. Մակարյանը, Պ. Ռուշանյանը և ուրիշներ: Ա. Ամիրխանյանի և Ա. Մակարյանի աշ-

խատանքի առաջավոր մեթոդներն ընդհանրացվեցին ու արմատավորվեցին ՍՍՀՄ կարբիդի արտադրության մեջ[97]:

Ալավերդու պղնձաձուլական կոմբինատում Շամլուղի հանքաքարը առանց տեսակավորելու ձուլվում էր վատերժակետային վառարանում: Այդպիսի տեխնոլոգիական ռեժիմի կիրառումը անբավարար արդյունք էր տալիս: Հանքաքարի դժվարահալ լինելու պատճառով մեծ չափերի էր հասնում վառելանյութի գերածախսը, հաճախ խանգարվում էին ձուլման պրոցեսները և դրա հետևանքով բաժանմունքը արտադրական պլանները սիստեմատիկաբար չէր կատարում: Ստախանովականները գտան այդ դժվարությունները վերացնելու ելքը:

Ինժեներ Վ. Զարապովի, ձուլող վարպետ Հ Սարգսյանի և մի քանի այլ ստախանովական նորարարների մշակած մեթոդով հանքաքարը նախապես տեսակավորվում, հետո միայն ստեղծվում էր բովախառնուրդ՝ վատերժակետային վառարանում ձուլելու համար: Արտադրության պրոցեսի այդպիսի կազմակերպումը լավ արդյունք տվեց: Վառելիքի տնտեսմանը զուգընթաց բաժանմունքը 58%-ով ավելացրեց հանքաքարի ձուլումը: Արտադրության կազմակերպման նախկին ռեժիմի կիրառման ժամանակ ձուլման պրոցեսն արագացնելու նպատակով մեկ տարվա ընթացքում որպես օժանդակ նյութ ծախսվում էր ավելի քան 400 հազար ռուբլու արժողությամբ կվարց: Կվարցի փոխարեն կոնվերտորային բաժանմունքում սկսեցին օգտագործել պղինձ չպարունակող հանքաքար, որն ստացվում էր հանքաքարը տեսակավորելու միջոցով: Այդ նորարարության շնորհիվ ձուլարանի տարեկան եկամուտը կազմեց 1,8 մլն. ռուբլի[98]:

Նորարարական առաջարկությունների բերված օրինակները վերաբերում են արտադրության նորացման, տեխնիկայի արդյունավետ օգտագործման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման և որակի բարելավման խնդիրներին:

Բանվոր դասակարգի մասսայական նորարարական շարժումն ակտիվացնող կարևոր միջոց էին նորարարական առաջարկությունների ներդրման կոմպլեքսային բրիգադները: Դրանցում ընդգրկված էին առաջարկների հեղինակները, տեխնոլոգները, կոնստրուկտորները և առավել աչքի ընկած նորարար բանվորներ: Նորարարական առաջարկությունների այս մեթոդը հնարավորություն էր տալիս իր բարձրության վրա դնել նորարարական և գյուտարարական աշխատանքները: Կոմպլեքսային բրիգադներն անմիջականորեն մասնակցելով նորարարական առաջարկների մշակման, պատրաստման և ներդրման գործին, նորա-

բարական միտքը ուղղում էին այնտեղ, ուր ծագում էին արտադրության ու տեխնիկայի կատարելագործման, արտադրանքի որակի բարձրացման խնդիրներ։ Այս եղանակը հնարավորություն էր տալիս կրճատել, մի կողմից՝ արտադրության շահերից չբխող նորարարական առաջարկությունների թիվը, մյուս կողմից՝ լայն ճանապարհ բացել այն առաջարկությունների համար, որոնք նպաստում էին արտադրության տեխնիկական առաջընթացին և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։

Ավելորդ չէ բերել հանրապետության մի քանի ձեռնարկությունների և արտադրամասերի աչքի ընկած կոմպլեքսային բրիգադների գործունեությունը նկարագրող փաստեր։ Օրինակ, ՀՍՍՀ շինարարության մինիստրությունում կոմպլեքսային բրիգադը Գ. Կանեցյանի, Պ. Մանվելյանի, Ռ. Մխիկյանի և Գ. Խորասանյանի մասնակցությամբ, արդյունաբերական և քաղաքային շինարարությունում հավաքովի կոնստրուկցիաների անցնելու համար առաջարկեց նոր տեխնոլոգիա, որը մոտ 20%-ով իջեցրեց հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաների արժեքը[99]։

Երևանի Կիրովի անվան գործարանի կոմպլեքսային բրիգադը՝ մասնակցությամբ Տեր-Ղազարյանի, Կարապետյանի, Կանայանի, Թերլեմեզյանի և Խաչիկյանի, մշակեց և արտադրության մեջ ներդրեց ացետիլենի դիմերացման ռեակտորի նոր կոնստրուկցիա, որը տվեց ավելի քան կես միլիոն ռուբլու տնտեսում։ Նույն գործարանի նորարարների կոմպլեքսային բրիգադը (անդամներ՝ Հ. Թումանյան, Ս. Պետրով, Ա. Հայրապետյան և ուրիշներ) սառեցնող ագրեգատների արտադրողականությունը բարձրացրեց ամոնիակի գոլորշիների ստեղծման միաստիճան ճնշակը երկաստիճանի վերափոխելու միջոցով, որի ներդրումից ստացվեց 2250 հազար ռուբլու օգուտ[100]։

Նորարարական ու գյուտարարական առաջարկությունների նկատմամբ բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների պատասխանատվության էլ ավելի բարձրացման գործում մեծ է եղել մրցութային հանձնաժողովների դերը։ Նրանք ստվարացնելով գյուտարարների և նորարարների շարքերը, լուծելով տեխնիկական առաջընթացի հետ կապված շատ կարևոր հարցեր, միաժամանակ նոր մտահղացումներ էին առաջացնում բանվորների մեջ, ուղղություն էին տալիս նրանց ստեղծագործությանը։ Հանձնաժողովների ձեռնարկած միջոցառումները սերտորեն զուգակցվում էին բանվորների առջև ծառացած տնտեսական խնդիրների հետ, քանի որ այն նպատակամղված էր

աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրության տեխնիկական կատարելագործման հարցերի լուծմանը։

Մրցութային հանձնաժողովների աշխատանքներին մեծապես օգնում էին գործարանային և հանրապետական թերթերը։ Մամուլը լուսաբանում էր մրցույթի ընթացքը, պրոպագանդում լավագույն նորարարական առաջարկությունների հեղինակներին, անհրաժեշտության դեպքում քննադատում թերությունները և կոնկրետ ուղիներ նշում դրանց վերացման համար[101]։ Յուրաքանչյուր մրցույթ նպաստում էր բանվորների ստեղծագործական նախաձեռնության աճին։ Այսպես, Երևանի Կիրովի անվան գործարանում բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների կողմից 1953 թ. արված ավելի քան 850 նորարարական առաջարկություններից մրցութային հանձնաժողովի կողմից ընդունվեց և արտադրության մեջ ներդրվեց 600-ը, գործարանին տարեկան տալով 6,7 մլն. ռուբլու օգուտ[102]։ Նույն տարում Ալավերդու պղնձաձուլական կոմբինատում ստացված 754 առաջարկություններից արտադրության մեջ ներդրվեց 324-ը[103]։ Երևանի Ջերժինսկու անվան գործարանի բանվորների ավելի քան 200 առաջարկություններից մրցույթով ընդունվեց 96-ը[104]։ Նորարարական լավագույն առաջարկությունների ընտրության ու արտադրության մեջ ներդնելու գործում օրինակելի հաջողության հասան Երևանի ավտոպահեստամասերի, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի, Լենինականի տեքստիլ կոմբինատի և այլ արդյունաբերական ձեռնարկությունների ու արտադրական օբյեկտների մրցութային հանձնաժողովները[105]։

Բանվորների ստեղծագործական նախաձեռնությունն էլ ավելի խորացնելու և նորարարական ու գյուտարարական շարժման նկատմամբ նրանց շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով լավագույն առաջարկների հեղինակները պարգևատրվում էին դրամական և այլ մրցանակներով։

Նորարարական և գյուտարարական շարժմանը մեծ չափով նպաստեցին արտադրական խորհրդակցությունները։ Վերջիններիս գործունեությանը զգալի չափով օժանդակում էին պարբերաբար անցկացվող հանրապետական և միութենական սեմինարները։ Սեմինարների նպատակն էր՝ ապահովել բանվորական լայն մասսաների ակտիվ մասնակցությունը նորարարական շարժմանը, քաջալերել նրանց առաջարկությունները։ Հանրապետության կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունները հսկայական նշանակություն

ժամով ստուգատեսների անցկացման տնտեսական և քաղաքական դերին, ամեն ինչ անում էին դրանց գործնական ու արդյունավետ բնույթ հաղորդելու համար։ Հրավիրվում էին կուսակցական, տնտեսական ու արհմիութենական ակտիվի խորհրդակցություններ, ինչպես նաև աշխատավորական կոլեկտիվների ընդհանուր ժողովներ, որտեղ քննարկվում էին ստուգատեսի խնդիրները, մշակվում նրա անցկացման պլանը։

1958 թ. Հանրապետության ժողտնտխորհը հայտարարեց գյուտարարական և նորարարական աշխատանքի եռամսյա ստուգատես[106]։ Ստուգատեսի հաջող կազմակերպումը, ինչպես նաև լավագույն նորարարական առաջարկությունների համար մրցանակների շնորհումը ուժեղ թափ հաղորդեց նորարարական շարժմանը, խտացրեց նրա մասնակիցների շարքերը, էլ ավելի լարեց նրանց ստեղծագործական միտքը։ Բավական է ասել, որ ստուգատեսի ընթացքում ստացված նորարարական առաջարկությունները մոտ 1,7 անգամ գերազանցեցին նախորդ տարվա արդյունքները[107]։

Աշխատավոր մասսաների միտքը տեխնիկական նոր մտահղացումների ուղղությամբ առաջ մղելու գործում մեծ դեր խաղաց գիտության ու արտադրության աշխատողների համագործակցությունը։ Կասկածից վեր է, որ աշխատանքի բարձր արտադրողականության ապահովումը և տեխնիկայի շարունակաբար կատարելագործումը անհնար է առանց գիտության ու տեխնիկայի ներդաշնակ զարգացման և գիտությունը անմիջական արտադրողական ուժի վերածելու։ Արտադրության համակողմանի զարգացումը և նրանում առաջացած տեխնիկական առաջընթացի պահանջները անհրաժեշտ պայմաններ էին ստեղծում գիտության և արտադրության աշխատողների սերտ համագործակցության համար։ Նրանց համատեղ ուժերով նախագծվում և գործնական կիրառության մեջ էին դրվում նոր տիպի սարքավորումներ ու մոդելներ։ Հիշատակության է արժանի Երևանի Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի և Ալավերդու պղնձաձուլական կոմբինատի փորձը։ Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի մետաղահատ կտրիչները երկար չէին դիմանում, մաշվում և գործածությունից շուտ դուրս էին գալիս։ Այս երևույթը տեղիք էր տալիս հաստոցների պարապուրդի, ձեռնարկությանը հասցնելով զգալի վնաս։ Ստեղծված դրությունից դուրս բերելու համար գործարանին օգնության ձեռք մեկնեցին Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի գիտնականները։ Գործարանի ինժեներատեխնիկական աշխա-

տողների և առաջավոր բանվորների հետ համատեղ պրոֆեսոր Մ. Կասյանը մշակեց կարիչների նոր մոդելներ, որոնք, տեղում պատրաստելով, հաջողությամբ օգտագործվեցին արտադրության մեջ։ Ատամնավոր անիվների մխման տեխնոլոգիական պրոցեսը մշակելիս գործարանի նորարարներին օգնեց նույն ինստիտուտի պրոֆեսոր Պ. Պետրոսյանը։ Նրա օգնությամբ գործարանում մի շարք փորձեր կատարելուց հետո հիմնովին փոխվեց անիվների մխման պրոցեսը, որի հետևանքով վերացվեցին թերությունները[108]։

Ալավերդու պղնձաձուլական կոմբինատում պղնձի հանքանյութերի կոմպլեքսային օգտագործման պրոբլեմի ուսումնասիրության ընթացքում պղնձագործներին մեծ օգնություն ցույց տվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մետաղների տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ Տ. Ավետիսյանը։ Այդ պրոբլեմի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց պիտանի դարձնելու մեծ քանակությամբ հումք, որը մինչ այդ արտադրական թափոն էր համարվում[109]։

Աշխատավորության տեխնիկական-ստեղծագործական ակտիվության բարձրացման նշված ձևերի համեմատությամբ սա ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար նոր երևույթ էր։ Նկատի ունենալով այս հանգամանքը, հարկ է փոքր-ինչ հանգամանալից ծանրանալ այդ երևույթի վրա։ Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ տեխնիկական առաջընթացը կախված լինելով գիտության զարգացման մակարդակից, միաժամանակ անհրաժեշտ նախադրյալներ և պայմաններ է ստեղծում գիտության զարգացման համար։ Այսինքն, առաջինը ոչ թե գիտությունն է գիտականորեն հիմնավորում և նախապատրաստում անհրաժեշտ պայմաններ տեխնիկական առաջընթացի համար, այլ հակառակը՝ տեխնիկան է գիտությանը մղում նոր մտահղացումների։ Այստեղից հետևում է, որ գիտության զարգացումը ենթադրում է տեխնիկայի զարգացում և, հակառակը, տեխնիկայի պահանջների մեծացումը նպաստում է գիտության զարգացմանը։ Գիտության և արտադրության կապի հիշյալ ձևը ավելի արդյունավետ է ու գործնական։ Նախ՝ գիտական մտահղացումը բխում է արտադրության կոնկրետ պահանջներից և նրա հիմնավորումը լաբորատոր պայմանների համեմատությամբ դառնում է ավելի առարկայական ու տեսանելի։ Եթե դրան ավելացնենք և այն, որ գիտությունը անմիջական արտադրողական ուժի վերածման գործին մասնակցում են նաև ինժեներատեխնիկական աշխատողները և առաջավոր բանվորները, որոնք ավելի լավատեղյակ են արտադրության «նեղ տեղերին», ապա պարզ կդառ-

նա տեխնիկական առաջադիմության զարգացման գործում նշված ձևի կարևորագույն դերը։ Դրա կարևոր կողմերից մեկն էլ այն է, որ նորարարական շարժման մեջ բանվորների, ինժեներատեխնիկական անձնակազմի և գիտնականների աշխատանքի կոլեկտիվ ձևերը մեծացնում են ոչ միայն նորարարության տնտեսական արդյունավետությունը, այլ նաև իրականանում է մտավոր ու ֆիզիկական աշխատանքների ներդաշնակ զուգակցումը։

Չնայած ձեռք բերված հաջողություններին, այնուհանդերձ, ինչպես Միության մեջ, այնպես էլ Սովետական Հայաստանում այդ ուղղությամբ դեռ զգալի աննվիքներ կային։ Շատ գիտական հիմնարկություններ թույլ էին կապված արտադրության հետ, գիտության նորագույն նվաճումները ժամանակին չէին ներդրվում արտադրության մեջ, ինչպես նաև բացակայում էր գիտության ու արտադրության աշխատողների համագործակցությունը։ Անդրադառնալով գիտության և արտադրության փոխադարձ կապին, ՍՄԿԿ XX համագումարը (1956 թ.) ընդգծեց, որ առանձին բնագավառներում մեր գիտությունը որոշակիորեն ետ է մնացել ժողովրդական տնտեսության աճող պահանջներից։ Կուսակցության համաժողովը գիտական հիմնարկությունների առջև խնդիր դրեց բարձրացնել գիտության դերը կոմունիստական շինարարության գործնական խնդիրների լուծման մեջ[110]։

Աշխատավորների մասսայական ստեղծագործական ակտիվության բարձրացման և նորարարական շարժման աճման համար կարևոր ազդակ հանդիսացավ 1958 թ. հունվարին ստեղծված նորարարների ու գյուտարարների Համամիութենական ընկերությունը, իր հանրապետական և տեղական բաժանմունքներով։ Կարճ ժամանակում այդ ընկերությունը դարձավ մասսայական։ Նրա անդամների թիվը նույն տարում հասնում էր 1 մլն. 85 հազարի, որից 504 հազարը բանվորներ էին»[111]։

1958 թ. օգոստոսի 15—16-ը Երևանում տեղի ունեցավ ՀՍՍՀ նորարարների և գյուտարարների հանրապետական խորհրդակցություն, որի աշխատանքներին մասնակցեց ավելի քան 160 մարդ։ Խորհրդակցությունն ընտրեց Հայաստանի գյուտարարների և նորարարների հանրապետական խորհուրդ և միջոցառումներ մշակեց նորարարների հետ տարվող աշխատանքը բարելավելու, ինչպես նաև նորարարական շարժումը լայնորեն ծավալելու համար[112]։ Ֆաբրիկաներում, գործարաններում, արտադրամասերում, տրանսպորտում և շինարարության մեջ ստեղծվեցին նորարարական ընկերությունների սկզբնական կազմա-

կերպություններ և նրանց խորհուրդներ։ Արդեն 1958 թ. Հայկական ՍՍՀ 135 ձեռնարկություններում գործում էին այդպիսի սկզբնական կազմակերպություններ, որոնցում ընդգրկված էին 900-ից ավելի գյուտարարներ և նորարարներ[113]։ Նորարարական նոր առաջարկների մշակման, մոդելների նմուշների պատրաստման, ինչպես նաև նորարարներին նյութական և տեխնիկական օգնություն ցույց տալու գործում զգալի աշխատանք կատարեցին այդ կազմակերպություններն ու նրանց խորհուրդները։ Դրանց հիմնական խնդիրն էր պլանավորել նորարարական աշխատանքները ըստ արտադրության պահանջների, ինչպես նաև զբաղվել նորարար բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման հարցերով։ Այդ նպատակով նորարարների համար հաճախակի կազմակերպվում էին տեխնիկական բնույթի կոնսուլտացիաներ, զեկուցումներ, նորարարական լավագույն առաջարկությունների նմուշների ցուցադրումներ և զանազան այլ միջոցառումներ։ Այդ կազմակերպությունների նախաձեռնությամբ ստեղծվեցին նաև նորարարների և գյուտարարների հասարակական ինստիտուտներ ու համալսարաններ, որտեղ արտադրության նորարարները բարձրացնում էին իրենց տեսական գիտելիքների մակարդակը և տեղեկանում տեխնիկայի բնագավառում կատարված կարևոր նվաճումներին։ Այդպիսի համալսարաններ և ինստիտուտներ կազմակերպվեցին Լենինականի տեքստիլ կոմբինատում, Երևանի մետաքսի կոմբինատում, կաբելի գործարանում և ուրիշ ձեռնարկություններում[114]։ Այդ գործում մեծ ակտիվություն հանդես բերեց լենինյան կոմերիտմիությունը։ Նորարարների երեկոյան տեխնիկական համալսարան ստեղծելու մասին Կիրովականի ԼԿԵՄ քաղկոմի նախաձեռնությունը լայն արձագանք գտավ Հանրապետության մյուս քաղաքներում։ Խոշոր արդյունաբերական կենտրոններում ծավալվեց երեկոյան տեխնիկական համալսարաններ ստեղծելու շարժում[115]։ Տեխնիկական համալսարանների ու ինստիտուտների հանդես գալը մեծ չափով նպաստեց նորարարական և գյուտարարական մտքի զարգացմանը ու արտադրության տեխնոլոգիայի կատարելագործմանը։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ 50-ական թվականների վերջերին Հանրապետությունում արագորեն աճեց երիտասարդ նորարարների և գյուտարարների թիվը։ Այդ նշանակում է, որ գնալով ավելի էր երիտասարդանում նորարարական և գյուտարարական շարժման մասնակիցների բանակը, իսկ արտադրության տեխնիկական կատարելագործման մեջ մեծանում նրանց բաժինը։

Այդ գործին մեծապես նպաստում էին երիտասարդ բանվորների խմբակներն ու բրիգադները։ Այսպես, Երևանի Կիրովի անվան գործարանում 1958 թ. ստեղծված 33 երիտասարդական բրիգադները լայնորեն մասնակցեցին նորարարական շարժմանը։ Բավական է ասել, որ միայն 1958 թ. առաջին 8 ամիսներին նրանցից ստացված ավելի քան 250 առաջարկություններից արտադրության մեջ ներդրվեց 149-ը, գործարանին տալով 1 մլն. 200 հազար ռուբլու օգուտ[116]։

Երևանի պոլիվինիլացետատ գործարանի մի խումբ երիտասարդ նորարարների կողմից արված առաջարկություններից ստացված տարեկան օգուտը կազմեց ավելի քան 3 մլն. ռուբլի[117]։ Լավագույն ցուցանիշների հասան քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները, որտեղ 1958 թ. 1-ին կիսամյակում գյուտարարական և նորարարական աշխատանքներին մասնակցող 1100-ից ավելի բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների գերակշռող մասը երիտասարդներ էին։ Արտադրության մեջ արմատավորված լավագույն առաջարկությունների հեղինակներ դարձան գործարանի երիտասարդ բանվորներ Ջ. Առաքելյանը, Խ. Խաչիկյանը, Ս. Աթոյանը, Լ. Քալանթարյանը և շատ ուրիշներ[118]։

Չնայած ձեռք բերված որոշակի հաջողություններին, Սովետական Հայաստանում նորարարական շարժման կազմակերպման ու ղեկավարման աշխատանքներում կային լուրջ թերություններ։ Ոչ բոլոր ձեռնարկություններում ու արտադրամասերում էր, որ բանվորների տեխնիկական ստեղծագործությունը արժանացել էր տնտեսական, կուսակցական և հասարակական կազմակերպությունների ուշադրությանն ու պաշտպանությանը։ Նորարարական աշխատանքները ղեկավարող կազմակերպությունների անհոգի և բյուրոկրատական վերաբերմունքի հետևանքով շատ հաճախ անհիմն պատճառներով ձգձգվում և արտադրության մեջ չէին ներդրվում բազում նորարարական առաջարկություններ, ձեռնարկություններին պրկելով մեծ չափերի հասնող նյութական ու դրամական եկամուտներից։

1958 թ. օգոստոսին Երևանում տեղի ունեցած նորարարների խորհրդակցությունը ի մի բերելով այդ ուղղությամբ կատարված աշխատանքները, նշեց, որ դեռևս կան շատ մինիստրություններ, վարչություններ և առանձին ձեռնարկություններ, որտեղ անհրաժեշտ աշխատանք չի տարվել արտադրության նորարարների ու գյուտարարների հետ։ Դա էր պատճառը, որ գնալով նվազել էր ինչպես նորարարների այնպես էլ առաջարկությունների թիվը։ Ժողովրդական տնտեսության

հրատապ պահանջներից ելնելով, ՀԿԿ Կենտկոմը 1958 թ. դեկտեմբերի 3-ին ընդունեց «Արդյունաբերությունում, շինարարությունում, տրանսպորտում և գյուղատնտեսության մեջ կոմունիստական մրցության ծավալման մասին» որոշում[119]: Ի պատասխան այդ որոշման, հանրապետության բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների, հանքահորերի, երկաթուղային հանգույցի, շինարարության բանվորներն ու ինժեներատեխնիկական աշխատողները մեծ եռանդով ձեռնամուխ եղան նորարարական ու գյուտարարական շարժման ծավալմանը, որի շնորհիվ ավելացավ նորարական առաջարկությունների քանակը, մեծացավ արդյունաբերության շահութաբերությունը: Այդ են վկայում 3-րդ աղյուսակի տվյալները[120]:

Աղյուսակ 3

Տարեթիվը	Նորարարների քանակը	Արված առաջարկությունների քանակը	Ներդրված առաջարկությունների քանակը	Շահույթը՝ մլն. ռուբլի
1957	4529	8886	5127	35
1959	6000	11 000	5297	55

Արտադրության նորացման շնորհիվ ՀՍՍՀ արդյունաբերական ձեռնարկություններում 1958 թ. նախորդ տարվա համեմատությամբ, աշխատանքի արտադրողականության բարձրացման պլանը գերակատարվեց 6, իսկ արտադրանքի ինքնարժեքի իջեցումը՝ 2,6 %-ով[121]:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ նորարարական շարժումը գնալով ծավալվում էր ոչ միայն լայնությամբ, այլև խորությամբ, շարունակաբար մեծանում էր ներդրված առաջարկություններից ստացվող եկամուտը, այսինքն՝ նորարարների աշխատանքը դառնում էր ավելի արդյունավետ:

Այսպիսով, նորարարությունը և գյուտարարությունը հանդիսանալով բանվոր դասակարգի ու ինժեներատեխնիկական աշխատողների ստեղծագործական նախաձեռնության արտահայտություն, դարձան տեխնիկայի կատարելագործման, արտադրության նորացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման կարևոր միջոցներ: Մյուս եղրակացությունը այն է, որ տեխնիկական առաջընթացը ոչ միայն չի կաշկանդում բանվորի ստեղծագործական նախաձեռնությունը կամ իշխում նրա վրա, ինչպես փորձում են ապացուցել արևմուտքի բուրժուական գրչակները, այլև

դառնում է դրա հիմնական գործոնը, բանվորի աշխատանքին տալով ստեղծագործական նրանգ ու բնույթ: Ավելին, գիտատեխնիկական առաջադիմության և նրա արդյունավետության բարձրացման հիման վրա գնալով ավել ու ավելի բազմակողմանի է դառնում աշխատավորների ստեղծագործական ակտիվությունը, աճում է նրանց դերը ժողովրդական տնտեսության խնդիրների լուծման գործում:

Մինչև հիմա մենք անդրադարձանք հիշյալ խնդրի արտադրատեխնիկական կողմին: Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում նաև հարցի սոցիալ-քաղաքական կողմը: Անկասկած է, որ աշխատավոր մասսաների ստեղծագործական ունակությունների համակողմանի զարգացման լայն հնարավորություններ ստեղծում է միայն սոցիալիստական հասարակարգը:

Սակայն դա չի նշանակում, թե կապիտալիստական երկրներում գիտատեխնիկական առաջադիմության հարցերը սառեցվել և դրվել են կաղապարի մեջ: Տնտեսական ճակատում մրցությունը երկու հակադիր սիստեմների միջև եղել և մնում է այդ հասարակարգերի զարգացման կարևոր չափանիշներից մեկը: Կապիտալիստական աշխարհում նույնպես եղել է և կա տեխնիկական առաջընթաց, սակայն խոսքն այստեղ վերաբերում է տեխնիկական նվաճումների օգտագործմանը ընդհանրապես և աշխատավորության մասնակցությանը այդ նվաճումներին՝ մասնավորապես:

Բազմաթիվ են այն անհերքելի փաստերը, որոնք աներկբայորեն հաստատում են, որ դարեր շարունակ կապիտալիզմը աշխատավորության լայն մասսաներին դատապարտել է ոգիության ու խավարի, նրանց ամեն կերպ մեկուսացնելով կուլտուր-տեխնիկական նվաճումներին հաղորդակցվելուց: Իսկ ի՞նչ նպատակ են հետապնդել ու հետապնդում այդ մտայնությունները: Տիրապետող ամեն մի դասակարգի գոյությունը և նրա ապագան կախված է այն հիմքից, որի վրա նա կառուցել է իր տնտեսական ու քաղաքական կյանքը: Այդ հիմքը արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն է:

Ուստի և՛ ճնշողներից, և՛ ճնշվողներից որևէ մեկի օգտին քաղաքական հանգամանքների զարգացումը հիմնովին կախված է արտադրության միջոցների նկատմամբ նրանց գրաված դիրքից: Կապիտալիստական կառավարող շրջանները ջանացել և ջանում են, մի կողմից, առաջ մղել տեխնիկական առաջընթացը՝ իրենց քաղաքական և տնտեսական տիրապետությունը կայունացնելու համար, անկախ նրանից, թե այդ առաջընթացը որքանով է համընկնում հիմնական արտադրող

ուժի շահերին ու ինչ չափով է հեշտացնում նրա աշխատանքը, իսկ, մյուս կողմից, բանվորին դարձնել տեխնիկական առաջընթացի մեխանիկական կրողը։ Գամելով աշխատավորուհյան ինքնուրույն նախաձեռնությունը, նրանք ցանկանում են կասեցնել բանվոր դասակարգի քաղաքական հասունացումը։ Իսկ մի բան պարզ է, որ պրոլետարիատի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը և ստեղծագործական նախաձեռնության աճը, անշուշտ, նրան դարձնում են պայքարող, կայուն համոզմունքների տեր և հավատ ներշնչում սեփական ուժերի նկատմամբ։

Արդյո՞ք միայն տիրող դասակարգի շահերն էին, որ հակադրվում էին բանվոր դասակարգի նախաձեռնությանը, թե՞ այդ դասակարգն էլ իր հերթին նույնպես արտադրական նախաձեռնության շահագրգռվածություն հանդես չէր բերում։ Այստեղ անկասկած որոշ դեր է կատարել հենց իրենց՝ բանվորների շահագրգռվածության բացակայությունը։

Դեռևս իր ժամանակին Կ. Մարքսն ասել է, որ բուրժուական հասարակարգում բանվորը «Չի համարում աշխատանքն իր կյանքի մի մասը, նրա սեփական կյանքն սկսվում է աշխատանքից հետո»[122]։

Մասնավոր սեփականության բուրժուական հարաբերությունները բանվոր դասակարգի ինքնուրույն ստեղծագործական նախաձեռնությունը կաշկանդում են մեկ այլ առումով ևս։ Դա վաղվա օրվա նկատմամբ սպասվելիք սարսափների ազդեցությունն է։ Բանն այն է, որ արտադրության նորացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը հանգեցնում էին զբաղվածների թվի կրճատմանը, աշխատուժ ապրանքի արժեքի էժանացմանը, ապրանքների լճացմանը, որոնց հետևում էր այդ հասարակարգի օրգանական հիվանդությունների՝ գործազրկության, տնտեսական ճգնաժամի և այլ ցնցումների երևան գալը։ Այլ խոսքով՝ բանվորի անձնական նյութական շահագրգռվածությունը չի զուգակցվում անձնական բարոյական շահագրգռվածության հետ։ Ամփոփենք՝ սոցիալիստական արտադրության տեխնոլոգիայի անընդմեջ կատարելագործումը աշխատողներից պահանջում էր մշտապես բարձրացնել իրենց պրոֆեսիոնալ-տեխնիկական գիտելիքները։ Այդ բարդ ու դժվարին խնդիրը հաջողությամբ կենսագործվում էր սոցիալիստական հասարակարգի պայմաններում։ Արտադրության տեխնիկական առաջընթացը խթանելով բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացմանը, միաժամանակ բարդ խնդիրներ էր դնում նրա առաջ, որոնց լուծման ընթացքում դրսևորվեցին բանվորների ստեղծագործական ակտիվության և սեփական նախաձեռնության բազմաթիվ ձևեր։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՔԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

1. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական Միության և սոցիալիստական ընկերակցության մյուս երկրների պրակտիկ փորձը հաստատել է մարքս-լենինյան ուսմունքի ճշմարտացիությունը այն մասին, որ նոր, սոցիալիստական հասարակական-տնտեսական հարաբերությունների ստեղծման ու ղարգացման ամբողջ ընթացքում աշխատավորների մյուս հասարակական խմբերի՝ գյուղացիության և մտավորականության համեմատությամբ, բանվոր դասակարգը եղել և մնում է երկրի հասարակական-քաղաքական կյանքի առաջատար ուժը։

Մեր կյանքի բոլոր բնագավառներում բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվությունը անխզելիորեն կապված է նրա առաջատար չոկատի՝ կոմունիստական կուսակցության ղեկավար դերի անընդհատ բարձրացման հետ։

Մարքս-լենինյան գաղափարներով զինված կոմունիստական կուսակցությունը մեր երկրի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը հասցրեց պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմանը։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման շնորհիվ էապես փոխվեց կուսակցության դրությունն ու նրա գործունեության բնույթը։ Նա դարձավ կառավարող կուսակցություն։ Կուսակցության առջև դրվեցին նոր խնդիրներ՝ սովետական պետության կառուցումն ու ամրապնդումը, հասարակության վերակառուցումը սոցիալիստական սկզբունքով։

Սովետական ժողովրդի անձնվեր աշխատանքով երկու տասնամյակի ընթացքում (1917—1937 թթ.) ՍՍՀՄ-ում հիմնականում կառուց-

վեց սոցիալիստական հասարակարգ։ Սովետական ժողովուրդը և նրա առաջատար ուժը կազմող բանվոր դասակարգը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հաջողությամբ իրագործելով անցման ժամանակաշրջանի հիմնական խնդիրները, ձեռնամուխ եղան սոցիալիստական հասարակարգի վերջնական կառուցմանը։

Սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում էլ ավելի աճեց ու ամրապնդվեց կուսակցության դերը կոմունիստական հասարակարգի կառուցումը ղեկավարելու գործում։ Պատմական տվյալ ժամանակաշրջանում Սովետական Միության կոմունիստական կուսակցության դերի աճը օբյեկտիվ օրինաչափություն էր, որը պայմանավորված էր սոցիալիստական շինարարության նախընթաց զարգացումով։ Անցման ժամանակաշրջանում սովետական ժողովրդի հայրենանվեր մեծագործությունների շնորհիվ երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում կատարվել էին արմատական տեղաշարժեր, վերացվել էր արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, լիկվիդացվել էին շահագործողական դասակարգերը, տնտեսության բոլոր ճյուղերում տիրապետող էին դարձել սոցիալիստական արտադրական հարաբերությունները։ Փոխվեց հասարակության սոցիալական կառուցվածքը։ ՍՍՀՄ-ում մնացին երկու դաշնակից դասակարգեր՝ բանվոր դասակարգը և կոլտնտեսային գյուղացիությունը։

Դասակարգային վերափոխումների հետ մեկտեղ փոխվեց նաև ՍՍՀՄ ժողովուրդների նկարագիրը։ Ստեղծվեց սովետական հասարակության գաղափարական, բարոյական ու քաղաքական միասնություն, որը զորված էր բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի շահերի միասնությամբ և նպատակների ընդհանրությամբ։ Սովետական հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում և դասակարգային կառուցվածքում առաջացած արմատական տեղաշարժերը իրենց վճռական ազդեցությունն ունեցան (դրական իմաստով) սոցիալիստական հասարակության ղեկավար ուժի՝ կոմունիստական կուսակցության զարգացման վրա, ընդլայնեցին նրա աճի սոցիալական բազան, պայմաններ ստեղծեցին, որ նա դառնա համաժողովրդական կուսակցություն, համընդհանուր քաղաքական առաջնորդ։

ՍՍՀՄ սահմանադրությունը (1936 թ.) օրենսդրաբար վավերացնելով Սովետական Միության կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունները, արձանագրեց, որ սոցիալիզմի հաղթանակը դրական ազդեցություն է ունեցել կուսակցության զարգացման վրա, ըՙդլայնել և խորացրել է նրա կապը ժողովրդական մասսաների հետ. «... բանվոր

դասակարգի շարքերից և աշխատավորների մյուս խավերից,— ասված է վերոհիշյալ սահմանադրության մեջ,— առավել ակտիվ ու գիտակից քաղաքացիները համախմբվում են համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ...»[1]

Սոցիալիստական դեմոկրատիայի զարգացումը և կուսակցության սոցիալիստական բազայի ընդլայնումը նշանակում էին նոր շրջադարձ երկրի քաղաքական կյանքում։ Ընդլայնվեցին սովետական հասարակության բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի քաղաքական իրավունքները։

Այդ ամենի շնորհիվ ընդլայնվեց կուսակցության սոցիալական բազան, ընդգրկելով աշխատավորական բոլոր դասակարգերին ու սոցիալական խմբերին։ Դրա հետևանքով, ինչպես Միության մեջ ամբողջությամբ, այնպես էլ Հայաստանում արագորեն աճեց կոմունիստների թիվը։ Եթե 1937 թ. Սովետական Հայաստանում կոմունիստների թիվը հասնում էր 19235 մարդու, ապա 1940 թ. ավելացավ 13545-ով և կազմեց 32780 մարդ[2]։ Կուսակցության շարքերի աճը ի հաշիվ աշխատավորական բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի, հավաստում էր, որ անցման ժամանակաշրջանի վերջում և դրան հաջորդող տարիներին ավելի էր բարձրացել սովետական մարդկանց քաղաքական հասունության մակարդակը, տիրապետող էր դարձել մարք-լենինյան գաղափարախոսությունը, մեծացել էր կուսակցության ազդեցությունն ու հեղինակությունը, ամրապնդվել ու անսասան էր դարձել նրա կապը ժողովրդական լայն մասսաների հետ։ Արդեն նշված ժամանակաշրջանում բանվոր դասակարգի կուսակցությունը սկսեց վերածվել համաժողովրդական կուսակցության և դարձավ ամբողջ ժողովրդի շահերի ու կամքի արտահայտիչը։ 1930-ական թվականների երկրորդ կեսից կոմունիստական կուսակցությունը աստիճանաբար ձեռք բերելով համաժողովրդական բնույթ, չէր կորցրել իր դասակարգային, բանվորական էությունը։ Ընդհակառակը, հասարակության առաջընթացին համապատասխան, ընդլայնվում էր կուսակցության սոցիալական բազան, ավելի էր ուժեղանում նրա դասակարգային բնույթը։ Տնտեսական և քաղաքական դրությունը բանվոր դասակարգին դարձրել են կոմունիստական կուսակցության հիմնական սոցիալական բազան։ Կուսակցության շարքերի որակի բարձրացման համար մղվող պայքարը, նրանում բանվոր դասակարգի միջուկի ամրապնդումը եղել և մնում է Սովետական Միության կոմունիստական կուսակցության ուշադրության կենտրոնում։ Կուսակցությունը այդ գիծը իրականացրել և հետևողա-

կանորեն իրականացնում է մեր հասարակության զարգացման բոլոր փուլերում։ Այդ են հավաստում կուսակցության սոցիալական կազմի փոփոխությունների տվյալները։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ինչպես ՍՍՀՄ-ում ամբողջությամբ, այնպես էլ Սովետական Հայաստանում զգալիորեն աճել է կոմունիստական կուսակցության անդամների թիվը։ 1938 թ. համեմատությամբ Հայաստանի կոմկուսը աճել էր 61530 մարդով, 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ իր շարքերում ունենալով 80350 անդամ-թեկնածու[3]։ Կուսակցության աճի համար սոցիալական մեծ աղբյուր էր բանվորությունը։ 1938 թ. կուսակցության մեջ բանվորներին (սոցիալական դրությամբ) բաժին էր ընկնում 57,0%-ը (10721 կոմունիստ), 1946 թ.՝ 25,5 (11576 կոմունիստ)։ 1950 թ.՝ 24,3 (14630 կոմունիստ), 1958 թ.՝ 24,8 (18459 կոմունիստ), իսկ 1960 թ.՝ 25,3%-ը (20308 կոմունիստ)[4]։ Կուսակցության սոցիալական կազմի փոփոխությունների հիմնական միտումն այն էր, որ նրանում շարունակաբար (բացի պատերազմի տարիներից, երբ կուսակցության շարքերը նվազեցին մոտ 2900 կոմունիստով)[5] աճել է բանվորների թիվը։ 1938—1960 թթ. կուսակցության մեջ նրանց քանակը ավելացել է 9587 մարդով։ Մյուսը, 1938 թ. համեմատությամբ հաջորդ տարիներին կուսակցության մեջ բանվորները թեև բացարձակ թվով աճել են, սակայն տոկոսային արտահայտությամբ նվազել են։ Նկատենք ուշագրավ մի երևույթ ևս. 1950-ական թվականների վերջերից կոմունիստական կուսակցության կազմում դիտվել են բանվորների թե՛ բացարձակ և թե՛ տոկոսային աճ։ Փորձենք բացատրել նշված երևույթների պատճառները։ Կոմունիստական կուսակցության մեջ բանվորների (սոցիալական դրությամբ) բացարձակ թվով սիստեմատիկ աճը պայմանավորված էր կուսակցության բնույթով։ Ինչպես արդեն նշել ենք, նա իր դասակարգային էությամբ և խնդիրներով եղել ու մնում է բանվոր դասակարգի կուսակցություն։ Կոմունիստական կուսակցության՝ որպես բանվոր դասակարգի գիտակցականության բարձրագույն արտահայտության, քաղաքական և բարոյական հեղինակությունը, հասարակական կյանքում նրա ղեկավար դերի բարձրացումը աճում է նրա մեջ բանվոր դասակարգի թվի ավելացման, ինչպես նաև այդ դասակարգի համակողմանի զարգացման հետ համատեղ։

1938 թ. հաջորդող տարիներին (մինչև 1950-ական թվականների վերջերը) կուսակցության կազմում սոցիալական դրությամբ բանվորների տոկոսային արտահայտության նվազումը կապված էր երկրի

տնտեսական և սոցիալ-դասակարգային կառուցվածքի փոփոխությունների հետ։ Ինչպես արդեն ասվել է կոմունիստական կուսակցությունը պահպանելով իր դասակարգային (բանվորական) բնույթը, սկսեց աստիճանաբար վերաճել համաժողովրդական կուսակցության, դարձավ ամբողջ ժողովրդի շահերի ու կամքի արտահայտիչը։ Ընդլայնվեց նրա աճի սոցիալական բազան։ Համկ(բ)Պ XVIII համագումարը (1939 թ.) բանաձև ընդունեց Համկ(բ)Պ կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին և հաստատեց կանոնադրություն՝ նոր խմբագրությամբ։ Սահմանվեցին կուսակցության մեջ ընդունելության միասնական պայմաններ և թեկնածուական ստաժ, (մինչ այդ կուսակցության մեջ ընդունվելու համար սահմանված էին չորս կատեգորիաներ և տարբեր թեկնածուական ստաժ) անկախ դասակարգային պատկանելությունից[6]։ Սոցիալիզմի հաղթանակը, ներկուսակցական դեմոկրատիայի զարգացումը և ներկուսակցական աշխատանքի բարելավումն ու կատարելագործումը նշանավորվեցին բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության լավագույն ներկայացուցիչների հոսքով դեպի կուսակցություն։

Սովետական դեմոկրատիայի զարգացումը կուսակցության կազմում ժամանակավորապես ընդլայնեց գյուղացիության, մտավորականության և սոցիալական մյուս խմբերի սոցիալական բազան։ 1938 թ. Հայաստանի կոմունիստական կուսակցության մեջ գյուղացիությանը բաժին էր ընկնում 35,0%-ը (6598 կոմունիստ), 1946 թ.՝ 34,3%-ը (15549 կոմունիստ), 1950 թ.՝ 32,8%-ը (19803 կոմունիստ), իսկ 1960 թ.՝ 30,1%-ը (24181 կոմունիստ)։ Նույն տարիներին մտավորականության և սոցիալական մյուս խմբերի բաժինը միասին կուսակցության մեջ համապատասխանաբար կազմել է՝ 8,0% (1501 կոմունիստ), 40,2% (18254 կոմունիստ), 42,9% (25906 կոմունիստ), 44,6% (35861 կոմունիստ)[7]։ Ինչով էր պայմանավորված նկատվող երևույթը։

Սոցիալիստական վերափոխման հենքարկված գյուղացիությունը ինչպես Միության մեջ ամբողջությամբ, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում կազմում էր բնակչության մեծամասնությունը։ 1939 թ. հանրապետության սոցիալ-դասակարգային կազմում գյուղացիությանը բաժին էր ընկնում 64,1%-ը[8]։ Ահա թե ինչու կուսակցության մեջ ընդունվելու միասնական պայմանների դեպքում նրա կազմում արագորեն աճել է գյուղացիության թիվը։

Ինչ վերաբերում է կուսակցության կազմում մտավորականության

հետ միասին սոցիալական մյուս խմբերի աճին, ապա պետք է նշել, որ ժողովրդական մտավորականությունը, որը ձևավորվել էր անցման ժամանակաշրջանում և սերտորեն կապված էր բանվոր դասակարգի ու կոլտնտեսային գյուղացիության հետ, իր հաստատուն տեղը գրավեց սոցիալիստական հասարակարգի սոցիալական կառուցվածքում և դարձավ նրա բաղադրամասերից մեկը։ Նկատի ունենալով այդ ամենը, կուսակցության XVIII համագումարը սովետական մտավորականության նկատմամբ սահմանեց նոր քաղաքականություն։ Համագումարը կուսակցական կազմակերպություններին պարտավորեցրեց զգայուն և ուշադիր վերաբերվել մտավորականությանը, վճռականապես վերջ տալ նրա նկատմամբ դեռևս գոյություն ունեցող անվստահությանը։ Սովետական մտավորականությունը,— ասված է համագումարի բանաձևում,— արժանի է կուսակցության և պետության լիակատար վստահությանն ու մշտական ուշադրությանը[9]։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կուսակցության սոցիալական կազմում կատարված տեղաշարժերը հօգուտ գյուղացիության թվաքանակի ավելացման, գլխավորապես վերաբերում են նախապատերազմյան տարիներին։ Այսպես, եթե 1938 թ. հանրապետության կոմկուսի կազմում բանվորներին (ըստ սոցիալական դրության) բաժին էր ընկնում 57,0%-ը, ապա 1939 թ.՝ 50,0, իսկ 1940 թ.՝ 39,3%-ը։ Նույն տարիներին գյուղացիությունը համապատասխանաբար կազմում էր՝ 35,0, 37,7 և 39,0%-ը, իսկ մտավորականությունը սոցիալական մյուս խմբերի հետ միասին՝ 8,0, 12,3 և 21,7%-ը[10]։

Ինչպես կարելի է նկատել 1938—1940 թթ. կուսակցության մեջ բանվորների բաժինը տոկոսային արտահայտությամբ նվազել էր մոտ 18%-ով, իսկ գյուղացիությանը և մտավորականությանը մյուս սոցիալական խմբերի հետ միասին, համապատասխանաբար աճել էր 4 և 13,7%-ով։

Հետպատերազմյան տարիներին, մինչև 1950-ական թվականների վերջը կուսակցության սոցիալական կազմում տեղի ունեցած փոփոխությունների բնորոշ գիծը մտավորականության տեսակարար կշռի շարունակաբար մեծացումն էր։ Կուսակցության ընդհանուր աճի մեջ ավելացել էր նրա թե՛ բացարձակ թիվը, թե՛ տեսակարար կշիռը։ Կուսակցության մեջ մտավորականության և սոցիալական մյուս խմբերի բաժինը 1946 թ. համեմատությամբ 1960 թ. աճել է 4,4%-ով[11]։

Հարկ է նշել, որ այդ երևույթը նկատելի է նաև հաջորդ տարիներին։

Որո՞նք են կուսակցության մեջ սոցիալիստական մտավորականության՝ սովետական հասարակության հիմնական բաղադրամասերից մեկի թվաքանակի ավելացման հիմնական պատճառները։ Հետպատերազմյան տարիներին հանրապետության ժողովրդական տնտեսության վերակառուցման ու ընդլայնման, առաջատար նոր ճյուղերի գործարկման, գիտության և տեխնիկայի զարգացման հետ կապված, ՀՍՍՀ մտավորականությունը կրել է խոր փոփոխություններ։ Ի տարբերություն կոլտնտեսային գյուղացիության, աճել է նրա տեսակարար կշիռը Հայաստանի բնակչության սոցիալ-դասակարգային կազմում. 1939 թ. 14,6%-ից հաջորդ տարիներին ավելացել և 1959 թ. հասել է 22,4%-ի[12]։ Հատկանշական է, որ առավել արագ է աճել արտադրական մտավորականությունը, որի թիվը նշված տարիներին ավելացել է 5 անգամ[13]։

Կուսակցության սոցիալական կազմում մտավորականության տեսակարար կշռի մեծանալը վկայում է, որ երկրի քաղաքական կյանքում և կուսակցության գործունեության մեջ աճել էր նրա, մասնավորապես տեխնիկական մտավորականության դերը, որի ներկայացուցիչները մեծ թիվ էին կազմում ղեկավար մարմիններում։ Այստեղից բնականաբար հարց է առաջանում՝ կուսակցության մեջ սոցիալական պրոլետարական մտավորականության թվաքանակի շարունակաբար ավելանալը արդյոք չի խանգարում բանվոր դասակարգին՝ կուսակցության միջոցով իրականացնելու իր առաջատար դերը։ Կուսակցության զարգացման փորձը հավաստում է, որ դրանից այն ավելի է ուժեղանում։ Որոշակի ու մեծ տեղ գրավելով սովետական հասարակության ղեկավարման մեջ, տեխնիկական մտավորականությունն իր կոչումն է համարում պայքարել բանվոր դասակարգի պատմական առաքելության իրականացման՝ կոմունիզմի կառուցման համար։ Այդ նպատակով նա ոչ թե անկախություն է ձեռք բերում կոմկուսի գաղափարախոսության՝ մարքսիզմ-լենինիզմի նկատմամբ, այլ տիրապետում է այն և նրանով ղեկավարվում իր գործունեության մեջ[14]։

Սոցիալիստական հասարակության զարգացման 1950-ական թվականների վերջին և նրան հաջորդող տարիներին կուսակցության մեջ սոցիալական պրոլետարական բանվորների բացարձակ և հարաբերական արտահայտության բարձրացումը պայմանավորված էր հետևյալ գործոններով։

1) Բնակչության սոցիալ-դասակարգային կազմում էլ ավելի էր մեծացել բանվոր դասակարգի տեսակարար կշիռը։

2) Բարձրացել էր բանվորական ընտանիքների աշխատունակ անդամների կրթական և կուլտուր-տեխնիկական մակարդակը: Սոցիալական դրությամբ բանվորական ընտանիքների աշխատունակ բնակչության որոշ մասը համալրելով մտավորականության շարքերը և նրա կազմից մտնելով կուսակցության մեջ, ուղղակիորեն նպաստում էր կուսակցության մեջ բնակչության այդ կատեգորիայի թվաքանակի ավելացմանը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1938—1960 թթ. կոմունիստական կուսակցության մեջ բանվոր դասակարգը աճել է նաև ըստ դբաղմունքի: Թեև առանձին տարիների տեղի է ունեցել նվազում, այնուհանդերձ պահպանվել է նրա աճի դինամիկան: Եթե 1938 թ. կուսակցության մեջ ընդունվածների կազմում այդ կատեգորիայի բանվորներին բաժին է ընկել 22,1, իսկ կոլտնտեսային գյուղացիությանը՝ 39,5%-ը, ապա 1960 թ. այն համապատասխանաբար կազմել է 33,4 և 22,9%[15]:

Ինչպես կարելի է նկատել, 1938 թ. համեմատությամբ 1960 թ. կուսակցության մեջ բանվոր դասակարգի բաժինը աճել է 11,3%-ով, իսկ գյուղացիությանը՝ կրճատվել է 16,6%-ով:

Վերը բերված տվյալները ուղղակիորեն վկայում են, որ մշտապես ընդլայնվել և ամրապնդվել է կուսակցության կապը հասարակության առաջատար դասակարգի հետ, աճել է նրա ազդեցությունն ու հեղինակությունը ժողովրդի վրա: Անժխտելի այդ փաստը հարկադրված են ընդունել նաև դասակարգային մեր հակառակորդները: Օրինակ, նրանցից Տ. Բիրգին գրում է, որ սովետական կոմունիստների շարքերում տեղի ունեցած դրական տեղաշարժերը կուսակցությանը ապահովում են հաջողությամբ իրականացնելու իր ֆունկցիաները[16]:

ՍՄԿԿ-ն սոցիալիստական—կոմունիստական շինարարության բոլոր փուլերում հետևողականորեն ամրապնդելով իր բանվորական միջուկը, արել և անում է ամեն ինչ, որպեսզի կուսակցության մեջ ավելի շատ բանվորներ մտնեն արտադրական ոլորտից, առաջին հերթին արդյունաբերությունից: ՍՄԿԿ-ն այդ քաղաքականությունը դիտում է որպես կուսակցության շինարարության տեսության ու պրակտիկայի սկզբունքային հարցերից մեկը: Նախ, որպես կարևոր հանգամանք, պետք է նշել այն, որ արտադրությունը այն ոլորտն է, ուր տեղի է ունենում մեր կյանքի և մեր կեցության ստեղծարար աշխատանքի անմիջական պրոցեսը: Դրանում մեծ է կոմունիստների դերը: Հետևաբար, կուսակցության հետագա ամրապնդման և կուսակցական կազմակերպություն-

ների գործունեության մակարդակի բարձրացման խնդիրը հրամայաբար պահանջել ու պահանջում է կուսակցության կազմը համալրել առաջին հերթին արտադրության ոլորտում զբաղված բանվորներով։ Ինչ վերաբերում է կուսակցության շարքերի համալրման գործում արդյունաբերական բանվորության ունեցած առաջնությանը, ապա մենք հակված ենք հետևյալին։ Դա հասարակական արտադրության առանցքը կազմող արդյունաբերության մեջ զբաղված բանվորների պրոֆեսիոնալ և կուլտուր-տեխնիկական բարձր մակարդակի արդյունք էր, որը պայմանավորված էր ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի համեմատությամբ արդյունաբերության աշխատանքների մեքենայացման բարձր մակարդակով և գիտության ու արտադրության ամուր կապով։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե հասարակության առաջատար դասակարգի վերևում նշված հատկանիշները ուղղակիորեն կապ չունեն առաջադրված հարցի հետ։ Սակայն, իրականում այդ այդպես չէ։ Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, որքան բարձր է բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական և հանրակրթական մակարդակը, այնքան բարձր է նրա հասարակական-քաղաքական ակտիվությունը[17]։ Կուսակցության սոցիալական կազմի որակական տեղաշարժերի, նրա անդամների սոցիալ-քաղաքական ու կուլտուր-տեխնիկական անընդմեջ կերպարանափոխման հետ միասին աճում և ամրապնդվում է կոմունիստական կուսակցությունը։

Հրապարակի վրա եղած վիճակագրական ժողովածուներում, արխիվային փաստաթղթերում, ինչպես նաև հրատարակված առանձին աշխատություններում (որոնք վերաբերում են ուսումնասիրվող ժամանակաշրջանին) եղած տվյալները ցույց են տալիս արտադրական և ոչ արտադրական ոլորտներում, ինչպես նաև ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերում զբաղված կոմունիստների ընդհանուր թիվը, դրանցից չի առանձնացված բանվոր դասակարգի բաժինը։

Այսպես, «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը թվերում և փաստաթղթերում 1920—1980 թթ. ժողովածուում» ցույց է տրված, որ սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ զբաղված կոմունիստների թիվը 1938 թ. համեմատությամբ ավելացել է 54862 մարդով և 1960 թ. կազմել է 73682[18], որից 48334-ը կամ 65,5%-ը ընդգրկված էր արտադրական, իսկ 25348-ը կամ 34,4%-ը ոչ արտադրական ոլորտում[19]։

Կոմունիստների թիվը ավելի արագ է աճել արդյունաբերության և

շինարարության մեջ, տրանսպորտում և կապում։ Արդեն 1960 թ. այդ ճյուղերում զբաղված էր 21360 կոմունիստ՝ 1938 թ. 4946-ի դիմաց[20]։

Ընդլայնելով աճի հնարավորությունները և ամրապնդելով բանվորական միջուկը, կուսակցությունը մեծ կարևորություն էր տալիս նաև իր որակական կազմի բարելավմանը։ Խոսքը վերաբերում է կուսակցության անդամության հարցին՝ նույնիսկ բանվոր դասակարգի ներկայացուցիչների ընդունելությանը։ Կուսակցության մեջ յուրաքանչյուր ընդունվողին ներկայացվող բարձր պահանջները բխում էին այն հսկայական պատասխանատվությունից, որ կուսակցությունն ուներ սովետական ժողովրդի հանդեպ։ Վ. Ի. Լենինը միշտ ցուցում էր տալիս, որ «...Կուսակցության անդամի բարձր կոչմանը արժանի է միայն նա, ով մասսաների մեջ կատարվող ամբողջ աշխատանքը վարում է իսկապես կուսակցական այն որոշումների ոգով, որոնք կըշռադատվել և ընդունվել են աճող հեղափոխության տեսակետից...»[21]։ Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի՝ կուսակցության մեջ կատարվող ընդունելության նկատմամբ պահանջկոտությունը բարձրացնելու վերաբերյալ որոշումներով[22], Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն բազմիցս քննարկել է հանրապետության կուսակցական կազմակերպությունների շարքերի քանակական ու որակական աճի հարցը և ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ կուսակցության որակական կազմը բարելավելու համար։ Այսպես, օրինակ, քննարկելով Համկ(բ)Պ Կենտկոմի 1946 թ. հունիսի 26-ի որոշումը «Կուսակցության աճման և Համկ(բ)Պ-ի շարքերը նոր ընդունվածների մեջ կուսակցական-կազմակերպական ու կուսակցական-քաղաքական աշխատանքն ուժեղացնելու միջոցառումների մասին» որոշումը, Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի պլենումը (1946 թ. սեպտեմբերի 12) վերհանեց հանրապետության կուսակցական կազմակերպությունների աշխատանքում տեղ գտած թերությունները Համկ(բ)Պ շարքերը ընդունելու գործը ղեկավարելու բնագավառում և մշակեց միջոցառումներ ու պարտավորեցրեց կուսակցական կազմակերպություններին՝ անշեղորեն իրականացնել Համկ(բ)Պ Կենտկոմի վերոհիշյալ որոշման պահանջները[23]։ Կուսակցության որակական կազմը բարելավելու հարցերին են անդրադարձել նաև հանրապետության կոմկուսի մի շարք պլենումներ[24]։

Կուսակցության մեջ նոր ընդունելության կազմակերպման և ընդունվողների գաղափարաքաղաքական դաստիարակման գործում հրսկայական դեր ունեն սկզբնական կուսակցական կազմակերպություն-

ները: Կուսակցության հետագա ամրապնդման, նրա որակական կազմի բարելավման հրամայական պահանջներից ելնելով՝ ՍՄԿԿ Կենտկոմը մշտապես հսկայական կարևորություն է տվել սկզբնական կուսակցական կազմակերպությունների քաղաքական և կազմակերպական աշխատանքի մակարդակը ամեն կերպ բարձրացնելու խնդրին: Ուսումնասիրվող տարիներին Հայաստանում զգալիորեն ավելացել է սկզբնական կուսակցական կազմակերպությունների թիվը և բարելավվել նրանց որակական կազմը: Արդեն 1960 թ. Հայկական ՍՍՀ-ում հաշվվում էր 3464 կուսակցական կազմակերպություն, 1938 թ. 1344-ի դիմաց[25]: Ավելի արագ են աճել արդյունաբերական ձեռնարկությունների կուսակցական կազմակերպությունները: Եթե 1938 թ. հիշյալ բնագավառում կար 100, 1950 թ.՝ 211, ապա 1960 թ.՝ 437 սկզբնական կուսակցական կազմակերպություններ[26]: Տվյալների համադրումը ցույց է տալիս, որ նշված տարիներին ՀՍՍՀ-ում բոլոր սկզբնական կազմակերպությունների թիվը ավելացել է 2,5, իսկ արդյունաբերական ձեռնարկություններում՝ ավելի քան 4 անգամ, իսկ տրանսպորտի ձեռնարկություններինը և շինարարական կազմակերպություններինը համապատասխանաբար ավելացել են 2,4 և 3 անգամ[27]:

Արդյունաբերական ձեռնարկություններում սկզբնական կուսակցական կազմակերպությունների արագ աճը սերտորեն կապված էր հանրապետության բազմաճյուղ արդյունաբերության համակողմանի զարգացման և արտադրության գործունեությունը վերահսկելու նրանց դերի էլ ավելի բարձրացման հետ: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ գնալով մեծանում էր բանվոր դասակարգի տեսակարար կշիռը նաև կուսակցության ղեկավար մարմիններում:

Այսպես, օրինակ, 1958 թ. Հանրապետությունում սկզբնական կուսակցական կազմակերպությունների 3345 քարտուղարներից մոտավորապես 1000-ը կամ 29,8%-ը բանվորներ ու կոլտնտեսականներ էին, որոնք անմիջականորեն աշխատում էին արտադրության մեջ, իսկ 1960 թ. այն կազմում էր արդեն ավելի քան 55%-ը[28]:

Քննարկվող ժամանակաշրջանում սովետական հասարակության, մասնավորապես բանվոր դասակարգի գաղափարաքաղաքական և կուլտուրական կյանքի բնագավառներում կատարված վճռական տեղաշարժերը օբյեկտիվ պայմաններ ստեղծեցին կուսակցության որակական կազմի հետագա բարելավման համար: Բարձրացավ նրա անդամների կրթական մակարդակը: 1938 թ. համեմատությամբ 1960 թ. հանրապետության կոմունիստական կուսակցության մեջ բարձրագույն և

միջնակարգ (լրիվ և ոչ լրիվ) կրթությամբ կոմունիստների թիվը 4998-ից հասել էր 59875-ի, ավելանալով 54877-ով[29]: Ընդ որում, նշված ժամանակաշրջանում բարձրագույն կրթություն ունեցող կոմունիստների թիվը աճել է մոտ 22, թերի բարձրագույններինը՝ 8,6, միջնակարգ կրթություն ունեցողներինը՝ 12,4, իսկ թերի միջնակարգներինը՝ 8,9 անգամ[30]:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում կուսակցության սեռային կազմի փոփոխությունների ուսումնասիրությունը: Հայաստանում նույնպես կուսակցության քանակական աճը ուղեկցվել է նրա կազմում կանանց տեսակարար կշռի անընդհատ ավելացումով: Արդեն 1960 թ. հանրապետության կոմկուսի կազմում կանանց բաժինն էր ընկնում 19,9%-ը, 1938 թ. 9,5%-ի դիմաց[31]: Անհրաժեշտ է ավելի հանգամանորեն կանգ առնել նշված միտումի վրա, որքանով որ տվյալ երևույթն ունի սոցիալ-քաղաքական նշանակություն: Նախ, կուսակցության մեջ բնակչության հիշյալ խմբի ներկայացուցիչների աճի բարձր տեմպերն ավելի են հեշտացնում կանանց սոցիալական զարգացումը: Անժխտելի փաստ է, որ կուսակցական կանայք իրենց սոցիալ-հոգեբանական հատկանիշներով ավելի մոտ են կանգնած կին մասսաներին: Այստեղ խոսքը այն մասին է, որ կոմունիստական կուսակցությունը կին կուսակցականների միջոցով ևս ազդում է անկուսակցական կին մասսաների վրա և բնակչության այդ խավերին լայնորեն ընդգրկում է ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության մեջ:

Արտադրության մեջ և հասարակական-քաղաքական կյանքում կանանց մասսայական ընդգրկումը կոմունիստական կուսակցության կարևորագույն նվաճումներից է, որը պատկերում է, թե ինչպես էր իրականացվում մեր կյանքի բոլոր բնագավառներում կանանց ակտիվորեն ներգրավելու վերաբերյալ Վ. Ի. Լենինի այն խոսքերը, որ «Մեզ հարկավոր է..., որ կին բանվորուհիները ավելի ու ավելի շատ մասնակցեն հասարակական ձեռնարկությունների կառավարմանը և պետության կառավարմանը»[32]:

Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում էական փոփոխություններ է կրել կուսակցության կազմը նաև ըստ տարիքի: ՍՄԿԿ-ի կազմում նկատելիորեն աճել է երիտասարդ կոմունիստների թիվը: Այդ երևույթը նրա որակական կազմի բարձրացման բնորոշ հատկանիշներից էր: ՀՍՍՀ-ում կուսակցության մեջ ընդունվածների 21-ից մինչև 30 տարեկան մարդկանց տեսակարար կշիռը կազմել է 1946 թ. 55,4, իսկ 1960 թ.՝ 57,4%-ը, 31-ից մինչև 40 տա-

բեկաններինը՝ համապատասխանաբար 21,4 ու 38,5%-ը, 41-ից մինչև 60 և բարձր տարիքի մարդկանցը՝ 5,4 և 2,4%-ը[33]:

Ինչպես տեսնում ենք, 1946—1960 թթ. կուսակցության մեջ ընդունվածների կեսից ավելին ուներ մինչև 40 տարեկան տարիք: Նկատենք, որ կուսակցության կազմի երիտասարդացման պրակտիկան լայնորեն կիրառվում է նաև սոցիալիզմի կատարելագործման ժամանակաշրջանում:

Կուսակցության մեջ դիտվել է մեկ այլ կարևոր օրինաչափություն, որը նույնպես վկայում է նրա կազմում նկատվող որակական տեղաշարժերի մասին: Խոսքը վերաբերում է նրա ազգային կազմի փոփոխություններին: Խոսելով մեր հասարակական-քաղաքական սիստեմի ղեկավար ուժի շարքերի համալրման մասին, անհրաժեշտ է ընդգծել, որ կուսակցական շինարարությունը իրականացվում է սովետական հասարակության բազմազգ բնույթը հաշվի առնելով: ՍՄԿԿ-ն միշտ էլ պաշտպանում է ՍՍՀՄ-ում ապրող բոլոր ազգերի առաջավոր բանվորներին միասնական կուսակցության մեջ համախմբելու գաղափարը: Որքան լայն է կուսակցության ազգային կազմը, այնքան բարձր է մասսաներին առաջնորդող կոմունիստական կուսակցության դերն ու պատասխանատվությունը: Կուսակցական շինարարության լենինյան կազմակերպական սկզբունքի հետևողական կենսագործումը, որը նպաստում է ՍՄԿԿ-ի ամրապնդմանը և նրան շաղկապում է բոլոր ազգերի և ազգությունների հետ, «վշտացնում է» բուրժուական պատմաբաններին, փիլիսոփաներին ու սոցիոլոգներին: Նրանք եռանդով փորձում են վարկաբեկել ՍՄԿԿ-ի կուսակցական շինարարության կուրսը և իրենց դիտավորություններն իրագործելու համար հայտարարում են, թե այդ կուրսը ունի «վելիկոռուսական միտում»[34]: Այդ հարցի շուրջ ծավալված պայքարում ևս կոմունիզմի հակառակորդների հարցադրումները անհիմն են: Այդ են հավաստում կուսակցության բազմազգ հիմքի շարունակաբար ընդլայնումը վկայակոչող տվյալները: Այսպես, եթե 1946 թ. ՍՄԿԿ-ի մեջ ռուսները կազմում էին բոլոր կոմունիստների 67,8 %-ը, ապա 1973 թ.՝ 60,9 %-ը: Նույն ժամանակամիջոցում ուկրաինացիներինը համապատասխանաբար եղել է՝ 12,1 և 16, բելոռուսներինը՝ 2,1 և 3,5, հայերինը՝ 1,8 և 1,5, ուզբեկներինը՝ 1,1 և 2,0, վրացիներինը՝ 2,0 և 1,7, ադրբեջանցիներինը՝ 1,0 և 1,4%-ը[35]: Ինչպես կարելի է նկատել, նշված տարիներին կուսակցության ազգային կազմում ռուսների բաժինը նվազել է, իսկ սովետական մյուս ազգերինը՝ հիմնականում աճել է: Ուշագրավ

է, որ փոքր ազգերի ներկայացուցիչների աճման միտում է դիտվել նաև միութենական ու ինքնավար հանրապետությունների կուսակցական կազմակերպություններում[36]: Այդ երևույթը օրինաչափական է: Սոցիալիստական շինարարության ամբողջ ընթացքում սովետական բոլոր ժողովուրդները սոցիալ-տնտեսական ու կուլտուրական կյանքի բնագավառներում համակողմանի առաջընթաց են ապրել՝ զարգացել են բազմազգ ժողովուրդների ազգային կադրերը, աճել է նրանց քաղաքական և հեղափոխական հասունությունը:

Հասարակության սոցիալական զարգացման պատմական տվյալ ժամանակաշրջանում կուսակցության մեջ բանվոր դասակարգի առաջատար դերը ի՞նչ ձևերով ու ուղիներով էր իրականացվում:

Հասարակության առաջատար դասակարգի սոցիալական ակտիվության դրսևորման կարևոր միջոց են կուսակցության բոլոր աստիճանի մարմինները: Բանվորները, համալրելով կոմունիստական կուսակցության շարքերը և ընտրվելով նրա ղեկավար մարմիններում՝ սկզբնական կուսակցական կազմակերպությունների բյուրոներից մինչև Կենտրոնական կոմիտե, ակտիվ մասնակցություն էին ունենում ձեռնարկությունների ղեկավարման և պետական նշանակություն ունեցող հարցերի մշակման ու քննարկման մեջ:

Կոմունիստական շինարարության վիթխարի ու բազմաբովանդակ խնդիրների լուծման գործում վճռական դեր է պատկանում սկզբնական կուսակցական կազմակերպություններին: Սկզբնական կուսակցական կազմակերպություններն օժտված են ադմինիստրացիայի գործունեությունը վերահսկելու իրավունքով: Դա վերաբերում է թե կադրային հարցերին, թե տնտեսական պլանների կատարմանը, թե մարդկանց աշխատանքի ու կենցաղի պայմանների բարելավմանը: Սկզբնական կուսակազմակերպությունների, ինչպես նաև կուսակցական խմբերի ընթացիկ ու հաշվետու ժողովները, բյուրոների նիստերը, որոնց որպես կանոն, մասնակցում է կոմունիստների ճնշող մեծամասնությունը, անցնում էին քննադատության ու ինքնաքննադատության դրծարար մթնոլորտում: Նման հետևության համար հիմք են ծառայում հետևյալ տվյալները: Եթե 1940 թ. ՀՍՍՀ կուսակցական կազմակերպությունների հաշվետու ղեկուցումների քննարկմանը մասնակցել են 16.099 կոմունիստ, ապա 1960 թ. այդպիսիների թիվը կազմել է ավելի քան 36 հազար մարդ[37]:

Հաշվետու ժողովներում բանվոր կոմունիստները ակտիվ մասնակցություն էին հանդես բերում իրենց ձեռնարկությունների առջև կանգ-

նած տնտեսական և սոցիալ-քաղաքական խնդիրների քննարկմանը։ Այսպես, օրինակ, Երևանի կահույքի ֆաբրիկայի հաշվետու ընտրական ժողովում հավաքման արտադրամասի վարպետ Փ. Զանգյանը իր ելույթում կարևորելով բանվորների արտադրական ու հասարակական-քաղաքական ակտիվության դերը տնտեսական հաջողությունների գործում, միաժամանակ խիստ քննադատության ենթարկեց ձեռնարկության կուսակցական կազմակերպությանն ու ադմինիստրացիային այն բանի համար, որ նրանք հարկ եղած չափով չէին զբաղվել բանվորների շրջանում մասսայական-քաղաքական աշխատանքով, անհրաժեշտ ուշադրություն չէին դարձրել բանվորների տեխնիկական ստեղծագործական ակտիվության բարձրացմանը[38]։

Երևանի «Ավտոդետալ» գործարանի բանվոր կոմունիստ Ժ. Բունարջյանը կազմակերպության հաշվետու ժողովում խոսեց ձեռնարկության կուսակցական կազմակերպության և ադմինիստրացիայի անհետևողական աշխատանքի մասին։ Նա խիստ քննադատեց ձեռնարկության ղեկավարությանը և կուսակցական կազմակերպությանը՝ թողարկվող արտադրանքի որակի բարձրացմանը և նրա ինքնարժեքի կրճատմանը անհրաժեշտ ուշադրություն և հետևողականություն չդրսևորելու համար[39]։

Բանվորները անմիջական մասնակցություն էին ունենում նաև կուսակցության բարձրագույն մարմնի՝ համագումարի աշխատանքներին։ Հայաստանի կոմունիստական կուսակցության XIX համագումարին (1958 թ.), որպես պատգամավորներ մասնակցում էին 113, իսկ XXI (1960 թ.) համագումարին՝ 136 բանվորներ[40]։

Կուսակցության համաժողովում բանվոր պատգամավորներն իրենց գործարար մասնակցությունն էին բերում մեր կյանքի սոցիալ-տնտեսական պրոբլեմների քննարկմանը։ Երևանի Հայէլեկտրամեքենաշինական գործարանի բանվոր Վ. Ղազարյանը ՀԿԿ XIX համագումարում (1958 թ.) ունեցած իր ելույթում նշեց հաշվետու ժամանակաշրջանում իրենց ձեռնարկության և ամբողջ Հանրապետության արդյունաբերության ձեռք բերած հաջողությունները, ինչպես նաև քննադատեց տրնտեսության ղեկավար մարմիններին, ժողտնտխորհին և պետպլանին այն բանի համար, որ նրանց չհամաձայնեցված աշխատանքի հետևանքով ֆոնդային նյութերի մատակարարումը շատ հաճախ ձգձգվել էր, որի հետևանքով ձախողվել էր մեքենաների սերիական արտադրությունը։ Բանվոր կոմունիստը արեց մի շարք գործնական առաջարկություններ և պահանջեց կարուկ միջոցներ ձեռնարկել թերությունները վե-

բացնելու համար[41]։ Երևանի «Հայքիմարդշին» տրեստի բանվոր Լ. Ղազարյանը խոսեց տրեստի և ժողտնտխորհի շինանյութերի արդյունաբերության վարչության տնտեսական ղեկավարների փոխկապակցված գործունեության բացակայության, անորակ շինանյութերի ստացման, անորակ արտադրանքի թողարկման և այլ հարցերի մասին[42]։

Այսպիսով, Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և կուսակցական կազմակերպությունները դաստիարակել էին համակողմանիորեն զարգացած կոմունիստներ, որոնք արտադրության մեջ պահպանելով իրենց ավանգարդային դերը, ակտիվորեն մասնակցում էին նաև հանրապետության կուսակցական ու հասարակական-քաղաքական կյանքին։

Առավել կարևոր ինչպիսի հետևությունների կարելի է հանգել։

Առաջին, անցման ժամանակաշրջանի վերջում երկրի տնտեսական կյանքում և բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքում առաջացած արմատական տեղաշարժերի հետևանքով ընդլայնվեց կոմունիստական կուսակցության սոցիալական բազան, այն սկսեց վերածվել համաժողովրդական կուսակցության, դարձավ ամբողջ ժողովրդի շահերի ու կամքի արտահայտիչը, իհարկե, չկորցնելով իր դասակարգային՝ բանվորական բնույթը։

Երկրորդ, կուսակցության սոցիալական կազմում տեղի ունեցած տեղաշարժերի գլխավոր միտումն այն էր, որ կուսակցության մեջ գնալով ավելանում էր բանվորների թիվը։ Կուսակցության մեջ բանվոր դասակարգի միջուկի ամրապնդման դիծը ՍՄԿԿ-ն հետևողականորեն իրականացրել և իրականացնում է սոցիալիստական-կոմունիստական շինարարության բոլոր փուլերում։

Երրորդ, մեր հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում բանվոր դասակարգն իր առաջատար դերը հիմնականում իրականացնում էր քաղաքական սիստեմի միջուկի՝ կոմունիստական կուսակցության միջոցով։

Չորրորդ, կոմունիստական կուսակցության քաղաքական և բարոյական հեղինակությունը, հասարակական կյանքում նրա ղեկավար դերի բարձրացումը աճում էր՝ նրանում բանվորների ավելացման, ինչպես նաև նրանց համակողմանի զարգացման հետ համատեղ։

Հինգերորդ, կուսակցության կազմում սոցիալիստական մտավորականության քանակական աճը ուղղակիորեն նպաստում էր հասարակական-քաղաքական կյանքում բանվոր դասակարգի առաջատար դերի էլ ավելի ամրապնդմանը։

Վեցերորդ, սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում էական որակական փոփոխություններ կրեց Հանրապետության կոմունիստական կուսակցությունը։ Կուսակցության կազմում ավելացավ կանանց թիվը և մեծացավ երիտասարդ կոմունիստների տեսակարար կշիռը։ Վերոհիշյալ որակական տեղաշարժերին զուգընթաց աճում և ամրապնդվում էր կոմունիստական կուսակցությունը։

2. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿՈՐՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏՆԵՐՈՒՄ

Բանվոր դասակարգի քաղաքական գործունեության գլխավոր ուղղությունը ժողովրդական դեպուտատների սովետներն են։

Սովետական պետության դեմոկրատական բնույթն* ամենից առաջ դրսևորվում է ժողովրդական դեպուտատների սովետների գործունեությամբ, որպես պրոլետարական պետության քաղաքական հիմք և նրա դեմոկրատական բնույթի մարմնացում, ժողովրդական իշխանության ամենաներկայացուցչական մարմին։ Տալով սովետների բնորոշ գնահատականը Վ. Ի. Լենինը նշում էր, որ նրանք պետք է ձգտեն իրենց կազմում ընդգրկել դեպուտատներ բոլոր բանվորներից, գյուղացիներից, զինվորներից և այլն, «...բոլորից, ովքեր միայն ցանկանում են համատեղ պայքարել ամբողջ աշխատավոր ժողովրդի կյանքի բարելավման համար...»[43]։ Ղեկավարվելով առաջնորդի ցուցումներով, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը սովետական հասարակության զարգացման ինչպես անցած, այնպես էլ սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանում, երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում սովետների դերը բարձրացնելու, նրանց աշխատանքի ձևերն ու մեթոդները կատարելագործելու, ինչպես

* Սովետական հասարակության զարգացման պատմական փորձը հավաստում է, որ սոցիալիստական շինարարության ընթացքում անընդմեջ զարգանում ու կատարելագործվում է սոցիալիստական դեմոկրատիան, աճում է բանվոր դասակարգի առաջատար դերը մեր կյանքի բոլոր բնագավառներում։ Վերոհիշյալ միտումները գտնվում են սերտ միասնության մեջ և փոխազդում ու փոխներգործում են միմյանց վրա։ Որքան զարգանում ու կատարելագործվում է սոցիալիստական դեմոկրատիան, այնքան ավելի ու ավելի է աճում բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվությունը և հակառակը՝ այդ դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվության աճը պետական և հասարակական գործերի կառավարման մեջ ավելի ու ավելի լայն մասսաների մասնակցության համար ստեղծում է մեծ հնարավորություններ։

նաև այդ մարմիններում աշխատավորական նորանոր խավեր ընդգրկելու նպատակով ձեռնարկել են բազում միջոցառումներ[44]։ Այդ կուրսը անշեղորեն կենսագործվում է նաև սոցիալիզմի կատարելագործման ժամանակաշրջանում։ Դա սովետական հասարակության քաղաքական սիստեմի զարգացման գլխավոր ուղղությունն է։

Ժողովրդական իշխանության ներկայացուցչական օրգանների գործունեության մեծ մասշտաբները և արդյունավետությունը գլխավորապես կախված է նրանից, թե այդ մարմիններում ինչպիսի տեղ ու դեր ունի բանվոր դասակարգը։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման ամբողջ ընթացքում սովետների կազմակերպական-քաղաքական ֆունկցիաների համակողմանի զարգացումն ու ամրապնդումը, նրանում բանվոր դասակարգի առաջատար դերի ուժեղացումը միշտ ապես գտնվել ու գտնվում է կոմունիստական կուսակցության ուշադրության կենտրոնում։

Սովետական հասարակության քաղաքական սիստեմի զարգացման պատմությունը հավաստում է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, բացառությամբ առանձին տարիների, բոլոր աստիճանի սովետներում անընդմեջ ավելացել է բանվոր դասակարգի թիվը, որը երկրի հասարակական-քաղաքական կյանքում նրա առաջատար դերի իրականացման բնորոշ գծերից մեկն է։ Այդ են վկայում 4-րդ աղյուսակի տվյալները[45]։

Աղյուսակ 4

	ՀՍՍՀ Գերագույն սովետ			
	1938	1947	1951	1959
Բոլոր դեպուտատների թիվը	256	269	289	300
Այդ թվում բանվորներ	56	54	30	65

Աղյուսակից նկատելի է, որ ՀՍՍՀ Գերագույն սովետի կազմում բանվոր դեպուտատների թիվը ավելի բարձր տեմպերով է աճել 1950-ական թվականների վերջերին։ Համանման միտում է դիտվել նաև ամբողջ Միության մեջ։ Բանն այն է, որ ՍՍՀՄ սահմանադրությունը (1936 թ.) սովետական բոլոր քաղաքացիների համար, անկախ նրանց սոցիալ-դասակարգային ծագումից, սահմանեց միատեսակ քաղաքական իրավունքներ։ Սովետական հասարակության բոլոր դասակարգերն

ու սոցիալական խմբերը ստացան ընտրելու և ընտրվելու հավասար իրավունքներ։ Այս ամենը ընդլայնեց սովետների սոցիալական բազան։ 1930-ական թվականների երկրորդ կեսից մինչև 1950-ական թվականների վերջերն ընկած ժամանակաշրջանում, բոլոր աստիճանի սովետներում նկատելիորեն աճեց գյուղացիության և մտավորականության բաժինը։ Ինչ վերաբերում է 1950-ական թվականների վերջերից սովետների կազմում բանվորների քանակական աճին, ապա դա առաջին հերթին կապված էր բնակչության կազմում դասակարգերի ու սոցիալական խմբերի քանակական ու որակական փոփոխությունների հետ։ Որպես ընդհանուր միութենական երևույթ, բնակչության սոցիալական կազմում արագորեն ավելացել էր բանվոր դասակարգի թիվը։

Սովետական հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի զարգացման և բանվոր դասակարգի քանակական ու որակական աճի օբյեկտիվ նախադրյալներից բացի, որոնք ստեղծվեցին ՍՍՀՄ-ում 1950-ական թվականներին, ուժեղանում էր նաև սուբյեկտիվ գործոնի՝ կոմունիստական կուսակցության և պետության դերը՝ սովետներում բանվոր դասակարգի թվաքանակի ավելացման գործում։ Կուսակցության և պետության վարած կուրսը բոլոր աստիճանի սովետներում ընդլայնում էր բանվորների մասնակցությունը։ Սովետներում բանվոր դասակարգի դերի էլ ավելի բարձրացման համար լայն ուղիներ նշվեցին ՍՄԿԿ Կենտկոմի 1957 թ. հունվարի 22 ի պլենումի ընդունած «Աշխատավորների դեպուտատների սովետների գործունեությունը բարելավելու և մասսաների հետ նրանց կապն ուժեղացնելու մասին» որոշման մեջ։ Պլենումը կուսակցական, պետական և հասարակական կազմակերպությունների առջև խնդիր դրեց բոլոր աստիճանի սովետներում ընդլայնել անմիջապես արտադրության մեջ զբաղված բանվորների մասնակցությունը[46]։

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում սովետների կազմում բանվորների քանակական աճի հարաբերակցությունը ըստ սոցիալական դրության և զբաղմունքի։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1950-ական թվականներին նախորդող (մեր ուսումնասիրության սահմաններն ընդգրկող) տարիներին բոլոր աստիճանի սովետներում ընտրված բանվոր դեպուտատների մեջ ցածր է եղել հաստոցային բանվորների տեսակարար կշիռը։ Այսպես, ՍՍՀՄ առաջին գումարման Գերագույն սովետի առաջին նստաշրջանում (1937 թ.) Միության սովետում բանվորները (սոցիալական դրությամբ) կազմում էին բոլոր դեպուտատների 45,3%-ը։ Մինչդեռ 247 դեպուտատներից միայն 17-ը

կամ 6,8% էին հաստոցային բանվորներ, մնացած 230-ը կամ 93% բանվոր դեպուտատները հանդիսանում էին կուսակցական, սովետական, տնտեսական և հասարակական կազմակերպությունների աշխատողներ[47]: ՍՍՀՄ երրորդ գումարման Գերագույն սովետի առաջին նստաշրջանում (1950 թ.) Միության սովետի դեպուտատներից 238-ը կամ 31,5%-ը ուներ բանվորական ծագում, որոնցից հաստոցային բանվորներ էին միայն 78-ը կամ 32,8%-ը[48]: Այդպիսին էր վիճակը նաև միութենական ու ինքնավար հանրապետությունների Գերագույն սովետներում: Այդ երևույթի հիմնական պատճառն այն է, որ 1930-ական թվականների երկրորդ կեսից մինչև 1950-ական թվականների կեսերն ընկած ժամանակաշրջանում սովետների աշխատանքը հիմնականում կրում էր ապարատային բնույթ, և բանվոր դեպուտատների կազմում ցածր էր հաստոցային բանվորների տեսակարար կշիռը[49]:

Այլ խոսքով, նշված ժամանակաշրջանում սովետների կազմում հիմնականում ընտրվում էին ոչ թե հաստոցային բանվորները, այլ բանվորական ծագում ունեցող կուսակցական, տնտեսական և պետական բնագավառի աշխատողները: Ուշագրավ է, որ 1950-ական թվականների վերջերից հարաբերակցությունը փոխվում է հօգուտ հաստոցային բանվոր դեպուտատների թվի ավելացման[50]:

Սովետների կազմում ընտրված հաստոցային բանվոր դեպուտատների գերակշռող մասը արտադրության առաջավորներ էին ու նորարարներ: Կենսագործելով սահմանադրությամբ տրված դեմոկրատական լայն իրավունքները, բանվոր դասակարգը սովետների կազմում առաջադրում էր թեկնածուներ՝ կոմունիզմի գործին առավել նվիրված, աշխատանքային ճակատում իրենց լիովին արդարացրած և հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունեցող լավագույն մարդկանց: Այս իմաստով բնութագրական է Երևանի գյուղգործիքների գործարանի բանվոր Գ. Ղազանչյանի հետևյալ խոսքը. «Այդ թեկնածուները այն մարդիկ են, որոնց մենք ինքներս ենք առաջադրել, համոզված լինելով, որ նրանք աղնվաբար կծառայեն մեր ժողովրդին[51]»:

Այսպես, 1938 թ. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի կազմում ընտրված 300 դեպուտատներից 104-ը կամ 34,6%-ը ստախանովականներ ու շքանշանակիրներ էին[52]: 1937 թ. ՍՍՀՄ Գերագույն սովետի կազմում այդպիսիների թիվը կազմում էր բոլոր դեպուտատների 54,6%-ը[53]:

Սովետների կազմում արտադրության առաջավոր բանվորների թիվը շարունակաբար ավելացել է: Օրինակ, 1947 թ. ՀՍՍՀ Գերագույն

սովետի կազմում ընտրված 54 բանվոր դեպուտատների թվում էին ստախանովականներ՝ Ալավերդու պղնձաձուլական գործարանի վատերժակետային վառարանի ավագ ձուլող Ա. Ղարդյանը, Երևանի շոգեքարշային դեպոյի մեքենավար Ս. Հարությունյանը, կարի առաջին գործարանի բանվորուհի Շ. Բաղդասարյանը, Ջերժինսկու անվան գործարանի խառատ Գ. Ղազանչյանը, կարբիդի գործարանի կարբիդագործ Պ. Ռուշանյանը, Երգէսի բանվոր Վ. Տեր-Նիկողոսյանը և ուրիշներ։

1950 թ. Հայաստանի աշխատավորները ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատներ ընտրեցին Ջանգեզուրի Լենինի անվան հանքերի ստախանովական բանվոր Ա. Անտոնյանին, Լենինականի տեքստիլ կոմբինատի ստախանովական բանվորուհի Ե. Լիխաչևային, Ալավերդու պղնձաձուլական գործարանի ստախանովական բանվոր, Լենինի շքանշանակիր Ի. Պապոյանին, Լենինականի շոգեքարշային դեպոյի մեքենավար, Լենինի շքանշանակիր Գ. Աբաջյանին։ Շարադրանքը համանման օրինակներով չծանրաբեռնելու համար նշենք միայն, որ այս երևույթը զարգացման միտում ուներ նաև ուսումնասիրվող մյուս տարիների համար[54]։

Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում բանվոր դասակարգի տեսակարար կշռի բարձրացում է դիտվել նաև տեղական սովետների կազմում։ 1939 թ. Հայկական ՍՍՀ տեղական սովետներում ընտրված բանվորների թիվը (ըստ զբաղվածության) կազմում էր բոլոր դեպուտատների 6, 1950 թ.՝ 7,2, իսկ 1959 թ.՝ 15,1%-ը[55]։

Ամբողջ երկրում այն կազմում էր՝ 1939 թ. 8, 1955 թ.՝ 10,6, իսկ 1961 թ.՝ 23,4%-ը[56]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում նկատելի փոփոխություններ են կատարվել նաև սովետների դեպուտատների կրթական, սեռային ու տարիքային կազմում։ Դրանց լուսաբանումը կարևոր նշանակություն ունի ժողովրդական ներկայացուցչական մարմիններում բանվոր դասակարգի առաջատար դերը բացահայտելու, նրա սոցիալական զարգացման ու քաղաքական գործունեության շատ կողմեր համակողմանիորեն վերհանելու համար։ Սովետների՝ որպես ժողովրդական իշխանության ամենաներկայացուցչական մարմինների, գործունեության արդյունավետությունը զգալի չափով կախված է դեպուտատների տարիքային կազմից։ Այս կապակցությամբ հարկ է նշել, որ սոցիալիստական ապրելակերպի համակողմանի զարգացման և գի-

տատեխնիկական առաջընթացի ներդործության պայմաններում երկրի հասարակական-քաղաքական կյանքը դառնում է ավելի ու ավելի ունիվերսալ, որի ներկայացրած պահանջները շոշափում են ամբողջ աշխատավորության, այդ թվում և բանվոր դասակարգի տարիքային կազմը: Տարիքային կազմը որոշակիորեն նպաստում է անհատի նախաձեռնությանը, սոցիալական ակտիվության աճին, կարևոր պայման է դառնում նրա ստեղծագործական ընդունակությունները առաջադրված խնդիրների լուծմանը իսպառ դնելու գործում: Այս ամենով հանդերձ կա երևույթի մի կարևոր կողմ ևս: Բոլոր քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարմանը պահանջում է սովետների մեջ ընդգրկել նոր ուժեր այն հաշվով, որ պետության կառավարման դպրոցն անցնեն նորանոր միլիոնավոր աշխատավորներ: Բերենք մի աղյուսակ, որը ցույց է տալիս քննարկվող ժամանակաշրջանում Հանրապետության Գերագույն և տեղական սովետների կազմում դեպուտատների տարիքային կազմի փոփոխությունները:

Աղյուսակ 5

Մինչև 40 տարեկան դեպուտատների հարաբերակցության փոփոխությունները ըստ տարիների[57]

	ՀԱՍՀ Գերագույն սովետ				ՀԱՍՀ տեղական սովետներ		
	1938	1951	1955	1959	1939	1957	1959
Դեպուտատների թիվը մինչև 40 տարեկան	203	101	122	125	8479	7213	11205
Դեպուտատների ընդհանուր թվի մեջ %	79	34,9	40,6	42	71	54	61

Աղյուսակ 5-ի տվյալներից երևում է, որ 1938 և 1939 թվականների համեմատությամբ, հաջորդ տարիներին մինչև 40 տարեկան դեպուտատների թիվը նվազել է, բայց ըստ տարիների հաջորդաբար աճել է: 1930—40-ական թվականներին սովետներում ընտրված դեպուտատների (18-ից մինչև 40 տարեկան) կազմում մեծ էր 35-ից մինչև 40 տարեկան տարիք ունեցողների թիվը, իսկ 1950-ական թվականներից սկսած աճում է ավելի երիտասարդ տարիքի դեպուտատների թիվը: Օրինակ, եթե 1938 թ. ՀՍՍՀ Գերագույն սովետի կազմում 18-ից մինչև 30 տարեկան դեպուտատների թիվը չէր անցնում 23 մարդուց,

ապա 1951 թ. այդ թիվը հասավ 27-ի, իսկ 1959 թ.՝ 38-ի[58]: Սակայն բերված տվյալները ցույց չեն տալիս դեպուտատների տարիքային կազմը ըստ սոցիալական դրության և զբաղմունքի: Ավելի պարզ՝ այդ տվյալները պատկերացում չեն տալիս բանվոր դեպուտատների տարիքային կազմի փոփոխությունների մասին: Այդ բացը լրացնելու նպատակով նշենք, որ այդ տարիներին բանվոր դասակարգի տարիքային կազմի փոփոխությունների գլխավոր միտումը նրա երիտասարդացումն էր: Հետևաբար պետք է եզրակացնել, որ տարիքային կազմի երիտասարդացում է տեղի ունեցել նաև բանվոր դեպուտատների մեջ:

Սոցիալիստական-կոմունիստական շինարարության ամբողջ ընթացքում կոմունիստական կուսակցությունը հսկայական նշանակություն է տալիս անկուսակցական մասսաներին պետության կառավարմանը լայնորեն մասնակից դարձնելուն:

Ուսումնասիրվող տարիներին սովետների կազմում անկուսակցական դեպուտատների տեսակարար կշռի մեծացումը հանրապետությունում բնութագրվում է հետևյալ տվյալներով (աղյուսակ 6)[59]:

Աղյուսակ 6

	Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետ				Հայկ. ՍՍՀ տեղական սովետ		
	1938	1951	1955	1959	1939	1957	1959
ՍՄԿԿ անդամ և թեկնածու	162	216	209	204	5777	7970	9286
%	63,3	74,7	69,7	68	46,6	59,6	51,4
Անկուսակցական	94	73	91	96	6407	5395	8592
%	36,7	25,3	30,3	32	53,4	40,4	48,6

Աղյուսակից երևում է, որ Հանրապետության Գերագույն և տեղական սովետների դեպուտատների կազմում անկուսակցական դեպուտատների թիվը 1938 թ. համեմատությամբ հաջորդ տարիներին կրճատվել է, բայց ըստ տարիների սիստեմատիկաբար աճել է:

Պետական ներկայացուցչական մարմիններում անկուսակցական դեպուտատների թվաքանակի շարունակաբար ավելանալը կարևոր երևույթ էր և արտահայտում էր երկրի քաղաքական սիստեմում ոչ միայն բանվոր դասակարգի առաջատար դերի աճը, այլ նաև սովետական ամբողջ հասարակության հասարակական-քաղաքական մակարդակի սիստեմատիկ բարձրացումը:

Բարձրագույն և տեղական ընտրական մարմիններում անկուսակցական դեպուտատների թվի ավելանալը կոմունիստների և անկուսակցականների անխախտ դաշինքի վկայությունն էր, դաշինք, որը հանդիսանում էր ՍՍՀՄ պետական իշխանության կազմակերպման կարևոր հիմքը և արտահայտում էր կոմունիստական կուսակցության ու սովետական ժողովրդի քաղաքական միասնությունը: «Կոմունիստների և անկուսակցականների բլոկում, կոմունիստների և անկուսակցականների անպարտելի դաշինքի մեջ,—գրում էր «Պրավդան»,—իրենց կենդանի արտահայտությունն են գտել սովետական հասարակության բարոյական-քաղաքական անխախտ միասնությունը, մեր բազմազգ սոցիալիստական հայրենիքի բոլոր ժողովուրդների բարեկամությունը և եղբայրական համագործակցությունը»[60]:

Պետական իշխանության ներկայացուցչական օրգանների ստեղծման կարևոր սկզբունքներից մեկը նրա բազմազգ բնույթն է: Պատմությունը չգիտի այնպիսի պետության, որն ամենակարճ ժամկետներում այնքան շատ բան արած լինի ազգերի ու ազգությունների համակողմանի զարգացման համար, որպիսին է մեր հայրենիքը: Մարդկության ամբողջ պատմության մեջ մեր երկրում առաջինը իրականացվեց ազգերի իրոք լրիվ իրավահավասարություն պետական, տնտեսական, կուլտուրական և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը վարելով սոցիալիստական պետության քաղաքական սիստեմի իրականացմանն ու երկրի կառավարմանն աշխատավոր մասսաներին լայնորեն մասնակից դարձնելու քաղաքականություն, ելնում են լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման, բոլոր մեծ ու փոքր ազգերի իրավունքների պաշտպանության ու շահերի զուգակցման դիրքերից: Կուսակցությունը հետևողականորեն անցկացնում է այնպիսի կուրս, որպեսզի մեր բազմազգ հայրենիքի բոլոր ազգերն ու ազգությունները պատշաճ ներկայացվեն կուսակցական և պետական մարմինների տարբեր օղակներում: Սոցիալիստական շինարարության բոլոր փուլերում կուսակցությունը և կառավարությունը ձեռնարկել ու ձեռնարկում են հնարավոր ամեն ինչ, որպեսզի ժողովրդական ներկայացուցչական մարմինների կազմը մշտապես աճի բազմազգ ժողովուրդների ներկայացուցիչներով: Այսպես, 1959 թ. ՀՍՍՀ Գերագույն սովետում ընտրված 300 դեպուտատների ազգային կազմը ուներ այսպիսի տեսք՝ հայեր՝ 270, ռուսներ՝ 16, ադրբեջանցիներ՝ 9, վրացիներ՝ 3, քրդեր՝ 2 և ուկրաինացիներ՝ 1[61]:

Նույն թվականին Հանրապետության տեղական սովետներում հաշվում էին 9 ազգության ներկայացուցիչներ[62]: 1958 թ. Սովետական Միության Գերագույն սովետի կազմը բաղկացած էր ՍՍՀՄ բոլոր ազգերի ու ազգությունների ներկայացուցիչներից[63]: Այդպիսին է եղել կուսակցության վարած լենինյան ազգային քաղաքականության հիմնական ուղղությունը, այդպիսին է նաև այժմ: ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում նշվեց. «Հասարակական ու պետական գործերի կառավարմանը բոլոր ազգությունների աշխատավորների ավելի ու ավելի լայն մասնակցություն ամենասեղմ ձևով՝ այսպես կարելի է բնութագրել մեր քաղաքական կյանքի առաջատար միտումը, և կուսակցությունը ամեն ինչ կանի, որ այն ամրանա ու զարգանա»[64]:

Ուշագրավ փոփոխություններ է կրել նաև դեպուտատների սեռային կազմը: Պետական իշխանության բարձրագույն և տեղական մարմիններում շարունակաբար ավելացել է կին դեպուտատների թիվը[65]:

Աղյուսակ 7

Կին դեպուտատների թիվը ըստ տարիների

	Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետ			Հայկ. ՍՍՀ տեղական սովետներ			ՍՍՀՄ Գերագույն սովետ		
	1938	1951	1959	1939	1954	1959	1937	1954	1958
Բոլոր դեպուտատների թիվը	256	289	300	11984	13365	17878	1143	1347	1378
այդ թվում կանայք	65	90	97	3478	4205	7387	187	348	366
%	25,3	31,1	32,4	29	31,5	41,3	16,4	25,8	26,5

Նշված տարիներին Հանրապետության Գերագույն ու տեղական սովետներում կին դեպուտատների տեսակարար կշիռը համապատասխանաբար աճել է 7,1 և 12,3, ՍՍՀՄ Գերագույն սովետում՝ 10,1%-ով: Եզրակացությունն այն է, որ սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում երկրի քաղաքական սիստեմում շարունակաբար աճել է կին աշխատավորության հասարակական-քաղաքական ակտիվությունն ու դերը՝ ընդհանրապես, և նրա առաջատար ջոկատ կին բանվորությանը՝ մասնավորապես: Հասարակական-քաղաքական կյանքում կանանց դերի սիստեմատիկ բարձրացումը կոմունիստական կուսակցության հետևողական գործունեության արդյունք էր:

«Մեզ հարկավոր է,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ բանվորուհի կինը ոչ միայն օրենքով, այլ նաև կյանքում ձեռք բերի հավասարություն տղամարդ աշխատավորի հետ։ Դրա համար հարկավոր է, որ կին բանվորուհիները ավելի ու ավելի շատ մասնակցեն հասարակական ձեռնարկությունների կառավարմանը և պետության կառավարմանը։

Կառավարելով՝ կանայք արագ կսովորեն և կհասնեն տղամարդկանց։

Ուրեմն ավելի շատ բանվորուհի կանանց ընտրեցեք սովետում, ինչպես կին կոմունիստներից, նույնպես և անկուսակցականներից»[66]։

ՍՄԿԿ-ն հնարավոր ամեն ինչ արել և անում է, որպեսզի մշտապես աճի սովետական կանանց գաղափարական հասունությունը, ընդհանուր կուլտուրան, սոցիալական ակտիվությունը և նրանց դերը տնտեսական-քաղաքական պրոբլեմների լուծման գործում։

Այսպես, սոցիալիստական շինարարության ընթացքում մեր երկրում լուծվեց այնպիսի բարդ սոցիալական պրոբլեմ, ինչպիսին կանանց և տղամարդկանց միջև ամեն տեսակի հավասարության հաստատումն է։ Ստեղծվեցին բոլոր պայմանները երկրի տնտեսական, պետական ու հասարակական կյանքին սովետական կանանց ակտիվ մասնակցության համար։ Իր աշխատանքում,— գրում է Մակարենկոն,— սովետական քաղաքացին... այլևս չի կարող ամփոփվել իր բանվորական տեղի, իր ցեխի, նույնիսկ իր գործարանի նեղ սահմաններում։ Նրա աշխատանքը դարձել է ստեղծագործական աշխատանք և՛ բանվորական, և՛ արտադրական, և՛ քաղաքական, և՛ բարոյական առումներով։ Այդ աշխատանքը դարձել է նրա քաղաքական աճի հիմնական էությունը...»[67]։ Մանկավարժի այս խոսքերը վերաբերում են նաև կանանց, որոնց աշխատանքում հավասարապես զուգակցվում էր արտադրական ու հասարակական-քաղաքական գործունեությունը։

Քննարկվող ժամանակաշրջանում նկատելի տեղաշարժեր կատարվեցին նաև դեպուտատների կրթական մակարդակում։ Բոլոր աստիճանի սովետներում զգալիորեն ավելացել է բարձրագույն, թերի բարձրագույն և միջնակարգ կրթության դեպուտատների թիվը։ Այսպես, օրինակ, եթե 1938 թ. Հանրապետության Գերագույն սովետի կազմում ընտրված 256 դեպուտատներից 61-ը կամ 23,8%-ը ուներ բարձրագույն և 71-ը կամ 27,7%-ը միջնակարգ կրթություն, իսկ 1951 թ. 289 դեպուտատներից, բարձրագույն կրթություն ուներ 43%-ը, միջնակարգ կրթություն՝ 15,9%-ը, ապա 1959 թ.՝ 300 դեպուտատներից համապատասխանաբար 47 և 16,6%-ը[68]։

Եթե ՍՍՀՄ Գերագույն սովետի կազմում 1937 թ. բարձրագույն և թերի բարձրագույն կրթություն ունեցող դեպուտատների թիվը չէր անցնում 35%-ից, ապա 1958 թ. այն կազմում էր բոլոր դեպուտատների ավելի քան 50%-ը: Արագորեն աճել է նաև միջնակարգ կրթություն ունեցող դեպուտատների թիվը[69]:

Այսպիսով, սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում ամենամասսայական լիիշխան պետական մարմինների՝ սովետների կազմում դիտվել են առաջադիմական մեծ փոփոխություններ՝ կապված հասարակության առաջատար դասակարգի քանակական ու որակական աճի, բնակչության կազմում տեղի ունեցած սոցիալ-դասակարգային տեղաշարժերի, ինչպես նաև կոմունիստական կուսակցության նպատակասլաց գործունեության հետ:

Մեր երկրում աշխատավորների, մասնավորապես բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվության դրսևորման կարևոր միջոց են պետական իշխանության ներկայացուցչական մարմինների ընտրությունների նախապատրաստումն ու անցկացումը: Մեզ մոտ ընտրություններն անցնում են ընտրողների քաղաքական մեծ ակտիվության պայմաններում:

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի հիմնական հաղթանակից հետո աշխատավոր լայն մասսաների համար ստեղծվեցին անհրաժեշտ պայմաններ սովետների ընտրություններին մասնակցելու համար:

Սովետական ժողովրդի քաղաքական իրավունքների ընդլայնումը օբյեկտիվ նախադրյալներ ստեղծեց սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման ու կատարելագործման, աշխատավորների հասարակական-քաղաքական ակտիվության հետագա բարձրացման համար: ՍՍՀՄ 1936 թ. սահմանադրությանը հաջորդած ամբողջ ժամանակաշրջանում բոլոր աստիճանի սովետների ընտրություններին, որպես կանոն մասնակցել են ընտրողների մոտ 99,9%-ը և համարյա բոլորը (ավելի քան 99 %-ը) իրենց ձայնը տվել են դեպուտատության թեկնածուների օգտին:

Այս տվյալները սովետական երկրի լայն դեմոկրատիայի, պետական իշխանության օրգանների ստեղծմանը նրա անդամների մասնակցության անսահմանափակ իրավունքների, բոլոր դասակարգերի ու սոցիալական խմբերի գաղափարական-քաղաքական բարձր մակարդակի, կոմունիզմի գաղափարներին նրանց նվիրվածության հավաստի վկայություններն են:

Սովետական դեմոկրատիայի զարգացումը և խորացումը, սովե-

տական մարդկանց իրավունքների ընդլայնումը, պետական մարմինների ստեղծմանն ու դրանց կառավարմանը աշխատավոր մասսաների լայն մասնակցությունը ավելի ու ավելի են կատաղեցնում բուրժուական տեսաբաններին, որոնք դիտակցելով այդ ամենի սոցիալական հետևանքները, ջանում են ամեն գնով ծուռ հայելու մեջ ներկայացնել սովետական դեմոկրատիան և նրա քաղաքական սիստեմի առաջադիմությունը: Նրանք փորձում են ապացուցել այն, ինչ իրականության մեջ ճիշտ հակառակն է: Այսպես, նրանց պատկերացմամբ, սոցիալիստական ընտրական սիստեմը կրում է ձևական բնույթ, իբր թե մեխանիկորեն ընդօրինակված է առաջադրված յուրաքանչյուր թեկնածու[70]:

Սոցիալիզմի հակառակորդների փաստարկները սխալ են ու հիմնազուրկ: Հայտնի է, որ սովետական ընտրական սիստեմը նախատեսում է այնպիսի կարգ, որը ընտրական կամպանիայի բոլոր աստիճաններում ապահովում է հասարակայնության վերահսկողությունը ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ամբողջ ընթացքի վրա: Մեզ մոտ ընտրությունների նկատմամբ ղեկավարությունը իրագործվում է հասարակական կազմակերպությունների և աշխատավորների ընկերությունների միջոցով, որոնք իրենց ներկայացուցիչներն են առաջադրում ընտրական հանձնաժողովներում՝ կենտրոնականից մինչև տեղամասայինը: Մեկ ուրիշ փաստարկ ևս. սովետների դեպուտատության թեկնածուներն առաջադրվում են արհմիութենական, երիտասարդական, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպությունների ու աշխատավորների ընկերությունների կողմից, որոնք էլ հետևում ու վերահսկում են իրենց թեկնածուի գործունեությունը: Այլ կերպ ասած, ժողովուրդն ինքն առաջադրում, ինքն էլ պաշտպանում է իր թեկնածուին: Այստեղ տեղին է մեջ բերել Վ. Ի. Լենինի այն միտքը, որ «Սովետական դեմոկրատիզմի, այսինքն՝ պրոլետարական դեմոկրատիզմի, ... սոցիալիստական բնույթը նախ և առաջ այն է, որ ընտրողներն աշխատավոր ու շահագործվող մասսաներն են, ... մասսաներն իրենք են որոշում ընտրությունների կարգը և ժամկետները, ընտրվածներին ետ կանչելու լիակատար աղատությամբ»[71]:

Քվեարկելով կոմունիստների ու անկուսակցականների անխախտ բլոկի թեկնածուների օգտին, սովետական մարդիկ հավանություն են տալիս կոմունիստական կուսակցության վարած ներքին ու արտաքին քաղաքականությանը, քաղաքականություն, որն ուղղված է աշխատավորության նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի բարձրացման, մեր սոցիալիստական պետության հզորության ամրա-

պնդման ու խաղաղության պաշտպանության համար մղվող պայքարին: Լավ է ասված, «Միլիոնավոր ընտրողներ իրենց կենսական փորձով ակնառու կերպով տեսնում են սովետական հասարակական ու պետական կարգի մեծ և անպարտելի ուժը, սովետական դեմոկրատիայի՝ ժողովրդի համար, բոլոր աշխատավորների համար իսկական դեմոկրատիայի ուժը: Այս բոլորը մեր մարդկանց մեջ էլ ավելի է բարձրացնում սովետական աղգային հպարտության զգացմունքը»[72]:

Այս օբյեկտիվ իրողությունը, սակայն, չի բացառում, որ դեպուտատության համար առաջադրված թեկնածուն դեմ քվեարկվի: Օրինակ 1959 թ. ամրողջ Միությունում դեմ են քվեարկվել, այսինքն չեն ընտրվել, տեղական սովետների 182, իսկ 1961 թ. 249 դեպուտատության թեկնածու[73]:

Պետական իշխանության մարմինների ստեղծմանը բանվորների ընդգրկման կարևոր ձևերից է նրանց մասնակցությունը ընտրական հանձնաժողովների գործունեությանը: Ընտրական հանձնաժողովներում բանվորները հանդես են գալիս որպես սովետների ընտրության անմիջական կազմակերպիչներ: Նրանք ցուցաբերում են քաղաքական բարձր ակտիվություն, հանդես են գալիս ընտրական տեղամասերում, մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ:

Բերված փաստերն ու օրինակները սպառիչ պատասխան են տալիս բուրժուական մեկ այլ կեղծարարի՝ Ի. Մաուրախին, որին դուր չեն գալիս սոցիալիստական ընտրական սիստեմը և այդ բնագավառում կատարվող յուրաքանչյուր առաջընթաց քայլը: Մաուրախին առանձնապես չի հաշտվում այն փաստի հետ, որ ՍՍՀՄ-ում սովետների ընտրություններն անցնում են ընտրողների քաղաքական բուռն ակտիվության պայմաններում: Որպեսզի դիմակայի անհերքելի փաստերի անկասելի ճնշմանը, նա դիմում է ամեն տեսակի խուսանավման և կեղծիքի: Վարվելով ճիշտ այդպես, Մաուրախին գրում է. «Իսկական դեմոկրատիան Արևմուտքում է, որովհետև այնտեղ ընտրողների զգալի մասը չեն մասնակցում ընտրություններին»[74]: Արդյո՞ք դա է դեմոկրատիայի իսկական պատկերը, ինչպես կարծում է պրոֆեսոր Մաուրախին, իհարկե ոչ: Իսկական դեմոկրատիան չի սահմանափակում, ընդհակառակը ընդլայնում է մասսաների քաղաքական ակտիվությունը: Հետևաբար ճշմարտությունը պահանջում է ասել, որ ինչպես Մաուրախին, այնպես էլ նրան համախոհ մյուս կեղծարարները, ջանում են կապիտալիզմի գոյության արդարացման ուղիներ գտնել, որի կարիքը այդ հասարակարգը անչափ զգում է:

Ինչ վերաբերում է կապիտալիստական հասարակության մեջ ընտրողների զգալի մասի պասսիվության, ապա դա տվյալ հասարակարգի օրինաչափ զարգացման արդյունքն է նրա իմպերիալիստական ստադիայում: Բանն այն է, որ մոնոպոլիստական կապիտալի աճող իշխանության պայմաններում ընտրովի մարմինների դերը և գործունեության սահմանները անընդհեջ նվազում են, որի հետ կապված, թուլանում է ընտրողների հետաքրքրությունը այդ օրգանների նկատմամբ: Մյուսը, որ թույլ է ընտրողների ազդեցությունը իրենց ընտրյալների վրա:

Բանվոր դեպուտատների ստեղծագործական ակտիվության դրսեվորման կարևոր միջոց է սովետների նստաշրջանների նախապատրաստման ու անցկացման աշխատանքներին նրանց մասնակցությունը: Սովետների նստաշրջանները հանդիսանում են դեպուտատների կոլեկտիվ գործունեության հիմնական ձև, որտեղ նրանք համատեղ քննարկում են սովետի իրավասությանը վերաբերող բոլոր տեսակի հարցերը, որոշումներ ընդունում դրանց մասին և միասին կենսագործում այդ որոշումները, ընդսմին մեծ չափով օգտագործելով աշխատավորների նախաձեռնությունն ու ստեղծագործական ակտիվությունը:

Դեպուտատների ակտիվ գործունեությունը, նրանց պահանջներն ու առաջարկությունները լուրջ նշանակություն ունեն սովետների աշխատանքը ավելի լավ կազմակերպելու համար: Հանդես գալով նստաշրջանում, հարց բարձրացնելով սովետում, դեպուտատներն արտահայտում են իրենց ընտրողների կամքն ու ցանկությունները, օգնում սովետին ժամանակին ընթացք տալու կարևոր հարցերին: Մյուս դեպուտատների հետ համատեղ բանվորները նստաշրջաններում անմիջական մասնակցություն են ունենում տնտեսական, սոցիալական ու կուլտուրա-կենցաղային հարցերի քննարկմանը, մշակում որոշումներ, անում գործուն առաջարկություններ այս կամ այն պրոբլեմի շուրջը, հայտնում իրենց կարծիքը: Այսպես, Երևանի Լենինյան շրջսովետի նստաշրջաններից մեկում բանվոր դեպուտատ Ս. Սարգսյանը, արտահայտելով իր ընտրողների պահանջը, բարձրացրեց շրջանի արտադրական ձեռնարկությունների ճաշարանների աշխատանքը բարելավելու հարցը: Շրջանի որոշ առևտրական կետեր և բանվորական ճաշարաններ բարվոք վիճակում չէին գտնվում, իրենց սանիտարական դրությամբ ու կուլտուրական սպասարկման մակարդակով դեռ լիովին չէին բավարարում բնակչության պահանջները: Շրջսովետի նստաշրջանը ընդունեց բանվոր դեպուտատի առաջարկությունը և կազմեց հանձնաժողով՝ հարցը ուսումնասիրելու և համապատասխան ընթացք տալու համար[75]:

Բանվոր դեպուտատները բարձրացնում էին ոչ միայն կուլտուրակենցաղային, աշխատանքի ու կյանքի պայմանների բարելավման, այլ նաև արտադրատնտեսական բնույթի շատ հարցեր։ Օրինակ՝ Լենինականի չորրորդ գումարման քաղաքային սովետի հինգերորդ նստաշրջանում, երբ քննարկվում էր տեղական արդյունաբերության և արհեստագործական կոոպերացիայի գործունեության արդյունքների և երկրորդ կիսամյակի խնդիրների մասին հարցը, բանվոր դեպուտատ Հ. Բաբայանը արեց գործնական առաջարկություն՝ տնտեսական նախաձեռնություն ցուցաբերել տեղական ռեզերվները մոբիլիզացնելու միջոցով արտադրությունը հետզհետե ընդարձակելու վերաբերյալ[76]։

Որպես ժողովրդի լիազոր ներկայացուցիչներ՝ բանվոր դեպուտատները մեծ ակտիվություն էին հանդես բերում նաև Դերագույն սովետի նստաշրջաններում։ Այսպես, ՀՍՍՀ երկրորդ գումարման Դերագույն սովետի առաջին նստաշրջանում (1951 թ.) բանվոր դեպուտատ Ա. Պապյանը իր ելույթում բարձրացրեց տնտեսական ու սոցիալական բնույթի բազում հարցեր։ Նա սննդարդյունաբերության մինիստրության ուշադրությունը հրավիրեց Ստեփանավանում գտնվող սննդարդյունաբերական ձեռնարկություններում աշխատանքային պայմանները բարելավելու, թողարկվող արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու, ինչպես նաև արտադրանքի որակը բարձրացնելու վրա և պահանջեց ձեռնարկել կտրուկ միջոցառումներ։ Այնուհետև նա քննադատեց Համապատասխան ղեկավար մարմիններին՝ Ստեփանավանում աշխատող մասնագետների բնակելի շենքերի շինարարական աշխատանքները ձգձգելու կապակցությամբ։ Նույն նստաշրջանում բանվոր դեպուտատ Ս. Սարվազյանը բարձրացրեց կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր՝ կապված Երևան քաղաքի բնակչության ջրամատակարարման, էլեկտրասպասարկման, բաղնիքների և լվացքատների աշխատանքները կարգավորելու և դրանց սպասարկման մակարդակը բարձրացնելու հետ[77]։

Աշխատավորների դեպուտատների սովետների կազմակերպական-մասսայական աշխատանքում կարևոր տեղ են գրավում մշտական հանձնաժողովները։ Դրանք այն կարևոր լծակներն են, որոնց միջոցով դեպուտատները անմիջականորեն մասնակցում են սովետի հերթական նստաշրջանի համար նյութերի նախապատրաստմանը, որոշումների նախագծերի մշակմանը և, աշխատավորների մեջ մասսայական-կազմակերպչական աշխատանք ծավալելով, ձեռնամուխ են լինում ընդունած որոշումների իրագործմանը։

Սովետները որպես բնակչության բոլոր շրջաններն ընդգրկող առավել մասսայական կազմակերպություններ, աչքի են ընկնում սովետական ակտիվի լայն խավերին իրենց շուրջը համախմբելով: Այս գործում նույնպես մեծ է մշտական հանձնաժողովների և նրանց անդամ բանվոր դեպուտատների դերը: Հանձնաժողովներն այդ աշխատանքներում ներգրավում են աշխատավորության լայն մասսաներին ու ակտիվին և կազմակերպում նրանց աշխատանքը՝ նստաշրջանների օրակարգը նախապատրաստելու, որոշումների նախագծերը քննարկելու ու մշակելու, ընդունված որոշումների կատարումը ապահովելու համար: Այդ իմաստով մշտական հանձնաժողովի աշխատանքը դեպուտատին իսկապես անսահման հնարավորություն է ընձեռում իր աշխատանքը կառուցելու մասսաների անմիջական մասնակցության ու նախաձեռնության վրա:

Այսպես, Երևանի Կիրովյան շրջանի շրջանային սովետի կոմունալ տնտեսության և բարեկարգման մշտական հանձնաժողովի անդամ փականագործ Հ. Թումանյանի գործունեությամբ ու նախաձեռնությամբ բարեկարգման ու կանաչապատման մեծ աշխատանք կատարվեց շրջանում: Երբ հանձնաժողովի նստաշրջաններից մեկում քննարկվում էր շրջանի կանաչապատման և ծառատնկման հարցը Հ. Թումանյանը հանձնաժողովի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ ամեն տարի շրջանի տարածքում բազմաթիվ ծառեր են տընկվում, բայց արդյունքը քիչ է լինում, անջրդի պայմաններում ծառերը վատ են աճում՝ չորանում են: Հանձնաժողովը ձեռնարկեց կոնկրետ միջոցառումներ՝ Հ. Թումանյանի և մշտական հանձնաժողովի անդամների ու ընտրողների ջանքերով կազմակերպվեց տնկարան, անդամների ու ընտրողների ջանքերով կազմակերպվեց տնկարան, Նորքից անօգուտ հոսող ջրերը խողովակներով տեղափոխվեց պապակ այգիները[78]:

1950-ական թվականների վերջերին, կապված ՍՄԿԿ Կենտկոմի 1957 թ. հունվարի 22-ի «Աշխատավորների դեպուտատների սովետների գործունեությունը բարելավելու և մասսաների հետ նրանց կապն ուժեղացնելու մասին» որոշման հետ, որտեղ կուսակցությունը սահմանեց սովետների հիմնական խնդիրները նոր պայմաններում՝ տեղական սովետների դերի ուժեղացումը տնտեսական և կուլտուրական շինարարության մեջ, աշխատավորների ըստ ամենայնի ներգրավումը սովետների հանձնաժողովների և այլ մասսայական ինքնագործ օրգանների աշխատանքում, զգալիորեն բարձրացավ նաև մշտական հանձնաժողովների դերը երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում: ՍՄԿԿ Կենտկոմը միութենական հանրապետությունների կուսակցա-

կան և սովետական մարմինների առջև խնդիր դրեց գործնական միջոցառումներ ձեռնարկել ընդլայնելու տեղական սովետների իրավունքները ամբողջ երկրի մասշտաբով, ավելացնելու բոլոր աստիճանի սովետների մշտական հանձնաժողովների, նրանց անդամների ու ակտիվիստների թիվը[79]: Հիշյալ որոշումը քաղաքական ծրագրային նշանակություն ունեցող փաստաթուղթ էր կուսակցական և պետական կազմակերպությունների համար: Այն իր արտացոլումը գտավ նաև ՀԿԿ Կենտկոմի 1957 թ. հունվարի 29-ի որոշման մեջ[80]:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, ինչպես Միության մեջ ամբողջությամբ, այնպես էլ Հայաստանում արագորեն աճեց մշտական հանձնաժողովների և նրանց անդամների ու ակտիվիստների թիվը, որի շնորհիվ հանձնաժողովների քաղաքական ու տնտեսական գործունեությունը դարձավ ավելի հարուստ ու բազմազան: Եթե 1938 թ. ՀՍՍՀ Գերագույն սովետն ուներ 4 մշտական հանձնաժողով, ապա 1963 թ. այն հասավ 9-ի[81]:

1940 թ. Հանրապետության տեղական սովետներում մշտական հանձնաժողովների թիվը կազմում էր 2173 (7454 դեպուտատ), իսկ 1959 թ.՝ այն հասավ 2457-ի (12503 դեպուտատ)[82]:

Բանվոր դեպուտատների հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացման գործում մեծ է դեպուտատական հարցապնդման դերը: Հարցապնդումը դեպուտատի կամ մի խումբ դեպուտատների պաշտոնական դիմումն է գործադիր կոմիտեին, նրա բաժինների և վարչությունների ղեկավարներին, ինչպես նաև սովետի իրավասությանը ենթակա ձեռնարկությունների և հիմնարկների ղեկավարներին՝ նրանց գործունեության հարցերի վերաբերյալ:

ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ (հոդված 103) ասված է. «Դեպուտատն իրավունք ունի հարցապնդում անելու պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են պատասխան տալ հարցապնդմանը սովետի նստաշրջանում»[83]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ևս, կապված ժողովրդական ներկայացուցչական մարմինների աշխատանքի բարելավման, մասսաների հետ նրանց կապի ամրապնդման հետ, զգալի չափով ուժեղացավ դեպուտատական հարցապնդումների վերահսկողությունը տնտեսական, կուլտուրական և այլ կազմակերպությունների նկատմամբ:

Դեպուտատները հարցապնդման միջոցով ստուգում էին իրենց սովետի, նրա գործադիր կոմիտեի ու բաժինների, ինչպես նաև տրվյալ սովետի իրավասությանը ենթակա կազմակերպությունների ու ձեռ-

նարկությունների աշխատանքի այս կամ այն բնագավառը, աշխատավորների կուլտուր-կենցաղային սպասարկման և այլ հիմնարկների գործունեությունը:

Ուշագրավ է, որ սոցիալիստական դեմոկրատիայի զարգացմանն ու կատարելագործմանը զուգընթաց դեպուտատական հարցապնդումները լայնորեն արմատավորվում են սովետների պրակտիկ գործունեության մեջ:

Ներկայացուցչական մարմիններում հասարակության առաջատար դասակարգի ներկայացուցիչների արդյունավետ գործունեության կարևոր օղակ էին ընտրական օկրուգները:

Ընտրական օկրուգներում բանվոր դեպուտատների աշխատանքի հիմնական ձևերից է ընտրողների ընդունելությունը, որը ընտրողների և ընտրյալի կենդանի կապի լավագույն միջոցն է: Այն դեպուտատին մի կողմից հնարավորություն է տալիս հանգամանորեն ծանոթանալ իր ընտրողների առաջարկներին, խնդրանքներին, դիմումներին ու բողոքներին և ըստ այդմ կոնկրետացնել ու ավելի նպատակասլաց դարձնել իր աշխատանքը, իսկ մյուս կողմից, ընտրողների համար ստեղծում է անհրաժեշտ պայմաններ՝ ուժեղացնելու ներքևից կատարվող վերահսկողությունը պետական ու տնտեսական մարմինների վրա:

Ընտրողներից ստացված դիմումներն ու առաջարկները, քննադատական դիտողությունները ու բողոքները, որոնցում ի հայտ են գալիս սովետական մարդու բարձր բարոյականության, սոցիալիստական դիտակցականության, ուղղամտության և ազնվության լավագույն հատկանիշները, միաժամանակ հանդիսանում են սոցիալիստական տնտեսավարման ձևերի կատարելագործմանը նրանց անմիջական մասնակցության լավագույն ձև: Ահա թե ինչու, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը միշտ էլ կարևոր նշանակություն են տվել և տալիս են աշխատավորների դիմումներին ու առաջարկներին, քննադատական դիտողություններին ու բողոքներին, որոնցում արտահայտվում է լայն մասսաների շահագրգռվածությունը մեր հայրենիքի տնտեսական, սոցիալ-քաղաքական ու կուլտուրական զարգացման նկատմամբ:

Ընտրական օկրուգներում դեպուտատների ամբողջ գործունեությունը կապված է մասսաներին կազմակերպելու գործնական աշխատանքի, կոմունիստական կուսակցության որոշումներն իրագործելու նպատակով աշխատավորներին մոբիլիզացնելու հետ: Ընտրական օկրուգը հանդիսանալով սովետի գործունեության հետ մասսաների կա-

պի անմիջական օղակ, նպաստում է պետության կառավարման գործերի մեջ աշխատավորներին ներգրավելու գործին։ Այստեղ մեծ է ժողովրդական պատվիրանների դերը։ Պատվիրանները դեպուտատներին տալիս են ընտրողները՝ նախընտրական կամպանիայի ընթացքում և ընդհանուր ժողովներում։ Պատվիրաններում, ուր անմիջական արտահայտություն է գտնում ընտրողի կամքը, պետական ու տնտեսական գործերը բարելավելու և ամրապնդելու հայրենասիրական ձգտումը, սոցիալիստական դեմոկրատիայի դրսևորման, պետական և հասարակական գործերի կառավարմանը աշխատավորների անմիջական մասնակցության կարևոր ձև են։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը ըստ արժանվույն գնահատելով պատվիրանների քաղաքական և դաստիարակչական նշանակությունը մասսաների սոցիալական ակտիվության և ստեղծագործական նախաձեռնության բարձրացման գործում, միշտ չթուլացող հետևողականություն են հանդես բերում դրանք ժամանակին ու ճիշտ կատարելու հանդեպ։

Դեպուտատի աշխատանքի սիստեմատիկ վերահսկումը ընտրողների կողմից և ընտրյալի պարբերաբար հաշվետվությունը ընտրողների առջև սոցիալիստական դեմոկրատիայի կարևորագույն սկզբունքներից են։ ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ նշված է. «Դեպուտատը պարտավոր է իր աշխատանքի և սովետի աշխատանքի մասին հաշվետու լինել ընտրողների առջև, ինչպես նաև իրեն դեպուտատության թեկնածուն առաջադրած կոլեկտիվների և հասարակական կազմակերպությունների առջև»[84]։

Ընտրողների հետ հանդիպման ժամանակ դեպուտատը հաշվետվություն է տալիս նստաշրջաններում քննարկված հարցերի նախապատրաստման, մշտական հանձնաժողովների և նստաշրջանների գործունեության իր մասնակցության, ինչպես նաև ընտրողներից ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների և այդ ուղղությամբ կատարած աշխատանքների մասին։ Ընտրողների հետ դեպուտատի հանդիպման նշանակությունը ոչ միայն այն է, որ ընտրողները մոտիկից են ճանաչում իրենց թեկնածուին, ծանոթանում նրա քաղաքական ու աշխատանքային գործունեության հետ։ Անշուշտ, գործի այս կողմը նույնպես էական ու կարևոր է, որը ամբողջովին բխում է սովետական դեմոկրատիայի այնպիսի կարևոր սկզբունքից, ինչպիսին է դեպուտատի պատասխանատվությունը ժողովրդի առաջ, ընտրողի առաջ։ Բայց կա նաև գործի մյուս կարևոր կողմը, ընտրողները հնարավորություն են ստանում վեր հանելու դեպուտատի կամ սովետի աշխատանք-

ներում եղած թերությունները և իրենց առաջարկություններով օգնելու նրանց՝ գործը լավ կազմակերպելու համար։ Ավելացնենք նաև, որ ընտրողների առջև հաշվետու լինելը շատ կարևոր է նաև դեպուտատի համար, որովհետև նա պետք է քաջ իմանա և այնպիսի ուղղություն բռնի, ինչ ժողովուրդն ինքն է հրահանգել։

Ահա թե ինչու, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը դեպուտատական հանդիպումներն ու հաշվետվությունները դիտելով որպես համապետական նշանակության գործ, հնարավոր ամեն ինչ արել և անում են՝ բարձրացնելու յուրաքանչյուր դեպուտատի ակտիվությունը, պատասխանատվությունը ընտրողների առջև։ Այս խնդրին առանձնապես կարևոր նշանակություն տվեց ՍՄԿԿ XX համագումարը։ Համագումարի հաշվետու զեկուցման մեջ, ինչպես նաև պատգամավորների ելույթներում, նշվեց դեպուտատների գործունեությունը աշխուժացնելու, ժողովրդի հետ նրանց կապն ուժեղացնելու անհրաժեշտությունը։ «Կուսակցությունը մեզ պարտավորեցնում է հասնել այնպիսի դրության,—իր ելույթում ընդգծեց Կ. Ե. Վորոշիլովը,—որպեսզի դեպուտատները մշտական կապ պահպանեն ընտրողների հետ, կանոնավոր հաշվետվություն տան նրանց առաջ, բնակչությանը պարզաբանեն սովետի ընդունած որոշումները և ակտիվորեն մասնակցեն դրանց կենսագործմանը»[85]։

ՍՄԿԿ Կենտկոմի՝ 1957 թ. հունվարին տեղի ունեցած պլենումը «Աշխատավորների դեպուտատների սովետների գործունեությունը բարելավելու և մասսաների հետ նրանց կապն ուժեղացնելու մասին» որոշման մեջ ընդգծեց, որ անհրաժեշտ է բարձրացնել դեպուտատների ակտիվությունը ինչպես սովետների աշխատանքներում, այնպես էլ ընտրողների շրջանում, որ դեպուտատը պետք է սիստեմատիկ հանդիպի իր ընտրողներին, ընդունի նրանց, իմանա նրանց ցանկությունները ու առաջարկությունները և ժամանակին լուծում տա դրանց[86]։ Ինչպես արդեն նշել ենք, համանման որոշում ընդունեց նաև ՀԿԿ Կենտկոմը։ Ղեկավարվելով ՍՄԿԿ և ՀԿԿ Կենտկոմների հիշյալ որոշումներով՝ հանրապետության կուսակցական և սովետական կազմակերպությունները ավելի ուժեղացրին քաղաքական աշխատանքը, կուրս վերցնելով՝ օգնել դեպուտատներին նրանց աշխատանքում, հասնել այն բանին, որ նրանք բարեխղճորեն կատարեն դեպուտատական պարտականությունները, սիստեմատիկաբար հանդիպումներ ունենան իրենց ընտրողների հետ։ Կուսակցական և սովետական մարմինների ծավալած գործունեության շնորհիվ ինչպես երկրում ամբողջությամբ,

այնպես էլ Հայաստանում ղգալիորեն ամրապնդվեց դեպուտատների կապը ընտրողների հետ։ Այսպես, եթե 1949 թ. Միության մեջ տեղական սովետների դեպուտատներից ընտրողների առջև հաշվետվություններով հանդես են եկել դեպուտատների ընդհանուր թվի 25,3, 1957 թ.՝ 66,5 ապա 1961 թ.՝ 80,8%-ը[87]։ Սովետական Հայաստանում տեղական սովետների դեպուտատների ընդհանուր թվից ընտրողների առջև հաշվետվություններով հանդես են եկել 1950 թ.՝ 18, 1955 թ.՝ 60,9 1956 թ.՝ 72,0, 1957 թ.՝ 75,9, իսկ 1960 թ. մոտ 82%-ը[88]։

Սոցիալիստական պետության կառավարմանը աշխատավորությանը լայնորեն ընդգրկելու կարևոր միջոցներ են տնտեսին կառավարչություններին աջակցող հասարակական հանձնաժողովներն ու թաղամասային կոմիտեները։ Սովետական պետության քաղաքական սիստեմում կարևոր տեղ են գրավում այնպիսի հասարակական կազմակերպություններ, ինչպիսիք են արհմիությունները, կոմերիտմիությունը, ժողովրդական վերահսկողության մարմինները, գիտատեխնիկական ընկերությունները, հասարակական բյուրոները և այլն։ Այս կազմակերպությունները մտնում են սովետական պետության քաղաքական սիստեմի մեջ և գործում են կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։

Ամփոփիչ եղրակացությունը այսպիսին է. ակտիվ մասնակցություն պետության կառավարմանը, բազմակողմանի ու բազմաբնույթ աշխատանք պետական մարմիններում ու տարբեր հասարակական կազմակերպություններում՝ այսպիսին են եղել սովետական բազմազգ բանվոր դասակարգի ազգային ջոկատներից մեկի՝ Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի սոցիալ-քաղաքական ակտիվության ոլորտները սոցիալիզմի ամրապնդման և ղարգացման ժամանակաշրջանում։

Այժմ էլ՝ սոցիալիզմի կատարելագործման փուլում, շարունակվում է հասարակության առաջատար դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվության անշեղ աճը։

Օրենսդրական կարգով վավերացնելով արդի ժամանակաշրջանում սովետական պետության և սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման ու կատարելագործման արդյունքները, ՍՍՀՄ նոր սահմանադրությունը արձանագրեց. «Դա իսկական դեմոկրատիայի հասարակություն է, որի քաղաքական սիստեմն ապահովում է բոլոր հասարակական գործերի արդյունավետ կառավարումը, աշխատավորների ավելի ու ավելի ակտիվ մասնակցությունը պետական կյանքին...»[89]։

Մնում է ավելացնել. երիցս իրավացի էր սովետական պետության հիմնադիրն ու առաջնորդը, երբ սոցիալիստական շինարարության արշալույսին մարգարեաբար գրում էր. «Սոցիալիզմի ժամանակ պրիմիտիվ «դեմոկրատիայից» շատ բան անխուսափելիորեն կվերակենդանանա, որովհետև քաղաքակրթված հասարակությունների պատմության մեջ առաջին անգամ բնակչության մասսան կբարձրանա այն աստիճանին, որ նա կկարողանա իճնուրույն մասնակցել ոչ միայն քվեարկություններին ու ընտրություններին, այլև ամենօրյա կառավարմանը»[90]:

3. ԱԶԱՏ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Ստեղծագործական ակտիվությունը որպես բանվոր դասակարգի կենսագործունեության ձև, փոխադարձ կապի մեջ է գտնվում ազատ ժամանակի հետ:

Սովետական հասարակության զարգացման փորձը վկայում է, որ մեր երկրում սոցիալիստական շինարարությանը զուգընթաց մշտապես ավելացել և ավելանում է բանվոր դասակարգի ազատ ժամանակը, շարունակաբար հարստանում է այդ ժամանակի բովանդակությունը, առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում նրա արդյունավետ օգտագործման համար:

Խնդրո առկա հարցի լուսաբանման համար, ամենից առաջ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին: Ո՞րն է բանվորի ազատ ժամանակը և ինչպիսի՞ գործոնների հետ է կապված նրա ավելացումը: Հայտնի է, որ բացի հիմնական աշխատաժամանակից (բանվորական ժամանակ), որը բանվորն ուղղակիորեն ծախսում է աշխատանքի վրա, գոյություն ունի նաև արտաաշխատանքային ժամանակ: Սակայն, արտաաշխատանքային ժամանակն իր բովանդակությամբ և օգտագործման նպատակայնությամբ, բառի լիակատար իմաստով, ազատ ժամանակ չէ: Կ. Մարքսը բացահայտելով ազատ ժամանակի ողջ բովանդակությունը, այն բնութագրել է որպես մի ժամանակ, «որ մարդուն անհրաժեշտ է կրթության, հոգեկան զարգացման, սոցիալական ֆունկցիաներ կատարելու, ընկերական հաղորդակցության, ֆիզիկական ու հոգեկան կենսույժերի ազատ խաղի համար...»[91]: Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, ազատ ժամանակն այն է, որը մարդն օգտագործում է «Հանգըստի համար, իր զարգացման համար, իր իրավունքներից օգտվելու համար որպես մարդ, որպես ընտանիքի տեր, որպես քաղաքացի»[92]:

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների այս բնորոշումներից հետևում

է, որ ազատ ժամանակը կազմում է արտաաշխատանքային ժամանակի այն մասը, որը բանվորն օգտագործում է իր հանգստի, ինքնակրթության, ժամանցի և ֆիզիկական պատրաստության՝ մի խոսքով, հոգևոր-կուլտուրական հարստացման համար: Հետևաբար արտաաշխատանքային ժամանակի այն մասը, որը բանվորն անհրաժեշտաբար ծախսում է այլ նպատակների (քնել, սնվել, կենցաղային հոգսեր, պանսիոնային օժանդակ աշխատանք և այլն) համար, ըստ էության ազատ ժամանակ չէ:

Այժմ ազատ ժամանակի ավելացման գործոնների մասին: Այդ գործոնները շատ են ու բազմազան: Նշենք առավել կարևոր նշանակություն ունեցող մի քանի գործոններ: ա) Աշխատանքի արտադրողականության բարձրացում: բ) Աշխատավորների նյութական-կենցաղային պայմանների բարելավում և կուլտուրական մակարդակի բարձրացում: Հիշյալ գործոնների մեջ կենտրոնական տեղը գրավում է աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Որպես հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի բնորոշ գիծ, աշխատանքի արտադրողականության սիստեմատիկ բարձրացումը ևթադրում է բանվորական ժամանակի կրճատման համեմատությամբ արտաաշխատաժամանակի տևողության ավելացում: Դա ինքնըստինքյան հասկանալի է. բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը նշանակում է՝ կրճատել ապրանքի արտադրության վրա ծախսվող միավոր ժամանակամիջոցը, կամ որ նույնն է միավոր ժամանակամիջոցում ստեղծել ավելի շատ նյութական ու հոգևոր արժեքներ: Սոցիալիստական շինարարության ամբողջ ընթացքում կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը հետևողականորեն վարելով ժողովրդի նյութական ու հոգևոր մակարդակի բարձրացման կուրս, հնարավոր ամեն ինչ արել և անում են, որպեսզի աշխատանքը դառնա ավելի արտադրողական ու արդյունավետ:

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական ժողովուրդը հասարակական արտադրության արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղղությամբ զգալի հաջողությունների հասավ նաև սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման տարիներին: Նախորդ ենթաբաժիններում հիմնական գծերով լուսաբանվել են, որ նշված ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության մեջ լայնորեն արմատավորվեցին գիտության ու տեխնիկայի նվաճումները, կատարելագործվեց արտադրության տեխնոլոգիան, արդյունաբերության շատ ճյուղերում իրականացվեց կոմպ-

լեքսային մեքենայացում և ավտոմատացում, բարձրացավ արտադրության կուլտուրան, տեղի ունեցավ ֆիզիկական աշխատանքի որոշ ինտելեկտուալացում, էապես աճեց բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը, բարձրացավ նրա աշխատանքի արդյունավետությունը: Այս ամենի շնորհիվ, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում զգալիորեն բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը[93]: Արդյունաբերության մեջ և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում աշխատանքի արտադրողականության սիստեմատիկ բարձրացման հետ սերտորեն կապված կրճատվեց բանվորական ժամանակը: 1956 թ. ՍՍՀՄ-ում սկսվեց անցումը բանվորների ու ծառայողների վեցժամյա և յոթժամյա կրճատ աշխատանքային օրվա, որն ավարտվեց 1960 թ.: 1967 թ. ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը և ՀԱՄԿԿ-ն ընդունեցին հիմնարկ-ձեռնարկություններում ու կազմակերպություններում հնգօրյա աշխատանքային շաբաթ մտցնելու մասին որոշում: Հնգօրյա աշխատանքային շաբաթ մտցնելը բանվոր-ծառայողների գերակշռող մասի համար տարեկան ապահովել է մոտ 100 հանգստի օր (բացի հերթական արձակուրդից)[94]: Ասվածը ավելի պատկերավոր դարձնելու համար նշենք, որ արդյունաբերության մեջ 1913 թ. համեմատությամբ 1967 թ. աշխատանքային շաբաթը կրճատվեց 18 ժամով[95]: Կրճատ աշխատանքային օրվա անցնելը չէր շոշափում բանվոր-ծառայողների աշխատավարձի շահերը: Ավելին, մի շարք պրոֆեսիաների, մասնավորապես ցածր վարձատրվող բանվոր-ծառայողների աշխատավարձը նկատելիորեն բարձրացվեց: Բավական է ասել, որ եթե 1955 թ. ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր-ծառայողների ամսական միջին աշխատավարձը կազմում էր 71,5 ռուբլի, ապա 1960 թ. այն կազմեց 80,1 ռուբլի կամ աճեց մոտ 89%-ով[96]:

Այսպիսով, սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացման շնորհիվ, աշխատաժամանակի կրճատման հաշվին, սիստեմատիկաբար ավելացել է բանվոր-ծառայողների արտաաշխատաժամանակը, որը, ինչպես նշել ենք, իր ամբողջության մեջ դեռ ազատ ժամանակ չէ այդ բառի լիակատար իմաստով: Ազատ ժամանակի բյուջեի մեծացման օբյեկտիվ հիմքը արտաաշխատաժամանակի անընդմեջ ավելացումն է: Արտաաշխատաժամանակի ավելանալը ուղիղ համեմատական է ազատ ժամանակի տևողության մեծացմանը, այսինքն, որքան ավելանում է ար-

տաաշխատաժամանակի տևողությունը, այնքան մեծանում է ազատ ժամանակի ավելանալու հնարավորությունը:

Հանրահայտ է, որ արտադրության կոմպլեքսային մեքենայացմանն ու ավտոմատացմանը զուգահեռ կրճատվում է բանվորի ֆիզիկական աշխատանքի բաժինը և անհամեմատ հեշտանում ու դյուրին է դառնում նրա աշխատանքը: Այդ ամենը բանվորին հնարավորություն են տալիս արտաաշխատանքային ժամանակի ղգալի մասն օգտագործել ոչ թե ուժերի վերականգնման, այլ ազատ ժամանակի դեպքում վերը նշված նպատակների համար: Բանն այն է, որ ծանր, հոգնեցուցիչ, ցածր կուլտուրա ունեցող և ֆիզիկական շատ լարում պահանջող աշխատանքը բանվորին զրկում է ազատ ժամանակամիջոցում համակողմանի զարգացման ձգտումից ու ցանկությունից: Նա այդ ժամանակի մի մասը օբյեկտիվորեն ծախսում է աշխատուժի վերականգնման համար: Առաջ անցնելով նշենք, որ ազատ ժամանակն էլ իր հերթին կարևոր դեր է խաղում աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում: Այստեղից հետևում է, որ ազատ ժամանակը և աշխատանքի արտադրողականության բարձրացումը գտնվում են դիալեկտիկական սերտ կապի մեջ: Ազատ ժամանակի բյուջեի ավելացման ընդհանուր մայրուղում վճռական դեր ունի բանվոր դասակարգի նյութական ու կենցաղային պայմանների բարելավումը: Մարդու նյութական և կենցաղային պայմանների բարելավումը նրա կենսագործունեության առաջնային ու հիմնական պայմանն է:

Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը բազմիցս նշել են, որ մարդը մինչև որևէ աշխատանքով զբաղվելը առաջին հերթին պետք է բավարարի իր ամենօրյա կարիքները՝ ունենա սնունդ, հագուստ, բնակարան, կենցաղի ու անձնական գործածության առարկաներ և այլն: Այստեղից հետևություն, բանվորը ոչ միայն իր ամբողջ աշխատաժամանակը, այլև արտաաշխատաժամանակի ղգալի մասը անհրաժեշտաբար հատկացնում է նշված նպատակների համար: Ուստի որքան քիչ լինի այդ նպատակների համար ծախսվող արտաաշխատանքային ժամանակը, այնքան ավելի մեծ կլինի ազատ ժամանակի տևողությունը:

Նկատենք մի հանգամանք ևս. բանվորի նյութական-կենցաղային պայմանների բարելավումը և ամրապնդումը կանխորոշում են նրա գործունեության բնույթը, հանդիսանում են նրա հոգևոր պահանջմունքների և հետաքրքրությունների մեծացման նյութական ու բարոյական հիմքը: Եվ վերջապես, նյութական պայմանների շարունակաբար բարձ-

բացումը ստեղծում է տնտեսության աշխատանքների մեքենայացման, կենցաղի ոլորտի հանրայնացման լայն հնարավորություններ, որոնց շնորհիվ բանվորը բեռնաթափվում է լրացուցիչ ծանրաբեռնվածությունից, ազատվում է տնային զանազան հոգսերից, աճում է նրա տնտեսական անկախությունը, զարգանում է ինքնագործունեությունը, նա ավելի շատ ժամանակ և հնարավորություն է ունենում զբաղվելու իր հակումների ու ցանկությունների բավարարումով: Առանձնակի տեղ տալով հասարակության նյութական բարեկեցության բարձրացման և ազատ ժամանակի օգտագործման միջև գոյություն ունեցող դիալեկտիկական սերտ կապին, Վ. Ի. Լենինը նշում էր. «Երկիրն անչափ հարուստ է այդքան այժմ, և նա կարող է միանգամից եռապատկել իր հարստությունները... դրանով բոլոր բանվորական ընտանիքների համար ապահովելով տանելի, մարդկային բանական գոյությունը վայել նկամտի մակարդակ և ոչ չափազանց երկար աշխատանքային օր՝ օրական 6 ժամ»[97]:

Այսպիսով, որքան բարձրանում են բանվորի, իհարկե և ամբողջ հասարակության, նյութական մակարդակն ու կենցաղային պայմանները, այնքան ավելի է կրճատվում այդ նպատակի համար օգտագործվող արտաաշխատանքային ժամանակը և դրա հետ մեկտեղ ավելանում է բուն ազատ ժամանակը: Ահա թե ինչու, ազատ ժամանակի տևողության ավելացման և նրա արդյունավետ ու նպատակասլաց օգտագործման համար կարևոր նշանակություն ունեն բանվորի առօրյա կյանքի անմիջական նյութական-կենցաղային պայմանները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում սոցիալիստական ժողովրդական տնտեսության զարգացման հաջողությունները մեծ ազդեցություն ունեցան սովետական ժողովրդի կյանքի ու բարեկեցության վրա, թույլ տվեցին լուծել սոցիալական լուրջ պրոբլեմներ:

Ամբողջ երկրում, այդ թվում նաև մեր Հանրապետությունում աշխատավարձի բարձրացման[98], ինչպես նաև սպառման հանրային ֆոնդերի հաշվին բնակչությանը տրվող վճարումների ու արտոնությունների աճման շնորհիվ զգալիորեն բարձրացավ բանվոր-ծառայողների ռեալ եկամուտը: Այսպես, 1940 թ. համեմատությամբ 1960 թ. Հանրապետության բանվոր-ծառայողների ռեալ եկամուտը աճեց մոտ երկու անգամ: Եթե 1940 թ. խնայողական դրամարկղներում ՀՍՍՀ աշխատավորների ավանդների գումարը կազմում էր 3 մլն. ռուբլի, ապա 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ այն հասավ 81 մլն. ռուբլու[99]: Սովետական մարդկանց կենսամակարդակի բարձրացման կարևոր ազդ-

յուրներից են պետական հատկացումները սոցիալ-կուլտուրական ձեռնարկումների գծով։

Այդ նպատակի համար կատարվող հատկացումների գումարը հանրապետությունում մշտապես աճել է։ Այդ են ապացուցում №8 աղյուսակի տվյալները, որոնք վերաբերում են մեկ աշխատողին ընկնող սոցիալ-կուլտուրական ձեռնարկումների գծով կատարված ծախսումներին (բացարձակ թիվը ռուբլիներով, ըստ տարիների)[100]։

Աղյուսակ 8

1951 թ.	1956 թ.	1957 թ.	1958 թ.	1959 թ.
2847	2860	3283	3381	3774

Աշխատավորության նյութական-կենցաղային պայմանների բարելավման կարևորագույն պայմաններից է բնակարանային շինարարության ծավալումը։

ՍՄԿԿ-ն սոցիալիզմի կառուցման բոլոր փուլերում բնակարանային շինարարությունը համարել է իր գործունեության կարևորագույն խնդիրներից մեկը։ Բնակարանային շինարարության բարձր տեմպեր են դիտվել նաև սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում։ Բավական է նշել, որ հանրապետությունում պետական բնակարանային ֆոնդի բնակելի մակերեսը (միայն քաղաքներում և քաղաքատիպ ավաններում) 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1 մլն. 841 հազար քառ. մետր, 1940 թ. 622,4 հազար քառ. մետրի դիմաց[101]։

Զգալի հաջողություններ ձեռք բերվեցին նաև բնակչության սպասարկման ոլորտում, որը ներառնում է մանկական, առողջարանային, հանգստյան և կուլտուր-լուսավորական տներն ու հիմնարկները, կոմունալ-կենցաղային ծառայությունների և մանրածախ առևտրի ցանցը, սննդի ձեռնարկությունները, տրանսպորտը և այլն։ Բերենք համապատասխան մի քանի տվյալներ։ Եթե 1940 թ. ՀՍՍՀ քաղաքներում գործում էր 12 բաղնիք, ապա 1960 թ. դրանց թիվը հասավ 33-ի[102]։ Նույն ժամանակամիջոցում մանկամատույցների և մանկապարտեզների թիվը 286-ից (14530 տեղով) հասավ 416-ի (29830 տեղով)[103]։

Հասարակական սննդի և առևտրի օբյեկտների թիվը ավելացավ ավելի քան երկու անգամ[104]։ Այս ամենի շնորհիվ զգալիորեն կրճատվեց մարդու տնտեսական կախվածությունը տնային և օժանդակ զա-

նական հոգսերից։ Ս. Ստրումիլինի հետազոտությունները պարզել են, որ 1920-ական թվականներին տնային տնտեսության մեջ կանայք երեք անգամ ավելի շատ ժամանակ են կորցրել, քան տղամարդիկ, իսկ 1960-ական թվականներին այն կիսով չափ կրճատվեց[105]։

Դա կատարվել է տնային աշխատանքների մեքենայացման և կենցաղի ոլորտի հանրայնացման շնորհիվ։

Այսպիսով, սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում մեր երկրի սոցիալ-տնտեսական և կուլտուրական զարգացման մակարդակը ապահովում էր թե՛ արտաաշխատանքային, թե՛ ազատ ժամանակի մշտական աճ։

Հարց է ծագում, արդյո՞ք ազատ ժամանակի գոյության և նրա սիստեմատիկ աճի փաստը միայն սոցիալիստական հասարակարգին հատուկ երևույթ է։ Պատմական փորձը հաստատում է, որ բանվորական ժամանակի կրճատման հաշվին ազատ ժամանակի ավելացումդիտվել ու դիտվում է նաև զարգացած կապիտալիստական երկրներում։ Եթե կապիտալիստական հասարակարգն էլ է ընդունակ ապահովել ազատ ժամանակի մշտական աճ, ապա ինչպիսի տարբերություն կա սոցիալիստական և կապիտալիստական հասարակարգերի ազատ ժամանակների միջև և ինչպես է դա արտահայտվում։ Առաջ անցնելով նշենք, որ կապիտալիստական հասարակության մեջ բանվորական ժամանակի տևողության կրճատման և դրա հաշվին արտաաշխատանքային ու բուն ազատ ժամանակի ավելացման պատճառների բացահայտումը մեր նպատակը չհամարելով, չենք անդրադառնում այդ հարցին։ Ասենք միայն, որ այդ հասարակարգում ազատ ժամանակի մշտական աճը բանվոր դասակարգի կարևորագույն նվաճումներից է, որը նա ձեռք է բերել տիրող կարգերի դեմ մղած անզիջում պայքարով։ Փորձը ցույց է տալիս, որ հակադիր երկու հասարակական սիստեմներում ազատ ժամանակի հիմնական տարբերությունը պայմանավորված է ոչ թե նրա տևողությամբ, թեև դա ևս շատ կարևոր է, այլ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում այդ ժամանակի խաղացած սոցիալական դերով։ Վերջինս չափվում է բանվորի, նաև ամբողջ հասարակության համար, նրա բովանդակալից ու նպատակային օգտագործման նշանակությամբ, այսինքն, թե ազատ ժամանակը ինչպիսի դեր է խաղում բանվորի սոցիալական ակտիվության բարձրացման, նրա համակողմանի և ներդաշնակ զարգացման, ինչպես նաև ամբողջ հասարակության նյութական ու հոգևոր վերելքի գործում։ Կապիտալիզմի ներքին օրենքների ուսումնասիրությունը ցույց է տա-

չիս, որ այդ հասարակության մեջ ազատ ժամանակը բովանդակաղուրկ է և չի ծառայում իր նպատակին։ Այդ հասարակարգում բանվորական և ազատ ժամանակների միջև դիալեկտիկական կապի բացակայության հետևանքով ազատ ժամանակը վերածվում է բանվորի ուժասպառ օրգանիզմը վերականգնելու գործոնի, չի նպաստում անհատի՝ համակողմանի զարգացմանը, ձեռք չի բերում հասարակական արժեք, չի ծառայում հասարակության շահերին։ Ինչպես Կ. Մարքսն է նշում. «Բայց հավելյալ արժեքի նկատմամբ իր ունեցած անսահման կույր ձգտմամբ, իր գայլի ախորժակով կապիտալը ոտնատակ է տալիս աշխատանքային օրվա ոչ միայն բարոյական, այլև զուտ ֆիզիկական առավելագույն սահմանները։ Նա հափշտակում է մարմնի աճման, զարգացման ու առողջ պահպանման համար անհրաժեշտ ժամանակը։ Նա հափշտակում է այն ժամանակը, որ բանվորին անհրաժեշտ է թարմ օդից և արևի լույսից օգտվելու համար»[106]։

Ինչպես կարելի է նկատել ամբողջ շարադրանքից, սոցիալիզմի պայմաններում ազատ ժամանակը օգտագործման բնույթով բաժանվում է երկու խմբի։ Առաջին, երբ այդ ժամանակը օգտագործվում է ամբողջ հասարակության մասշտաբով, երկրորդ, երբ այն հատկացվում է անհատի համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը։ Իհարկե, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, երկրորդ դեպքում ևս ազատ ժամանակը ծառայում է ամբողջ հասարակության նյութական վերարտադրությանը և սոցիալ-կուլտուրական զարգացմանը։

Սոցիալիստական հասարակության մեջ ազատ ժամանակը լայն ասպարեզ է բացում անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման համար։ Ազատ ժամանակի խելացի օգտագործումը մեծապես նպաստում է անհատի հասարակական հետաքրքրությունների, հակումների և գիտակցության ձևավորմանն ու խորացմանը, բարոյաքաղաքական զարգացմանը, կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացմանը, ֆիզիկական պատրաստությանը և սոցիալական ակտիվության աճմանը։

Այդ ամենի շնորհիվ անհատը ձեռք է բերում արտադրական ու հասարակական գործունեության անհրաժեշտ պայմաններ և դրանով մեծացնում իր ներգործությունը հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա։

Ազատ ժամանակը ծառայում է մարդու հոգևոր-կուլտուրական հարստացմանը։ Սոցիալիստական-կոմունիստական շինարարության ամբողջ ընթացքում մեր երկրում բոլոր կերպով ավելացել են ազատ

ժամանակի ծախսերը ուսման համար։ Այսպես, եթե 1924 թ. ՍՍՀՄ-ում այդ նպատակով տղամարդ բանվորների համար ամսական ծախսվում էր 7,85 ոսկի ժամ, իսկ կանանց համար՝ 5,54, ապա 1950-ական թվականների վերջին այն ավելի քան կրկնապատկվեց[107]։ Որպես ընդհանուր միութենական երևույթ այն բնորոշ էր նաև Սովետական Հայաստանի համար։

Բանվոր դասակարգի, իհարկե, նաև ամբողջ աշխատավորության հանրակրթական, պրոֆեսիոնալ-տեխնիկական, հոգևոր-կուլտուրական, գեղագիտական, գաղափարական-քաղաքական, ինչպես նաև ստեղծագործական ակտիվության բարձրացման գործում վիթխարի դեր են խաղում ժողովրդական կրթության սիստեմը և կուլտուր-լուսավորական հիմնարկները։ Վերջիններիս շարքում առաջնակարգ տեղ են զբաղեցնում ակումբներն ու գրադարանները։ Ակումբը կուլտուրայի օջախ է, և նրա ամբողջ գործունեությունը անխզելիորեն կապված է բանվոր դասակարգի արտադրական-տնտեսական ու հասարակական կյանքի հետ։

Մեծ է բանվորական ակումբների դերը։ Նրանց ամբողջ աշխատանքը նպատակամղված է բանվոր դասակարգի արտադրական-տնտեսական և հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը։ Ապրելով իրենց գործարանների ու ֆաբրիկաների շահերով ու անխզելիորեն կապված լինելով բանվորական կոլեկտիվների հետ, նրանք ակտիվորեն մասնակցում են սոցիալիստական մրցության կազմակերպմանը, նպաստում նրա հրապարակայնությանը և լայն պրոպագանդմանը։ Ակումբները գործնական մասնակցություն են ունենում բնակչության շրջանում տարվող մասսայական-քաղաքական միջոցառումներին, նրանց համար սիստեմատիկաբար կազմակերպում են դասախոսություններ, զրույցներ, զեկուցումներ, հանդիպումներ և այլն։ Այս ամենը, անշուշտ, նպաստում է բանվոր դասակարգի կոմունիստական դաստիարակությանը, նրա հոգևոր-կուլտուրական մակարդակի բարձրացմանը և սոցիալական ակտիվության աճմանը։

Բանվորների կողմից ազատ ժամանակի խելացի օգտագործման բնագավառում առանձնահատուկ նշանակություն ունեն գրադարանները, որոնք մեծ աշխատանք են կատարում բանվոր դասակարգի հոգևոր-կուլտուրական մակարդակի բարձրացման ուղղությամբ։

Սոցիալիստական հասարակության զարգացման փորձը վկայում է, որ մեր երկրում, որպես կանոն, միլիոնավոր բանվոր-ծառայողներ իրենց ազատ ժամանակի մի մասը ծախսում են մասնագիտական ու

Հանրակրթական գիտելիքների հարստացման և խորացման վրա։ Այդ են թելադրում մարդկության առաջադիմությունը, կոմունիստական բարոյականությունը և հասարակության շահերը։ Ազատ ժամանակի ընթացքում կուլտուր-լուսավորական, հանրակրթական և պրոֆեսիոնալ-տեխնիկական օջախներում բանվորները, ընդլայնելով և խորացնելով իրենց մասնագիտական ու հանրակրթական գիտելիքները, արտադրական և հասարակական-քաղաքական կյանքում դառնում են ավելի կազմակերպված ու գործունյա, ավելի նախաձեռնող, բարձրանում է նրանց արտադրական և հասարակական կուլտուրան։ Այս ամենը, վերջին հաշվով, նպաստում է նրանց ստեղծագործական ակտիվության բարձրացմանը։

Ուստի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը ազատ ժամանակը կարևորելով ոչ որպես ազատ ժամանցի միջոց, այլ որպես հասարակական հարստություն, ամեն ինչ արել և անում են այն ավելի նպատակասլաց ու բովանդակալից օգտագործելու համար։ Այդ նպատակի համար ՍՍՀՄ-ում ստեղծվել են անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմաններ։ Մեր միտքը հաստատվում է 9-րդ աղյուսակի տվյալներով։

Աղյուսակ 9

Մասսայական գրադարանների, ակումբների և կինոսարքերի բանակը ՍՍՀՄ-ում, այդ թվում Հայաստանում[108]

	1940		1950		1960	
	ՍՍՀՄ-ում	Հայաստանում	ՍՍՀՄ-ում	Հայաստանում	ՍՍՀՄ-ում	Հայաստանում
Ակումբներ	118 հազար	897	123,4 հազար	1163	128,6 հազար	1119
Գրադարաններ	277,2 հազար	908	351,1 հազար	1468	382,0 հազար	1142
Գրքեր և ամսագրեր	527,4 մլն.	711 հազար	713,9 մլն.	1247 հազար	1890,3 մլն.	7304 հազար
Կինոսարքեր	28 հազար	168	42,0 հազար	374	103,4 հազար	534

Աղյուսակից հետևում է, որ 1940 թ. համեմատությամբ 1960 թ. Հայաստանում ակումբների և գրադարանների թիվը համապատասխանաբար աճել է 80 և 79,5%-ով, (Միության մեջ 92 և 72%-ով)։

Նույն ժամանակամիջոցում գրքերինը և ամսագրերինը՝ 10 անգամ (Միությունում մոտ 4 անգամ), իսկ կինոսարքավորումներինը՝ 3,1 անգամ: Ավելացնենք նաև, որ նշված տարիներին ամբողջ երկրում, այդ թվում և Հայաստանում, արագորեն աճել են գրադարանների գրքային ֆոնդը, ընթերցողների թիվը, ինչպես նաև կինոհաճախումներն ու դասախոսությունների ունկնդրումները: Այսպես, օրինակ, եթե 1940 թ. Սովետական Հայաստանում լույս են տեսել 723 գիրք ու ամսագիր՝ 3324 հազար տպաքանակով, ապա 1960 թ.՝ 1307 գիրք ու ամսագիր՝ 8901 հազար տպաքանակով: Արդեն 1960 թ. Հանրապետության գրադարաններում հաշվվում էր 7304 հազար օրինակ գիրք ու ամսագիր, 1940 թ. 711 հազարի դիմաց[109]: 1960 թ. ՍՍՀՄ-ում գրադարաններից օգտվում էին 53014 հազար ընթերցողներ, Հայաստանում 336 հազար[110]: Այդ տարիներին յուրաքանչյուր բնակչին ընկնող կինոհաճախումների թիվը 3-ից հասել է 9-ի[111]: 1950 թ. Հայաստանում գործել է 18 թանգարան՝ 140,3 հազար մարդ-հաճախումով, իսկ 1960 թ.՝ 24 թանգարան, հաճախումների քանակը եղել է ավելի քան 500 հազար: Հանրապետության մասշտաբով մասսայական կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցի ընդլայնման հետ արագորեն աճում էին նաև արհմիութենական կուլտուրական օջախները: Եթե 1950 թ. ՀՍՍՀ գործարաններում, ֆաբրիկաներում և նորակառույցներում գործում էր 77 գրադարան՝ 152 հազար գիրք-ամսագրով, ապա 1960 թ.՝ 94 գրադարան՝ 485 հազար գիրք-ամսագրով: Նշված տարիներին արհմիութենական կազմակերպություններին պատկանող ակումբների թիվը ավելացավ 45-ով և կազմեց 152: 1950 թ. Հանրապետության հիմնարկ ձեռնարկություններում գործել է 33 ստացիոնար կինոսարքավորում, իսկ 1960 թ.՝ 46[112]: Արհմիութենական կուլտուրական օբյեկտներում սիստեմատիկաբար կազմակերպվում էին դասախոսություններ, զրույցներ և այլ միջոցառումներ:

Ապատ ժամանակի ընթացքում անհատի սոցիալական ձևավորման, նրա նախաձեռնության և ստեղծագործական ակտիվության բարձրացման ու կոմունիստական դաստիարակության գործում հսկայական դեր են խաղացել կուլտուրայի հիմնարկների ինքնագործ խմբակները: Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում, երկրում, այդ թվում նաև մեր Հանրապետությունում, արագորեն աճեց ինքնագործ խմբերի և դրանցում ընդգրկվածների թիվը: Բավական է ասել, որ 1940 թ. ամբողջ Միության մեջ ինքնագործ խմբերի թիվը հասնում էր 158 հազարի (2031 հազար անդամով), իսկ 1960 թ.՝

մոտ 205 հազարի՝ 2918 հազար անդամով[113]։ Սովետական Հայաստանում ինքնագործ խմբերի թիվը 1960 թ. կազմեց 3325 (55,5 հազար անդամով), 1940 թ. 1526 խմբերի (25,8 հազար անդամով) դիմաց[114]։ 1960 թ. Հանրապետության կուլտուրայի օջախներին կից գործում էին՝ 738 պոլիտեխնիկական խմբակ՝ 12016 անդամով, 518 ագրոտեխնիկական խմբակ՝ 7767 անդամով, 617 Հանրակրթական խմբակ՝ 9016 անդամով, 1959 ֆիզկուլտ-սպորտային խմբակ՝ 15825 անդամով և այլն[115]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում առավել լայն տարածում ստացան գեղարվեստական ինքնագործունեության խմբերը, որոնք հըսկայական դեր խաղացին ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական սովետական արվեստի ծաղկման ու պրոպագանդման ուղղությամբ։ Բավական է նշել, որ եթե 1946 թ. ՀՍՍՀ կուլտուրայի հիմնարկներին կից գործում էին ժողովրդական ինքնագործ արվեստի ավելի քան 400 խմբեր (թատերական, երգի, պարի, ասմունքի և այլն) 8000 անդամով[116], ապա 1960 թ.՝ 1177 խումբ՝ 11727 անդամով։ 1960 թ. այդ խմբերի ուժերով բանվոր-ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար տրվել է 1148 ներկայացում, որոնք դիտել են 170 հազար մարդ[117]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բանվոր-ծառայողների ինքնագործ արվեստը բարձր զարգացման էր հասել Հանրապետության սննդի արդյունաբերության մինիստրության ձեռնարկություններում, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան քիմիական գործարանում, ալյումինի գործարանում, Զանգեզուրի պղնձի հանքերի վարչությունում և ուրիշ կոլեկտիվներում։ Բավարարվենք բազմաթիվ օրինակներից մեկի հիշատակումով։ Աշխատավորների կոմունիստական դաստիարակության և բանվոր-ծառայողների հանգստի խելացի կազմակերպման, նրանց ինքնագործունեության զարգացման հարցերը մշտապես գտնվել են սննդի արդյունաբերության ձեռնարկությունների արհմիութենական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում։ Սննդագործների արհմիութենական ակումբներում 1956 թ. գործող 81 գեղարվեստական ինքնագործունեության խմբերում ընդգրկված էին 882 բանվոր-ծառայողներ։ Արդեն 1960 թ. խմբերի թիվը կազմեց 97, 1600 մասնակիցներով։ Ուշագրավ է, որ ժողովրդական գործիքների, պարի, թատերական և ասմունքողների խմբերի ելույթները դիտել են ոչ միայն սննդի արդյունաբերության բանվորները, այլև Միության շատ ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվներ[118]։

Այս և նման օրինակները ցույց են տալիս, որ սոցիալիստական

հասարակարգը իր անդամների համար ստեղծել է անհրաժեշտ բոլոր պայմանները ազատ ժամանակի ընթացքում ոչ միայն բարձրացնելու իրենց գեղագիտական մակարդակը և բավարարելու հոգևոր-կուլտուրական պահանջները, այլ նաև բացահայտելու և դրսևորելու իրենց կարողությունները, հմտություններն ու ունակությունները: Մասնակցելով ինքնագործ արվեստին կամ հաղորդակցվելով նրան, մարդիկ հոգեպես հարստացել են, բարձրացել է նրանց գեղագիտական ճաշակը, մյուս կողմից գեղարվեստական ինքնագործունեությունը որպես մասսաների, միլիոնների իսկական արվեստ, հարստացել է նրանց ստեղծագործական նախաձեռնությամբ:

Գեղարվեստական ինքնագործունեության կարևորությունը մեծ է եղել նաև բանվոր դասակարգի արտադրական և հասարակական գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Գեղարվեստական այս կամ այն ինքնագործ խմբին մասնակցելը կամ հաղորդակցվելը ներգործել է բանվորի հոգեկան աշխարհի վրա, բարձրացրել նրա ընդհանուր տրամադրությունը, որը, անշուշտ, բանվորի արտադրական ու հասարակական-քաղաքական գործունեության արդյունավետության բարձրացման կարևոր աղբակ է: Այս երևույթը սոցիալիստական արտադրական հարաբերությունների զարգացման ելակետային սկզբունքներից է: «Երբ հասարակությունը,— գրել է Ֆ. Էնգելսը,— ստանձնում է արտադրամիջոցների տիրապետությունը և դրանք անմիջականորեն հանրայնացված ձևով գործադրում է արտադրության համար, յուրաքանչյուր առանձին անհատի աշխատանքը, որքան էլ տարբեր լինի դրա յուրահատուկ օգտակար բնույթը, հենց սկզբից և անմիջականորեն դառնում է հանրային աշխատանք»[119]: Ֆ. Էնգելսի այս բնորոշումից հետևում է, որ սոցիալիզմի պայմաններում մարդկանց ինքնագործունեությունը կուլտուրական հանգստի կազմակերպման հետ հանրօգուտ արտադրական աշխատանքի զուգորդումն է:

Ազատ ժամանակի ավելացումը ուղեկցվել է բնակչության ընդհանուր և մասնագիտական կրթական մակարդակի բարձրացումով: Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից առանձնակի սրությամբ դրվեց ուսման համար ազատ ժամանակի ավելացման հարցը: Եթե անցման շրջանում, մասնավորապես 20-ական թվականներին, ազատ ժամանակը մեծ մասամբ օգտագործվում էր բնակչության անգրագիտության վերացման և նրանց տարրական գիտելիքներով զինելու համար, ապա սոցիալիզմի ամրապնդման ժամանակաշրջանում, կապված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակար-

դակի հետ, այն ծախսվում էր ընդհանուր և մասնագիտական գիտելիքների բարձրացման նպատակով: Դա բացատրվում է հետևյալով.

ա) Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բարդ և կատարելագործված տեխնիկայի վրա հիմնված բազմաճյուղ ժողովրդական տնտեսության շահերը պահանջում էին համակողմանի պատրաստություն ունեցող բանվորական ձեռքեր: բ) Սոցիալիստական պետության զարգացումը և երկրի հասարակական-քաղաքական կյանքի դեմոկրատացումն իրենց հերթին պահանջում էին խորացնել աշխատավորների քաղաքական գիտելիքները, զարգացնել կուսակցական, կոմերիտական և արհմիութենական ուսուցման ցանցը:

Ուսման համար ազատ ժամանակի օգտագործումը ստացավ մասսայական բնույթ, և նրա տարբեր օղակներում ընդգրկվեցին աշխատավորության բոլոր խավերի ներկայացուցիչները, առաջին հերթին բանվորները: Այսպես, եթե 1940/41 ուսումնական տարում ՀՍՍՀ բանվոր երիտասարդության երեկոյան և հեռակա դպրոցներում սովորում էր 6292 մարդ, ապա 1960 թ. սովորողների թիվը կազմեց 18814, որից 13242-ը կամ 70%-ը բանվորներ էին[120]: Նշված ժամանակամիջոցում սովորողների թվի աճ է դիտվել նաև երեկոյան և հեռակա բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության ուսումնական հաստատություններում, ինչպես նաև կուսակցական և կոմերիտական քաղաքական լուսավորության սիստեմում:

Ազատ ժամանակի ռացիոնալ ու նպատակասլաց օգտագործման ձևերից է տեխնիկական ստեղծագործական աշխատանքի իրականացումը: Այդ ընթացքում ազատ ժամանակն ավելի ու ավելի է հագեցվում հասարակայնորեն իմաստալի բովանդակությամբ և նպատակամղվում է հասարակության նյութական կյանքի հարստացմանը, ինչպես նաև անհատի ինքնուրույն նախաձեռնության և ստեղծագործական ուժերի ծաղկմանը: Արտադրության մեջ, ազատ ժամանակի ընթացքում, բանվորների տեխնիկական ստեղծագործական ակտիվության դրսևորումը կապված է հիմնականում գյուտարարական ու նորարարական շարժման հետ:

Ազատ ժամանակի ընթացքում նոր մարդու ձևավորման, նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացման և ստեղծագործական ակտիվության բարձրացման գործում կարևոր դեր ունեն ֆիզկուլտուրան և սպորտը: Բազմաթիվ ուսումնասիրություններ, մասնավորապես գործնական փորձը հավաստում են, որ ֆիզկուլտուրան ու սպորտը ամրապնդում են մարդու առողջությունը, վերականգնում աշխատու-

նակությունը: Ֆիզկուլտուրան և սպորտը նպաստում են կոլեկտիվի անդամների կապերի ամրապնդմանը, բարձրացնում են նրանցից յուրաքանչյուրի պատասխանատվությունը, անհատի մեջ մշակում են վերաբերմունք իր ուժն ու կարողությունը կոլեկտիվի շահերին ծառայեցնելու ուղղությամբ, նրա հոգեբանության մեջ ձևավորում և ամրապնդում են համարձակություն, տոկունություն, վստահություն, հայրենասիրություն, բարեկամություն և բարոյական այլ սկզբունքներ ու գաղափարներ: Այսպիսի հարաբերությունների և սկզբունքների ձևավորումը ոչ միայն կարևոր դեր են խաղում բանվորի համակողմանի զարգացման, այլև նրա տրամադրության ու հոգեկան վիճակի բարձրացման գործում: Արտադրության համակողմանի մեքենայացման ու ավտոմատացման շնորհիվ անընդմեջ կրճատվում է բանվորի ֆիզիկական աշխատանքի բաժինը: Արտադրողական ուժերի բուռն զարգացման պայմաններում, երբ ձեռքի աշխատանքը ավելի ու ավելի է իր տեղը զիջում մտավոր աշխատանքին, արդյո՞ք անհրաժեշտություն կա, որ բանվորը կատարելագործի իր ֆիզիկական պատրաստությունը: Հասարակության զարգացման փորձը ցույց է տալիս, որ որքան զարգանում ու կատարելագործվում է արտադրության տեխնիկան ու բարդանում է արտադրությունը, այնքան ավելի են մեծանում մարդու ֆիզիկական պատրաստության պահանջները: Դա բացատրվում է նրանով, որ տեղի է ունենում ֆիզիկական աշխատանքի ինտելեկտուալացում, արտադրության պրոցեսում պահանջվում է բանվորի ֆիզիկական և զգայական ունակությունների գործունեության սերտ ներդաշնակություն, արագ կողմնորոշվելու հմտություն, մեքենայի աշխատանքը հսկելու կարողություն և այլն: Այս ամենը անհրաժեշտաբար բանվորից պահանջում են ֆիզիկական լավ պատրաստություն: Հասարակական և տնտեսական կյանքում կատարված վերոհիշյալ տեղաշարժերը հրամայաբար պահանջում էին ամեն կերպ զարգացնել ու կատարելագործել ֆիզիկական կուլտուրան և սպորտը, այդ շարժման մեջ ընդգրկել բնակչության լայն մասսաներին: Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի ցուցումներով Հայաստանի կոմկուսի Կենտկոմը ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընդունեց մի շարք որոշումներ հանրապետությունում ֆիզկուլտուրան ու սպորտը ավելի մասսայական դարձնելու համար: Այսպես, օրինակ, հիմք ունենալով մեր երկրում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման մասին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1948 թ. հուլիսի 16-ի և Համկ(բ)Պ Կենտկոմի 1948 թ. դեկտեմբերի 27-ի որոշումները, ՀԿԿ Կենտկոմը և Հանրապետության կա-

ռավարությունը ընդունեցին համապատասխան որոշումներ։ Քննադատաբար վերլուծելով ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման վիճակը Հանրապետությունում, ՀԿԿ Կենտկոմը նշեց, որ շատ հիմնարկ-ձեռնարկություններում ու կազմակերպություններում չկան ֆիզկուլտ կոլեկտիվներ, եղած միջոցներն ու հնարավորությունները արդյունավետ չեն օգտագործվում, չեն ծառայում բանվորների ակտիվ հանգստին։ Հանրապետության կոմկուսի Կենտկոմը պարտավորեցրեց սկզբնական կուսակցական կազմակերպություններին և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի հանրապետական կոմիտեին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում և ուսումնական հաստատություններում ֆիզկուլտ կոլեկտիվներ կազմակերպելու, այդ կոլեկտիվները կազմակերպորեն ամրապնդելու, սպորտային սեկցիաներում ուսումնամարզական աշխատանքները բարելավելու և սպորտի բոլոր տեսակների լայն զարգացումը ապահովելու համար[121]։

Հայաստանում ֆիզկուլտ-սպորտային աշխատանքների հետագա բարելավման և այդ շարժման մեջ լայն մասսաների ներգրավման գործում կարևոր խթան հանդիսացան ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի «Երկրում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ղեկավարման մասին» 1959 թ. որոշման։ Հետևությամբ ՀԿԿ Կենտկոմի մշակած միջոցառումները[122]։

Աղյուսակ 10

Ֆիզիկական կուլտուրայի զարդացումը Հայաստանում[123]

	1940	1946	1955	1958	1960
Ֆիզկուլտ կոլեկտիվների թիվը	718	777	2235	2386	2138
Ֆիզկուլտուրնիկների թիվը	4441	33560	246047	173551	251100

Ֆիզկուլտուրան և սպորտը մասսայական դարձնելու համար կուսակցական, պետական և հասարակական կազմակերպությունների ամենօրյա ու հետևողական աշխատանքը հանգեցրեց նրան, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ի շարս միութենական մյուս հանրապետությունների, Հայաստանում նույնպես արագորեն աճեց ֆիզկուլտուրային կոլեկտիվների և ֆիզկուլտուրնիկների թիվը։

Ինչպես տեսնում ենք 10-րդ աղյուսակի տվյալներից, ՀՍՍՀ-ում 1940 թ. համեմատությամբ 1960 թ. ֆիզկուլտ կոլեկտիվների թիվը

աճել է 3,5, իսկ ֆիզկուլտուրնիկներինը՝ 5,6 անգամ։ Բերենք հանրապետությունում ֆիզկուլտուրայի առաջընթացը վկայող մի փաստ ևս։ Եթե 1940 թ. Հայաստանում պատրաստ աշխատանքի և պաշտպանության (ՊԱՊ) համալիրի 1-ին և 2-րդ աստիճանների նորմաներ հանձնողների թիվը չէր անցնում 1000-ից, ապա 1960 թ. այն հասավ 23908-ի[124]։

Ինչպես Միության մեջ, այնպես էլ Հայաստանում ֆիզկուլտ կոլեկտիվների և դրանցում ընդգրկվածների թիվը բուռն կերպով աճել է արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի աշխատավորական կոլեկտիվներում։ Բավական է ասել, որ եթե 1950 թ. Հանրապետությունում եղած 1931 ֆիզկուլտ կոլեկտիվներից 390-ը կամ 20,6% էին արհմիութենական, ապա 1960 թ.՝ 2538-ից 850-ը[125] կամ 33,5%-ը։

Ֆիզկուլտուրան և սպորտը լայն մասսայականություն էին վայելում Երևանի Ձերժինսկու անվան հատոցաշինական գործարանում, Լենինականի տեքստիլ կոմբինատում, երկաթուղային դեպոյում, Կիրովականի քիմիական կոմբինատում և շատ ուրիշ գործարաններում ու ֆաբրիկաներում։ Օրինակ, 1949 թ. Երևանի Ձերժինսկու անվան հատոցաշինական գործարանի ֆիզկուլտ խմբակներում ընդգրկված էին 210 բանվորներ։ Գործարանի ֆիզկուլտուրնիկներից շատերը աչքի են ընկել հանրապետական և միջհանրապետական մրցումներում։ Ըմբիշներ Կ. Թովմասյանը և Հ. Առաքելյանը, մասնակցելով Անդրկովկասյան հանրապետությունների միջև անցկացվող մրցումներին, համապատասխանաբար գրավեցին 2-րդ և 3-րդ տեղերը։ Լենինականի տեքստիլ կոմբինատի «Կարմիր դրոշ» ֆուտբոլային թիմը հանրապետության մրցումներում շատ անգամ գրավել է մրցանակային տեղեր[126]։

Ֆիզկուլտուրային շարժմանը վերաբերող շարադրանքից հետևում է, որ ֆիզիկական դաստիարակության սոցիալական նշանակությունը վերջին հաշվով հանգում է նրան, որ այն կատարելագործում ու հարըստացնում է մարդկանց արտադրա-տնտեսական և հասարակական-քաղաքական գործունեության հնարավորությունները, բարձրացնում է նրանց աշխատունակությունը։

Մոսկվայի առանցքակալների գործարանի մի խումբ (300 մարդ) բանվորների աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ֆիզկուլտուրայով զբաղվողների մոտ աշխատանքի արտադրողականությունը բարձր է 3,4%-ով։ Բացի դրանից, նրանք տարվա մեջ միջին հաշվով յոթ օր քիչ են հիվանդանում, քան նրանք, ովքեր չեն զբաղվում ֆիզկուլտուրայով[127]։ Մի քանի տվյալներ մեր հանրապե-

տությունից։ Երևանի կոնսերվի գործարանի առաջավոր ֆիզկուլտուրնիկ բանվորներ՝ Գ. Ավագյանը, Վ. Աբաջյանը, Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատից Ա. Կարապետյանը, Գ. Բարսեղյանը, Դավիանի պղնձահանքերից Վ. Քալաշյանը, Գ. Հարությունյանը և շատ ուրիշներ շարունակ ընթացել են սոցիալիստական մրցության առջևից և մշտապես կատարել ու գերակատարել են իրենց պլանային առաջադրանքները[128]։

Հետևաբար, ֆիզկուլտուրայով զբաղվելը և ֆիզիկական պատրաստությունը բարձրացնելը հանդիսանում է մարդու ոչ միայն անձնական, այլ նաև հասարակական պարտքը, որովհետև այն վերջին հաշվով ծառայում է հասարակության շահերին։

Մեր երկրում ֆիզկուլտուրան և սպորտը զարգացման լայն միտում ունեն առանձնապես արդի ժամանակաշրջանում, երբ մեր հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի մեջ գնալով ավելի ու ավելի են աճում մարդու ֆիզիկական կատարելության ներկայացվող պահանջները։ ՍՄԿԿ նոր ծրագրում ասված է. «Պետք է գործն այնպես կազմակերպել, որ յուրաքանչյուր մարդ երիտասարդ հասակից հոգ տանի իր ֆիզիկական կատարելագործման մասին, տիրապետի հիգիենայի և բուժօգնության բնագավառի գիտելիքների, վարի առողջ ապրելակերպ»[129]։

Մեծ է ազատ ժամանակի դերը նաև բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացման գործում։ Ազատ ժամանակի ընթացքում նրա հասարակական-քաղաքական գործունեության կարևոր ձևերից է՝ մասնակցությունը բոլոր աստիճանի սովետների ընտրություններին։ Նկատենք նաև, որ սովետների կազմում ընտրվածբանվոր դեպուտատները, որոնք ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերում աշխատողներ են, իրենց դեպուտատական պարտականությունները կատարում են ազատ ժամանակի ընթացքում։

Վ. Ի. Լենինը գրում էր.« Մեր նպատակն է, որ յուրաքանչյուր աշխատավոր անվճար կատարի պետական պարտականություններ՝ արտադրողական աշխատանքի 8 ժամյա «դասը» վերջացնելուց հետո, դրան անցնելն առանձնապես դժվար է, բայց այս անցման մեջ է միայն սոցիալիզմի վերջնական ամրապնդման երաշխիքը»[130]։ Ազատ ժամանակում բանվոր դասակարգը ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն է ծավալում նաև արհմիություններում, կոմերիտմիության մեջ, կոոպերացիայում, ժողովրդական վերահսկողության օրգաններում, ժողովրդական դատարաններում, տնային ու ծնողական

կոմիտեներում և հասարակական կազմակերպություններում ու խորհուրդներում։

Այսպիսով, բանվոր դասակարգի ստեղծագործական ակտիվության ու ազատ ժամանակի փոխներգործության կապի և ազատ ժամանակի տևողության ավելացման սոցիալ-տնտեսական հիմքերի բացահայտումը թույլ է տալիս անելու մի շարք հետևություններ։

ա) Մեր երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական մեծ վերափոխումները, մարդկանց նյութական բարեկեցության վերելքը, նրանց կրթական և կուլտուրական մակարդակի աճը, ազատ ժամանակի առկայությունը նպաստավոր պայմաններ են ստեղծել անհատի համակողմանի զարգացման, նրա հասարակական գիտակցության բարձրացման և ստեղծագործական ակտիվության բարձրացման համար։

բ) ՍՍՀՄ-ում մշտապես աճել է ազատ ժամանակը և շարունակաբար հարստացել է նրա բովանդակությունը, ստեղծվել են նյութական և հոգևոր անհրաժեշտ պայմաններ այդ ժամանակի արդյունավետ օգտագործման համար։

գ) Սոցիալիստական հասարակության մեջ ազատ ու բանվորական ժամանակների միջև գոյություն ունի սերտ կապ ու փոխպայմանավորվածություն։

դ) Սոցիալիզմի պայմաններում ազատ ժամանակը որպես համաժողովրդական հարստություն ծառայում է հասարակության շահերին, նպաստակամղվում է նրա նյութական ու հոգևոր վերելքին, այսինքն՝ ձեռք է բերում հասարակական արժեք։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

1. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎԵՐԵԼՔԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Բանվոր դասակարգի առաջատար դերի ամրապնդումը շաղկապված է նրա գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացման հետ: Սոցիալիստական շինարարության փորձը ամենից առաջ հավաստում է, որ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը և հասարակական հարաբերությունների կատարելագործումը մեծապես կապված են ամբողջ աշխատավորության, առաջին հերթին բանվոր դասակարգի կոմունիստական գիտակցության անընդմեջ բարձրացման հետ: Գաղափարաքաղաքական բարձր մակարդակ ունեցող դասակարգը ավելի հեշտությամբ է իմաստավորում, ընդհանրացնում ու իրականացնում մեր կյանքի հրատապ պրոբլեմներն ու խնդիրները, քանի որ այդպիսի դասակարգի մոտ ներդաշնակորեն զուգակցվում են բարձր գաղափարայնությունը, աշխատասիրությունը և կազմակերպվածությունը: Ուստի, որքան բարձր լինի հասարակության առաջատար դասակարգի գաղափարաքաղաքական մակարդակը, այնքան մեծ կլինի նրա առաջատար դերը կյանքի բոլոր բնագավառներում:

Երկրորդ, երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքին բանվոր դասակարգի ակտիվ մասնակցության գործում հսկայական նշանակություն ունի նրա կողմից հասարակության մեջ իր տեղի և դերի ըմբռնումը: Հետևաբար, հասարակության առաջատար ուժի սոցիալական զարգացման այդ կողմի ապահովումը խնդիր է դնում սիստեմատիկաբար բարձրացնել նրա յուրաքանչյուր անդամի գաղափարաքաղաքական մակարդակը:

Երրորդ, գաղափարաքաղաքական մակարդակի աճը վիթխարի դեր է կատարում բանվորությանը սովետական հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու գործում:

Չորրորդ, որպես հասարակության առաջատար ուժ, բանվոր դասակարգի կոմունիստական գիտակցականության անընդհատ բարձրացման հետ են կապված բուրժուական գաղափարախոսության դեմ ամբողջ աշխատավորության անդրիջում պայքարի թափն ու նպատակասլացությունը։

Ահա թե ինչու մեր առաջընթացի յուրաքանչյուր փուլում կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը, մշակելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները, մեղանում շատ բան են արել և անում են աշխատավորության գաղափարաքաղաքական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ։

Սովետական հասարակության առաջատար դասակարգի գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացման խնդիրը նոր կարևորություն ստացավ սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում։ Նշված ժամանակաշրջանում մեր երկիրը պետք է լուծեր սոցիալ-տնտեսական, քաղաքական և կուլտուրական բնույթի բազում խնդիրներ։ Պատմական տվյալ ժամանակաշրջանում, երբ սոցիալիզմի ամրապնդումն ու զարգացումը օրակարգի հարց էր դարձրել բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրներ, է՛լ ավելի աճեց բանվոր դասակարգի գլխավոր դերը կյանքի բոլոր բնագավառներում։ Ջուգահեռաբար մեծացան պահանջները նաև նրա գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացման նկատմամբ։ Մարքս-լենինյան գաղափարների տիրապետումը, կոմունիստական աշխարհայացքի ձևավորումը, կուսակցության ներքին և արտաքին քաղաքականության խոր ըմբռնումը կենսական անհրաժեշտություն դարձան սովետական յուրաքանչյուր մարդու համար։

Սովետական հասարակության, իհարկե և բանվոր դասակարգի գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացումը և նրա կոմունիստական աշխարհայացքի ձևավորումը բարդ ու բազմակողմանի երևույթ է։ Այն դրսևորվել է մի շարք ձևերով։ Քննարկենք դրանցից մի քանիսը։ Աշխատավորությանը մարքս-լենինյան գաղափարներով դաստիարակելու, նրանց սոցիալիստական գիտակցությունը և հոգևոր-կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում վճռական դեր ունի կուսակցական-կոմերիտական լուսավորական ցանցը, որն ընդգրկում է ինչպես կոմունիստներին ու կոմերիտականներին, այնպես էլ անկուսակցական բանվորների մի մասին։ Կուսակցական ուսուցման սիստեմում կոմունիստներն ու անկուսակցականներն ուսումնասիրում են մարքսիզմ-լենինիզմի դասականների, կուսակցության և պետության ղեկա-

վար գործիչների աշխատությունները, կուսակցության համագումարների ու պլենումների նյութերը, կուսակցության կարևորագույն փաստաթղթերը։

Հատկանշական է, որ կոմունիստական կուսակցությունը մասսաների գաղափարական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ մեծածավալ աշխատանք կատարեց հետպատերազմյան ժամանակաշրջանում։ Խաղաղ շինարարության տարիներին սոցիալիստական ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման խնդիրները հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ էր ընդլայնել մասսաների դաստիարակչական աշխատանքը և բարձրացնել նրանց արտադրական ու հասարակական-քաղաքական ակտիվությունը։ Այդ աշխատանքի հաջողությունն առաջին հերթին կախված էր կոմունիստների մարքսլենինյան կոփվածքից։ Կուսակցության անելիքները շատ էին այդ ուղղությամբ։ Բանն այն է, որ պատերազմի տարիներին կուսակցության կազմը նկատելիորեն նորացել էր և ընդունվածների զգալի մասը, հասկանալի պատճառներով, չէին ստացել անհրաժեշտ գաղափարաքաղաքական պատրաստություն։ Կուսակցության Կենտրոնական կոմիտեն կուսակցական-գաղափարախոսական աշխատանքը բարելավելու համար ձեռնարկեց նոր միջոցառումներ։ Համկ(բ)Պ Կենտկոմի 1946 թ. որոշմամբ Համկ(բ)Պ մարզկոմներին, երկրկոմներին և միութենական հանրապետությունների կոմկուսի Կենտկոմներին կից ստեղծվեցին մարզային, երկրամասային և հանրապետական կուսակցական դպրոցներ, ուսուցման երկամյա ժամկետով[1]։ 1946—1947 թթ. ՍՍՀՄ-ում կազմակերպվեցին այդպիսի 75 դպրոցներ։ 1953 թ. այդ դպրոցներն անցան երեքամյա ուսուցման[2]։ 1946—1955 թթ. ընթացքում կուսակցական լուսավորության ցանցում սովորեցին կուսակցական և պետական ապարատի 64 հազար աշխատողներ[3]։

Ղեկավարվելով գաղափարական հարցերի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի համապատասխան որոշումներով ու ցուցումներով, հանրապետության կոմկուսի Կենտկոմը և կուսակցության կազմակերպությունները զգալիորեն բարելավեցին այդ ուղղությամբ տարվող աշխատանքները։ ՀԿԿ Կենտկոմը և տեղական կուսակցական կազմակերպությունները մշտական ուշադրության կենտրոնում պահելով կուսակցական-կոմերիտական լուսավորական ցանցի ընդլայնման և սովորողների ավելացման խնդիրը, միաժամանակ մեծ աշխատանք կատարեցին այդ սիստեմը կատարելագործելու, նրանում տեղ գտած ձևական տարրերը հաղթահարելու, կոմունիստների և անկուսակցականնե-

րի գիտակցականությունն ու ակտիվությունը բարձրացնելու ուղղությամբ։

Ձեռնարկված միջոցառումներն էլ ավելի բարձրացրին կոմունիստների և անկուսակցական լայն մասսաների հետաքրքրությունը մարքս-լենինյան տեսության նկատմամբ, հարստացրին կուսակցական կազմակերպությունների գաղափարական կյանքը, նպաստեցին մասսաների գաղափարաքաղաքական վերելքին։

1938 թ. համեմատությամբ 1950 թ. Հանրապետությունում արագորեն աճեց կուսակցական—կոմերիտական լուսավորական ցանցը և սովորողների թիվը։ Եթե 1938 թ. ՀՍՍՀ-ում կուսակցական կազմակերպություններին առընթեր քաղուսուցման բոլոր տեսակի խմբակների ու դպրոցների թիվը ոչ լրիվ տվյալներով հասնում էր 327-ի (23377 սովորող)[4], ապա 1950 թ.՝ 1031 (58000 սովորող)[5], իսկ 1960 թ.՝ այն կազմեց ավելի քան 1700 (100 հազար սովորող)[6]։

Բերված տվյալները վկայում են, որ մարքսիզմ-լենինիզմի տեսությունը խորապես ուսումնասիրելու նկատմամբ գնալով աճել է Հանրապետության աշխատավորների հետաքրքրությունը։

Լայն մասսայականություն են վայելել նաև քաղաքական ուսուցման այնպիսի ձևեր, ինչպիսիք են տնտեսագիտական կոնֆերանսները, տեխնիկական գիտելիքների համալսարանները, լեկտորիումները, տնտեսագիտական կարճատև դասընթացները և այլն։

Հասարակության առաջատար դասակարգի գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացման գործում մեծ է եղել նաև բանավոր պրոպագանդայի և ագիտացիայի դերը։ Ագիտացիոն-մասսայական և պրոպագանդիստական աշխատանքի գլխավոր խնդիրը նրանում է, որ այն կուսակցական ու անկուսակցական մասսաներին զինում է մարքս-լենինյան գաղափարներով, Հասարակության զարգացման և կոմունիստական շինարարության օրենքներով։

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում աճել է կարդացված դասախոսությունների թիվը և հարստացել ու բազմազան է դարձել դասախոսությունների թեմատիկան։ Այսպես, 1945 թ. ՀՍՍՀ քաղաքներում, գյուղերում և նորակառույցներում կազմակերպվել է 830, 1946 թ.՝ 2400, 1947 թ.՝ 3300, 1948 թ.՝ 8500, 1950 թ.՝ 13.500, իսկ 1957 թ.՝ մոտ 40500 դասախոսություն[7]։

Տարեցտարի ավելացել է նաև դասախոսություններն ունկնդրող-

ների թիվը։ 1945 թ. ունկնդիրների թիվը հասել է 85000-ի, 1950 թ.՝ 1.250.000, իսկ 1957 թ ավելի քան 3 միլիոնի[8]։

Քաղաքական-մասսայական աշխատանքի գործում կարևոր նշանակություն ունի բնակչությանը լայնորեն տրվող սիստեմատիկ ինֆորմացիան՝ երկրի ներքին ու արտաքին հարցերի վերաբերյալ։ Բազմազան են մասսայական ինֆորմացիայի ու պրոպագանդայի ձևերը՝ մամուլ, ռադիո, հեռուստացույց և այլն։ Ինֆորմացիայի մասսայական միջոցները միլիոնավոր մարդկանց տեղյակ են պահում երկրում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցող իրադարձություններին, հազորդակից են դարձնում կուսակցության քաղաքականությանը, օգնում են ուսումնասիրելու և ընդհանրացնելու սոցիալիստական-կոմունիստական շինարարության փորձը։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության կոմունիստական կուսակցությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել մասսայական ինֆորմացիայի միջոցների սիստեմատիկ ընդլայնման ու զարգացման, դրանց գործունեության կատարելագործման հարցերին։ Այդ են վկայում ստորև բերված տվյալները։ Եթե 1940 թ. ՀՍՍՀ-ում լույս էր տեսնում 80 անուն թերթ ու ամսագիր, տարեկան 44120 հազար տպաքանակով, ապա 1960 թ.՝ 148 անուն թերթ ու ամսագիր՝ 76457 հազար տպաքանակով[9]։ Ավելացնենք նաև, որ նշված տարիներին Սովետական Հայաստանի գրեթե յուրաքանչյուր ընտանիք ուներ ռադիոընդունիչ կամ բարձրախոս։

Ինչպես երկրում ամբողջությամբ, այնպես էլ ՀՍՍՀ-ում բնակչության մեջ կատարվող մասսայական-քաղաքական աշխատանքը լայն ծավալ ընդգրկեց ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջերին։ Մասսաների մեջ կատարվող քաղաքական աշխատանքի վերակառուցումն ու նրա բովանդակության կատարելագործումը պայմանավորված էր 1950-ական թվականներին մեր երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի բնագավառներում կատարված ամենակարևոր վերափոխումներով։ Մեր հասարակության զարգացման տվյալ ժամանակաշրջանում տնտեսական և կուլտուրական շինարարության մասշտաբների ընդլայնումը ու դրանց բարդացումը հատկանալի պատճառով պահանջում էին ուժեղացնել և կատարելագործել կուսակցության գաղափարական-դաստիարակչական աշխատանքի ամբողջ մեխանիզմը։

Բնակչության շրջանում կատարվող գաղափարաքաղաքական աշխատանքներին նոր լիցք հաղորդեց ՍՄԿԿ XX համագումարը։ Համա-

գումարը անհատի պաշտամունքի առաջացման պայմանների ու պատճառների բազմակողմանի վերլուծության և նրա վնասակար հետևանքների հաղթահարման ուղիների բացահայտման հետ սերտորեն առնչված, մեծ ուշադրություն դարձրեց նաև գաղափարախոսական աշխատանքների հետագա բարելավմանը: Անհատի պաշտամունքի հաղթահարման նոր խնդիրների լույսի տակ կուսակցության գաղափարական աշխատանքում բացահայտվեցին զգալի թերություններ՝ անբավարար էր կապը սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրների հետ, աշխատավորների կոմունիստական դաստիարակության հարցերի նկատմամբ գոյություն ուներ անուշադիր վերաբերմունք, այդ աշխատանքի առանձին օղակներում նկատվում էր դոգմատիզմ, ցածր էր կադրերի մարքս-լենինյան կուլտուրան: Համագումարը խնդիր դրեց հաղթահարել դրանք և ուժեղացնել ու կատարելագործել այդ աշխատանքի ձևերն ու մեթոդները:

Համագումարին հաջորդած տարիներին ամբողջ երկրում գաղափարաքաղաքական կյանքը նկատելիորեն ակտիվացավ: Մարքս-լենինյան գաղափարախոսության պրոպագանդան ստացավ առավել գործնական և բազմազան բնույթ:

Նշված համագումարի համապատասխան որոշումները և դրանց պահանջներից բխող ՀԿԿ Կենտկոմի (1959 թ. մայիս) պլենումի ընդունած «Հանրապետության աշխատավորների շրջանում կատարվող մասսայական-քաղաքական աշխատանքի վիճակի և նրա բարելավման միջոցառումների մասին» որոշումը նոր թափ հաղորդեցին Հայկական ՍՍՀ-ում ագիտացիոն-մասսայական և պրոպագանդիստական աշխատանքներին: Որոշման մեջ նշված է, որ զարգացման նոր ժամանակաշրջանում մասսաների կոմունիստական դաստիարակության հարցերը առաջնակարգ նշանակություն են ստանում: Նրանում տրված է նաև մասսաների մեջ տարվող քաղաքական աշխատանքի բովանդակությունն ամեն կերպ բարելավելու, նրա ձևերն ու մեթոդները կատարելագործելու միանգամայն պարզ ու հստակ ծրագիրը[10]:

Աշխատավորության շրջանում կատարվող մասսայական-քաղաքական աշխատանքի վիճակի և նրա բարելավման միջոցառումների մասին կարևոր փաստաթուղթ էր 1960 թ. ՍՄԿԿ Կենտկոմի «Արդի պայմաններում կուսակցության պրոպագանդայի խնդիրների մասին» որոշումը: Նրանում ՍՄԿԿ XX և XXI համագումարների որոշումների հիման վրա շարադրված են գաղափարական աշխատանքի գլխավոր նպատակներն ու խնդիրները, ցույց են տրված կուսակցական պրո-

պագանդայի բարելավման կոնկրետ ուղիները, մշակված է աշխատավորների կոմունիստական դաստիարակության հստակ ծրագիրը[11]: «Արդի պայմաններում կուսակցական պրոպագանդայի խնդիրների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը գաղափարական աշխատանքի բնագավառում բոլոր հանրապետությունների կուսակցական կազմակերպությունների մարտական ծրագիրն էր:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1960 թ. հուլիսյան պլենումը քննարկելով ՍՄԿԿ Կենտկոմի վերոհիշյալ որոշման իրականացման ուղղությամբ հանրապետության կուսակցական կազմակերպությունների գործունեությունը, նշեց, որ ՀՍՍՀ-ում դգալի հաջողություններ են ձեռք բերվել կուսակցական պրոպագանդան կյանքին մոտեցնելու, պրոպագանդիստական աշխատանքի ազդեցության ոլորտը ընդլայնելու և նրա ներգործությունը ուժեղացնելու ուղղությամբ: Նկատելիորեն բարելավել են իրենց գործունեությունը քաղաքական ուսուցման այնպիսի ձևեր, ինչպիսիք են տնտեսագիտական կոնֆերանսները, տեխնիկական առաջադիմության և գյուղատնտեսական գիտելիքների համալսարանները, լեկտորիումները, տնտեսագիտական կարճատև դասընթացները և այլն: Հանրապետությունում կազմակերպվել է կուլտուրայի, տեխնիկական առաջադիմության, աթեիզմի, առողջ կենցաղի և տնտեսական գիտելիքների 64 համալսարան[12]:

ՀԿԿ Կենտկոմի պլենումը միաժամանակ նշեց, որ ՍՄԿԿ Կենտկոմի որոշման իրականացման գործում կան նաև լուրջ թերություններ: Պրոպագանդայի գլխավոր թերությունը՝ նրա կտրվածությունն է կյանքից, կոմունիստական շինարարության կոնկրետ խնդիրներից: Պլենումը պարտավորեցրեց կուսակցության քաղկոմներին, շրջկոմներին և սկզբնական կուսակցական կազմակերպություններին կոնկրետ միջոցառումներ ձեռնարկել լիովին հաղթահարելու կուսակցական պրոպագանդայի կտրվածությունը կյանքից, որից մեծ չափով կախված էր ժողովրդական տնտեսության վերելքի համար մղվող պայքարի հաջողությունը[13]: Դա ինքնին հասկանալի է: Կյանքի հետ սերտորեն կապված պրոպագանդան նպաստում է բանվորների, բոլոր աշխատավորների ոչ միայն գաղափարական կոփմանը, այլ նաև կուսակցության հոյակապ նախագծումների համար նրանց ուժերի մոբիլիզացմանը:

Պրակտիկայի և տեսության կապին ժամանակին մեծ կարևորություն է տվել Վ. Ի. Լենինը: Նա նշում էր, որ սոցիալիստական հասարակության շինարարության մեծ էպոխան սկսվում է հենց այն պատմական պահից. «...երբ տեսությունը վերածվում է պրակտիկայի,

կենդանանում է պրակտիկայով, ուղղվում է պրակտիկայով, ստուգվում է պրակտիկայով...»[14], «Ամբողջ պրոպագանդան պետք է կառուցվի տնտեսական շինարարության քաղաքական փորձի վրա։ Դա մեր ամենագլխավոր խնդիրն է...»[15]։

Վ. Ի. Լենինի այս ցուցումները և ՍՄԿԿ Կենտկոմի համապատասխան որոշումները մասսաների գաղափարաքաղաքական դաստիարակության վերաբերյալ համարելով գործողության ծրագիր, ՀԿԿ Կենտկոմը նկատելիորեն բարելավեց բնակչության մեջ կատարվող մասսայական-քաղաքական աշխատանքները։

Այսպիսով, աշխատավորության, ամենից առաջ նրա առաջատար ուժի շրջանում կատարվող գաղափարաքաղաքական աշխատանքը կազմում է կոմունիստական կուսակցության գործունեության անքակտելի մասը։ Մասսաների կոմունիստական գիտակցության անընդհատ աճը սոցիալիստական հասարակության զարգացման օրինաչափությունն է, նրա հետագա առաջընթացի կարևորագույն պայմանը։

Սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում Հայկական ՍՍՀ-ում կուսակցության գործունեության շնորհիվ զգալիորեն բարձրացավ աշխատավորության շրջանում տարվող գաղափարաքաղաքական աշխատանքի մակարդակը։

2. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանվոր դասակարգը իր տնտեսական դիրքով, իր գաղափարախոսությամբ, հոգեբանությամբ և բարոյականությամբ եղել և մնում է աշխատավորների ինտերնացիոնալ համերաշխության և եղբայրության առավել հետևողական արտահայտիչը, ասված է ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ[16]։

Պրոլետարական հեղափոխության փորձով ապացուցված է, որ բանվոր դասակարգի համաշխարհային պատմական առաքելության իրականացման գործում կարևոր նշանակություն ունի հասարակության մեջ նրա ամենաինտերնացիոնալ դասակարգ լինելը։ Դեռ անցյալ դարի կեսերին գիտական կոմունիզմի ստեղծողներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը իրենց աշխատություններում հիմնավորելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարը, ընդգծել են, որ պրոլետարական համագործակցությունը և ինտերնացիոնալ մերձեցումը, բանվոր դասակարգի համար անհրաժեշտ պայմաններ են, ինչպես բուրժուազիայի իշ-

խանության տապալման, այնպես էլ սոցիալիզմի կառուցման համար[17]: Համակողմանիորեն զարգացնելով այդ գաղափարները, Վ. Ի. Լենինը գրել է. «Կապիտալը միջազգային ուժ է: Նրան հաղթելու համար հարկավոր է բանվորների միջազգային միություն, նրանց միջազգային եղբայրություն»[18], «...Բոլոր երկրների կառավարություններն ու բուրժուազիան, որքան ավելի եռանդով են ջանում իրարից բաժանել բանվորներին և իրար դեմ հրահրել նրանց, ...այնքան ավելի ստիպողական է դառնում գիտակից պրոլետարիատի պարտքը՝ պաշտպանելու իր դասակարգային համախմբվածությունը, իր ինտերնացիոնալիզմը, իր սոցիալիստական համոզմունքները...»[19]:

Տարբեր հասարակարգ ունեցող երկրների բանվորների ինտերնացիոնալ համերաշխությունը, բարեկամությունն ու փոխադարձ համագործակցությունը, որպես դասակարգերի հարաբերության դրսևորման բարձրագույն ձև, ծառայել և ծառայում է համաշխարհային իմպերիալիզմի կործանման, դաղութային լծի թոթափման, սոցիալիզմի—կոմունիզմի կառուցման և դեմոկրատիայի համար մղվող պայքարին:

Առանձին երկրների բանվորների բարեկամության և ինտերնացիոնալ համագործակցության ընդլայնման ու ամրապնդման համար մղվող պայքարում մեծ է եղել ՍՍՀՄ բանվոր դասակարգի դերը: Ինչո՞ւ: Նախ, կատարելով սոցիալիստական հեղափոխություն, նա կատարեց նաև իր ինտերնացիոնալ պարտքը միջազգային պրոլետարիատի հանդեպ: Մեր երկրի բանվոր դասակարգը և աշխատավորական գյուղ խավերը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ նվաճելով քաղաքական իշխանությունը և կառուցելով սոցիալիզմի տնտեսական ու քաղաքական հիմքերը, միջազգային պրոլետարիատի համար բացահայտեցին նոր հասարակարգի կառուցման հիմնական ուղիները: Հիշենք Վ. Ի. Լենինի խոսքերը. «Ռուսաստանում ստեղծված սոցիալիստական սովետական հանրապետությունը կանգնած կլինի բոլոր երկրների ժողովուրդների առջև, որպես կենդանի օրինակ, և այդ օրինակի պրոպագանդիստական, հեղափոխականացնող ներգործությունը հսկայական կլինի»[20]:

Սոցիալիստական—կոմունիստական շինարարության բոլոր փուլերում սովետական հասարակության առաջատար դասակարգի վիթխարի ձեռքբերումները վճռական ներգործություն են ունեցել համաշխարհային հեղափոխական շարժման ընթացքի վրա: ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության հաջողություններն ուղղակիորեն թուլացնում էին կապիտալիզմի տիրապետության հիմքերը, դրանով իսկ ամրա-

պնդում և ուժեղացնում միջազգային բանվոր դասակարգի հեղափոխական շարժումներն ու ազգային ազատագրական պայքարը։ Ավելացնենք նաև, որ ՍՍՀՄ բանվոր դասակարգը հսկայական նյութական և բարոյական օգնություն էր ցույց տալիս միջազգային բանվոր դասակարգին, տիրապետող դասակարգի դեմ նրա մղած անզիջում պայքարին։

ՍՍՀՄ բանվոր դասակարգի գործունեության ինչ բնագավառն էլ վերցնելու լինենք, հաստատվում է Վ. Ի. Լենինի այն միտքը, որ «Դիտակից բանվորը ղգում և գիտակցում է իրեն ոչ միայն որպես ռուսական մարքսիստական ընտանիքի անդամ, նա հասկանում է, որ ինքը նաև մարքսիստների միջազգային ընտանիքի անդամն է»[21]։

Հարկ է նշել, որ այդ օգնությունն ու աջակցությունը միակողմանի չի եղել և չէր էլ կարող լինել։

Սոցիալիստական շինարարության **ընթացքում սովետական** բանվոր դասակարգին հսկայական օգնություն է ցույց տվել միջազգային պրոլետարիատը։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմի լավագույն արտահայտություն էր կապիտալիստական երկրների աշխատավորության կողմից սոցիալիստական պետությանը ամեն գնով պաշտպանելը։ Հիշենք քաղաքացիական պատերազմի տարիները։ Կապիտալիստական երկրների աշխատավորները բանվոր դասակարգի անմիջական նախաձեռնությամբ խափանում էին զենքի ու ռազմամթերքի մատակարարումը, ստեղծում էին բազմաթիվ արգելքներ, որով դժվարացնում էին ինտերվենտների գործողությունները և օգնում սովետական պետությանը։ «... Հենց այդ օգնությունը,—գրում էր Վ. Ի. Լենինը,—հենց աշխատավոր զանգվածների, թե բանվորական, թե գյուղացիական, հողագործական զանգվածների, համակրանքը դեպի մեզ՝ ամբողջ աշխարհում, նույնիսկ մեզ ամենից ավելի թշնամի տերություններում, հենց այդ օգնությունը և այդ համակրանքն էր այն վերջին ամենավճռական աղբյուրը, վճռական պատճառն այն բանի, որ մեր դեմ ուղղված բոլոր արշավանքները կրախով ավարտվեցին...»[22]։ Ժամանակակից փուլում ևս շարունակվում է միջազգային պրոլետարիատի բարոյական ու քաղաքական բազմակողմանի օգնությունը, որը մեծապես նպաստում է թե՛ մեր երկրի սոցիալ-քաղաքական առաջընթացին և թե՛ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ամրապնդմանը։ Ահա թե ինչու մեր օրերում սովետական ժողովրդի տպավորիչ նվաճումների լույսով առավել խոր է ընկալվում լենինյան հայտնի բանաձևը այն մասին, որ «Մեր հեղափոխությունը հանդես եկավ որպես

ընդհանուր հեղափոխություն, և մենք մեր խնդիրները լուծելու ենք բոլոր երկրների բանվորների ու գյուղացիների օգնությամբ»[23]:

Միջազգային պրոլետարիատին նրա սոցիալական ազատագրության, դեմոկրատիայի և խաղաղության համար մղած պայքարին ՍՍՀՄ բանվոր դասակարգի ցույց տված բարոյա-քաղաքական ու նյութական համակողմանի աջակցությունը նոր ձևեր ու մասշտաբներ ընդունեց սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում:

1930-ական թվականների երկրորդ կեսին Սովետական Միությունում ձևոք բերված սոցիալիզմի հաղթանակը դեռևս վերջնական չէր: Գտնվելով կապիտալիստական երկրների շրջապատման մեջ, պահպանվում էր ՍՍՀՄ-ի վրա ռազմական ինտերվենցիայի անխուսափելիությունը: 1930-ական թվականների երկրորդ կեսին կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խորացման և միջիմպերիալիստական հակասությունների սրման հետևանքով, երբ մարդկությունը կանգնած էր նոր համաշխարհային պատերազմի վտանգի առջև, Սովետական Միությունը արտահայտելով ամբողջ աշխարհի բարի կամքի տեր մարդկանց ցանկությունը, ջանում էր Եվրոպայում կայուն խաղաղություն հաստատելու համար ստեղծել կոլեկտիվ անվտանգության սիստեմ: Այս գործում ևս սովետական բանվոր դասակարգը ընթանում էր միջազգային պրոլետարիատի առջևից, հանդես բերելով սոցիալիստական բանվոր դասակարգին բնորոշ բարձր գաղափարայնություն և բարոյա-քաղաքական հատկանիշներ:

Հայտնի է, որ 1936 թ. օգոստոսին ֆաշիստական Գերմանիան և Իտալիան ավազակային հարձակում կատարեցին իսպանական հանրապետության դեմ: Պատերազմը Պիրենեյան թերակղզում ոչ միայն անհամար տառապանքների ու զոհերի պատճառ դարձավ իսպանական ժողովրդի համար, այլ նաև ամբողջ աշխարհը դրեց համաշխարհային նոր պատերազմի անմիջական սպառնալիքի առաջ: Ահա թե ինչու ռեակցիայի և ֆաշիզմի դեմ իսպանական հայրենասերների պայքարը միայն նրանց գործը չէր: Այն դարձավ նաև ամբողջ աշխարհի առաջադեմ ու բարի կամքի տեր մարդկանց ընդհանուր գործը: Միջազգային իրադրության ավյալ պայմաններում է՛լ ավելի ամրապնդվեց ՍՍՀՄ բանվոր դասակարգի ինտերնացիոնալ կապը կապիտալիստական երկրների, առաջին հերթին իսպանական բանվոր դասակարգի հետ: Իսպանիայի դեմ կազմակերպված ինտերվենցիայի առաջին իսկ օրերից մեր երկրում հուժկու թափով ծավալվեց մասսայական բողո-

քի ու ցասման ալիքը։ Հիմնարկ-ձեռնարկություններում, ուսումնական ու գիտական հաստատություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում և աշխատավորական այլ կոլեկտիվներում տեղի էին ունենում բազմամարդ միտինգներ ու ժողովներ, որտեղ սովետական մարդիկ բողոքի ձայն էին բարձրացնում այդ ագրեսիայի դեմ և իրենց եղբայրական համերաշխությունն ու ինտերնացիոնալ համագործակցությունը հայտնում Իսպանիայի աղատատենչ ժողովրդին։ Երկրում լայն ծավալ ընդգրկած այդ կամպանիային ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Սովետական Հայաստանի աշխատավորությունը, ամենից առաջ բանվոր դասակարգը։ Հանրապետությունում տեղի ունեցող միտինգներն ու ցույցերը, որպես կանոն, անցնում էին քաղաքական բարձր մակարդակով, որտեղ բանվոր դասակարգը դրսևորում էր դասակարգային բարձր պատասխանատվություն հայրենիքի ճակատագրի, ընդհանուր խաղաղության ու դեմոկրատիայի հանդեպ։ Լենինականի շոգեքարշային դեպոյի բանվորների միտինգի բանաձևում ասված է. «Մենք՝ բանվորներս, միջազգային իրադրության այս պայմաններում ավելի կամրապնդենք և կբարձրացնենք մեր շարքերի հեղափոխական ղգոնությունը, մենք ոչ մի րոպե չենք թուլացնի մեր կամքը՝ պայքարելու հանուն Իսպանիայի, հանուն մեր հայրենիքի, հանուն ամբողջ աշխարհի աշխատավորների ազատության ու անկախության պաշտպանության և ամրապնդման»[24]։

Սովետական մարդկանց պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների եղբայրության, բարեկամության ու սոցիալիստական հայրենասիրության ոգով դաստիարակելու, ինչպես նաև իսպանական հայրենասերներին նյութական և բարոյական աջակցություն ցույց տալու նպատակով ՍՍՀՄ-ում ստեղծվեցին «Հեղափոխական մարտիկների օգնության միջազգային կազմակերպություններ» (ՄՈՊՐ)։ Մոպրական կազմակերպություններ ստեղծվեցին նաև Սովետական Հայաստանում։ Այդ կազմակերպությունների մեջ մտան սոցիալական տարբեր խմբերի ու դասակարգերի հաղարավոր ներկայացուցիչներ։ Նրանց մեջ մեծ էր բանվորների տեսակարար կշիռը։ 1938 թ. հունիսի 1-ի դրությամբ միայն Երևանի մոպրական կազմակերպության 44495 անդամներից բանվորներ էին 65%-ը[25]։

Ղեկավարվելով ՍՄԿԿ Կենտկոմի համապատասխան որոշումներով ու ցուցումներով, հանրապետության կոմունիստական կուսակցությունը ամենօրյա ղեկավարություն և աջակցություն էր ցույց տալիս մոպրականների գործունեությանը։ 1938 թ. հունիսի 7-ին ՀԿԿ Կենտկոմը, քըն-

նարկելով ՀՍՍՀ մոպրական կազմակերպությունների գործունեությունը, նշեց՝ որ նրանք զգալի աշխատանք են կատարել աշխատավորության պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելու ուղղությամբ։ Կենտկոմը կուսակցության քաղկոմներին ու շրջկոմներին պարտավորեցրեց հետևողական աշխատանք տանել մոպրական կազմակերպությունների հետ՝ նրանց գործունեությունը ավելի արդյունավետ ու նպատակասլաց դարձնելու համար։ Շուտով լայն ծավալ ընդգրկեց ու բազմակողմանի դարձավ Հայաստանի աշխատավորության բարոյական և նյութական օգնությունը իսպանական հայրենասերներին։ Իսպանական ժողովրդի հերոսական պայքարի 2-րդ տարեդարձին Հայաստանի բազմահազար մոպրականներ հղեցին իրենց ջերմ համերաշխությունը իսպանական ժողովրդին, որը ֆաշիստական շրջապատման մեջ անձնվիրաբար պայքարում էր հանուն ազատության ու երջանկության, հանուն դեմոկրատիայի ու խաղաղության[26]։ Բարոյական աջակցությանը շաղկապվեց նյութականը։ Արդեն 1938 թ. առաջին կիսամյակում ֆաշիզմի զոհերի օգտին ՄՈՊՐ-ի Հայաստանի կազմակերպությունները հավաքեցին ու Իսպանիա փոխադրեցին 255.000ռ. անդամավճար և անհատական նվերներ։ ՄՈՊՐ-ի մի շարք խոշոր բջիջներ (կաուչուկի և կոմպրեսորների գործարաններ, Քանաքեռգէս և այլն) վերցնելով ինտերնացիոնալ մանկատան իսպանական երեխաների շեֆությունը հոգացին նրանց խնամքի ամբողջ ծախսերը[27]։

ՍՍՀՄ բանվոր դասակարգի ազգային ջոկատներից մեկը՝ Հայաստանի բանվոր դասակարգը, որը հաստատապես ու մինչև վերջ պաշտպանում էր ընդհանուր խաղաղության, միջազգային իրավունքի ու անվտանգության գործը, դեմ էր ամեն տեսակի ազգային և գաղութային ստրկացման, իր ինտերնացիոնալ համերաշխությունն ու եղբայրական համագործակցությունն հայտնեց նաև չին ժողովրդին, որը իր ազատությունը պաշտպանելու իրավունքով պայքարի էր ելել ճապոնական միլիտարիստների բռնացման դեմ։

Այսպիսով, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հանրապետության աշխատավորությունը, սովետական ժողովուրդների հետ համատեղ ընթանալով սոցիալական և ազգային ազատագրության մարտիկների առաջին շարքերում՝ ի պաշտպանություն սոցիալիստական հայրենիքի, խաղաղության ու դեմոկրատիայի, իր համեստ ավանդը ներդրեց ժողովրդական մասսաների հակապատերազմական լայն շարժման և նրանց ինտերնացիոնալ համագործակցության մեջ. «Այդ

բացառիկ հետաքրքրության մեջ դեպի այն ամենը, ինչը որ տեղի է ունենում միջազգային ասպարեզում,—գրում էր այդ տարիների «Պրավդան»,—արտահայտվում է նաև ՍՍՀՄ ժողովուրդների բոլշևիկյան ինտերնացիոնալիզմի ուժն ու խորությունը: Պատմությունը չգիտե ժողովուրդների միջև եղբայրական համերաշխության աղնիվ և վեհ պատգամի ավելի պայծառ արտահայտություն: Դրանում արտահայտվում է մեր ժողովրդի վեհությունը, նրա նվիրվածությունը կոմունիզմի գաղափարներին»[28]:

Ինչպես երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, այնպես էլ նրա սկսվելուց հետո Սովետական Միությունը շարունակում էր մնալ միջազգային իմպերիալիզմի հարվածային ուժի՝ ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պայքարի առաջամարտիկը: Ներքաշվելով երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ, ՍՍՀՄ-ը ոչ միայն պատերազմական գործողություններում փոխեց ուժերի հարաբերակցությունը ի վնաս գերմանական բլոկի, այլև բարձր պահելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը, կանգնեց ֆաշիզմի դեմ պայքարողների առաջին շարքում:

Կարմիր բանակի հուժկու հարվածների տակ Գերմանիայի ռազմական մեքենան թուլացավ և քայքայվեց: Դրա շնորհիվ ուժեղացավ ազգային-ազատագրական պայքարը Եվրոպայի՝ ֆաշիստների կողմից օկուպացված երկրներում: Այդ պայքարն ըստ էության ինտերնացիոնալ բնույթ ուներ, որովհետև թուլացնում էր ֆաշիստական բանակի թիկունքը և նպաստում սովետական զինված ուժերի հաղթանակին: Ավելացնենք նաև, որ պատերազմի ահեղ տարիներին միջազգային պրոլետարիատը հավատարիմ իր ինտերնացիոնալ—դասակարգային շահերին, մեր երկրին ցույց տվեց նաև զգալի նյութական օգնություն[29]: Սովետական մարդիկ բարձր են գնահատում ֆաշիզմի դեմ մղված արդարացի պատերազմում աշխարհի առաջադեմ ուժերի կողմից իրենց ցույց տրված նյութական ու բարոյական աջակցությունը:

Սովետական ժողովուրդը և նրա փառապանծ զինված ուժերը, ջարդելով միջազգային իմպերիալիզմի ամենառեակցիոն ուժերի՝ ֆաշիզմի ու միլիտարիզմի ողնաշարը, պաշտպանեցին աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը՝ խաղաղության և ազատագրության համար մղվող պայքարի միջնաբերդը, դրանով կատարեցին իրենց հայրենասիրական և ինտերնացիոնալ պարտքը համայն մարդկության հանդեպ:

Հետպատերազմյան տարիներին սոցիալիզմի և կապիտալիզմի զարգացման բնորոշ գիծը այն էր, որ միջազգային ասպարեզում ու-

ժերի հարաբերակցությունը փոխվեց հօգուտ սոցիալիզմի: Պատերազմի հետևանքով կապիտալիստական սիստեմը վիթխարի կորուստներ կրեց և ավելի թուլացավ: Սոցիալիզմը դուրս եկավ մեր երկրի շրջանակներից և դարձավ համաշխարհային սիստեմ:

Սոցիալիստական սիստեմի դիրքերի ուժեղացումն ու հնդինակության անընդմեջ բարձրացումը մի կողմից, գաղութներում և կիսագաղութներում ծավալվածազգային-ազատագրական շարժումները, ինչպես նաև կապիտալիստական աշխարհում բռնկված դասակարգային պայքարի վերելքը մյուս կողմից, անհանգստացրին և դրդեցին իմպերիալիզմի ռեակցիոն շրջաններին արագացնելու նոր համաշխարհային պատերազմի նախապատրաստումը: Խաղաղության հարցը առաջնակարգ նշանակություն ստացավ: Խաղաղության պաշտպանությունը երկրներից յուրաքանչյուրում առաջ էր քաշվում որպես համազգային կարևորագույն խնդիր:

Համաշխարհային իմպերիալիզմի հետադիմական ուժերին դիմակայում էր խաղաղության կողմնակիցների հզոր շարժումը, որը հետպատերազմյան տարիներին ավելի մեծ թափ ու ծավալ ընդգրկեց: Մոլորակի բարի կամքի տեր բոլոր ժողովուրդները պայքարի ելան հանուն խաղաղության, դեմոկրատիայի, հանուն ազատության ու անկախության: Այդ շարժման մեջ ամենաակտիվ դերը կատարում էր միջազգային բանվոր դասակարգը, որի շուրջը համախմբվեցին բնակչության աշխատավորական մյուս խմբերը:

Հարկ է նշել, որ ինչպես միշտ, այնպես էլ հետպատերազմյան միջազգային լարվածության տարիներին համաշխարհային խաղաղության համար մղվող պայքարի մասնակիցների առաջին շարքերում ընթանում էր սովետական մեծ ժողովուրդը: Նրա ակտիվ մասնակցությունը խաղաղության համար մղվող համաշխարհային շարժմանը նպաստեց խաղաղասեր ուժերի համախմբմանը և միասնությանը:

Խաղաղության շարժման մասնակիցների գործունեության մեջ կարևոր իրադարձություն էր Ստոկհոլմում տեղի ունեցած (1950 թ. մարտ) խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի մշտական կոմիտեի նստաշրջանը, որն ընդունեց կոչ ատոմային զենքն արգելելու մասին[30]: Կոչը միահամուռ պաշտպանություն գտավ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության կողմից:

1950 թ. հունիսի 29-ին տեղի ունեցավ խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի պլենում, որի որոշմամբ ՍՍՀՄ-ում բացվեց ատոմային զենքը արգելելու վերաբերյալ խաղաղության կողմ-

նակիցների համաշխարհային կոնգրեսի մշտական կոմիտեի Ստոկհոլմի կոչի տակ ստորագրությունների հավաքագրումը[31]։

Հայ ժողովուրդը, որը բազմիցս իր վրա զգացել էր պատերազմի բոլոր սարսափներն ու արհավիրքները, նույնպես կանգնեց խաղաղության պաշտպանության դիրքերում։ Կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական, կոոպերատիվ և հասարակական մյուս կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմվեց խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեին աջակցող հանրապետական հանձնաժողով՝ խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի մշտական կոմիտեի Ստոկհոլմյան կոչի տակ ստորագրություններ հավաքելու համար[32]։

Կոչը ստորագրելու կամպանիային քաղաքական մեծ ակտիվություն հանդես բերեց բանվոր դասակարգը։ ՀՍՍՀ գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարության մեջ, տրանսպորտում և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում տեղի էին ունենում բանվոր—ծառայողների բազմամարդ միտինգներ ու ժողովներ, որտեղ առաջավոր բանվորները արտահայտում էին իրենց վճռական կամքը հանուն խաղաղության պաշտպանության, ընդդեմ պատերազմի։ Այսպես, Լենինականի Մանարան ֆաբրիկայի ստախանովական բրիգադավար Ա. Ստեփանյանը Ստոկհոլմի կոչի ստորագրմանը նվիրված միտինգում արտահայտելով բոլորի միասնական կամքը, ասաց. «Մենք գիտենք, թե ինչ բան է խաղաղությունը։ Պաշտպանելով խաղաղությունը, նշանակում է պաշտպանել մեր կյանքը, պաշտպանել մեր երջանկությունը։ Մեր երկիրը խաղաղության հզոր պատվարն է։ Որքան ավելի ուժեղ լինի այն, այնքան ավելի մեծ կլինի նրա դերը միջազգային ասպարեզում, այնքան ավելի ապահովված կլինի խաղաղության գործը ամբողջ աշխարհում»[33]։

Ուշագրավ է, որ Ստոկհոլմի կոչը ստորագրելու կամպանիային նվիրված միտինգներում ու ժողովներում բանվոր դասակարգը հանդես բերելով նվիրվածություն և հավատարմություն խաղաղության և դեմոկրատիայի գործին, միաժամանակ արտահայտում էր իր անսահման հայրենասիրական զգացումները սեփական երկրի պաշտպանության ամրապնդման, նրա հետագա ծաղկման ու բարգավաճման նկատմամբ։ Սովետական Հայաստանի բանվորությունը վճռականորեն պաշտպանելով խաղաղության գործը և դատապարտելով իմպերիալիստների ագրեսիոն ծրագրերը՝ աշխատանքային նորանոր պարտավորություններ էր վերցնում։ Օրինակ, Կորեայի դեմ ԱՄՆ-ի կատարած պին-

ված ինտերվենցիայի (1950 թ.) առիթով Երևանի կաբելի գործարանում տեղի ունեցած միտինգում խառատ Վ. Մկրտչյանն ասաց. «Ամն-ի իմպերիալիստները պատերազմի պրոպագանդայից անցել են բացահայտ ագրեսիայի։ Մենք, ժողովուրդների ազատությունն ու անկախությունը հարգող սովետական մարդիկ, վճռականորեն դատապարտում ենք Ամն-ի ավանտյուրան, ասելով՝ ձեռքներդ հեռու Կորեայից։ Երեկ մենք ստորագրեցինք Ստոկհոլմի կոչի տակ և հանուն խաղաղության, հանուն մեր հայրենիքի հզորության պարտավորվեցինք գործարանի պլանը կատարել նոյեմբերի 29-ին։ Այսօր, ի պատասխան Կորեական ժողովրդի նկատմամբ Ամն-ի դինված ինտերվենցիայի, մենք նոր պարտավորություն ենք ստանձնում՝ լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունը՝ պետական առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար»[34]։

Դատապարտելով Կորեայի վրա Ամն-ի կազմակերպած ավազակային հարձակումը, Լենինականի տեքստիլ կոմբինատի ենթավարպետ Հ. Դավթյանի ղեկավարած բրիգադի բանվորները պարտավորվեցին բրիգադի ընթացիկ տարվա արտադրական պլանը կատարել տաս ամսում և պլանից դուրս երկրին տալ 75 հազար մետր գործվածք[35]։

Խաղաղության համար մղվող պայքարում կարևոր նշանակություն ունեցավ 1951 թ. սեպտեմբերին Խաղաղության Համաշխարհային խորհրդի ընդունած դիմումը ուղղված աշխարհի բոլոր ժողովուրդներին՝ հինգ մեծ տերությունների՝ ՍՍՀՄ-ի, Չինաստանի, Ամն-ի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև խաղաղության պակտ կնքելու անհրաժեշտության վերաբերյալ։ Խաղաղասեր ժողովուրդների կամքը պետք է արտահայտվեր ամբողջ աշխարհում այդ դիմումի տակ ստորագրություններ դնելով։ Դա նոր և վիթխարի ներդրում էր խաղաղության կայունացման համար մղվող պայքարում, որին ակտիվորեն մասնակցեց նաև հայ ժողովուրդը։ 1951 թ. սեպտեմբերին Երևանում գումարվեց խաղաղության կողմնակիցների հանրապետական կոնֆերանս։ Այն ընտրեց խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտե, որի նախագահ ընտրվեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Վերը նշված կոմիտեին աջակցելու համար արդյունաբերական խոշոր հիմնարկ-ձեռնարկություններում կազմակերպվեցին հատուկ հանձնաժողովներ։ Այդպիսիք ստեղծվեցին Երևանի Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի, Ֆ. Է. Ջերժինսկու անվան հաստոցաշինական, Վ. Ի. Լե-

նինի անվան էլեկտրամեքենաշինական գործարաններում և այլ արտադրական կոլեկտիվներում։

Հինգ մեծ տերությունների միջև խաղաղության պակտ կնքելու մասին խաղաղության Համաշխարհային խորհրդի դիմումի տակ ստորագրությունների հավաքման կամպանիան վերածվեց համաժողովրդական շարժման։ Խաղաղության պաշտպանության գործում իր անսասան վճռականությունն արտահայտեց Հանրապետության բանվոր դասակարգը։ Այսպես, օրինակ, 1951 թ. սեպտեմբերի 12-ին Երևանում գումարված խաղաղության կողմնակիցների Հանրապետական կոնֆերանսում Կիրովի անվան գործարանի ստախանովական խառատ Ս. Հակոբյանը, արտահայտելով գործընկերների բարի կամքն ու ցանկությունը, ասաց. «Խաղաղությունը մեզ համար անհրաժեշտ է, որպեսզի մենք կարողանանք կենսագործել մեր երկրում կոմունիստական շինարարության մեծ պլանը։ Մենք խաղաղությունը սիրում ենք այնպես, ինչպես կյանքը, սակայն մենք խաղաղություն չենք խնդրում, այլ այն պահանջում ենք։ Մեր գործարանի աշխատողները ինձ նակազ են տվել այս ամբիոնից հայտարարել, որ նրանք, ինչպես միշտ, պատրաստ են կատարելու կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության բոլոր առաջադրանքները մեր հայրենիքի հզորության ու հետագա ծաղկման համար»[36]։

Այդ օրերին Հանրապետության աշխատավորները, բոլոր բանվորները արտահայտելով իրենց վճռական կամքը հանուն խաղաղության պաշտպանության և սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականության, միահամուռ կերպով ստորագրեցին Խաղաղության Համաշխարհային խորհրդի դիմումի տակ։

Դիմումի տակ ամբողջ երկրում ստորագրեցին մոտ 97 մլն., այդ թվում Սովետական Հայաստանում ավելի քան 800 հազար մարդ։

Ընդառաջ գնալով սովետական ժողովրդի ու աշխարհի առաջադեմ մարդկության բարի կամքին և հետևողականորեն պաշտպանելով տարբեր հասարակարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության լենինյան քաղաքականությունը, ՍՍՀՄ Գերագույն սովետը 1955 թ. փետրվարի 9-ին հրատարակեց դեկլարացիա, որով բոլոր պետությունների ժողովուրդների ու պառլամենտների ուշադրությունը հրավիրեց այն դրության վրա, որն ստեղծվել էր Եվրոպայում և Ասիայում, ինչպես նաև աշխարհի մյուս շրջաններում։ Ստեղծված իրավիճակը, ասված է դեկլարացիայում, պահանջում է, որ խաղաղության պահպանմանն ու ամրապնդմանը ձգտող պետությունները բազմա-

պատկեն իրենց ջանքերը՝ ուղղված այնպիսի բարձր նպատակի, ինչպիսին է Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության սիստեմի ստեղծումը[37]: Մեր բազմազգ հայրենիքի մյուս ժողովուրդների հետ մեկտեղ հայ ժողովուրդը ևս ամենայն անկեղծությամբ պաշտպանեց իր կառավարության նոր ձեռնարկումը: Այսպես, Երևանի էլեկտրամեխանիկական գործարանի բանվոր-ծառայողների միտինգում, երբ քննարկվում էր վերոհիշյալ դեկլարացիան, բանվոր Մ. Գալաֆյանը արտահայտելով մայրաքաղաքի և ամբողջ հանրապետության բանվորության կամքը, ասաց. «ՍՍՀՄ Դերագույն սովետի դեկլարացիան ամբողջ սովետական ժողովրդի խաղաղասիրական ձգտումների վառ արտահայտությունն է: Երբ մենք զբաղված ենք խաղաղ աշխատանքով, ամերիկա-անգլիական ագրեսորները փորձում են ատոմային ղենքով ահաբեկել ժողովուրդներին, հրահրել նոր պատերազմ: Սոցիալիզմի և խաղաղության ուժերը հզոր են ու անպարտելի: Վայ նրանց, ովքեր կհամարձակվեն վրդովել մեր հանգիստը»[38]:

1950-ական թվականներին միջազգային իմպերիալիզմի կողմից նոր պատերազմ սանձազերծելու ինչպես այս, այնպես էլ մյուս բոլոր փորձերը հանդիպեցին համայն աշխարհի խաղաղասեր ուժերի հուժկու հակահարվածին: Դրա շնորհիվ ձախողվեցին մարդկության նոր համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու ԱՄՆ-ի և մյուս իմպերիալիստական երկրների ձգտումները:

Այսպիսով, խաղաղության կայունացման, դեմոկրատիայի ու ազատագրության համար ծավալված համաժողովրդական շարժման մեջ էին ընդգրկված Սովետական Միության և սոցիալիստական ընկերակցության երկրների ժողովուրդները՝ գաղութային ու կախյալ երկրների աշխատավորները, ինչպես նաև կապիտալիստական երկրների խաղաղասեր ուժերը: Այդ շարժման մեջ առաջատար դերը պատկանում էր սովետական ժողովրդին, ամենից առաջ նրա հերոսական բանվոր դասակարգին, միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման հարվածային ուժին: ՍՍՀՄ բազմազգ բանվոր դասակարգի կազմում հանրապետության բանվոր դասակարգը աշխատավոր մասսաների գլուխ անցած, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կատարելով իր ինտերնացիոնալ պարտքը, ակտիվորեն մասնակցեց խաղաղության պահպանման ու ամրապնդման, դեմոկրատիայի և աղատության համար ծավալված համաժողովրդական շարժմանը և հանդես բերեց հասարակության առաջատար դասակարգին բնորոշ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ բարձր գաղափարայնություն և

նվիրվածության ու անձնազոհության կոմունիզմի վեհ գաղափարներին։

Հատկանշական է, որ սովետական ժողովրդի վաստակը, նրա ներդրումը խաղաղության և դեմոկրատիայի համար մղված պայքարում միշտ էլ շահեկան են գնահատվել ու գնահատվում են բոլոր նրանց կողմից, ում համար թանկ է մոլորակի խաղաղությունն ու ժողովուրդների ազատությունը։ Սովետական երկրի և նրա ժողովրդի մասին տարբեր մասնագիտության տեր մարդկանց ասած աղնիվ ու անկեղծ բաղում ասույթները, կամենում ենք արտահայտած լինել շվեդ հայտնի ինժեներ-ջերմատեխնիկ Հարրի Կարլսոնի հետևյալ խոսքերով. «Հայաստանում գտնվելու ժամանակամիջոցում մենք նորից ու նորից համոզվեցինք, որ ամբողջ սովետական ժողովուրդը, բոլոր սովետական մարդիկ համակված են խաղաղության ջերմ ձգտումով։ Նրանք զբաղված են մեծ ստեղծարար աշխատանքով, հանուն այն վիթխարի, ազնիվ խնդիրների իրագործման, որ դրել են իրենց առջև։ Սովետական մարդկանց ստեղծագործական աշխատանքը խաղաղության կողմնակիցներին պայքարի է ոգեշնչում հանուն խաղաղության ամբողջ աշխարհում»[39]։

Ինչպես արդեն նշել ենք, երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով էական փոփոխություններ տեղի ունեցան կապիտալիստական աշխարհում՝ ծավալվեց նրա ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլը, որի կարևորագույն արտահայտությունն էր հեղափոխությունների նոր ալիքը։ Եվրոպայում և Ասիայում իմպերիալիզմի շղթայում մեծ ճեղքեր առաջացան։ Կապիտալիզմի սիստեմից անջատվեց և սոցիալիզմի զարգացման ուղին բռնեց տասնմեկ պետություն՝ ավելի քան 700 մլն. բնակչությամբ։ Սկսվեց նոր փուլ միջազգային սոցիալիզմի զարգացման **գործում**։

Հետպատերազմյան տարիները սոցիալիստական երկրների համար լարված աշխատանքի, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ամրապնդման տարիներ էին։ Նորաստեղծ սոցիալիստական երկրներից յուրաքանչյուրի սոցիալ-տնտեսական զարգացման համար մղվող պայքարը համապատասխանում էր այդ երկրների ժողովուրդների ինչպես ազգային, այնպես էլ ինտերնացիոնալ շահերին։ Դա պայմանավորված էր նրանով, որ սոցիալիստական սիստեմի երկրներն ունեին սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր ուղղություն՝ դեպի կոմունիզմ և ժողովուրդների հեղափոխական նվաճումները և ազգային անկախությունը պաշտպանելու ընդհանուր շահեր։ Այդ հիման վրա ստեղծվեցին նոր տիպի

միջազգային հարաբերություններ՝ սոցիալիստական երկրների ընկերակցություն, որի համար բնութագրական էին ժողովուրդների հարաբերությունների այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են եղբայրական համագործակցությունը և փոխադարձ օգնությունը: Այդ հարաբերությունները ամենից առաջ բխում էին բանվոր դասակարգի ինտերնացիոնալ էությունից և համապատասխանում էին նրա դասակարգային շահերին: Որպես հասարակության առաջատար դասակարգ, նա ձգտում էր ընդլայնել և ամրապնդել կապերը սոցիալիստական երկրների հետ, հետևողականորեն վարել ինտերնացիոնալիստական քաղաքականություն: Նոր հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում եղբայրական երկրների բանվոր դասակարգի առջևից էր ընթանում սովետական բանվոր դասակարգը: Սովետական բանվոր դասակարգը ընդառաջ գնալով սոցիալիստական բոլոր ազգերի հետ բարեկամության և համագործակցության մասին լենինյան գաղափարներին, ոչ միայն օգնեց այդ երկրներին ազատվելու ֆաշիզմի ու միլիտարիզմի լծից, պաշտպանեց նրանց միջազգային իմպերիալիզմի հարձակումներից, այլև նոր կյանքի կառուցման համար ցույց տվեց վիթխարի նյութական ու բարոյական օգնություն:

ՍՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների միջև կնքվեցին բազմաթիվ պայմանագրեր, որոնց հիմքում ընկած էր մեծ և փոքր ժողովուրդների եղբայրական համագործակցության ու իրավահավասարության լենինյան սկզբունքը: Այդ սկզբունքին համապատասխան իրագործվում էր տեխնիկա-տնտեսական օգնություն, հումքի և զանազան սարքավորումների փոխադարձ մատակարարում, մասնագետների պատրաստում և այլն:

Համաշխարհային մասշտաբով ևս պատմական իրողություն դարձավ Վ. Ի. Լենինի կանխատեսումն այն մասին, որ «...Պայքարելով Ռուսաստանում սոցիալիստական կարգեր հաստատելու համար, մենք պայքարում ենք ամբողջ աշխարհի սոցիալիզմի համար»[40]:

Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների բանվորների սերտ համագործակցության կարևոր ձևերից էր սոցիալիստական մրցությունը և փորձի փոխանակումը: Սոցիալիստական երկրների արդյունաբերության, տրանսպորտի և շինարարության մեջ աշխատող բազմաթիվ բանվորներ փորձի փոխանակման կարգով այցելում էին ՍՍՀՄ հանրապետություններ, ծանոթանում սովետական գիտության ու տեխնիկայի նվաճումներին և հաղորդակից լինում նրա մարդկանց աշխատանքային փորձին:

Ուսումնասիրվող տարիներին, ի շարս սովետական մյուս հանրապետությունների, Սովետական Հայաստանը նույնպես տնտեսական ու կուլտուրական աշխույժ կապերի մեջ էր մտել եղբայրական երկրների հետ: Օրինակ, Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական և Չինաստանի ժողովրդական Հանրապետության Շանհայի էլեկտրամեքենաշինական գործարանների միջև ստեղծվել էր տնտեսական ու փոխադարձ համագործակցության ամուր կապ: Հանրապետության էլեկտրամեքենաշինական գործարանի կոլեկտիվը տարիներ շարունակ էլեկտրական մեքենաներ ու սարքավորումներ էր առաքում Չինաստան: Բավական է նշել, որ միայն 1958 թ. 9 ամիսների ընթացքում գործարանը Չինաստան ուղարկեց ավելի քան 110 շաբժական էլեկտրակայան, գեներատոր և տրանսֆորմատոր: 1958 թ. փորձի փոխանակման կարգով Շանհայի էլեկտրամեքենաշինական գործարանի մի խումբ բանվորներ ու ինժեներատեխնիկական աշխատողներ այցելեցին Երևանի էլեկտրամեքենաշինական գործարան և հանգամանորեն ծանոթացան նրա արտադրական գործունեությանն ու տեխնոլոգիային[41]:

Սովետական բանվոր-ծառայողներն իրենց հերթին շատ բան սովորում էին եղբայրական երկրների մասնագետներից: 1958 թ. Երևանի հաստոցակառուցման գործարանի բանվոր Ջավեն Կոլոյանը եղավ Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետությունում, որտեղ ծանոթացավ ջեռուցման սիստեմի համար արտադրվող ոչ մետաղյա սարքավորումների պատրաստման տեխնոլոգիային[42]: 1959 թ. Երևանի կաբելի գործարանի էլեկտրատեխնիկ Մարլեն Մարկոսյանը փորձի փոխանակման կարգով այցելեց Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն և հանգամանորեն ուսումնասիրեց կաբելի և մեկուսիչ հարմարանքների արտադրության տեխնոլոգիան[43]: ՀՍՍՀ շատ բանվորներ ու ինժեներատեխնիկական աշխատողներ իրենց որակավորումը բարձրացրին նաև Չեխոսլովակիայի, Հունգարիայի և սոցիալիստական մյուս երկրների առաջատար արդյունաբերական ձեռնարկություններում[44]:

Սովետական բանվոր դասակարգի սոցիալիստական գիտակցականության ու բարոյա-քաղաքական բարձր հատկանիշների դրսևորման ցայտուն արտահայտություն է սոցիալիստական հայրենասիրությունը և ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը: Դա համակողմանիորեն դրսևորվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Գիտակցելով ֆաշիզմի կողմից երկիրն ստրկացնելու սպառնալիքը, սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը: Սովետական մարդկանց անսահ-

ման նվիրվածությունը սոցիալիստական հայրենիքին, կոմունիզմի գաղափարներին ու սերը դեպի ժողովուրդների բարեկամությունը ոգեշնչում էր նրանց ռազմաճակատում և թիկունքում՝ հանդես բերելու անկոտրում կամք, բարոյաքաղաքական բարձր հատկանիշներ, նպատակասլացություն, հաստատակամություն ու անձնազոհություն: Պատերազմի առաջին ամիսներին, բնութագրելով սովետական ժողովրդի մասսայական հերոսությունն ու անձնազոհությունը, «Պրավդա» թերթը գրում էր. «Մեծ է և հզոր սովետական մարդկանց ժողովրդական հայրենասիրությունն ու աշխատանքային հերոսությունը Հայրենական պատերազմի այս ահեղ օրերին: Գործերի մեջ դրվում են սովետական մարդու լավագույն հատկությունները՝ կամքը, բնավորությունը, հոգեկան ուժը, սերը դեպի հայրենիքը ևատելությունը թշնամու նկատմամբ: Սովետական ժողովուրդը համախմբված է և միասնական, ինչպես երբեք»[45]: Սովետների մեծ երկրի նկատմամբ ջերմ սիրո և նվիրվածության անկրկնելի օրինակ ցույց տվեց նաև հայ ժողովուրդը: Պատերազմի առաջին իսկ օրերից մեր անծայրածիր երկրում, նաև Հայաստանում տեղի էին ունենում մասսայական ժողովներ ու միտինգներ, որտեղ սովետական բոլոր մարդիկ պատրաստակամություն էին հայտնում անձնազոհ կերպով ծառայելու սոցիալիստական հայրենիքին և մարքս-լենինյան գաղափարներին: Երևանում տեղի ունեցած միտինգներից մեկում կենսաթոշակառու Ս. Գալստյանը արտահայտելով հանրապետության աշխատավորության կամքը, ասաց. «Ես որպես սովետական հայրենասեր կին, երկար ժամանակ աշխատել եմ արտադրության մեջ: Այժմ, երբ երկրի վրա կախվել է մեծ վտանգ, հպարտությամբ հայտարարում եմ, որ իմ ամուսինն ու երեք որդիները զրանվում են սոցիալիստական հայրենիքի պաշտպանության շարքերում: Հայրենիքի պաշտպանության շահերը գիտակցելով, ես հանդուն կերպով ուսումնասիրում եմ ռազմական գործը և պատրաստ եմ հարկ եղած դեպքում զենքը ձեռքիս կուվել՝ մեր պատիվը, մեր ազատությունը պաշտպանելու համար»[46]: Երևանի երկաթուղային հանգույցի բանվորների միտինգում ընդունված բանաձևում ասված է. «Երդվում ենք, որ մենք ավելի քան երբեք միասնական ենք և պատրաստ ենք մեկ մարդու պես պաշտպանել մեր սրբազան հայրենիքը»[47]:

Հայրենիքի նկատմամբ տածած ջերմ հայրենասիրության դրսևորման հիանալի օրինակ էր ամբողջ Միության մեջ ծավալված համաժողովրդական շարժումը պաշտպանության ֆոնդ ստեղծելու համար: «Այդ միտքը,—գրում է «Պրավդան»,—մշտապես հուզում է մեր

լայնարձակ հայրենիքի ամենաղանաղան ծայրերում ապրող մարդկանց։ Հենց միայն այս հանգամանքն արդեն վկայում է այդ ժողովրդական նախաձեռնության մասսայականությունը, նախաձեռնություն, որը թելադրված է հայրենասիրական ազնիվ զգացմունքով»[48]։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը կարևորելով համաժողովրդական այդ նախաձեռնությունը, պետական ու հասարակական կազմակերպություններին կոչ արեցին ներգրավվել այդ շարժման մեջ և ամեն կերպ ընդլայնել այն[49]։

Արձագանքելով կուսակցության կոչին, հանրապետության աշխատավորները կարճ ժամանակամիջոցում (1941 թ. հուլիս-օգոստոս) 1մլն. 115 հազար ռուբլու արտադրանք տվեցին երկրի պաշտպանության ֆոնդին[50]։ ՍՍՀՄ ֆինանսների ժողկոմատի ոչ լրիվ տվյալներով 1941 թ. նոյեմբերի դրությամբ ամբողջ Միությունում պաշտպանության ֆոնդի օգտին ստացվել էր 868,7 մլն. ռուբլի դրամ, 1,5 կգ պլատին, 57,1 կգ ոսկի, 2690,3 կգ արծաթ, 1.479,981 ռ. օտարերկրյա վալյուտա կուրսային արժեքով։ Այդ նույն ժամանակ ՀՍՍՀ աշխատավորները պաշտպանության ֆոնդ մուծեցին ավելի քան 9 մլն. ռուբլի կանխիկ դրամ, 19 մլն. 330 հազար ռուբլու փոխառության պարտատոմս, 1279 դրամ ոսկի, ավելի քան 96 կգ արծաթ։ Սովետական Հայաստանը մինչև նոյեմբերի 10-ը ընդհանուր գումարով երկրի պաշտպանության ֆոնդ մուծեց 29 մլն. 400 հազար ռուբլի[51]։ Պաշտպանական ֆոնդին տրվող հատկացումները շարունակվեցին նաև հաջորդ տարիներին։ Հայկական ՍՍՀ աշխատավորները իրենց խնայողություններից 1941 թ. դեկտեմբերից մինչև 1945 թ. հուլիս ամիսը նվիրատվությամբ զանազան ֆոնդեր մուծեցին ավելի քան 207,6 մլն. ռուբլի, որից՝ պաշտպանության և Կարմիր բանակի ֆոնդը՝ 131 մլն. ռուբլի, «Հայաստանի կոմերիտմիություն», «Հայաստանի կոլտնտեսական», «Սասունցի Դավիթ», տանկային շարասյուների և «Սովետական Հայաստան», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» ավիաէսկադրիլյանների կառուցման ֆոնդը՝ 76,5 մլն. ռուբլի։

Նշված ժամանակամիջոցում ռազմաճակատ ուղարկվեց 1.136 հազար կոր զանազան տեսակի տաք հագուստ, ավելի քան 206 հազար անհատական ծանրոցներ[52]։

1941—1945 թվականներին տասնյակ հազարավոր բանվորներ արտադրական պլանների կատարման ու գերակատարման հետ միաժամանակ պարտավորություն էին վերցնում իրենց ստացած եկամտի մի մասը հատկացնել պաշտպանության ֆոնդին։ Այսպես, Արարատ

դործարանի բանվորներ Մելքոն Դասպարյանը, Արաքսյա Թոխմախյանը, Մարգո Հովհաննիսյանը, Ավետիք Հովհաննիսյանը և շատ ուրիշներ խոստացան մեկ օրվա աշխատավարձի հետ մեկտեղ պաշտպանության ֆոնդ մուծել նաև մեկ տարվա փոխառության պարտատոմսեր: Պաշտպանության ֆոնդին յուրաքանչյուր ամիս 150-ական ռուբլի նվիրելու ցանկություն հայտնեցին նաև Ղափանի պղնձահանքերի հանքափորներ Ներսիսյանը, Ստեփանյանը, Հակոբյանը, Խաչատրյանը, Ջաբարյանը և ուրիշներ[53]:

Հետպատերազմյան տարիներին սովետական հասարակական և պետական կարգի կենսատու ուժը՝ ժողովրդի բարոյա-քաղաքական միասնությունը հնարավորություն ստեղծեց կարճ ժամանակամիջոցում վերացնել պատերազմի հետևանքները և հասնել ամբողջ տնտեսության հետագա զարգացման: Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ պատերազմից առավել ուժած հանրապետությունների ու երկրամասերի վերականգնման աշխատանքներին: Արձագանքելով երկրի առաջատար ձեռնարկությունների հայրենասիրական նոր նախաձեռնությանը, Հայաստանի աշխատավորությունը ևս իր ակտիվ մասնակցությունը հանդես բերեց օկուպացիայից ազատագրված սովետական քաղաքների ու շրջանների վերականգնմանը: Այսպես, Հայկական ՍՍՀ արդյունաբերական ձեռնարկությունները Դոնբասի արդյունաբերական ձեռնարկություններին ուղարկեցին 9.373 տարբեր տեսակի մեքենաներ, գործիքներ և այլ սարքավորումներ: Լենինգրադի, Ստալինգրադի, Օդեսայի և սովետական մյուս քաղաքների ու շրջանների վերականգնման ֆոնդին հանրապետության աշխատավորները մուծեցին ավելի քան 8 մլն. ռուբլի կանխիկ դրամ: Ավելացնենք նաև, որ Հայաստանից շատ մասնագետներ, երիտասարդ բանվորներ մասնակցեցին ազատագրված շրջանների վերականգնման աշխատանքներին[54]:

ՍՍՀՄ բազմազգ բանվոր դասակարգի հայրենասիրությունը և ինտերնացիոնալ համագործակցությունը նոր ուժով արտահայտվեց 1950-ական թվականներին, երբ մեր երկիրը էլ ավելի ամրապնդելով իր տնտեսական ու քաղաքական հիմքերը, սկսեց աստիճանաբար թևակոխել սոցիալիզմի կատարելագործման փուլը: Դա փայլուն կերպով դրսևորվեց համաժողովրդական կառույցների շինարարության մեջ: 1950-ական թվականների սկզբներին ավարտվում էր Կույբիշևյան, Կամայի, Դորկու, Ուստ-Կամենագորսկի և մի շարք այլ խոշոր էլեկտրակայանների շինարարությունը: Լայն թափ էր ստացել Վոլգոգրադի,

Նովոսիբիրսկի, Կախովկայի և այլ հիդրոէլեկտրակայանների շինարարությունը։ Հիշյալ կառույցների շինարարությունն ու գործարկումը հսկայական նյութական միջոցների հետ մեկտեղ պահանջում էին ամբողջ երկրի բանվոր դասակարգի և ողջ աշխատավորության օգնությունն ու աջակցությունը։

Սովետական ժողովուրդը իրավամբ դրանք կոչեց համաժողովրդական կառույցներ։ Մեր հայրենիքի բոլոր մասերում սկսվեց մասսայական շարժում՝ խոշոր կառույցներին օգնելու համար։ Ամբողջ երկրի օրինակին հետևեց նաև Հանրապետության աշխատավորությունը։ ՀՍՍՀ արդյունաբերության բանվոր-ծառայողները, ինժեներատեխնիկական աշխատողները ձեռնամուխ լինելով կառույցների պատվերների կատարմանը, ծավալեցին լայն սոցիալիստական մրցություն։ Այսպես, Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանը սոցիալիստական մրցության մեջ մտնելով Բրելիսի և Բաքվի էլեկտրամեքենաշինարարների հետ, ապրիլի 7-ին (ժամկետից երկու և կես ամիս շուտ) կատարեցին Գլխավոր Թուրքմենական ջրանցքի պատվերը, նրա հասցեով ուղարկելով մեկ վագոն տրանսֆորմատոր, իսկ Կախովկայի հիդրոէլեկտրակայանի համար՝ 14 ուժային տրանսֆորմատոր[55]։

Նույնպիսի հաջողության հասան Ալավերդու քիմիական և Երևանի կարբիդի գործարանը[56]։

Հայրենասիրական մեծ վերելքով էին աշխատում նաև Երևանի կաբելի գործարանի, Կիրովականի քիմիական, Ղափանի պղնձամոլիբդենային կոմբինատների և Արթիկ-տուֆ քարհանքերի վարչության աշխատավորական կոլեկտիվները։ Համաժողովրդական կառույցների շինարարությանը անմիջական մասնակցություն ունենալու համար Հայկական ՍՍՀ-իս նորակառույցներ մեկնեցին մեծ թվով բանվորներ և ինժեներատեխնիկական աշխատողներ։ Հայաստանի բանվորությունը պարտքի ու պատասխանատվության բարձր զգացումով մասնակցեց համապետական խոշոր նշանակություն ունեցող դարավոր խոպանի յուրացմանը, այն իրավամբ համարելով իր պատվի ու խղճի գործը։

Հետևելով Մոսկվա քաղաքի և մարզի կոմերիտականների կոչին, Հանրապետության բազմաթիվ կոմերիտականներ և երիտասարդներ կամավոր մեկնեցին խամ ու խոպան՝ աշխատելու։ Հայաստանի կոմերիտականների առաջին խումբը խամ ու խոպան ուղևորվեց 1954 թ. մարտի 15-ին։ Հաջորդ տարիներին ևս երիտասարդական նորանոր ջոկատներ ուղևորվեցին խամ ու խոպան։ Բավական է նշել, որ 1954—1955 թթ. Հայաստանից այնտեղ մեկնեցին մոտ 2500 կոմերիտական

և երիտասարդ բանվորներ ու մասնագետներ[57], իսկ 1955—1958 թթ. նրանց թիվը հասավ 9000-ի[58]։

Այսպիսով, բանվոր դասակարգը երկրի հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքում գրաված իր առաջատար դիրքով, գաղափարական-քաղաքական բարձր մակարդակով եղել և մնում է աշխատավոր մասսաների ինտերնացիոնալ համերաշխության ու եղբայրության առավել արտահայտիչն ու հետևողական կրողը։

Նա անսահման սիրով ու հպարտությամբ է լցված իր երկրի հանդեպ։ ՍՍՀՄ բանվոր դասակարգը ու ամբողջ աշխատավորությունը ամեն ինչ արել և անում են էլ ավելի ծաղկուն ու շեն դարձնելու մեր երկիրը, ամրապնդելու նրա ռազմա-քաղաքական հզորությունը։

ՎԵՐՋԱԲԱՆ

Կապիտալիզմի կործանման և նոր հասարակարգի կառուցման համաշխարհային պատմական մեծ առաքելության իրականացման առաջնեկությունը օրինաչափորեն սովետական բանվոր դասակարգին կանգնեցրեց արդի դարաշրջանի ամբողջ հասարակական-քաղաքական կյանքի կենտրոնում: Համաշխարհային պրոլետարիատը դարձավ նրա մարտական և հեղափոխական ավանդույթների հիմնական կրողն ու ժառանգորդը: Մեծ Հոկտեմբերը որպես սոցիալիստական հեղափոխության առաջին հաղթական ակտ միջազգային հեղափոխական ու ազատագրական շարժումը հասցրեց նոր՝ ավելի բարձր մակարդակի, «...Ամբողջ աշխարհին մատնանշեց,—ասել է Վ. Ի. Լենինը,—սոցիալիզմի ուղիները և բուրժուազիային ցույց տվեց, որ մոտենում է նրա տիրակալության վերջը»[1]:

Սկսելով հեղափոխության աշխարհաշեն ու ստեղծարար խնդիրների լուծումը, մեր երկրի բանվոր դասակարգը աշխատավոր մասսաների հետ դաշնակցած, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պատմական կարճ ժամանակամիջոցում հաղթահարեց բազմաթիվ անասելի դժվարություններ ու խոչընդոտներ և 1930-ական թվականների երկրորդ կեսին հաջողությամբ ավարտեց ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Երկու տասնամյակի ընթացքում սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, կուլտուրական հեղափոխության և հասարակական հարաբերությունների կատարելագործման բնագավառներում ձեռք բերված վիթխարի հաջողությունները մեր երկիրը դարձրին սոցիալիստական զորեղ պետություն:

Սոցիալիզմի հիմնական հաղթանակից հետո սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ պատմական նոր խնդիրների կենսագործմանը, այն է՝ սոցիալիզմի ամրապնդմանն ու զարգացմանը: 1930-ական թվականների երկրորդ կեսից մինչև 50-ական թվականների վերջը

և երիտասարդ բանվորներ ու մասնագետներ[57], իսկ 1955—1958 թթ. նրանց թիվը հասավ 9000-ի[58]։

Այսպիսով, բանվոր դասակարգը երկրի հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքում գրաված իր առաջատար դիրքով, գաղափարական-քաղաքական բարձր մակարդակով եղել և մնում է աշխատավոր մասսաների ինտերնացիոնալ համերաշխության ու եղբայրության առավել արտահայտիչն ու հետևողական կրողը։

Նա անսահման սիրով ու հպարտությամբ է լցված իր երկրի հանդեպ։ ՍՍՀՄ բանվոր դասակարգը ու ամբողջ աշխատավորությունը ամեն ինչ արել և անում են էլ ավելի ծաղկուն ու շեն դարձնելու մեր երկիրը, ամրապնդելու նրա ռազմա-քաղաքական հզորությունը։

մեր երկրի պատմության մեջ հայտնի է որպես սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջան։

Այդ ժամանակաշրջանում ՍՍՀՄ բանվոր դասակարգը, ամբողջ ժողովուրդը լենինյան կուսակցության ղեկավարությամբ պայքարում էին սոցիալիստական հասարակարգի համակողմանի զարգացման, սոցիալիստական հարաբերությունների կատարելագործման, աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացման, ժողովրդի նյութական ու հոգևոր վերելքի, սոցիալիստական հասարակության տնտեսական և սոցիալ-քաղաքական հաստատուն առաջընթացի համար։

Տվյալ փուլը նշանավորվեց նաև Սովետական Հայաստանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական խոր տեղաշարժերով։

Տնտեսական կյանքի բնագավառում սոցիալիզմի ամրապնդման ու զարգացման ժամանակաշրջանը բնորոշվում է Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության համակողմանի զարգացմամբ, արդյունաբերական նոր ճյուղերի ստեղծմամբ, սոցիալիստական ապրելակերպի ամրապնդմամբ, ժողովրդի նյութական ու հոգևոր արժեքների դինամիկ մեծացմամբ։

Սոցիալիզմի բարեբար հողի վրա արմատական փոփոխություններ տեղի ունեցան հասարակության սոցիալական կառուցվածքում։ Արտադրողական ուժերի զարգացման, աշխատանքի արտադրողականության վերելքի, բնակչության նյութական և հոգևոր մակարդակի բարձրացման, ինչպես նաև ֆիզիկական ու մտավոր աշխատանքի, քաղաքի և գյուղի միջև էական տարբերությունների աստիճանական վերացման հիման վրա շարունակաբար կատարելագործվել են սոցիալիստական հասարակական հարաբերությունները և ամրապնդվել են դասակարգերի ու սոցիալական խմբերի արմատական շահերը։

Կ. Մարքսի պատկերավոր արտահայտությամբ, սոցիալիստական դասակարգերի ու սոցիալական խմբերի մերձեցման և հասարակության սոցիալական միատարրության պատմական ընթացքի ուժ, նրա սոցիալական բանականությունն և սոցիալական սիրտ հանդես է գալիս բանվոր դասակարգը[2]։

Որպես ընդհանուր միութենական երևույթ հասարակության սոցիալական կառուցվածքում կատարված տեղաշարժերի բնորոշ կողմը այն է, որ բնակչության կազմում անընդմեջ աճել է բանվոր դասակարգի տեսակարար կշիռը։

Բնակչության սոցիալ-դասակարգային կազմում բանվոր դասակարգի տեսակարար կշռի անընդմեջ մեծանալը հասարակության զարգացման վրա այդ դասակարգի ազդեցության ընդլայնման, նրա առաջատար դերի ամրապնդման օբյեկտիվ հիմքերից է։

Արդյունաբերական նոր ճյուղերի ու կենտրոնների հանդես գալու հետ կապված նկատելի փոփոխություններ կատարվեցին հասարակության առաջատար դասակարգի ճյուղային կառուցվածքում և աշխարհագրական տեղաբաշխման մեջ։ Ճյուղային կառուցվածքի տեղաշարժը բնութագրվում է բանվոր դասակարգի ինդուստրիալ ջոկատի աճով, որը կարևոր նշանակություն ունի ինչպես այդ դասակարգի սոցիալական զարգացման, այնպես էլ նրա առաջատար դերի ամրապնդման համար։

Սովետական Հայաստանում նկատվել են նաև սոցիալ—ժողովրդագրական բնույթի խոր տեղաշարժեր, ինչպես ասենք, բնակչության աճը, քաղաքային ու գյուղական բնակչության տեսակարար կշիռների հարաբերակցության փոփոխությունները և այլն։ Ի դեպ, առավել բարձր տեմպերով է աճել քաղաքային բնակչությունը։ Վերջինիս բնական աճի գործակցի բարձրացումն ամբողջ բնակչության կազմում աստիճանաբար կարգավորում էր աշխատանքային ռեզերվների համապատասխան զբաղվածությունը ըստ բնակավայրերի, ինչպես նաև նպաստում էր բանվոր դասակարգի սոցիալական զարգացմանը։ Բանվորական ընտանիքից արտադրություն մտնող նոր աշխատուժը իր սոցիալ-հոգեբանական հատկությամբ ավելի մոտ է կանգնած կադրային բանվորությանը, քան գյուղական երիտասարդությունը՝ չնայած գյուղում խոշոր մեքենայական արտադրության ստեղծման, աշխատանքների մեքենայացման և նրա բնակչության կուլտուր-կրթական մակարդակի բարձրացման հետևանքով մեծապես կրճատվել են այդ տարբերության սահմանները։

Բանվոր դասակարգի քանակական բուռն աճը ուղեկցվել է նրա կազմի որակական փոփոխություններով։ Դա արտահայտվել է բանվոր դասակարգի տարիքային, սեռային կազմում և անընդմեջ աշխատանքի ստաժի մեջ առաջացած փոփոխություններում։ Բանվորության կազմում էապես աճեց կանանց թիվը։ Արտադրության հիմնական կրողը դարձավ երիտասարդությունը։ Ավելացավ առավել տևական, չընդհատված աշխատանքային ստաժով բանվորների թիվը։

Որակական աճը գլխավորապես կատարվել է նրա պրոֆեսիոնալ-տեխնիկական և հանրակրթական մակարդակի բարձրացման ու սո-

ցիալական բնույթի զարգացման ուղղություններով։ Այդ փոփոխությունների հիմքը դիտատեխնիկական բուռն առաջընթացն էր։

Բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման ու նրա կոմունիստական դաստիարակության ամրապնդման նպատակով հանրապետությունում ընդլայնվեց կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցը, ավելացան գրքերի և մյուս հրատարակությունների տպաքանակը և մասսայական ինֆորմացիայի միջոցները։ Չեռնամուխ լինելով հիշյալ պրոբլեմի լուծմանը, կուսակցությունը ելնում էր բնակչության նյութական բարեկեցության վերելքի, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի փաստական տարբերությունների աստիճանական հաղթահարման, բանվոր դասակարգի և մտավորականության աստիճանական մերձեցման կենսական անհրաժեշտությունից։ Չեռնարկված միջոցառումները որակական նոր փոփոխություն առաջացրին բանվոր դասակարգի կազմում։ Եթե սոցիալիստական շինարարության նախորդ տարիներին նրա կազմի մեծ մասը սևագործ բանվորներ էին, ապա այժմ այդ դասակարգի հիմնական կորիզը դարձան բարձրորակ պրոֆեսիաների աշխատողները, որոնք իրենց պրոֆեսիոնալ վինվածությամբ, գործիմացությամբ ու աշխատանքի բնույթով ավելի ու ավելի էին մոտենում ինժեներատեխնիկական աշխատողներին։

Զբաղված բնակչության մեջ բանվոր դասակարգի տեսակարար կշռի անընդմեջ աճը, կրթական մակարդակը, տեխնիկական գիտելիքները, արտադրական աշխատանքի խոր ու բազմակողմանի իմացությունը, մի կողմից, և տնտեսության առանցքային ճյուղերի հետ կապվածությունը, մյուս կողմից, էլ ավելի են ամրապնդում ու ընդլայնում հասարակության հիմնական արտադրող ուժի նրա դերը։ Այս ամենը բանվորին օժտում են աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու, արտադրության մեջ գիտության ու տեխնիկայի նվաճումներն արագորեն արմատավորելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ունակությամբ ու մտահոգությամբ։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, մասնավորապես արդյունաբերության մեջ, լայն թափ ստացավ աշխատավոր մասսաների ստեղծագործական ակտիվությունը, որն իր վառ արտահայտությունը գտավ սոցիալիստական մրցության մեջ։ Սովետական հասարակության զարգացման այս փուլում ծնվեցին և կյանքի ուղեգիր ստացան սոցիալիստական մրցության դանազան ձևերը՝ բազմադազ-

գահավիններին շարժումից սկսած մինչև կոմունիստական աշխատանքի բրիգադները։

Սոցիալիստական մրցությունը արտադրողական ուժերի հետագա զարգացման, առաջավոր փորձի տարածման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատավորների ստեղծագործական ակտիվության դրսևորման լավագույն միջոց լինելով հանդերձ, միաժամանակ դառնում է աշխատավորության կոմունիստական դաստիարակության, նրանց սոցիալական զարգացման, անհատի և կոլեկտիվի հասարակական շահերի զուգակցման, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ձևավորման կարևոր պայման։

Սոցիալիստական մրցությունը ուղղված լինելով ամբողջ ժողովրդի նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացմանը, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը, միաժամանակ հանդիսացավ աշխատանքային կազմակերպվածության և խանդավառության այնպիսի օրինակ, որով ոգևորված նորանոր արտադրական նվաճումներ էին ձեռք բերում նաև կոլտնտեսային գյուղացիությունը և մյուս աշխատավորական խավերը։

Սոցիալիստական մրցության պատմությունը վկայում է, որ բանվորների արտադրական և հասարակական-քաղաքական ակտիվությունը դոնվում են փոխազդեցության ու փոխներգործության մեջ։ Սոցիալիստական մրցության դաստիարակչական ֆունկցիայի շարունակաբար ուժեղացումը նպաստում է բանվորների գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացմանը։ Իսկ դա նշանակում է նրա հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացում։

Սոցիալիզմի-կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում բանվորների բազմակողմ ստեղծագործական ակտիվության օրինակ է նրա մասնակցությունը հասարակական արտադրության գիտատեխնիկական առաջընթացին, որն արտահայտվում է առաջին հերթին գյուտարարների և նորարարների մասսայական շարժման մեջ։ Բանվոր դասակարգի տեխնիկական ստեղծագործական ակտիվության բարձրացման գործին մեծ չափով խթանել է արդյունաբերության ու գիտության աշխատողների սերտ համագործակցությունը։ Շարքային աշխատող մարդու մտահոգությունը և անմիջական մասնակցությունը սոցիալիստական արտադրության տեխնիկական առաջընթացի զարգացմանը, արտադրական պրոցեսների մեքենայացմանն ու ավտոմատացմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը՝

վկայում են սովետական մարդու աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի, ինքնակատարելագործման մասին:

Բանվոր դասակարգը եղել և մնում է սովետական հասարակության հասարակական-քաղաքական կյանքի կարևորագույն դեմքը: Սոցիալիստական հասարակական հարաբերություններում բանվոր դասակարգի քաղաքական ակտիվության դրսևորման կարևոր բնագավառը նրա մասնակցությունն է պետության կառավարմանը:

Սովետական հասարակության տվյալ փուլին բնորոշ է սոցիալիստական պետականության ամրապնդումն ու զարգացումը, սոցիալիստական դեմոկրատիայի հետևողական ծավալումը: ՍՄԿԿ-ն և սովետական կառավարությունը, մշակելով մեր երկրի քաղաքական զարգացման գիծը, առանձնահատուկ հետևողականություն են հանդես բերել սոցիալիստական դեմոկրատիան կատարելագործելու, ժողովրդական մասսաներին պետական ու տնտեսական կյանքին լայնորեն մասնակից դարձնելու նոր մեթոդներ և ձևեր մշակելու ուղղությամբ:

Սովետական պետության դեմոկրատական բնույթը ամենից առաջ դրսևորվում է ժողովրդական դեպուտատների սովետների գործունեությամբ: Սովետներում ժողովրդական դեպուտատների գործունեության մասշտաբներն ու արդյունավետությունը մեծ չափով կախված է նրանից, թե նրանում ինչպիսի դեր են խաղում բանվորները:

Բանվոր դասակարգի ներկայացուցիչների գործունեությունը սովետներում բազմաբնույթ է: Նրանք սովետներում համապետական դիրքերից լուծում են քաղաքական, սոցիալ-տնտեսական և կուլտուրական շինարարության հանգուցային հարցեր: Ակտիվորեն մասնակցում են դեպուտատության թեկնածուների առաջադրմանը, ընտրական հանձնաժողովների գործունեությանը, ագիտակոլեկտիվների աշխատանքներին, հանդես են գալիս գրավոր ու բանավոր հաղորդումներով և քաղաքական մեծ վերելքով մասնակցում ընտրություններին:

Բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական գործունեության կարևոր միջոցներ են կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և հասարակական այլ կազմակերպությունները:

Բանվոր դասակարգի սոցիալական զարգացման հիմնական միտումներն արտահայտող այդ տեղաշարժերն իրենց արտահայտությունն են գտել նաև ՀՍՍՀ-ում:

Որպես հասարակության առաջատար արտադրող ուժ, բանվոր դասակարգը ակտիվորեն մասնակցում է արտադրության կառավարմանը, որը նրա հասարակական-քաղաքական գործունեության դրսևորումնե-

րից է։ Արտադրության կառավարմանը մասնակցելը բազմակողմ է-բնույթ է։ Բանվորները մասնակցում են կուսակցության ու կառավարության տնտեսական բնույթի փաստաթղթերի համաժողովրդական քննարկմանը։ Կուսակցական, պետական և հասարակական ղեկավար մարմիններում ընտրված բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչները անմիջականորեն մասնակցում են սոցիալիստական պետության տնտեսական քաղաքականության մշակմանը։

Ձեռնարկությունների կառավարմանը բանվորների մասնակցությունը իրականացվում է հիմնականում արհմիութենական կազմակերպությունների միջոցով։ Արհմիությունները գործուն մասնակցություն ունեն հասարակական արտադրության զարգացման կարևորագույն խնդիրների լուծման մեջ՝ արտադրության պլանների մշակումից մինչև ձեռնարկության կառավարումը։ Ժողովրդական տնտեսության կառավարմանը բանվոր դասակարգը մասնակից է դառնում նաև այնպիսի հասարակական կազմակերպությունների միջոցով, ինչպիսիք են արտադրական խորհրդակցությունները, ժողովրդական վերահսկողության մարմինները, նորարարների ու գյուտարարների ընկերությունները, հասարակական բյուրոները և այլն։

Բանվոր դասակարգը եղել և մնում է մեր երկրի ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության ու եղբայրության ամրապնդման հիմնական կրողն ու ջատագովը։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամական կապերի ամրապնդման, զարգացման և մերձեցման մեջ իր համեստ ներդրումն ունի նաև ՀՍՍՀ բանվոր դասակարգը։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հանրապետության բանվոր դասակարգը սոցիալիստական լայն մրցություն է ծավալել եղբայրական հանրապետությունների հետ, ակտիվորեն մասնակցել է խամ ու խոպան հողերի յուրացմանը և համաժողովրդական խոշոր շատ կառույցների շինարարությանն ու գործարկմանը։

Սովետական ժողովրդի միասնական ընտանիքում նա ևս ջերմորեն պաշտպանում ու արձագանքում էր կուսակցության և սովետական պետության բոլոր միջոցառումներին, որոնք ուղղված էին մեր երկրի հետագա հզորացմանն ու ամրապնդմանը։

ՍՍՀՄ փառապանծ բանվոր դասակարգի կազմում Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը ևս իր համեստ ներդրումն ունեցավ խաղաղության պաշտպանության և միջազգային լարվածության թուլացման գործում։

Բանվոր դասակարգի դերը մեծ է սոցիալիստական դասակարգերի ու սոցիալական խմբերի դաշինքի ամրապնդման ուղղությամբ: Շարունակաբար աճել է նրա դերը գյուղատնտեսության տեխնիկական առաջընթացի, գյուղի և քաղաքի միջև եղած էական տարբերությունների հաղթահարման գործում:

Սոցիալիստական շինարարության բոլոր փուլերում բանվոր դասակարգն իր առաջատար դերը հաջողությամբ իրականացնում է իր առաջատար ուժի՝ կոմունիստական կուսակցության նպատակասլաց ղեկավարությամբ, որի գործունեությունը նպատակամղված է մեր հասարակարգի ծաղկմանն ու բարգավաճմանը:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Ս. Կարբաչով, *Ժողովրդի կենդանի ստեղծագործությունը, 1985, էջ 7։*
2. Վ. Ի. Լենին, *նկ., հ. 41, էջ 369։*
3. *«Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը (նոր խմբագրությամբ)», 1986, էջ 58 (Այսուհետև ՍՄԿԿ ծրագիրը)։*
4. Վ. Ի. Լենին, *նկ., հ. 43, էջ 50։*
5. Մ. Ս. Գորբաչով, *ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի Քաղաքական զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, 1986, էջ 138։*
6. *Նույն տեղում, էջ 83։*
7. Ա. Կ. Գրիգորյանց, *Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, 1960։*
8. Հ. Մ. Աբրահամյան, *Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման համար, 1975։*
9. Р. Л. Азизбекян. Рост культурно-технического уровня рабочего класса Армении в период зрелого социализма, Ереван, 1984; **М. А. Григорян,** Развитие структуры рабочего класса Армении в период зрелого социализма, Ереван, 1980.
10. «Рабочий класс Советской Армении в период развитого социализма», Ереван, 1982.
11. Հ. Ա. Կարապետյան, *Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը 1920—1940 թթ., 1980։*
12. Բ. Ս. Օհանջանյան, *Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից (1953—1965 թթ.), 1970,* Ա. Մ. Բաղմանյան, *Հայաստանի կոմկուսը բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման համար մղած պայքարում, 1976,* Ս. Ս. Ամբյան, *Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը արդի էտապում, 1967։*
13. Ս. Ս. Ամբյան, *Զարգացած սոցիալիզմի բանվոր դասակարգը, 1976, Փոփոխություններ սովետական հասարակության սոցիալական կառուցվածքում, 1973, Միասնական համատով դեպի կոմունիզմ, 1967։*
14. Ս. Ս. Ամբյան, *Հասարակության սոցիալական կառուցվածքի վերափոխումն ու զարգացումը Հայկական ՍՍՀ-ում, 1981։*

15. Պ. Գ. Սաֆյան, *Սոցիալիստական մրցությունը Հայաստանում 1959—1965 թթ., 1973, Նույնի՝ Սոցիալիստական մրցության առաջատար ուժը, 1976,* Պ. Գ. Սաֆյան, Ա. Ս. Վարդանյան, *Նրանք աշխատում են կոմունիստաբար, 1960.* Ա. Կ. Գրիգորյանց, *Կոմունիստական աշխատանքի բրիգադները Հայաստանում, 1961,* Լ. Ա. Խուրշուդյան, *Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից (1928—1932), 1961:*

16. Հ. Մ. Հարությունյան, *Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (բանակը, կազմը), Եր., 1983.*

17. Վ. Ն. Ղազախեցյան, *Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920—1929 թթ., Եր., 1975, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929—1937), Եր., 1978:*

18. С. А. Аллахвердян. Роль рабочего класса в победе колхозного строя в Армении (1927—1935), Ереван, 1969.

19. Հ. Հ. Ագիգրեկյան, *Սովետական Հայաստանի էլեկտրիֆիկացիայի պատմությունից, Եր., 1966: Նույնի՝ Սովետական Հայաստանի էլեկտրատեխնիկական արդյունաբերության պատմությունից, Եր., 1978, Նույնի՝ Հայաստանի աշխատավորների ավանդը ՍՍՌՄ հիդրոտեխնիկական կառուցումներում, Եր., 1960,* Վ. Հ. Բարսամյան, *Հայաստանի կոմկուսի գործունեությունը հանրապետության գունավոր մետալուրգիայի և լեռնահանքային արդյունաբերության զարգացման բնագավառում (1945—1965 թթ.), Եր., 1973:*

20. Ա. Վ. Վարդապետյան, *Հայաստանի արհմիությունների պատմությունը 1905—1965 թթ., Եր., 1969,* Ա. Մ. Հակոբյան, *Հայաստանի բանդյուղտեսչությունը սոցիալիզմի համար մղված պայքարում (1920—1934), Եր., 1974:*

21. Ս. Վ. Խարմանդարյան, *Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի տարիներին, Եր., 1960,* Ա. Մ. Հակոբյան, *Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության հինգերորդ հնգամյակի տարիներին, Եր., 1962,* Փ. Ի. Ենգոյան, *Հայաստանը ինդուստրացման ուղիով, Եր., 1967,* Կ. Ս. Կոզմոյան, *Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում (1920—1970), Եր., 1977,* Ա. Ե. Վարդանյան, *Որակյալ աշխատուժի ընդլայնված վերարտադրությունը, Եր., 1971,* Ս. Պ. Հայրապետյան, *Սոցիալիզմի կառուցումը և կադրերի պատրաստումը Հայաստանում, Եր. 1974,* Ս. Ա. Միքաելյան, *Պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությունը Սովետական Հայաստանում, Եր., 1960,* Գ. Ա. Եաչատրյան, *Հայաստանի սոցիալիստական ինտելիգենցիայի կազմավորումը և զարգացումը, Եր., 1968,* Պ. Տ. Ոսկերչյան, *Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 1920—1940 թթ., Եր., 1966,* Գ. Մ. Գեղամյան, *Սոցիալ-տնտեսական փոփոխություններ Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին (1921—1936), Եր., 1978,* Ք. Գ. Գրիգորյան, *Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը, Եր., 1971,* Ա. Լ. Հարությունյան, *Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Եր., 1958,* Կ. Ժ. Միրզախանյան, *Հայաստանի կոմերիտմիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Եր., 1956,* Լ. Ջ. Անանյան, *Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը, Եր., 1979,* А. К. Григорянц. Формирование и развитие армянской технической интеллигенции (1920—1965), Ереван, 1966.

22. Հ. Ե. Թումանյան, *Հայկական ՍՍՌ-ի էկոնոմիկան Հայրենական մեծ պատերազմի շրջանում և նրա զարգացումը հետպատերազմյան առաջին հնգամյակում, Եր., 1953,*

Վ. Ն. Խոջաբեկյան, *Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Եր., 1976,* Լ. Մ. Դավթյան, *Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը, Եր., 1965,* Վ. Ա. Կյուրեղյան, *Հայկական ՍՍՀ աշխատանքային ռեսուրսների օգտագործումը արդի փուլում, Եր., 1978,* Գ. Ն. Ավագյան, *Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր., 1970, «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.», Եր., 1960,* Վ. Ն. Խոջաբեկյան, Ս. Մ. Թամազյան, *Աշխատանքի արտադրողականության բարձրացման ռեզերվները Երևանի ձեռնարկություններում, Եր., 1956։*

23. *«Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, Եր., 1967, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, Եր., 1970։*
24. *«Ուրվագծեր Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության», Եր., 1967,* Մ. Պ. Աղայան, Ե. Մ. Խալեյան, *Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, Երրորդ պրակ, Եր., 1960։*
25. *Փ. Ի. Նեգոյան, Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռեսպուբլիկայի ինդուստրացման համար (1926—1946), Եր., 1965,* Մ. Կ. Սաֆարյան, *Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռեսպուբլիկայի ինդուստրացման համար (1937—1941), Եր., 1966,* Հ. Ա. Ավետիսյան, *Հայաստանի կոմերիտմիությունը սոցիալիզմի կառուցման համար մղված պայքարում, Եր., 1958,* Հ. Մ. Ութմազյան, *Հայաստանի կոմպարտիայի պայքարը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար (1959—1965 թթ.), Եր., 1974։*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 гг», т. I, М., 1960, с. 407.
2. «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1957, с. 22.
3. «Народное хозяйство СССР в 1978 г., Статистический ежегодник», М., 1979, с. 229.
4. «Народное хозяйство Армянской ССР в 1963 г. Статистический сборник», Ереван, 1964, с. 30—31.
5. «Народное хозяйство Армянской ССР, 1957», с. 22.
6. «Народное хозяйство СССР 1922—1972. Статистический ежегодник», М., 1972, с. 132.
7. «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», с. 32.
8. «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941—1945)», Ереван, 1975, с. 107—111, 115.
9. *ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր ՄԼի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 17, թ. 8 (այսուհետև ՄԼի հայկական մասնաճյուղի կուսարխիվ)։*
10. *«Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 24։*
11. Ս. Լ. Հարությունյան, *Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Եր., 1950, էջ 27։*
12. *Նույն տեղում, էջ 105։*
13. *ՄԼի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 47, գ. 5, թ. 69։*
14. *Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարու-*

Բյան պետական կենտրոնական արխիվ, ֆ. 113, ց. 9, գ. 354, թ. 47 (այսուհետև ՀՍՍՀ ՀՊԿԱ):

15. «Очерки истории Коммунистической партии Армении», Ереван, 1967, с. 419.

16. Ս. Լ. Հարությունյան, Նշված աշխ., էջ 22:

17. Փ. Ի. Նիգոյան, Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը, Եր., 1964, էջ 174:

18. Նույն տեղում:

19. «Народное хозяйство Армянской ССР за 60 лет. Юбилейный статистический ежегодник», Ереван, 1980, с. 165.

20. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября. Статистический сборник», Ереван, 1967, с. 218.

21. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 218:

22. Ս. Վ. Խարմանդարյան, Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի տարիներին, Եր., 1960, էջ 113:

23. «Народное хозяйство Армянской ССР в 1964 г. Статистический ежегодник», Ереван, 1965, с. 24.

24. Ս. Վ. Խարմանդարյան, Նշված աշխ., էջ 116:

25. «Հաշվետու դեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում ՀԿ(բ)Պ կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին», Եր., 1951, էջ 14—22:

26. Ս. Վ. Խարմանդարյան, Նշված աշխ., էջ 115:

27. «Труд в Армянской ССР. Статистический сборник», Ереван, 1970, с. 84.

28. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 221:

29. «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», с. 24.

30. «Սովետական Հայաստան», 18 հունիսի 1951 թ.:

31. Ս. Վ. Խարմանդարյան, Նշված աշխ., էջ 132:

32. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 222:

33. Հաշվարկը կատարվել է ըստ „Народное хозяйство Армянской ССР за 60 лет. Юбилейный статистический ежегодник", *165 էջի աղյուսակի տվյալների:*

34. «КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК», часть IV, М., 1960, с. 91—109.

35. «Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XVIII համագումարին», 1956, էջ 19—20:

36. Հաշվարկը կատարվել է ըստ „Народное хозяйство Армянской ССР в 1964 г.", *24 էջի աղյուսակի տվյալների:*

37. Նույն տեղում, էջ 24—26:

38. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», с. 71.

39. «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», с. 27.

40. Հաշվարկը կատարվել է ըստ „Народное хозяйство Армянской ССР в 1964, г.", *27 էջի աղյուսակի տվյալների:*

41. Նույն տեղում, էջ 24:

42. «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», с. 27.

43. Հաշվարկը կատարվել է ըստ „Народное хозяйство АрмянскойССР в 1963г". 30, „Народное хозяйство Армянской ССР в 1964г.", *27 էջերի աղյուսակների տվյալների:*

44. «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», с. 24.
45. «Советская Армения за 40 лет. Статистический сборник», Ереван, 1960, с. 40.
46. *Հաշվարկը կատարվել է ըստ* „Народное хозяйство Армянской ССР в 1964г." *1 9—140 էջերի աղյուսակների տվյալների։*
47. *Նույն տեղում, էջ 141։*

ԳԼՈՒԽ ՍՐԿՐՈՐԴ

1. «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», Ереван, 1940, с. 12., «Труд в Армянской ССР», 1976, с. 32.
2. *Հաշվարկը կատարվել է ըստ* „Народное хозяйство СССР в 1965г. статистический ежегодник", М., 1965, *557 էջի աղյուսակի տվյալների։*
3. «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», с. 12 и «Труд в Армянской ССР», 1976, с. 32.
4. «История второй мировой войны 1939—1945 гг.», т. 4, М., 1975, с. 144.
5. *ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 229, թ. 1 և* „Труд в Армянской ССР", 1976, с. 29.
6. **А. В. Митрофанова**, Рабочий класс СССР в годы Великой Отечественной войны. М., 1971, с. 194.
7. *ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 234, թ. 1—109։*
8. «Советская Армения в годы Великой Отечественной войны», с. 752.
9. *ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 16, գ. 67, թ. 1 և* „Советская Армения в годы Великой Отечественной войны", с 140, 155, 156, 204, 211, 220.
10. *Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 221, թ. 1, գ. 229, թ. 1, գ. 294, թ. 1—109, գ.236, թ. 1—147, գ. 243, թ. 1, գ. 252, թ. 60 տվյալների։*
11. *А. В. Митрофанова, Նշված աշխ., էջ 437։*
12. *Հաշվարկը կատարվել է ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 221, թ. 1—2, գ. 229, թ. 1 տվյալների հիման վրա։*
13. *Նույն տեղում։*
14. «Советская Армения в годы Великой Отечественной войны», с. 319.
15. *ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 14, գ. 24, թ. 10, ֆ. 591, ց. 8, գ. 41, թ. 8, 11, 62, ց. 7, գ. 175, թ. 2, գ. 185, թ. 12։*
16. *ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 179, թ. 8—26, գ. 208, թ. 21—39, գ. 221, թ. 1—2, գ. 222, թ. 1, գ. 223, թ. 14—40, գ. 240, թ. 130—135, գ. 243, թ. 1—2, գ. 252, թ. 60—63։*
17. *Հաշվարկը կատարվել է ըստ* «Труд в Армянской ССР», *1976, 32 էջի աղյուսակի տվյալների։*
18. «Труд в Армянской ССР», 1976, с. 29.
19. *Նույն տեղում, էջ 32։*
20. «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», с. 54.
21. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», с. 75.

22. «Труд в Армянской ССР», 1976, с. 32 и «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», с. 101.

23. Հաշվարկը կատարվել է ըստ „Народное хозяйство СССР в 1965г.", М., 1966, *561 էջի ազգաբանակի տվյալների։*

24. Հաշվարկը կատարվել է ըստ „Экономика и культура Армении к 50-летию Великого Октября", 75, „Труд в Армянской ССР, 1970", *61 էջերի ազգաբանակների տվյալների։*

25. Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի հիման վրա։

26. Վ. Ի. Լենին, Նկ, հ. 3, էջ 696։

27. «Труд в Армянской ССР», 1976, с. 32—33, «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», с. 20.

28. К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 26, ч. 1, М., 1962, с. 215.

29. «Труд в Армянской ССР», 1976, с. 32.

30. «Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XIX համագումարին», Եր., 1958, էջ 47—48։

31. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», с. 87.

32. Նույն տեղում։

33. Նույն տեղում,

34. «Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР», с. 11.

35. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1145, թ. 1։

36. «Труд в Армянской ССР», 1976, с. 29.

37. Հ. Մ. Հարությունյան, Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը), էջ 39—43։

38. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1144, թ. 1—2, գ. 1145, թ. 1—2 և „Социалистическое строительство Армянской ССР (1920—1940)", 113, „Труд в Армянской ССР", 1976, *29 էջերի ազգաբանակների տվյալների։*

39. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1146, թ. 6, գ. 1147, թ. 2, գ. 1148, թ. 1, գ. 1149, թ. 1, ֆ. 591, ց. 8, գ. 411, թ. 24—27, 73—78, գ. 412, թ. 19—26, 29—35, գ. 483, թ. 13 տվյալների։

40. Հաշվարկը կատարվել է նույն արխիվի, ֆ. 591, ց. 8, գ. 411, թ. 24—27, գ. 412, թ. 10—26, 29—35, գ. 418, թ. 2—109 և „Народное хозяйство Армянской ССР в 1964г." *188 էջի ազգաբանակի տվյալների հիման վրա։*

41. Հաշվարկը կատարվել է ըստ „Сельское хозяйство Армянской ССР", Ереван, 1961, 458—459, „Труд в Армянской ССР", 1976, *29 էջերի ազգաբանակների տվյալների։*

42. Հ. Մ. Հարությունյան, Նշված աշխ., էջ 52։

43. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 10, գ. 6, թ. 2, ֆ. 163, ց. 21, գ. 1146, թ. 6, գ. 1147, թ. 2, գ. 1148, թ. 1, գ. 1149, թ. 1, գ. 1151, թ. 1, գ. 1152, թ. 1, գ. 1153, թ. 1, ֆ. 591, ց. 2, գ. 1, թ. 2—3, ց. 7, գ. 16, թ. 6, „Сельское хозяйство в Армянской ССР", 458—459, „Труд в Армянской ССР", 1976, *29 էջերի ազգաբանակների տվյալների։*

44. Հաշվարկը կատարվել է ըստ „Экономика и культура Армении к 50-летию Великого Октября", *20 էջի ազգաբանակի տվյալների։*

45. Աղյուսակը կազմվել է ըստ ՀՍՍՀ ՀԱՄՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 39, գ. 276, թ. 2, գ. 306, թ. 2 տվյալների։

46. Լ. Մ. Դավթյան, Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը, Եր., 1965, էջ 204։

47. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀԱՄՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 23, գ. 205, թ. 2, գ. 216, թ. 1, գ. 229, թ. 3, 5, գ. 256, թ. 3—4, գ. 274, թ. 2—3, գ. 292, թ. 2, գ. 295, թ. 2—3, գ. 318, թ. 3—4 տվյալների։

48. Սփյուռքահայության ներգաղթը հանրապետության բնակչության մեխանիկական աճի շատ թե քիչ կայուն աղբյուր է։ 1920-ական թվականներից մինչև 2-րդ համաշխարհային պատերազմը Սփյուռքից Հայաստան են վերադարձել մոտ 75 հազար հայեր, որը կազմում է բնակչության աճի 13%-ը։ Պատերազմի տարիներին ընդհատվեց հայրենադարձությունը։ Հետպատերազմյան տարիներին այն կրկին վերսկսվեց։ Միայն 1946—1949 թթ. ներգաղթողների թիվը կազմեց 89,6 հազար մարդ, որոնց իշխող մասը աշխատունակ էր։ 1950-ական թվականներին ներգաղթողների թիվը փոքր-ինչ նվազեց, իսկ 1960-ական թվականներին նրանց տարեկան միջին թիվը կազմեց մոտ 3000 մարդ։ Տե՛ս Հ. Մ. Հարությունյան, նշված աշխ., էջ 58։

49. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀԱՄՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 23, գ. 318, թ. 3—4, ց. 39, գ. 329, թ. 2 տվյալների։

50. Հաշվարկը կատարվել է նույն արխիվի ֆ. 163, ց. 23, գ. 292, թ. 2, գ. 216, թ. 2, գ. 318, թ. 5 տվյալների։

51. Հաշվարկը կատարվել է ըստ „Итоги Всесоюзной переписи населения 1959г. Армянская ССР", 30 էջի աղյուսակի տվյալների։

52. «Труд в Армянской ССР», 1970, с. 39, «Труд в Армянской ССР», 1976, с. 29.

53. «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», մաս 3, Եր., 1956, էջ 727։

54. ՀՍՍՀ ՀԱՄՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1144, թ. 2, գ. 1145, թ. 1—2։

55. «Կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին որոշումը», Եր., 1958։

56. «Հայ ժողովրդի պատմություն» հ. 8, էջ 394։

57. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», с. 318.

58. Նույն տեղում, էջ 322։

59. «Труд в Армянской ССР», 1970, с. 24.

60. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 284։

61. Նույն տեղում, էջ 377։

62. **С. Л. Сенявский, В. Б. Тельпуховский,** Рабочий класс СССР (1938—1965), М., 1966, с. 118—120.

63. **Н. Вознесенский.** Военная экономика СССР в период Великой Отечественной войны, М., 1948, с. 113.

64. Նույն տեղում։

65. Մի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 48, թ. 136, ՀՍՍՀ ՀԱՄՇ ՊԿԱ, ֆ. 119, ց. 2, գ. 14, թ. 2։

66. Աղյուսակը կազմվել և հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀԱՄՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 298, թ. 1—3, գ. 300, թ. 11—21, գ. 393, թ. 1, գ. 544, թ. 1—5, ց.

20, գ. 571, թ. 1, 7, 10, ֆ. 651, ց. 2, գ. 250, թ. 10, ֆ. 656, ց. 1, գ. 250, թ. 6, 12 տվյալների։

67. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 300, թ. 7, 8, 11, գ. 399, թ.1—3, գ. 428, թ. 1, գ. 544, թ. 1, ց. 20, գ. 571, թ. 1, 10, ֆ. 651, ց. 2, գ. 250, թ. 10 տվյալների։

68. **В. Переведенцев.** Демография, ситуация, тенденции, политика. «Знание-сила», 1978, № 1, *«Միասնական ընտանիքում», հոդվածների ժողովածու, էջ 71—72։*

69. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 300, թ. 7, 8, 11, 91, ց. 20, գ. 30, թ. 7, ֆ. 651, ց. 2, գ. 250, թ. 10 տվյալների։

70. **В. Е. Полетаев.** Изменения в численности и составе рабочего класса СССР в 1945—1961 гг. «Научная сессия по истории формирования и развития советского рабочего класса (1917—1961 гг.)», Тезисы докладов и сообщений, М., 1962, с. 52.

71. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 250, թ. 10, գ. 300, թ. 7, 8, 11, 91, ց. 20, գ. 571, թ. 10, ֆ. 651, ց. 2, գ. 250, թ. 10 տվյալների։

72. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 221, թ. 1—3, «Труд в Армянской ССР», 1976, с. 66.

73. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 220, թ. 1—102, գ. 229, թ. 1, գ. 234, թ. 1—109, գ. 243, թ. 1, գ. 252, թ. 60—81 տվյալների։

74. «Советская Армения за 40 лет», с. 158, «Труд в Армянской ССР», 1976, с. 29.

75. Հասարակական արտադրության մեջ կանանց ընդգրկումը ուղեկցվում էր պետական մասշտաբի լայն միջոցառումներով, ուղղված կնոջը տնային տնտեսությունից ազատագրող հիմնարկների (մանկամսուր-մանկապարտեզներ, ճաշարաններ, կենցաղային ծառայության օբյեկտներ և այլն) ցանցի ընդլայնմամբ և դրանց սպասարկման մակարդակի բարձրացումով. Օրինակ, 1940 թ. ՀՍՍՀ քաղաքներում հաշվվում էր 143 մանկամսուր և մանկապարտեզ՝ 9697 երեխայի համար, 1945 թ.՝ դրանց թիվը կազմեց 186՝ 11900 տեղով, 1950 թ. 238՝ 10255 տեղով, իսկ 1960 թ. 330՝ 19200 տեղով։ Էապես բարձրացավ նաև բնակչության կենցաղսպասարկման մակարդակը։ Տե՛ս «Труд в Армянской ССР», *1976, с. 66,* «Труд в Армянской ССР», *1970, с. 68—69. 1957 թ. օգոստոսի 2-ին ՀՍՍՀ մինիստրների խորհուրդը ընդունեց որոշում՝ լեռնահանքային արդյունաբերության ստորերկրյա աշխատանքներում և ստորերկրյա կառուցվածքների շինարարության մեջ զբաղված կանանց աշխատանքը այլ աշխատանքով փոխարինելու մասին։ Տե՛ս «ՀՍՍՀ Օրենքների, Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և ՀՍՍՀ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու, 1957», էջ 126—128։*

76. «Труд в Армянской ССР», 1970, с. 38—39, «Труд в Армянской ССР», 1976, с. 29.

77. Հաշվարկը կատարվել է ըստ „Труд в Армянской ССР", 1976, *27 էջի աղյուսակի տվյալների։*

78. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 332։

79. «Труд в Армянской ССР», 1976, с. 69—71.

80. «Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР», с. 40.

81. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 591, ց. 8, գ. 411, թ. 24—27, գ. 483ա, թ. 13, և «Труд в Армянской ССР», 1970, 183 և 184 էջերի տվյալների:

82. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 312, թ. 6—8, և „Народное хозяйство СССР в 1964г.", 187, „Труд в Армянской ССР", *1970, 187 էջերի աղյուսակների տվյալների:*

83. «Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР», с. 81—84.

84. Նույն տեղում:

85. Նույն տեղում:

86. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 299, թ. 73, 132, գ. 379, թ. 88 տվյալների:

87. К. Маркс, Ф. Энгельс, соч., т. 4, М., 1955, с. 335.

88. «Итоги Всесоюзной переписи населения 1959, СССР», с. 92, «Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР», с. 28.

89. Հ. Մ. Հարությունյան Նշված աշխ., էջ 55—56:

90. «ՍՄԿԿ ծրագիրը», էջ 58:

91. «Советская Армения за 40 лет», с. 82.

92. «ՍՄԿԿ կենտկոմի 1958 թ. փետրվարյան պլենումի նյութերը», Եր., 1958:

93. Մի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 135, թ. 86:

94. «Советская Армения за 40 лет», с. 116.

95. «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», с. 576, «Советская Армения за 40 лет», с. 85.

96. «Советская Армения за 40 лет», с. 117.

97. Հաշվարկը կատարվել է ըստ «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, 196, «Труд в Армянской ССР», 1970, 15, 65 *էջերի աղյուսակների և Հ. Մ. Հարությունյանի Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում, 47 էջի տվյալների:*

98. Հաշվարկը կատարվել է նույն տեղում:

99. Հաշվարկը կատարվել է «Народное хозяйство Армянской ССР. Юбилейный статистический ежегодник к 60-летию Великого Октября», 61 *էջ աղյուսակի տվյալների հիման վրա:*

100. Նույն տեղում, էջ 102:

101. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1146, թ. 6 և „Народное хозяйство Армянской ССР. Юбилейный статистический ежегодник к 60-летию Великого Октября," *102 էջի աղյուսակի տվյալների:*

102. Հաշվարկը կատարվել է ըստ «Народное хозяйство Армянской ССР. Юбилейный статистический ежегодник к 60-летию Великого Октября», *61 և 102 էջերի աղյուսակների տվյալների:*

103. «Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР», с. 40.

104. Նույն տեղում, էջ 86:

105. Նույն տեղում, էջ 11:

106. «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1978, с. 138, «Труд в Ар-

мянской ССР», 1970, с. 156, 167, «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», с. 173.

107. Հաշվարկը կատարվել է նույն տեղում։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1. К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 16, с. 196.
2. *Նույն տեղում, էջ 145։*
3. *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 38, էջ 447։*
4. «Ленинский сборник XXXV», с. 248.
5. **С. Л. Сенявский,** Рабочий класс в социальной структуре развитого социалистического общества. В кн. «Рабочий класс развитого социалистического общества», М., 1974, с. 51—52.
6. *Հաշվարկը կատարվել է „Советская Армения за 40 лет", 158—159 էջերի աղյուսակների տվյալների հիման վրա։*
7. «Труд в Армянской ССР», 1970, с. 87, 91.
8. «Народное хозяйство СССР 1922—1972», с. 149, 280.
9. *Բ. Ս. Օհանջանյան, Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից, Եր., 1970, էջ 106—107։*
10. *Նույն տեղում, էջ 117։*
11. *Այդ հանապարհով գյուղին օգնելու որոշակի փորձ բանվոր դասակարգն արդեն ուներ։ Հայտնի է, որ Համկ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումի որոշումով գյուղատնտեսության տարբեր բնագավառներում աշխատելու համար գյուղ ուղարկվեցին կազմակերպական-քաղաքական աշխատանքի փորձ ունեցող 25 հազար բանվորներ։ Այդ կոչին լայնորեն արձագանքեցին նաև ՀՍՍՀ բանվոր-ծառայողները։ ՀՍՍՀ քաղաքներից գյուղ ղեկավար աշխատանքի մեկնեցին մի քանի տասնյակ բանհինգհազարականներ։ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, էջ 303։*
12. *Հ. Մ. Հարությունյան, Նշված աշխ., էջ 52։*
13. **С. Л. Сенявский,** Во главе рабочего класса. О руководящей роли рабочего класса в период развернутого строительства коммунизма, М., 1963, с. 47.
14. «Советская Армения за 40 лет», с. 82.
15. *Հաշվարկը կատարվել է ըստ* «Народное хозяйство СССР 1922—1972», *235 էջի աղյուսակի տվյալների։*
16. *Նույն տեղում, էջ 221։*
17. *«Հայրենիք» Բոստոնի մայիս 1949 թ., էջ 45, 51, 52։*
18. *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 230։*
19. *Նույն տեղում, էջ 232։*
20. *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 558։*
21. *Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի Քաղաքական զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, էջ 67։*

22. «Սովետական Միության կոմունիստական կուսակցության կանոնադրությունը», (նախագիծը), Ե., 1985, էջ 29։
23. Հաշվարկը կատարվել է ըստ «Компартия Армении в цифрах и документах 1920—1980. Сборник статистических и документальных материалов», Ереван, 1980, 45, 46, 72 էջերի աղյուսակների տվյալների։
24. «Սովետական Հայաստան», 5 հունվարի 1950 թ.։
25. «ՍՄԿԿ ծրագիրը», էջ 49։
26. Նույն տեղում, էջ 68։
27. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 1, թ. 48, գ. 16, թ. 43, գ. 65, թ. 89, գ. 146, թ. 65։
28. «КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК», т. 7, М., 1971, с. 305.
29. «Профсоюзы СССР», т. 4, с. 500.
30. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 65, թ. 27, գ. 146, թ. 29 և «Սովետական Հայաստան», 7 մայիսի 1959 թ. տվյալների։
31. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 65, թ. 27։
32. Նույն տեղում։
33. «Սովետական Հայաստան», 10 ապրիլի 1958 թ.։
34. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 146, թ. 29։
35. «Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XIX համագումարին», Եր., 1958, էջ 88—89, «Հայաստանի կոմունիստական պարտիայի XX համագումարը», 1959, էջ 73։
36. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 146, թ. 61, և «Սովետական Հայաստան», 16 հուլիսի 1958 թ.։
37. Հաշվարկը կատարվել է նույն ապրյուրի տվյալների հիման վրա։
38. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 26, թ. 18, գ. 65, թ. 45, գ. 46, թ. 47։
39. «Սովետական Հայաստան», 15 մայիսի 1947 թ.։
40. «Սովետական Հայաստան», 7 սեպտեմբերի 1950 թ.։
41. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 146, թ. 43։
42. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 69, ց. 4, գ. 109, թ. 2—3։
43. **Ю. К. Малов**, Критика буржуазных фальсификаторов марксистско-ленинского учения о руководящей роли коммунистической партии в социалистическом обществе, М., 1983, с. 110, 114, 125; «Против фальсификации истории КПСС» М., 1964, с. 110, 111, 114.
44. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 236։
45. Նույն տեղում, էջ 233։
46. Ա. Գրիգորյանց, Կոմունիստական աշխատանքի բրիգադները Հայաստանում, 1961, էջ 60։
47. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 735, ց. 1, գ. 55, թ. 31—32։
48. Նույն տեղում, ֆ. 65, ց. 16, գ. 146, թ. 27, 131։
49. Նույն տեղում, ֆ. 735, ց. 1, գ. 55, թ. 31—32։
50. Նույն տեղում։
51. Մի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 167, թ. 7։
52. Նույն տեղում։

53. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 228—229։
54. «Հայրենիք», Բոստոն, փետրվար 1952 թ., էջ 104—105, հունվար 1958 թ., էջ 99։
55. И. Е. Ворожейкин, С. Л. Сенявский, Рабочий класс—ведущая сила советского общества (Вопросы методологии и историографии), М., 1977, с. 243; «Рабочий класс Советской Армении в период развитого социализма», Ереван, 1982, с. 157.
56. «Սովետական Հայաստան», 9 դեկտեմբերի 1947 թ.։
57. «Հաշվետու զեկուցում ՀԿԿ XIII համագումարին», էջ 32։
58. Մշի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 26, գ. 50, թ. 25, ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 15, գ. 73, թ. 1—3, գ. 72, թ. 1—5։
59. «Правда», 24 июля 1946 г.
60. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 15, գ. 73, թ. 1—3, գ. 75, թ. 1—4։
61. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 545։
62. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 65, թ. 27 և «Սովետական Հայաստան», 15 ապրիլի 1949 թ.։
63. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 1, թ. 22—24, ֆ. 728, ց. 1, գ. 16, թ. 49—52։
64. «ՍՄԿԿ ծրագիրը», էջ 51։
65. «Սովետական Հայաստան», 28 հունիսի 1949 թ.։
66. «Սովետական Հայաստան», 14 հուլիսի 1950 թ.։
67. Ա. Կ. Գրիգորյանց, Կոմունիստական աշխատանքի բրիգադները Հայաստանում, էջ 46։
68. «Սովետական Հայաստան», 14 հոկտեմբերի 1958 թ.։
69. Ա. Գ. Գրիգորյանց, Կոմունիստական աշխատանքի բրիգադները Հայաստանում, էջ 24։
70. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 332։
71. «Правда», 28 мая 1960 г.
72. Մշի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 48, ց. 22, գ. 34, թ. 150։
73. Նույն տեղում, ֆ. 1, ց. 16, գ. 168, թ. 32—36։
74. Առաջին փուլը ընդգրկում է 1958 թ. հունվարից մինչև 1960 թ. մայիսը։
75. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 146, թ. 17—19։
76. Նույն տեղում։
77. Նույն տեղում։
78. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 229։
79. «Народное хозяйство Армянской ССР в 1964», с. 23—28.
80. Նույն տեղում։
81. «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրություն (Հիմնական օրենք)», Եր., 1978, էջ 9։
82. «ՍՄԿԿ ծրագիրը», էջ 76։
83. Մ. Մ. Մինասյան, Արտադրական կոլեկտիվի դիալեկտիկան, էջ 354։
84. «ՍՄԿԿ ծրագիրը», էջ 49։
85. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 229։
86. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 146, թ. 20։
87. Պ. Ի. Սաֆյան, Նշված աշխ., էջ 111։

88. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 146, թ. 21, ֆ. 728, ց. 1, գ. 16, թ. 49—52։
89. «Правда», 18 февраля 1947 г.
90. «Правда», 1 октября 1941 г.
91. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 728, ց. 1, գ. 16, թ. 49—52։
92. Վ. Ի. Լենին, երկ, հ. 41, էջ 49—50։
93. Վ. Ի. Լենին, երկ, հ. 35, էջ 341—342։
94. **К. Маркс, Ф. Энгельс.** Соч., т. 46, ч. I, М., 1969, с. 213.
95. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 187, ց. 3, գ. 833, թ. 1—3, գ. 428, ց. 1, թ. 4, գ. 674, ց. 3, թ. 89։
96. «Սովետական Հայաստան», 7 փետրվարի 1946 թ.։
97. «Հայաստանի քիմիական արդյունաբերությունը», Եր., 1960, էջ 5։
98. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 187, ց. 3, գ. 837, թ. 1։
99. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 735, ց. 1, գ. 63, թ. 12—13։
100. Նույն տեղում, թ. 11—12։
101. Նույն տեղում, ֆ. 697, ց. 4, գ. 436, թ. 5, 6։
102. Նույն տեղում, ֆ. 676, ց. 2, գ. 145, թ. 9։
103. Նույն տեղում, ֆ. 187, ց. 3, գ. 837, թ. 1 և «Սովետական Հայաստան», 5 սեպտեմբերի 1953 թ.։
104. Նույն տեղում, ֆ. 69, ց. 3, գ. 20, թ. 2։
105. Նույն տեղում, ֆ. 187, ց. 3, գ. 837, թ. 1, «Սովետական Հայաստան», 14 մարտի և 2 հուլիսի 1958 թ.։
106. «Սովետական Հայաստան», 13 հունվարի 1958 թ.։
107. Հաշվարկը կատարվել է ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 735, ց. 1, գ. 18, թ. 1, գ. 38, թ. 5 տվյալների հիման վրա։
108 «Սովետական Հայաստան», 8 հունվարի 1950 թ.։
109. «Սովետական Հայաստան», 27 սեպտեմբերի 1956 թ.։
110. «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին», Եր., 1956, էջ 66։
111. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 255, ց. 4, գ. 77, թ. 14։
112. Նույն տեղում։
113. Նույն տեղում, ֆ. 735, ց. 1, գ. 36, թ. 18։
114. Նույն տեղում, ֆ. 751, ց. 1, գ. 94, թ. 80—81։
115. Նույն տեղում։
116. Նույն տեղում, ֆ. 735, ց. 1, գ. 52, թ. 7—8։
117. Նույն տեղում, գ. 94, թ. 1։
118. Նույն տեղում, գ. 36, թ. 18։
119. **М. А. Григорян,** Развитие структуры рабочего класса Армении в период зрелого социализма, Ереван, 1980, с. 103.
120. Աղյուսակը կազմվել է ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 735, ց. 1, գ. 18, թ. 1, գ. 38, թ. 5 տվյալների հիման վրա։
121. Նույն տեղում, ֆ. 735, ց. 1, գ. 36, թ. 18, գ. 2, թ. 12։
122. **К. Маркс, Ф. Энгельс.** Соч., т. 6, М., 1957, с. 432.

1. «Конституция (основной закон) Союза Советских Социалистических республик», М., 1952, с. 26.
2. Հաշվարկը կատարվել է ըստ «Компартия Армении в цифрах и документах 1920—1980». Ереван, 1980, 16 էջի տվյալների։
3. Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի, 14—15 էջերի տվյալների հիման վրա։
4. Նույն տեղում, էջ 16։
5. Նույն տեղում, էջ 14։
6. «ՍՄԿՊ-ն բանաձևերում և որոշումներում», մաս 3, էջ 463։
7. «Компартия Армении в цифрах и документах 1920—1980», с. 16.
8. «Итоги Всесоюзной переписи населения 1959. Армянская ССР», с. 28.
9. «ՍՄԿՊ-ն բանաձևերում և որոշումներում», մաս Ն, էջ 462։
10. «Компартия Армении в цифрах и документах 1920—1980», с. 16.
11. Նույն տեղում։
12. «Итоги Всесоюзной переписи населения 1959 Армянская ССР», с. 28.
13. Նույն տեղում, էջ 85—87։
14. Ս. Ս. Ամիրյան, Զարգացած սոցիալիզմի բանվոր դասակարգը, 1976, էջ 320։
15. «Компартия Армении в цифрах и документах 1920—1980», с. 57.
16. Ю. О.Малов, Նշված աշխ., էջ 251։
17. «Рабочий класс—ведущая сила мирового революционного процесса», М., 1973, с. 34—35.
18. «Компартия Армении в цифрах и документах 1920—1980», с. 45—46.
19. Նույն տեղում։
20. Նույն տեղում։
21. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 22, էջ 307։
22. «XX съезд Коммунистической партии Советского Союза. Стенографические отчеты», М., 956, т. 1, с. 109.
23. «Սովետական Հայաստան», 13 սեպտեմբերի 1946 թ.։
24. Մի Հայկական մանանաձյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 28, գ. 20, թ. 20—22, ց. 26, գ. 135, թ. 24, 36։
25. «Компартия Армении в цифрах и документах 1920—1980», с. 70—72.
26. Նույն տեղում։
27. Հաշվարկը կատարվել է նույն աղբյուրի տվյալների հիման վրա։
28. «Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՀԿՊ XIX համագումարին», Եր., 1958, էջ 87, «Սովետական Հայաստան», 12 փետրվարի 1960 թ.։
29. Հաշվարկը կատարվել է «Компартия Армении в цифрах и документах 1920—1980», 22 էջի աղյուսակի տվյալների հիման վրա։
30. Նույն տեղում, էջ 21—22։
31. Նույն տեղում, էջ 42։
32. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 190։
33. «Компартия Армении в цифрах и документах 1920—1980», с. 63.

34. «Интернациональный принцип в строительстве и деятельности КПСС», М., 1975, с. 75, 78.
35. «Проблемы партийного строительства», М., 1972. с. 87.
36. Նույն տեղում, «Компартия Армении в цифрах и документах 1920—1980», с. 40 .
37. «Սովետական Հայաստան», 15 մարտի 1940 թ., «Սովետական Հայաստան», 12 փետրվարի 1960 թ.:
38. «Սովետական Հայաստան», 9 հոկտեմբերի 1959 թ.:
39. «Սովետական Հայաստան», 12 հունվարի 1952 թ.:
40. «Սովետական Հայաստան», 28 հունվարի 1958 թ., «Սովետական Հայաստան», 12 փետրվարի 1960 թ.:
41. «Սովետական Հայաստան», 28 հունվարի 1958 թ.:
42. «Սովետական Հայաստան», 30 հունվարի 1958 թ.:
43. Վ. Ի. Լենին, հՀԺ, հ. 12, էջ 73:
44. «КПСС в резолюциях и решениях...». т. 6, с. 138—148, 162—172, 195—209, 277—280.
45. Հաշվարկը կատարվել և աղյուսակը կազմվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 184, թ. 30, ց. 21, գ. 1, թ. 22—23, գ. 95, թ. 23, ց. 16, գ. 106, թ. 1 «Խորհրդային Հայաստան», 14 հուլիսի 1938 թ., «Սովետական Հայաստան», 16 ապրիլի 1959 թ. „Коммунист". 16 марта 1946г. տվյալների:
46. «КПСС о работе советов», М., 1959, с. 482.
47. Հաշվարկը կատարվել է «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, Պաշտոնական հաշվետվություն», 39—40 էջերի տվյալների հիման վրա:
48. Հաշվարկը կատարվել է «ՍՍՌՄ Գերագույն սովետի նիստերը, (առաջին սեսիա), Պաշտոնական հաշվետվություն», 103 էջի տվյալների հիման վրա:
49. С. Л. Сенявский, В. Б. Тельпуховский, Նշված աշխ , էջ 474:
50. «Коммунист», 29 марта 1958 г.
51. «Սովետական Հայաստան», 6 փետրվարի 1946 թ.:
52. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 184, թ. 30 տվյալների:
53. Հաշվարկը կատարվել է ըստ «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, Պաշտոնական հաշվետվություն», 41, 82 էջերի տվյալների:
54. «ՍՍՌՄ Գերագույն սովետի նիստերը, (Առաջին սեսիա),Պաշտոնական հաշվետվություն», էջ 64—65, 103—105, «ՍՍՌՄ չորրորդ գումարման Գերագույն սովետի նիստերը, (Առաջին սեսիա), Պաշտոնական հաշվետվություն», էջ 46, 108 և ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 207, ց. 21, գ. 1, թ. 22—23, գ. 95, թ. 21:
55. Հաշվարկը կատարվել է ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 207, ց. 21, գ. 47, թ. 14, ց. 22, գ. 302 , թ. 9, գ. 317, թ. 5 տվյալների հիման վրա:
56. А. С. Павлов, Местные советы в период упрочения и развития социалистического общества (1946—1961), «Вопросы истории», 1982, № 5, с. 9: «Рабочий класс СССР (1951—1965 гг.)», М , 1969, с. 403.
57. Հաշվարկը կատարվել և աղյուսակը կազմվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 24, թ. 30, ց. 16, գ. 107, թ. 1, ց. 21, գ. 95, թ. 23, գ. 48, թ. 2, ց. 15, գ. 61, թ. 47, ց. 22, գ. 317, թ. 2 և «Սովետական Հայաստան», 1 ապրիլի

1951 թ., «Սովետական Հայաստան», 16 ապրիլի 1959 թ., «Итоги выборов и состав депутатов местных советов депутатов трудящихся 1961 г. (стат. сборник), изд. «Известия советов депутатов трудящихся СССР», М., 1961, с. 121 *տվյալների։*

58. *ՀՍՍՀ ՀԶՍԾ ՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 184, թ. 30, ց. 22, գ. 317, թ. 2, «Սովետական Հայաստան», 16 ապրիլի 1959 թ., «Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նիստերը, (Առաջին սեսիա), Ստենոգրաֆիական հաշվետվություն», Հայպետհրատ, Եր., 1951, էջ 15։*

59. *Հաշվարկը կատարվել և աղյուսակը կազմվել է ըստ ՀՍՍՀ ՀԶՍԾ ՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 184, թ. 30, գ. 47, թ. 6—7, գ. 48, թ. 12, գ. 76, թ. 5, 6, 8, գ. 95, թ. 4, ց. 22, գ. 317, թ. 2, «Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նիստերը, (Առաջին սեսիա), Ստենոգրաֆիական հաշվետվություն», էջ 13, «Սովետական Հայաստան», 19 մարտի 1959 թ., 1959 թ., «Սովետական Հայաստան», 26 ապրիլի 1959 թ.,* „Итоги выборов и состав депутатов местных советов депутатов трудящихся 1961г.", *121 էջի տվյալների։*

60. «Правда», 6 февраля 1947 г.

61. *«Սովետական Հայաստան», 16 ապրիլի 1959 թ.։*

62. *ՀՍՍՀ ՀԶՍԾ ՊԿԱ, ֆ. 207, ց. 21, գ. 76, թ. 5։*

63. «Коммунист», 29 марта 1958 г.

64. *Յու. Վ. Անդրոպով, ՍՍՀՄ վաթսուն տարին, Եր., 1983, էջ 15։*

65. *Հաշվարկը կատարվել և աղյուսակը կազմվել է ՀՍՍՀ ՀԶՍԾ ՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 184, թ. 30, գ. 173, թ. 1, գ. 95, թ. 23, ց. 21, գ. 47, թ. 6—7, ց. 22, գ. 317, թ. 2, գ. 284, թ. 11, «Սովետական Հայաստան», 1 ապրիլի 1951 թ., «Սովետական Հայաստան», 19 մարտի 1959 թ.,* «Коммунист», 29 марта 1958 г., *«ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, Ստենոգրաֆիական հաշվետվություն», էջ 42, 82, «ՍՍՌՄ չորրորդ գումարման Գերագույն սովետի նիստերը, (Առաջին սեսիա), Ստենոգրաֆիական հաշվետվություն», էջ 257—258, 315, 317, տվյալների հիման վրա։*

66. *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 190։*

67. А. Макаренко, Соч. т. 7, М., 1958, с. 140.

68. *«Սովետական Հայաստան», 1 ապրիլի 1951 թ., «Սովետական Հայաստան», 16 ապրիլի 1959 թ. և ՀՍՍՀ ՀԶՍԾ ՊԿԱ, ֆ. 207, ց. 1, գ. 184, թ. 30, ց. 22, գ. 317, թ. 2։*

69. *«ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, ստենոգրաֆիական հաշվետվություն», էջ 43, 82,* «Коммунист», 29 марта 1958 г.

70. **А. С. Павлов,** *նշված աշխ., էջ 8։*

71. *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 250։*

72. «Правда», 10 ноября 1947 г.

73. **Г. Б. Куликова,** Демократические основы деятельности местных советов в развитом социалистическом обществе, М., 1978, с. 128.

74. «Против фальсификации истории КПСС», с. 106.

75. *«Սովետական Հայաստան», 4 հուլիսի 1951 թ.։*

76. *ՀՍՍՀ ՀԶՍԾ ՊԿԱ, ֆ. 207, ց. 15, գ. 36, թ. 15։*

77. *«Սովետական Հայաստան», 3 ապրիլի 1951 թ.։*

78. *Նույն տեղում,*

79. «КПСС в резолюциях и решениях...», т. 7, с. 113.
80. Մի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 92, թ. 41—42։
81. «Հայկական ՍՍՌ վնցներորդ գումարման Գերագույն սովետի նիստերը, (Առաջին սեսիա), Տղագրական հաշվետվություն», եր., 1963, էջ 16։
82. Հաշվարկը կատարվել է ըստ ՀՍՍՀ ՀԶՄՇ ՊԿԱ, ֆ. 207, ց. 16, գ. 117, թ. 1, ց. 22, գ. 254, թ. 11 տվյալների։
83. «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրություն», էջ 37։
84. Նույն տեղում։
85. Կ. Ե. Վորոշիլով, Ճառ ՍՄԿԿ XX համագումարում, եր., 1956, էջ 15։
86. «КПСС в резолюциях и решениях..», т. 7, с. 242.
87. **Г. Б. Куликов,** Նշված աշխ., էջ 287։
88. ՀՍՍՀ ՀԶՄՇ ՊԿԱ, ֆ. 207, ց. 15, գ. 36, թ. 7, գ. 61, թ. 1—5։
89. «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրություն (հիմնական օրենք)», էջ 5։
90. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 33, էջ 149։
91. Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, 1933, էջ 229։
92. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 2, էջ 374։
93. «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», с. 45.
94. «Народное хозяйство СССР в 1978 г.. Статистический ежег.», М., 1979, с. 375, «Труд в СССР. Статистический сборник», М., 1968, с. 239—240.
95. «Труд в СССР», с. 240.
96. Նույն տեղում, էջ 137։
97. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 330։
98. Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Սովետական Հայաստանում բանվոր-ծառայողների աշխատավարձի ֆոնդի աճը ըստ տարիների հետևյալ պատկերն է ներկայացնում՝ 1950 թ. 1940 թ. համեմատությամբ աճել է 177%-ով, 1945 թ. համեմատությամբ՝ 130,6%-ով, 1960 թ. 1955 թ. համեմատությամբ՝ 155,5%-ով։ «Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XV համագումարում Հ Կ(բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին», էջ 12, «Սովետական Հայաստան», 21 մարտի 1951 թ., «Սովետական Հայաստան», 9 հունվարի 1960 թ.։
99. «Սովետական Հայաստան», 9 հունվարի 1960 թ.
100. «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960 թթ.», եր., 1960, էջ 408։
101. ՀՍՍՀ ՀԶՄՇ ՊԿԱ, ֆ. 219, ց. 10, գ. 3, թ. 13։
102. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», с. 307.
103. «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», с. 267.
104. Նույն տեղում, էջ 211, 273։
105. **С. Г. Струмилин,** Рабочий день и коммунизм, М., 1959, с. 12.
106. Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 229։
107. **С. Г. Струмилин,** Рабочий день и коммунизм, с. 12, «Внерабочее время трудящихся», Новосибирск, 1961, с. 25.
108. Ադյուսակը կազմվել է ըստ «Народное хозяйство СССР 1922—1972», 447,

451, 453; «Народное хозяйство Армянской ССР. Юбилейный статистический ежегодник к 60-летию Великого Октября», 202, 203, 205; «Народное хозяйство Армянской ССР за 60 лет», 286, «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», 358 *էջերի աղյուսակների տվյալներից:*

109. Հաշվարկը կատարվել է ըստ „Экономика и культура Армении к 50-летию Великого Октября", 349 *էջի տվյալների:*

110. Մ. Մ. Միճոյան, Արտադրական կոլեկտիվի զարգացման դիալեկտիկան արդի պայմաններում, եր., 1980, էջ 270:

111. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», с. 359.

112. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 659, ց. 1, գ. 108, թ. 44, „Экономика и культура Армении к 50-летию Великого Октября", с. 347, *«Սովետական Հայաստան», 4 հունվարի 1950 թ.:*

113. «Народное хозяйство СССР 1922—1972», с. 449, «Народное хозяйство СССР в 1978 г.», с. 490.

114. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», с. 357.

115. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 659, ց. 1, գ. 125, թ. 2:

116. Նույն աղբյուրը, ֆ. 659, ց. 16, գ. 65, թ. 78:

117. Նույն աղբյուրը, ֆ. 659, ց. 1, գ. 125, թ. 2: 1960 թ. ՀՍՍՀ հիմնարկ-ձեռնարկություններում գործում էին գեղարվեստական ինքնագործունեության 526 խմբակներ: Տե՛ս «Հայաստանի արհմիությունները 40 տարում օրացույցը», 1960 թ.:

118. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 15, գ. 14, թ. 46:

119. Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, եր., 1966, էջ 416:

120. Հաշվարկը կատարվել է ըստ „Экономика и культура Армении к 50-летию Великого Октября", 317—319 *էջերի տվյալների:*

121. Մշի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 37, գ. 25, թ. 73—74:

122. Նույն տեղում, թ. 111:

123. Աղյուսակը կազմվել է ըստ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 745, ց. 1, գ. 164, թ. 12, գ. 284, թ. 2, գ. 303, թ. 4—5, «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», *էջ 269 և «Սովետական Հայաստան», 21 ապրիլի 1946 թ. տվյալների:*

124. ՀՍՍՀ ՀՀՍՇ, ՊԿԱ, ֆ. 745, ց. 1, գ. 303, թ. 4, 5, «Народное хозяйство Армянской ССР в 1964 г.», с. 269.

125. «Սովետական Հայաստան», 17 հուլիսի 1949 թ.:

126. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 676, ց. 1, գ. 39, թ. 19:

127. «Творческая активность народных масс и развитие социалис. демократ.», М., 1972, с. 228.

128. ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 16, գ. 35, թ. 59—61, ֆ. 745, ց. 2, գ. 317, թ. 68:

129. «ՍՄԿԿ ծրագիրը», էջ 55:

130. Վ. Ի. Լենին, երկ, հ. 36, էջ 251—252:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1. «ՍՄԿԿ-ն բանաձևերում և որոշումներում...», մաս 3, էջ 609:

2. «Вопросы истории КПСС», 1971, № 9, с. 38.

3. Նույն տեղում:

4. «Հայաստանի Կ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ XI համագումարին», եր., 1938, էջ 83։
5. «Սովետական Հայաստան», 25 մարտի 1951 թ.։
6. «Սովետական Հայաստան», 12 փետրվարի 1960 թ.։
7. ՀՍՍՀ ՀՍՇ ՊԿԱ, ֆ. 659, ց. 1, գ. 36, թ. 1—3, գ. 159, թ. 20—21, գ. 164, թ. 1, 2։
8. Նույն տեղում։
9. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», с. 349.
10. «Ռեսպուբլիկայի աշխատավորների շրջանում կատարվող մասսայական-քաղաքական աշխատանքի վիճակի և նրա բարելավման միջոցառումների մասին որոշումը», եր., 1959։
11. «Արդի պայմաններում պարտիական պրոպագանդայի խնդիրների մասին, ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեի որոշումը», եր., 1960։
12. «Արդի պայմաններում պարտիական պրոպագանդայի խնդիրների մասին» ՍՄԿՊ Կենտկոմի որոշման կատարման ընթացքը և նրա իրականացման գործում ռեսպուբլիկայի ինտելիգենցիայի ավելի լայն ներգրավման միջոցառումների մասին, Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի պլենումի որոշումը՝ ընդունված 1960 թ.», էջ 4—5։
13. Նույն տեղում, էջ 10։
14. Վ. Ի. Լենին, հԺ, հ. 35, էջ 237։
15. Վ. Ի. Լենին, հԺ, հ. 41, էջ 487։
16. «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», եր., 1982, էջ 10։
17. К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 4, с. 373; т. 16, с. 556; т. 17, с 553.
18. Վ. Ի. Լենին, հԺ, հ. 40, էջ 51։
19. Վ. Ի. Լենին, հԺ, հ. 26, էջ 19։
20. Վ. Ի. Լենին, հԺ, հ. 35, էջ 293։
21. Վ. Ի. Լենին, հԺ, հ. 24, էջ 247։
22. Վ. Ի. Լենին, հԺ, հ. 44, էջ 345—346։
23. Վ. Ի. Լենին, հԺ, հ. 37, էջ 87։
24. «Խորհրդային Հայաստան», 18 հուլիսի 1938 թ.։
25. Մշի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 26, գ. 17, թ. 6։
26. Նույն տեղում, թ. 7—8։
27. Նույն տեղում։
28. «Правда», 16 июля 1941 г.
29. «Международная солидарность трудящихся в борьбе за мир и национальное освобождение против фашистской агрессии, за полное уничтожение фашизма в Европе и Азии (1938—1945 гг.)», М., 1962, с. 327; **С. Л. Сенявский, В. Б. Тельпуховский,** Նշված աշխ., էջ 490—491։
30. «Սովետական Հայաստան», 30 հունիսի 1950 թ.։
31. «Сборник законов СССР 1938—1967», т. 1, М., 1968, с. 389.
32. «Սովետական Հայաստան», 30 հունիսի 1950 թ.։
33. «Սովետական Հայաստան», 5 հուլիսի 1950 թ.։
34. «Սովետական Հայաստան», 4 հուլիսի 1950 թ.։
35. «Սովետական Հայաստան», 19 հոկտեմբերի 1950 թ.։

36. «Սովետական Հայաստան», 14 սեպտեմբերի 1951 թ.:
37. «Коммунист», 9 февраля 1955 г.
38. «Коммунист», 13 февраля 1955 г.
39. «Սովետական Հայաստան», 11 հուլիսի 1951 թ.:
40. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 81:
41. «Սովետական Հայաստան», 1 հոկտեմբերի 1958 թ.:
42. Մի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 83, գ. 168, թ. 145:
43. Նույն տեղում, թ. 83:
44. Նույն տեղում, թ. 81—82:
45. «Правда», 16 июля 1941 г.
46. «Սովետական Հայաստան», 22 հուլիսի 1941 թ.:
47. «Սովետական Հայաստան», 4 հուլիսի 1941 թ.:
48. «Правда», 1 августа 1941 г.
49. «Правда», 1 июля 1941 г.
50. «Սովետական Հայաստան», 29 օգոստոսի 1941 թ.:
51. «Սովետական Հայաստան», 22 նոյեմբերի 1941 թ.:
52. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 107:
53. «Սովետական Հայաստան», 5 օգոստոսի 1941 թ.:
54. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 109—110:
55. «Սովետական Հայաստան», 11 ապրիլի 1951 թ.:
56. «Սովետական Հայաստան», 5 ապրիլի 1951 թ.:
57. «Սովետական Հայաստան», 21 դեկտեմբերի 1955 թ.:
58. «Սովետական Հայաստան», 29 հոկտեմբերի 1958 թ.:

ՎԵՐՋԱԲԱՆ

1. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 36:
2. «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին, ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», 1982, էջ 10:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Գլուխ առաջին—Հայաստանի ինդուստրիալ զարգացման հիմնական գծերը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում

1. Արդյունաբերությունը նախապատերազմյան և պատերազմի ժամանակաշրջանում 16
2. Արդյունաբերությունը սոցիալիստական ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման տարիներին (1946—1960 թթ.) 22

Գլուխ երկրորդ—Բանվոր դասակարգի աճը և կառուցվածքային փոփոխությունները

1. Բանվորների քանակական կազմի, ճյուղային կառուցվածքի և աշխարհագրական տեղաբաշխման մեջ առաջացած տեղաշարժերը . . 31
2. Որակական փոփոխություններ բանվոր դասակարգի կազմում . . 53
3. Բանվոր դասակարգի ազդեցությունը հասարակության սոցիալական կառուցվածքի վրա 64

Գլուխ երրորդ—Բանվոր դասակարգի արտադրական-ստեղծագործական ակտիվությունը

1. Հասարակության հիմնական արտադրող ուժը . . . 77
2. Բանվոր դասակարգի մասնակցությունը արտադրության կառավարմանը 84
3. Արտադրական ակտիվության վերելքը 102
4. Տեխնիկական -ստեղծագործական ակտիվության զարգացումը . . 120

Գլուխ չորրորդ—Բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվության վերելքը

1. Կոմունիստական կուսակցությունը և բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական ակտիվությունը 134
2. Բանվոր դասակարգի գործունեությունը սովետներում . . . 150
3. Ազատ ժամանակը և բանվոր դասակարգի ստեղծագործական ակտիվությունը 171

Գլուխ հինգերորդ—Բանվոր դասակարգի գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացումը

1. Բանվոր դասակարգի գաղափարաքաղաքական մակարդակի վերելքը և նրա առաջատար դերի ամրապնդումը 190
2. Բանվոր դասակարգի սոցիալիստական ինտերնացիոնալիզմը և սովետական հայրենասիրությունը 197

Վերջաբան 217

Ծանոթագրություններ 225

ՀԱՄԼԵՏ ՄԱԼԽԱՍԻ ՀՍՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ


ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԴԸ
(1938—1960 ԹԹ.)

Հրատ. խմբագիր Ս. Ս. Անաստասյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչներ Ռ. Վ. Պոլուխանյան
Հ. Ն. Սահակյան

ИБ № 1267

Հանձնված է շարվածքի 30.12.1986 թ.։ Ստորագրված է տպագրության 11.09.1987 թ.։ ՎՖ 02554։ Չափը 60×84 1/16։ Թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական»։ Բարձր տպագրություն։ Պայմ. 14.44 մամ., տպագր. 15,63 մամուլ։ Ներկ. մամուլ 14,44։ Հրատ.-հաշվարկ. 13.91 մամուլ։ Տպաքանակ 550։ Հրատ. № 7107։ Պատվեր № 1022։ Գինը 1ռ. 95 կ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24-г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։
Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин.



79756



A II 75854